



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3 1894

Մ Ա Ր Տ

1894 № 3

Չ Ե Յ Ե Դ Ո Ր Գ Տ Ա Ր Ի

	երես	
1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . . . .	339	* * (բանաստեղծ.):
2 ՂԱԶՐԷԳ, ԱԼԵՔՍԱՆԳՐԷ . . . . .	340	Չորի նահապետ Կոչա:
3 ՅԱԿՈՐԵԱՆ, ՅԱԿՈՐ . . . . .	358	Իմ բարեկամին (բանաստեղծ.):
4 ԿՈՊԷ, ՖՐԱՆՍՈՒԱ . . . . .	359	Նրեխաղ-Չարգարանք (պատմածք):
5 ՋԱՔԱՐԵԱՆ, ՔԱԳԼՈՍ . . . . .	368	Բժշկականութ. և հոգեբանութիւն:
6 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆԳՐ . . . . .	377	Խաւարի բարեկամներին (բանաստ.):
7 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . . . .	378	Կարոցական նամակներ:
8 ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ . . . . .	388	Բանտըների ապահովաց. խնդիրը:
9 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆԳՐ . . . . .	404	Չափիկ (բանաստեղծ.):
10 ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՍԱՐԳԻՍ (+) . . . . .	406	Լեզուն և ուղղադրութիւնը (վերջ):
11 ԲՍՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ . . . . .	413	Հող. և անձն. իրաւ. հին Հայաստ.
12 ԳՆՈՒՆԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ . . . . .	433	«Ին» Լեքմոնտօլի:
13 Ս. Բ. . . . .	536	«Կենդանիների կեանքը»:
14 Գ. Վնյ . . . . .	438	«Արիստակէս Լաստիկերացի»:
15 ՆԱԻՍՍԱՐԳԵԱՆ, ՄԿՐՏ. . . . .	440	Մախ. Խորեն. և «Մուսկուսի կրգք»:
16 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՔ . . . . .	445	Քահանայական խնդիրը:
17 ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ . . . . .	450	Կոնդակ տախտակների օգտին:
18 Ա. Ա. . . . .	557	Յոյնանեան դպր. հոգ. ընտրութ.
19 ՄԱՐԳԱՆԵԱՆ, ՖՐԻԴՈՆ . . . . .	460	Նախարարիւնար. ներ. վիճակը. V.
20 Շ. . . . .	472	Քաղաքական անտութիւն. — Գլա- դատնի հրաժարականը. — Խտալիա:
21 ԽՄԲ. . . . .	488	Չանաղան լուրեր:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՏԻ

Типография М. Д. Ротшильда, Гол. пр., д. № 41.

1894



# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3 1894

Մ Ա Ր Տ

1894 № 3

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՏԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр. д. № 41.

1894

Дозволено цензурою. Тифлисъ, 22 Марта, 1894 г.

\*  
\* \*

### ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

---

Կ'անցնեն այս օրեր, և սառ հողի տակ  
Ներկայ սերունդը հանգիստ կը ստանայ  
Խաղաղ քրնի մէջ: Եւ այն ժամանակ  
Մեր տեղ նոր սերունդ ասպարէզ կը գայ:

Եւ նա մեզ դատի կը կոչէ այնժամ  
Եւ կը պահանջէ հաշիւ ու համար.  
«Ով է ծառայել լուսաւորութեան,  
Եւ ով է սիրել չարիք ու խաւար?»

Օ', պատրաստ լինինք մենք այն բոպէին  
Ոչ թէ ամօթով, ոչ թէ գըլխիկոր  
Երևալ արդար դատաւորներին, —  
Այլ բաց-համարձակ, ինչպէս քաջ զինուոր!

## ՉՈՐԻ ՆԱՀԱՊԵՏ

### ԳՈՉԱ

ԱԼԵՔՍԱՆԳՐԷ ՂԱԶԲԷԳԻ

ԹԱՐԳՄ. Մ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ <sup>1)</sup>)

### XXIV

Նրանք գնում էին միասին, լուռ ու մունջ, համարեա մեռած: Երեսները զափրանի պէս զեղնած, շրթունքներն սեղմել էին և աչքերը կրակի կտորների պէս վառւում էին:

Շատ և շատ անտանելի էր նրանց գրութիւնն և այնպէս ստիպւած էին ընկճել կամ կինմարդու պէս փախչել կա՛ր թէ ոչ: Խարների նման վիզները պարզել, որ արիւնարբու Նուզզարի զօրքերը խանչալով կամ թրով դուրս կտրէին նրանց կոկորդները:

Պատերազմին ծարաւի կտրիճները չէին կարողացել գոնէ մի մի հրացան արձակել, որովհետեւ այնպէս յանկարծակի վրա տւին նրանց և ո՞վ գիտէ, քանի կտրիճներ, արժանի հերոսական բանաստեղծութեան, հարեանի յոյս ու ապաւէն, ընկերակիցների համար հպարտանալու համկ սլներ, զուր տեղը ոչնչացել էին:

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1894 թ. № 1 և 2.

Իսկ ի՞նչ էր սպասում նրանց, որոնք մահից զերծ մնացին. զերծ մնացողներին սպասում էր ընդհանուր թեմում խայտառակութիւն. որովհետեւ սարերում՝ անզգուշութեամբ գործին վնաս հասցնելը ծաղրի առարկայ է դառնում, այն ինչ ձախորդութիւնը քանբաղտութիւն է համարւում... Առաջին դէպքում մարդս ծաղրու ծանակ, ստորացումն է ստանում, այն ինչ երկրորդում—խղճալ և համակրանք:

Եկող մոխեցիները այն աստիճան էին ընկճել իրանց հասած դժբաղտութիւնից, որ իրանց հաշիւ-համար չէին կարողանում տալ այն դէպքի մասին, թէ ինչպէս Նուզգարի զօրքը վրա տեց, որ նրանց գալու մասին ոչինչ չիմացան:

Նրանք մխիթարւում էին միայն այն բանով, որ երեք մարդ էին տանում կապտած և իրանց կարծիքով սրանք էին օսերին և լեզուներին ճանփա ցոյց տաողները, նրանք էին գողոնի ներս բերել թշնամու զօրքերը և սրանցով մոխեցիներին շրջապատել:

Այս բռնաճնների թուում կային երկու օսեր, որոնք առաջուց փախել էին իրանց ժողովուրդից և ձորումն ասանջականութիւն էին գտել. սրանցից մասնութիւնն ու լրտեսութիւնը սպասելու բաներ էին. բայց բռնաճն էր սրանց սիրտը ձաքեցնում: Սա էր մոխեցի, որի վարմունքը ամբողջ ձորն էր արատաւորում:

Տխրած, սրտացած ու հոգեպէս ընկած Օնիսէն հետևում էր այս բազմութեանը և ոչ ոքին չէր համարձակւում ուղղակի երեսին նայելու:

—Քեզ էլ բռնեցին,—Օնիսէ,—յանկարծ լսեց նա, ցնցեց, նայեց ու մնաց ապշած:

Նրա աչքի առաջ կանգնած էր գոյնը նետած ու յուզւած Գուգուան, որ ամբողջ մարմնով զողզողում էր:

—Գուգուան,—վերջը հազիւ կարողացաւ արտասանել Օնիսէն և մտանացոյց արեց նրա կապկապած ձեռների վրա.—ի՞նչ է պատահել, ինչի՞նք են քեզ կապտել:

—Մտոնչութեան մէջ են մեղադրում ինձ,—խուլ կերպով արտասանեց նա և չափազանց կատաղութիւնից թքեց:

Օնիսէն լաւ էր ճանաչում նրան, փորձել էր շատ անգամ և հաւաստիացած էր, որ նա անընդունակ է ընկերներին դաւաճանե-

լու. բացի այս, պատահած քամբադտութիւնից առաջ, նա Գուգուային Ձիճիայի հետ միասին տեսաւ, իր ականջներով լսեց նրանց խօսակցութիւնն և տեսաւ, որ Գուգուան բոլորովին մի այլ զիտաւորութեամբ դիմեց դէպի մոխսեցիներէրի բանակը: Գուգուան Օնիսէի մահն էր ցանկանում, Օնիսէն էր սրա թշնամին, նրա դէմ էր ատելութեամբ գոգուել:

«Բայց կարող է լինել...» յանկարծ անցկացաւ Օնիսէի մտքովը, այս մարդը թշնամութիւն էր տածում իմ դէմ, այս զօրքի ապահովութիւնը ինձ էր յանձնուած և վրէժխնդրութեան զգացմունքի պատճառով մատնութեան է դիմել»:

Օնիսէն նոթերը կիտեց և անդուրեկան զգացմունք արտայայտեց ակռիքները կրճտելով:

— Ինչի բան չես ասում ինձ.— սկսեց դարձեալ Գուգուան:

— Ել ի՞նչ պէտք է ասեմ:

— Ուրեմն այլ ևս բան չունես ասելու, — դառնապէս արտասանեց Գուգուան և աւելցրեց. — լաւ, ես ևս կը լռեմ... Փառք տուր Աստուծոյ, որ այլ ևս անկարող եմ գլուխ արդարացնել, թէ չէ Աստուած է վկայ, շատ էլ երկար չէի նայել տայ քեզ արեղակին... հիմի օրը քոնն է: Այժմ քո ծաղիկն է բացուել, քո արևն է փայլում... երևի այսպէս է կամենում Արարիչն ու թող փայլէ... Մեռնելովս չեմ վշտանում, սակայն վայ ինձ, որ ամենքի համար արիւնակիցներէրի դաւաճան կը մնամ:

Այս խօսքերից յետոյ Գուգուան զլուխը կախեց, կարծես ծանր բեռը դրին նրա վզի վրա, փղձկալից հառաչեց «Օ-Օհ» և հեռացաւ Օնիսէից. Օնիսէի սրտին մի կաթիլ թոյն էր պակասում, որ լեցւէր բերնէբերան, իսկ Գուգուան շատ կաթիլներ լցրեց մէջը:

## XXV

Տակաւին դիշերն ու ցերեկը չէին բաժանուել, երբ Սիոնի ամրութեան մէջ ձորի ամբողջ զօրքը շարժումի մէջ ընկաւ. սրանք իմացել էին, որ Նուգզարի զօրքերը վերցրել էին նրանց առաջին ամրութիւնը և միջի եղած մոխսեցի (ձորեցի) ամբողջ զնդից մի շատ փոքր թիւ մահից զերծ մնաց: Բոլորն էլ բորբոքել էին վրէժխնդրութեամբ և հրավառ աչքերով, բարկութիւն ժայթքող բերաններով վրէժխնդրութիւն էին գոռում բարձրաձայն:

—Արիւն, արիւն.—բացազանչում էին բոլորը և նրանց բերանից այլ խօսք չէր լսուում: Միմիայն գտնուում էր նրանց թւում մի մարդ, որ ոչինչ չէր մոռանում, ինչպիսի կացութեան մէջ էլ գտնուելիս լինէր, և միշտ ժամանակ էր գտնում գործի ամեն մի մանրամասնութիւնների վրա ուշադրութիւն դարձնել:

Սա Գոչան էր, և այս պատճառով ապսպրեց առաջին ամբու-  
թեան մէջ մահից ազատուած մոխեցիներին:

Գոչան մեծ յոյս ունէր իր որդու վրա և նա էլ այնտեղ էր. ու-  
րեմն ինչպէս էր պատահել, որ թշնամին առանց նկատուելու վրա տուեց:

—Պատմեցէք, պատմեցէք շուտով, ինչպէս պատահեց գործը.  
—սկսեց Գոչան հէնց որ վերադարձողներին տեսաւ:

—Է՛լ ինչ ինչպէս պատահեց.—սկսեց եկողներից մէկը: Բեչի-  
րա և Թափսիրուղօ օսերը զնացել էին թշնամիների մօտ, ցոյց էին  
տուել գաղտնի ճանփէն և մինչև որ թշնամին մեր գլխին չկանգ-  
նեց, մենք ոչինչ չիմացանք...

Խօսողը լուեց, այն ինչ Գոչան ամբողջովին լսողութիւն էր  
դառել. նրա սիրտը տրոփում էր և կարծես թէ մի անդուրեկան  
համբաւի էր սպասում:

—Ուրիշ. թէ մի այլ մարդ էլ է եղել.—հարցրեց փոքր  
լուութիւնից յետոյ և նոթերը կիտեց.

—Լաւ կը լինէր, եթէ սրանցից աւել ոչ ոք չլինէր:

—Ուրիշ ո՞վ է.—շուտով հարցրեց Գոչան և աչքերը հրա-  
վառուեցին:

Նա յառեց աչքերը խօսողի վրա, որը դժւարանում էր կար-  
ծես մատնիչի անունը յայտնել:

—Ո՞վ է, ասում եմ քեզ.—խտաբար կրկնեց Գոչան:

—Գուգուան է:

—Ի՞նչպէս, ինչպէս ասիր.—կայծակնահարի պէս բացազանչեց  
ալևորն ու կոկորդում խրխուռց լսեց. Գոչան կարծեց թէ լսողու-  
թիւնը դաւաճանեց իրեն:

—Գոգուան.—կրկնեց մոխեցին:

Խիստ դժւարատար էր Գոչայի համար իր զրացու անունի  
լսելը, այն զրացու, որ իր ծուխին էր պատկանում և, հետևապէս,  
Գուգուայի վարմունքին ինքն էլ մասնակից պէտք է լինէր:

—Տէր Ասուած, ինչով մեղանչեցինք, որ մեզ ընկերակիցների դաւածանին էլ արժանացրիր.—արասանեց ծերունին և աչքերը դէպի երկինք դարձրեց:

Նրա սիրտը տոչորուում էր դառնապէս ժողովուրդի այս կերպ արատաւորելը տեսնելով և լաւ էր հասկանում, որ այս օրինակը կարող էր շատ վատ ներգործութիւն ունենալ ժողովուրդի վրա:

Ծերունին դարձեալ լռեց, մտածմունքների մէջ խորասուզեց ու երկար ժամանակ մնաց այնպէս առանց ձայն հանելու: Սրա դէմքը այս վայրկեանին ամբողջովին շարժողութեան մէջ էր և պարզ կերպով երևում էր, որ սրա մտածողութիւնը բանում էր անդադար:

Վերջապէս կնճռոտած ճակատը շփեց ձեռքով և առաջին անգամ նշմարեց նրա վրա վեհերոտութիւն: Սրա աչքերը, կարծես, պաղատանք ու քրքւանք էին արտայայտում միւսնոյն ժամանակ: Բայց ինչ ունէր ձորի նահապետը, ձորի առաջնորդը, անմեղ պատերազմողներին խնդրելու կամ քիչս գալու <sup>1)</sup>:

Գոչան միմիակ գաւակ ունէր, որ յազթւած ամբութեան պաշտպանողների թւումն էր գտնուում. բայց նա այլ ևս չէր երևում... Հապա ինչ եղաւ նա, ինչի պատմողը բան չէ ասում նրա մասին տարաբաղդ հօրը... Իսկ եթէ մեռաւ՝ ինչի ուրեմն համբաւաբերը չի մխիթարում հօր տխրամած սիրտը որդու հերոսական մահը պատմելով:

Այս ամենը ծագեց ալևորի մտքում ըրպէսպէս և նրա սիրտը սկսեց ուժգին տագնապել: Այլ ևս չկարողացաւ համբերել ծերունին ու նորից նայեց մեղմօրէն, հաւաքեց իր վերջին ոչժն ու արտասանեց.

—Ի՞նչ եղաւ հապա Օնիսէն, ինչի ես թագցնում ինձանից:

—Օնիսէն, տարաբաղդը... քիչ մնաց գժւէր... Եթէ մենք չլինէինք՝ թշնամու ձեռքով մաս-մաս կը լինէր, Ասուած է վկայ:

Գոչան սրանով փոքր ինչ անդորրեց. նրա զաւակը ողջ էր և կտրճութիւն էր ցոյց աւել: Այլ ևս ինչ էր ցանկանում ծերունին:

—Իսկ հիմի սրտեղ է նա:

<sup>1)</sup> Քիչս գալ—մէկին արած լաւութիւնը երեսով տալ:

—Այժմ փոքր ինչ հանգիստ է և ընկերների մօտն է գտնուում։  
—պատասխանեց միևնոյն խօսակիցը և փոքր ինչ լուռ թիւնից յետոյ աւելցրեց.—այնպէս է խեղճը, որ դանակով անգամ չէ կարելի նրա բերանը բաց անել։

Մերունին բաւականացաւ այս հարցումներով և հանգստացաւ, որովհետև այն կացութեան մէջ կարելի էր խաղաղւել։

—Ասա, թող մեղապարտներին բանտարկեն ու լաւ հսկեն նրանց վրա... մենք էլ չիշինք Աստուծոն և մեր եղբայրների արիւնի վրէժը խնդրենք.—արտասանեց Գոչան և դուրս եկաւ, որտեղ զօրքերը արդէն հաւաքւել էին և անհամբեր սպասում էին թշնամու վրա յարձակելու վայրկեանին։

### XXVI

Գոչաչի դուրս գալուն պէս ձորի զօրքը կամաց շարժեց, երեք ռազմի շաժանեց և դիւաւորների առաջնորդութիւնով դիմեց դէպի թշնամու զօրքը։ Նրանք վճռել էին յարձակել Նուզարի կազմած ամրութեան վրա երեք կողմից և ընդհանուր արշաւանքով թշնամուց վրէժը լուծել։ Բոլորի համար էլ ակնյայտնի էր, որ այս ճակատամարտով պէտք է վճռւէր ձորի սպազայ դրութիւնը, բաղին ու վիճակը։

Բոլորն էլ առաջ էին գնում ժպտուն դէմքով, որովհետև հաւատացած էին, որ սրբազան պարոք էին հատուցանում և, եթէ մեռնէին ևս, իրանց անունը երկար ժամանակ կը յիշատակէր ժողովուրդի մէջ և հեռաւոր սարերում կը հռչակէր։ Նրանց սպասում էր աշխարհիս երեսին ցանկալի անուն, իսկ այն կեանքում—երկնային վարձատրութիւն։ Հետեւապէս պատերազմը անկախ կեանք վարելը, հայրենիքի հողն ու ջուրը պաշտպանելը, այս կերպ հաւատացող ժողովուրդի համար, զւարճալի հանդէս գնալուն էր նմանուում։ Պատերազմելու և թշնամու հետ մարտնչելու ծարաւը աւելի ևս բոբբոքւում էր կոտորած եղբայրակիցների տանջանքները մտաբերելով, որ նրանց սրտերը աւելի էին յուզուում և վիթաժ արիւնի փոխանակ արիւնի էին ծարաւում։

Առաջացող մոխրեցիների թւում գտնուում էր նաև Սնիսէն, որի յարատև ուրախ, ժպտուն դէմքը սաստիկ կակճից փոխւել էր

և սաստիկ սեղմած շրթունքների պատճառով դեմքի մորթն էլ ձիգ ձգւել էր: Նրա աչքերի հրավառւելուց այտերը կարծես դուրս էին ցցւել և, իբրև զայրոյթի նշան քներակները զարկում էին ուժ-դնապէս:

Յնիսէն, իբրև բնականապէս կտրիճ և զլուխը յետ դրած սղա-մարդ, այսօր շատ պատճառներ ունէր կրկնապատիկ դառնալու, որով-հետև զգում էր իր սխալմունքը և ինքնամոռացութիւնն և ցան-կանում էր առաւել զլուխը յետ դրածու-թիւնով իր մեղքը փոքր ինչ թեթեւցնել:

Նրան էին պահ տւած քանի մի մարդիք, որոնք մոխլեցի զօր-քի մի գունդ էին կազմում և յանձնարարւած էր իրան՝ թշնամի զօրքի կողմից նշանակւած պահապաններին զողունի կերպով մօտե-նալ և կամ գերել նրանց, կամ կոտորել: Միևնոյն ժամանակ այս գործողութիւնը այնպէս պէտք է կատարւէր, որ թշնամու ամենա-զլխաւոր գունդը չիմանար, որպէս զի նրանք անկարող լինէին պատ-րաստի լինել մոխլեցիներին դէմ դնելու:

Յնիսէն առաջնորդում էր իր փոքրաթիւ զօրքին և ամեն կերպ ջանում էր հրամանը «անշեղ» կատարել: Բոլորից առաջ էր գնում ամբողջովին լուութիւն դարձած Յնիսէն, որին հետևում էին միւսները շարք-շարք, որոնք քայլում էին զգուշութեամբ և ոտերը դնում էին համարեա թէ այնտեղ, որտեղ մի վայրկեան առաջ նրանց զլխաւորի ոտն էր եղել դրւած:

Սաղը <sup>1)</sup> տեղերը անցնելու համար վերին աստիճանի զգուշու-թիւն և ոտերի ճարպիկութիւն էր հարկաւոր, որպէս զի քարերի շարժելով գիշերային լուութիւնը չխանգարէին և թշնամու ուշա-դրութիւնը իրանց վրա չչարձնէին: Բանդուխներն <sup>2)</sup> հազած մոխլե-ցիները սուրում էին զողունի և մինչև որ մի հաստատ քայլ կա-նէին, քանի մի վայրկեան տեղի ամբու-թիւնը ոտներով էին փոր-ձում: Յնիսէն յանկարծ կանգ առաւ և այնտեղ և եթ պահկեց, միւսներն էլ առանց ձայն հանելու նոյնպէս վարեցին և գետնին կպածները խանչալները հանեցին պատեաններից:

<sup>1)</sup> Սաղը նոյն է ինչ թուրքերէն չալըր:

<sup>2)</sup> Տրեխ—փափուճ:

Անցաւ քանի մի րոպէ այս կերպ լռութեան մէջ և դիմացի կողմի վրա հինդ մարդ լոյս ընկան, որոնք նոյնպէս զգուշութեամբ և լուռ ու մունջ առաջ էին գալիս: Յնիսէն միջոց տւեց մինչև որ վերջինները առաջ կը գային և, հէնց որ մօտեցան, յանկարծ օտի վրա ելաւ պառկած տեղից. սրա հետ միասին վերկացան միւսներն ևս ու, մի վայրկեանից յետոյ, տեղը զննելու համար զրկւած օտերը գետնի վրա թեփուիկ-թեփուիկ էին անում և որքան արնաքամ էին լինում, այնքան աւելի խիստ էին մահի հետ մարտնչում:

Այս ամենը այնպէս արագ կատարւեց, որ օտերը մի անգամ բղաւել անգամ չկարողացան: Երբ արդէն սրանց գործը վերջացրին, նորից շարունակեցին իրանց ձանփէն և արշալոյսի բացւելու հետ միասին թշնամու բանակին մօտեցան. այստեղ գաղւեցան և սկսեցին յետևից եկող լնկերներին սպասել: Թշնամու բանակում կատարեալ անդորրութիւն էր տիրում. որովհետև, մի կողմից, առաջին յաղթութիւնով հպարտացած և, միւս կողմից, հաւատայած լինելով իրանց պահնակների զգուշութեան վրա, հանգիստ, հանդարտ քնի էին յանձնւել: Նուզզարը համոզւած էր, որ մոխեցիները կը վախենային և երկրորդ կամ երրորդ օրը միջնորդներ կը զրկէին: Նա չէր կարող երևակայել երբէք, որ մոխեցի մի բռուն ժողովուրդ կը համարձակէր նրա դէմ մարտնչել, նա մանաւանդ այն պատճառով, որ իր մօտ գտնուում էին բաւականին թուով լաւ զինւած և պատերազմի մէջ վարժւած լեզզու զօրքեր:

Մոխեցիները երեք կողմից էլ պտտեցին և աննկատելի կերպով թշնամուն շրջապատեցին:

Ճայթեց յանկարծ մի հրացան և այս էր ընդհանուր յարձակման նշանը:

Նուզզարի զօրքերը վեր թռան տեղներից, սակայն չսպասածին պատճառով խառնեցին և խելքները կորցրած պատերազմողները անմիտ կերպով դէս ու դէն էին վազվզում: Ներս խուժած մոխեցիները ժամանակ չէին տալիս նրանց ուշքի դալու և անխնայաբար կոտորում էին: Այս ընդհանուր խառնաշփոթութեան մէջ միտեղ միայն երևում էին ճերմակ ձին և սրա վրա հեծած Նուզզարը, որ ձեռին թուր բռնած աջ ու ձախ կոտորում էր: Նրա մօտ կանգնել էին քանի մի քաջամարդիկ լեզզիներ և ար-

ժանաւոր շուք էին տալիս նրան. աշկարա երևում էր, որ նրանց սիրտերը բորբոքւում էին աւելի կտրճութեամբ քան թէ այն թրուսօցիներինը, որոնք թշնամու հետ մարտնչելուց՝ փախչելն աւելի էին դերագասում:

Այս ընդհանուր խառնակութեան միջոցներում Օնիսէն զինովցածի նման վազվզում էր և որին էլ պատահում էր՝ էլ շատ չէր նայել տալիս արևին: Նա որոնում էր կատաղի կռիւ և, ինչտեղ էլ լոյս էր ընկնում, կայծակի արագութեամբ մէջն էր ընկնում և, թէև մահ էր ուզում գտնել, սակայն զիւթածի պէս անվնաս էր մնում ամեն տեղ:

Նրա կտրճութիւնը, սրտալիութիւնը և անձնազոհութիւնը հիացնում էին տեսնողներին և գովասանք էին արտասանել տալիս: Բլուրի վրա յանկարծ երևաց Քոչան, որի ճերմակած մազերը խառնել՝ քամու հետ էին խաղում: ձեռին բռնած դրօշակը ծածանում էր յուսատու կերպով և ծայրին ամրացրած ոսկէ խաչը փայլատակում էր:

Քոչայի ձին քայլում էր վեհ և հպարտօրէն, կարծես զգում էր թէ իր հեծւորը ժողովուրդի ընտրւածն է, որ երբէք զժգոհութեան առիթ տւած չէ իր ընտրողներին:

Մերունին ջգրւեց ձիուն, չափ զցեց դէպի այն կողմը, որտեղ Նուզգարը քանի մի մարդկանցով տակաւին պատերազմում էր:

—Աբա, աղէրբ... հետևեցէք ինձ, որոնց սրտները բաբախում են,—գոչեց Քոչան և բազմութիւնը շուտով խմբւեց, գունդի նման կծկւեց Նուզգարի շուրջը:

Սարսափելի թոզ բարձրացաւ, բոլորը թոզի մէջ կորան, կարծես արևի լոյսն ևս մթնեց: Մինչև այժմ զիժինա տւողները հիմի լուել էին և խորին լուութիւնը խանգարւում էր ատամների կրճատումից, երբեմն տնքոցից և զէնքերի շաչիւնից:

Երբեմնակի քամուց քշած թոզի միջից երևում էր Քոչայի դրօշակը, որ դարձեալ անվնաս ծածանւում էր և մարտնչողների սրտները պողպատ էր կտրացնում: Խմբւած բազմութիւնը յանկարծօրէն մի տեսակ պտոյտ գործեց, ցրւեց և նորից սկսեց զիժինա տալ:

Քամին ցրւեց թողը և մի վայրկեան առաջ կեանքով եռացող մարտնչողների դիակներով կերտւած մի կոշկ երևաց: Նրանց մօտ

կանգնած էր Գոչան տխրաւնած, գոցնը նետած և արտասուալից աչքերը դէպի երկինք յառած: Հեռու ճանփի վրա թող էր բարձրանում և նրա միջից երբեմնապէս երևան էր գալիս Նուզգարն ու քանի մի հեծուորներ, որոնք մահից ազատուել էին մի տեսակ հրաշքով:

## XXVII

Բազմութիւնը խաղաղեց, թաղոտեց մեռածներին. սակայն դեռ ևս չէր ցրոււմ, թէև համոզուած էր, որ Նուզգարն այնպէս շուտով չէր վերադառնայ և խրանա՛ օսերին այնպէս հեշտութեամբ չէր կարող համոզել մոխեցիների վրա նորից յարձակումն գործելու:

Այս բլրակի մի կողմը շրջանակի դարստոած քարերի վրա խմբուել էին դեկանոզները<sup>1)</sup> գեղի դրօշակներով և ձորի նահապետ Գոչայի բոլորի շուրջն էին կանգնել: Այս շրջանը բաց էր միայն մի կողմից և այնտեղ էր խմբուել մնացած բազմութիւնը: Բոլորի դէմքերի վրա տխրութիւն էր դրօշմուած, մարդ չէր կարող հասկանալ թէ արդեօք սգաւորութիւն էր իրանց կորուստի պատճառով թէ որ և է անխորժ դէպքի էին սպասում: Գոչան և նրա հետ միասին գտնուող համայնքների զլխաւորները զլուխները կախած և առանց ձայն հանելու ինչ որ մտածմունքի մէջ էին խորասուզած: Վերին աստիճան անտանելի էր դրութիւնն, սև և մութն էր նկարուած պատկերը, նայողի սիրտը տնքում էր սպասելուց:

Գոչան բարձրացրեց յանկարծ զլուխն և այնտեղարեկնքին նայեց տրամալից աչքերով: Օնիսէն, որ այն բազմութեան մէջն էր գտնուում և Գոչային էր նայում, սառսառաց, չկարողացաւ այլ ևս ծերունուն ուղղակի նայել և զլուխը կախեց:

Գոչան յառեց աչքերը Օնիսէի վրա, սակայն շտապով միւս կողմը նայեց և մեղմաբար, բայց հաստատ ձայնով բացականչեց:

— Բերէք այստեղ մեղապարտներին:

Ամբոխը շարժեց, երկու մասի բաժանեց և համայնքի ընարւած դատաւորների առաջ ներկայացան երկու օս և Գուգուան: Ժողովուրդը զողբողալով էր նայում այս պատկերին և սպա-

<sup>1)</sup> Գեղի հոգևոր պետ կամ գահերեց:

սուժէր այն վայրկեանին, երբ բարձրագոյն հրաման պէտք է ստանար և, ով գիտէ, ինչպիսի վճիռ պէտք է կայացնէր:

—Արձակեցէք զրանց ձեռքերը, — հրամայեց Գոչան, և նրա հրամանը շուտով կատարեց:

Սրանից յետոյ ձորի նահապետ Գոչան արմուկը զրեց ծնկան վրա, յենեց ձեռքի վրա գլուխն և, ամբողջովին լսողութիւն դարձած, այնպէս փնաց:

Համայնքների գլխաւորներից ամենաերէցը ոտի ելաւ, անցաւ մէջ տեղը, չոքեց ու բացականչեց.

—Այ, ժողովուրդ և ջամահաթ... ուշադրութիւն և լսողութիւն... անա ձեր առաջ կանգնած են երկու օսեր... վեց տարի է անցել այն օրից, երբ սրանք մեր համայնքն եկան, մեր գութը շարժեցին և հասկացրին, որ իրանց ժողովրդի մէջ ապրել անկարող էին այլ ևս, որովհետև մարդ էին սպանել և սրանց հալածում էին... Հայ, հայ, որ վնաս բան է կամովին մարդ սպանել, մեղք էլ է, սակայն երբ մարդանեղ զրութեան մէջ է գտնուում, ոչ թէ միայն ուրիշին է սպանում, անձնասպան էլ է լինում... Մարդասպանութիւնը քամբադտութիւն է և այս դժբաղտները ձորից մի կտոր հաց ու ասպնջականութիւն էին խնդրում... Ձորը սովոր չէ հիւրից թագչել, աղքատին չ'ողորմել. ձորը սրանց բինա տեց, աուն շինեց սրանց համար, վարելահողից զիջաւ, ձորը եղբօր պէս ընդունեց ու հանգիստ կենցաղ մատակարարեց սրանց... Սրանք ինչով ցոյց տւին մեզ իրանց երախտապարտութիւնը... Մեր թշնամուն ցոյց տւին գալու զեծանները, մեր զօրքերի գլխին կանգնեցրին և ով որ սրանց մի պատառ հաց էր տւել, սրանց բեռը թեթեւացրել էր, նրանց դաւաճանութեամբ կոտորել տւին... Ի՞նչ կասէք, այ ժողովուրդ, այ ջամահաթ... ամեն բան պատմեցի, բոլորը հասկացրի ձեզ, մարդու մահը հանաք բան չէ:

Մոխեցին ոտի կանգնեց, գլուխ տւեց բոլորին և իր տեղը նստեց:

—Արդարացրէք ձեզ, եթէ կարող էք, — արտասանեց Գոչան, որ իր զրութիւնը չէր փոխել:

Հանդիսատեսները անդադար չուզում էին, սակայն գործի մէջ չէին խառնուում: Օսերի մեղապարտութիւնը այն աստիճան ակնյայտնի էր, որ չէին կարող իրանց արդարացնել և այս պատճառով

չօքեցին ու խնդրելով ներումն էին աղերսում. սակայն դատաւորները նրանց աղերսանքին ականջ չէին դնում: Նրանք խմբուեցին Գոչայի շուրջը, քանի մի վայրկեան ինչ որ խօսեցին և դարձեալ իրանց տեղները նստտեցին: Փոքր ինչ լուռ թիւնից յետոյ Գոչան բարձրացրից գլուխն ու բացականչեց.

—Երկուսն էլ քարկոծւեն:

Այս խօսքերը սառսուռի նման անցան ժողովրդի մէջ ու օսերը գոյները նետեցին ամբողջովին:

Սրանցից մէկը մօտեցաւ Գոչային, որ վճիռը յայանելուց յետոյ դարձեալ գլուխը կախեց և խորը մտածմունքների մէջ ընկղմւեց:

—Գոչան, աղերսում եմ,—ասեց օսը.—ճորտդ կը դառնամ, միայն թէ ազատես ինձ:

—Քարքոծւեն,—միեւնոյն ձայնով կրկնեց Գոչան:

—Ուրեմն պէտք է սպանեմ ինձ, պէտք է քարկոծեմ... գոչեց օսն ու շտապով ոտքի ելաւ.— թող սպանեն, սակայն քեզ էլ ողջ չեմ թողնի:

Այս խօսքերի հետ միասին, օսի ձեռին շողաց խանչալը, որ չուխէքի տակն ունէր թաղցրած: Ամբոխը բուսկապէս վրա պրծաւ այնտեղ, գնդի նման կծկւեց և երբ ցրւեց, Գոչան դարձեալ այնպէս վեհաբար նստած էր. տեղիցն էլ չէր շարժւել ծերունին: Միայն զգւանք էին արտայայտում ներկայ գտնւողների դէմքերը, որոնք այնտեղ շանսատակ եղած օսերի վրա էին նայում:

### XXVIII

Երբ օսերի հետ գործը վերջացրին, Գոչան դարձեալ մտածմունքի մէջ խորասուզւեց և մեղմ ու հանդարտ ձայնով արտասանեց.

—Բերէք Գուգուային այստեղ:

Քանի մի անձեր մօտեցան Գուգուային, արձակեցին ձեռները և առաջ բերին: Հրամանը լսելուն պէս մոխեցու աչքերը մթնեցին, օրօրւեց, տատանւեց, սակայն ուշքը հաւաքելով՝ հաստատ կանգ առաւ:

Ամբաստանւած Գուգուան բոլորովին սիրթնած և բերանը ցամաքած՝ կանգնել էր ժողովուրդի առաջ և աչքերը աննպատակ յառել էր մի կէտի վրա:

Բազմութիւնը անիծում էր նրան, յիշոցներ էր ժայթքում նրա երեսին և իրարու մատով էին ցոյց տալիս այս աւաղակի վրա: Ինչպէս անցեալ անգամ, հիմի ևս համայնքների գլխաւորներից զուրս եկաւ մէկն ու սկսեց Գուգուային դատաւարտել:

Բանից երևեց, որ երբ թշնամու զօրքը շտապով արշաւում էր դէպի մոխեցիների բինէն, Գուգուան նրանց առաջից էր վազում և, կասկած չկայ, Նուզգարի զօրքերին ճանփա էր ցոյց տալիս:

—Արդարացիր, եթէ կարող ես.—սսեց նրան Գոչան ու լռեց:

Գուգուան հառաչեց ու ժգնապէս, նայեց այն տեղարկնքի շուրջը և տեսաւ Օնիսէին այնտեղ քարացածի պէս կանգնած: Փայլեցին Գուգուայի աչքերը, դէմքը կարմրեց, ձիգ տւեց զօրով նրա կողմը, օրօրւեց, բաց կանգ աւաւ: Գուգուան դարձաւ դատաւորներին և սաստիկ կսկծից ծամածուած դէմքով նայեց նրանց: Վերջը վերցրեց գլխից գդակը, կարծես թէ այրում էր նրան և գետնովը տւեց:

—Ասն, եթէ սսելու բան ունես.—կրկնեց Գոչան և մի տեղ ձայնը դաւաճանեց նրան, մի տեղ կտրւած լարի պէս հնչեց:

—Ի՞նչ սսեմ, ի՞նչ յայտնեմ ձեզ... դառնապէս բացազանչեց Գուգուան.—Աստուծուն յայտնի է, որ մեղաւարտ չեմ: սակայն թշնամու առաջից վազելն տեսան և ո՞վ կը հաւատայ ինձ... Այլ ևս ի՞նչի էք տանջում ինձ... Սպանեցէք և դուք էլ կը հանգստանաք:

—Այ տղանց, քեզ սպանելը դժար չէ... փոքր ինչ լուծիւնից յետոյ սսեց նորից Գոչան և ձայնի մէջ սրտայոյզ սէր նշմարւեց.—բաց սիրտս չէ հաւատում, որ ձորի հող ու ջրի մարդը, ձորի ծծերով սնւածը եղբայրներին դաւաճանելու ընդունակ լինէր, որ ընկերներին ծախէր, որ գետինը կը քանդէ և երկինք կը կործանէ: Սիրտը կը տնքայ միշտ և հանապազ, վիշաբ չի պակասի, չի կարող տխրութիւնը փարստել եթէ քեզ ուղիղ դաւաճանող համարեց:

Գուգուայի սիրտը ամոքւեց. նա տեսաւ որ ծերունին հայրական գորովով էր վարւում հետը և սրտանց էր ցանկանում պատկառելի անձնաւորութեանը համոզել, որ ինքը արդար էր:

—Գոչան, Աստուծ է վկայ, սուրբ Սպարս հրեշտակի զօրքը գիտենայ, երդւում եմ իմ ջահել արևով, երդւում եմ նաև անունովդ, որ ես յանցաւոր չեմ. սակայն չեմ կարողանում գլուխս արդարացնել և պէտք է դատաւարուեմ, պէտք է մեռնեմ:

—Թշնամու զօրքի մէջ ի՞նչպէս ընկար:

—Ի՞նչպէս... կամենում ես ամեն բան ասել տաս ինձ... հանգիստ թող ինձ, Գոչա... ինձ մի՛ խօսեցնիլ... Տեսնում ես հօ, որ անկարանում եմ խօսել... Գու որ միշտ բարեսիրտն ես եղել, այսօր ինչի՛ ես ցանկանում ինձ չարչարել:

—Սիրտս էլ հանգիստ չէ, Գուգուան, Աստծուն է յայտնի... ամեն մի խօսքին, ամեն մի հարցմունքին նետեր են ցցում սրտիս մէջ. սակայն համայնքն ու սրա գործը քեզ վրա էլ բարձր է, ինձ վրա էլ... ուրեմն յայտնիր մեզ ամեն բան:

—Յայտնեմ... լաւ ուրեմն... գոչեց մոխեցին և շուտով դարձաւ այն կողմը, որտեղ Օնիսէն էր կանգնած:

Գժբաղտի դէմքը ծամածուռել էր բոլորովին և ծանր բեռան տակ կարծես չորս տակ էր ծալւել. դեղնած դէմքի վրա կեանքի ամենափոքր նշոյլ անգամ չէր նշմարւում: Գուգուան դարձեալ կանգ առաւ, սրտապնդեց ու դիմեց դատաւորներին:

—Ականջ դրէք ինձ... մահից չեմ երկնչում, եթէ արդարացնելու լինէք ինձ նոյն իսկ, Ասուած է վկայ, ինքս կըսպանեմ ինձ: Ել ինչիս է հարկաւոր մի անգամ արդէն արատաւորած կեանքս... Ուրեմն լսեցէք, ամենը ճշտութեամբ կը յայտնեմ: Ես սարիցն էի դալիս և երբ տափարակ դաշտի վրայ գտնւեցի՝ թշնամուն հանդիպեցի... փախայ, որ մեր թագստում գանձողներին իմաց տայի. բայց թշնամին հասէ-հաս հետևում էր ինձ և չկարողացայ յաջողել... Նրանք հրացան չէին արձակում վրաս, որ ազմուկի պատճառով մեր զօրքերը զուրս չգային, իսկ իմ հրացանի չախմախը քանդւել էր... մերոնք ինձ թշնամիների մէջ տեսան և դաւաձանի տեղ ընդունեցին... Թէ սուտ ասելու լինեմ, թող գետինը պատուի և ինձ վար տանի...

—Սարումն ի՞նչ ունէիր.—հարցրեց դատաւորներից մէկը:

—Գործ ունէի:

—Մենակ էիր:

Գուգուան չպատասխանեց ու այս պատճառով միւռնոյն հարցը կրկնեցին նրան.

—Մենակ էիր:

Գուգուան մարտնչում էր իր զգացմունքի դէմ ու չէր կամե-

նում հրապարակ հանել այն աղջկայ անունը, որը դարձեալ աշխարհից աւելի թանգագին էր իր համար:

—Այդ ինչ ասել է, մենակ էի, թէ ոչ.—վերջապէս ասեց Գուգուան ու աւելցրեց.—ձեզ համար միայն հարկաւոր է գիտենալ թէ, ձեզ մատնել եմ, թէ ոչ... ես ձեզ յայտնում եմ, որ ձեզ չեմ ծախել, չեմ դաւաճանել. կեանքումս երբէք չեմ էլ երեւակայել ձեզ դիմադրել, վկան ինքն Ասուած է... Այլ ևս բան միք հարցնի ինձ, պատասխանս չի օգնի և մահից առաջ կեանքիս քանի մի վայրկեաններս կը թունաւորի:

Սրանից յետոյ լռեց Գուգուան, ձեռքերը կրծքին խաչմերեց և մնաց այնպէս անխօս: Բոլոր հարցումներին նա լռութեամբ էր պատասխանում և սրա անխօսութիւնը Օնիսէի սրտին ծանր քարի պէս էր ճնշում:

Լուռ էր ժողովուրդը և շունչները քաշած սպասում էր համայնքների գլխաւորների վճիռ տալուն, որոնք Գոչայի շուրջն էին բոլորել: Բաւականի երկար միջոց անցաւ մինչև որ գլխաւորները վճիռ կը կայացնէին:

Յանկարծ գլխաւորները ցրեցին և լսողների սրտի բաբախը աւելի սաստկացաւ: Համբերութեան չափ ու սահմանն անցաւ: Ամենքն իրանց տեղերը գնացին և այս ընդհանուր լռութեան միջոցին Գոչան ոտի ելաւ:

—Ներքի մեզ, երկնային Հայր, եթէ մի բանով սխալում ենք... Ինչ որ ներշնչեցիր մեզ, այն ենք յայտնում... Ձորի բարեկեցութիւնը պահանջում է, որ Գուգուան զրկւի և համայնքից և իր ազգականներից... թոյլ է տրւում միայն նրա կնոջը հետեւել նրան: Այս օրւանից ի վեր ոչ ոք իրաւունք չունի նրան կրակ տալ եթէ անկրակ տեսնէ նրան, ջուր տալ՝ եթէ ծարաւ տեսնէ, հաց տալ՝ եթէ քաղցած տեսնէ... բոլորի դուռը փակ պէտք է մնայ սրա առաջ, ամենքը անխօս պէտք է մնան սրան պատասխանելու, պարտաւոր են բոլորը խլանալ սրա խնդիրքը լսելու... Ձորի խեղհրեշտակներ, համայնքի խօսք կոտորողին և չպահողին խռով կենաք...

—Յետոյ, —յանկարծ մէկը բռնեց Գոչայի թևից և ընդհատեց նրա խօսքը:

Ժողովուրդը զարմանքով նայեց ձորի նահապետի ձեռքը բռնո-

ղին, նա մանաւանդ այն վայրկեանին, երբ նահապետը, ձորի սըրբութիւնը, դրօշակների ամենառաջինն ունէր ձեռին բռնած: Նրանց աչքի առաջ Սնիսէն էր կանգնած:

—Յետոյ, ձորի նահապետ, Գուգուան ճշմարիտ է.—ասեց Սնիսէն, որի մազերը խառնուել էին և աչքերը այն աստիճանի արիւնակալել էին, որ կարծես թէ ուզում էին դուրս թափել:

Մարդիկ տեղներից վեր կացան, խառնուեցան և աղմուկ բարձրացրին: Գոչան թոթուեց դրօշակն և բոժոժների հնչիւնի հետ միասին բարձրաձայն ու հրամայական եղանակով գոչեց.

—Լռեցէք.— և այս ձանը լսելուն պէս ամենքը լռեցին.

—Շարունակիր, ի՛նչ էիր ասում:

—Գուգուան արդար է, ասեցի, զուր մի՛ք դատապարտի նրան. . . Գուգուան և ես պատճառներ ունինք միմեանց արիւնարբու թըշնամիներ դառնալու... Երբ դա սարիցն էր գալիս, զեծաններով տոյն պատճառով վազեց, որ ինձ պէտք է սպանէր... սակայն ճանփի վրա թշնամուն հանդիպեց և զուր տեղն էք դրան դաւաճանող կարծում... .

—Իսկ այդ ո՞վ յայտնեց քեզ.—յանկարծ գոչեց Գուգուան և կասկածից աչքերը հրավառուեցին:

—Ականջովս լսեցի... երբ դուն խօսում էիր, ես ճանփի միւս կողմն էի գաղւած... էլ ի՛նչ թագցնեմ... ընկերներիս մեղքը ինձ վրա է ծանրացած, ես եմ պարտական նրանց կոտորածի մէջ... ես խելքս տանուլ տւի, թշնամին անցաւ գողունի իմ անզգուշութեան պատճառով... Գուգուան անմե՛ղ է:

Սնիսէն խօսում էր շտապ-շտապ ու յուզւած և ամբողջ մարմնով դողում էր: Սնիսէի խօսքերը կայծակնահար արին այնտեղի հանդիսատեսներին, որոնք ապշած նայում էին նրան:

Ահաբեկւած ծերունին ուժգին հառաչեց, շփեց ճակատը ձեռքով և բացականչեց յժգոհերով:

—Ուրեմն այդպէս ես հասկացել իրատներս. անիճւես դուն. բոլորի աչքից ընկած, հօրն ու մօրը գերեզմանից հանող... ի՛նչ պատիժ կայ, որ քեզ համար վճռենք... այս խօսքերից յետոյ ծերունին դիմեց դատաւորներին.

—Մեր զաւակների արիւնը երկնքում բողբոջում է Արար-

չին և արդար զատաստան է աղերսում, վճռիր, այ համայնք։  
Բաւական երկարատե յուզմունքից և աղմուկից յետոյ համայնքի զլխաւորները մօտեցան Գոչային և մեղմօրէն արտասանեցին.

— Գոչա՛, որդիդ ձորը չէ ծախել... միայն ջահելութեամբ յափշտակել է և ինքնամոռացութեան մէջն ընկել...

— Առաւել լաւ ապացոյց է, որ սաստիկ պատժել... մարդուս նամուսը բեղերն են... Յնխէն արդէն մեռած է... զրա պատիժը կրակի մէջ այրելն է:

— Գոչա՛ս, — փորձեցին հանգստացնել նրան. սակայն բերանը փրփրակալած ձորի նահապետը կայծեր էր թափում աչքերից:

— Պէտք է մեռնի, մեռնի անողորմաբար... և եթէ դուք չէք կարողանում օրինաւոր կերպով վարել... նայեցէք ինձ... Տերունին մերկացրեց խանչալն, վազեց դէպի որդին ու գոչեց.

— Ընկերներին դաւածանողը արժանի չէ կեանքի:

Այս խօսքերի հետ փայլեց խանչալը և Յնխէն սկսեց գետնի վրա թեփրիկ գալ. Տերունու սուրը երկու կէս էր արել զաւակի սիրտը: Այս գործողութիւնը այնպէս արագ կտտարւեց, որ ոչ ոք չկարողացաւ քամբադտութեան առաջն առնել:

Բազմութիւնը յետ քաշեց և այլ ևս չէր համարձակում Տերունուն մերձենալ, որի դէմքի մկանները սաստիկ կծկւում էին և տարօրինակ կերպով ձգձգում նրա դէմքը:

— Գոչա՛ս, փոքր ժամանակից յետոյ մէկը բռնեց նրա ձեռքը:

— Հայ, — անմիտ կերպով արտասանեց Տերունին և յետ նայեց: Նրա առաջ կանգնած էր Գուգուան:

— Գոչա՛ս, — կրկնեց նա բարձրաձայն. — անցեալ անգամ ասի քեզ, որ մեղապարտ չեմ և միանգամ արդէն այսպէս մեղադրելուց յետոյ այլ ևս ապրելու չեմ... Տղամարդը իր թքածը չի կարող յետ վեր լիղել... մնաս բարով, Գոչա՛, մնաս բարով ժողովուրդ. այս խօսքերն ասելով հանեց դաբանչէն, դրեց բերանի մէջ լուլէն և օդի մէջ ցնդեց ուղեղը...

Տերունին հառաչեց միայն, նայեց բոլորի շուրջը ահաբեկւած աչքերով և սարսափեց: Յետոյ սկսեց զողացնել և արիւնտտած խանչալը, որ ձեռին ունէր բռնած, հեռու շպոտեց... քանի մի բոպէ

այնպէս անխօս մնաց, գլուխը պտուեց և ծնկները ծալեցան. նա փարեց իր որդուն և քանի մի անգամ մեղմածայն կրկնեց.

—«Որդի, որդի» ու վրան կպած մնաց:

Բաւականի ժամանակ ողբում էր Յնիսէի սառած դիակի վրա. չետոյ վեր նայեց, սկսեց վայրենաբար դէս ու դէն նայել և յանկարծ տեղից վեր թռաւ վախեցած.

—Հեռու, հեռու... գոչեց նա և օդի մէջ կառկառեց բազուկները.—արիւն, խանչալ... որդիս, զաւակս: Ի՞նչ եղաւ որդիս, գոչեց որոտածայն և սկսեց վագրի նման մռնչել...

Անցաւ բաւականին երկար միջոց, ձորը խաղաղեց. կեանքն ստացաւ իր սովորական ընթացքը:

Սակայն Սամուէրօ անտառը բոլորի համար էլ մի խուսափելու և անհրապօյր տեղ դարձաւ, որովհետև խելագար Գոչան այնտեղ բնակութիւն հաստատեց և անցորդ դարձւորին իր որդու մասին հարցմունքներ տալով անհանգստացնում էր: Ամենքին հրաւիրում էր իր տուն և պատմում էր, որ իր որդուն հեռու երկրից է սպասում: Յետոյ սիրում էր սպառնալ, եթէ հասկացնում էին նրա որդու գլխին եկածը թէ ինչ էր պատահել Յնիսէին, իր պատմութիւնը վերջացնում էր սարսափեցնող վայնասունով:

Այսպէս էին սահում ծերունու կեանքի օրերը մինչև այն ժամանակ, երբ մի անգամ ձմեռուայ միջոցին մի տեղ ձորակում ձիւնը խեղդել էր նրան:

Իսկ ինչ վերաբերում է Զիճիային, նրան այն օրից ի վեր, երբ Յնիսէից հեռացաւ, այլ ևս ոչ ոք չի տեսել <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Այս պատմութիւնը բառաբան պատմեց ինձ խիստ ծերացած մօխեցի իսկ Գինջան:

# ԻՄ ԲԱՐԵԿԱՄԻՆ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Տես ինչպէս համեստ սահում է լուսին—  
Հրելով յամառ-խաւար ամպերին.  
Ինչպէս մտախոհ, քնքոյշ լուսթեամբ  
Ուղեկցում է նա զոհար աստղերին:

Նա — այդ երկնային փարոսը ազատ —  
Վկայ է քանի տառապանքների  
Քողի տակ ծածկւած... և ջերմ, հարազատ  
Մարդկային անմեղ արտասունքների:

Բայց չէ բողոքում, անէծք չէ թափում  
Մարդկային չար-բիրտ արարքների դէմ,  
Այլ իւր արծաթեայ լոյսը անխրտիր  
Մարդոց է բաշխում, թէև թախծադէմ:

Ահա բարեկամ, արդար լուսինը  
Թող քեզ սփոփիչ օրինակ լինի.  
Թող որ չար մարդիկ քեզ դաւեր լարեն,  
Դու միշտ ուղեկից զոհար մտքերի:

## ԵՐԵԽԱՅ—ՋԱՐԴԱՐԱՆՔ

(ENFANT—BIBELOT<sup>1)</sup>)

ՖՐԱՆՍԱՌԻԱ ԿՈՊԷՆԻ, Թարգմ. Մ. Նաւասարդեանի

Երբ հասարակութեան հարուստ դասակարգը իմացաւ թէ տիկին Տիշլէրը ճետաքրքրական դրութեան մէջ է գտնուում, վերին աստիճանի զարմացաւ: Նախ պէտք է ասել, որ ոչ ոք չէր կարծի թէ ոսկիներով կուսած այն պարկը—Տիշլէրը, ընդունակ կը լինէր այնպիսի քաջադործութեան, քանի որ նա արդէն չիսուն տարին անցած՝ պսակել էր մի շատ ջահէլ կնոջ հետ:

Եւ ուղիղ, Բենչի էր ամուսնացել նա, քանի որ նոր էր կառուցել Պրոնի փողոցի վրա մի փոքրիկ հիւրանոց իր որդեգրուհի՝ Լուիզ Կաւալիէի համար—իսկական անունը էլիզա Նաւէ էր—տարւայ վերջին հանդէսի այն փառահեղ սանամայրը, որի քաղցրահնչիւն տխաղոսը ճառագայթում էր Մորրիսի բոլոր սիւների վրա:

Իայց Տիշլէրը խորամանկ էր և գիտէր ինչ էր անում փեսայ դառնալով Պարիզի բորսայում պատուաւոր անուն վայելող մի միջնորդի, համարեա մի խեղճ միջնորդի, որը իր ազղկան միայն երկու հարիւր հազար Ֆրանկ էր օժիտ տալիս: Այն, հիանալի զործ էր անում Տիշլէրը, խաւանելով պատուաւոր կերպով վաստակած փոք-

<sup>1)</sup> Bibelot—նշանակում է փոքրիկ անօթներ, հանքալին կտորներ, քիւրեղներ և այլն, որոնցով զարդարում են բուխարու թարաքներ, գրակալներ և երբեմն էլ զարսում են սեղանների վրա:

րիկ գուճարի հետ իր անւանարկ, կասկածելի միլիոնները. և այժմ երբ նա տեսնում էր իր ճաշկերոյթներին, որոնց նախագահում էր իր ջահել կինը, նստոտած պատուաւոր նոտարներ և դրամասների վարիչներ, քմծիծաղ էր տալիս. ալեխառն բեղերի տակից և ազատ ընթացք էր տալիս տոմբալաներով խճողւած փորին զւարթանալու, մտաբերելով այն վայրկեանները՝ երբ Ֆրանքֆուրտից նոր եկած իբր հին շորեր վաճառող հրէայ՝ կանչում էր «հին շորեր առնող» լատինական թաղի նեղլիկ փողոցներում և երբ ուսի վրա կրում էր երկու-երեք վարտիկ և à la Dampierre մի հին գալարափող:

Անկասկած կինը թանգ արժէր իրեն, շատ թանգ, այն սիրուն ցոփակեաց կինը, որի հետ նա ամուսնացել էր, և շոր կարողի կամ ակնավաճառի հաշիւները նրան երբեմն ծամաճռութիւններ էին պատճառում. բայց մտաբերում էր իսկոյն և եթ մի շահաւէտ ձեռնարկութեան մասին, որ ի շնորհս նոր հաստատած չարաբերութիւնները՝ կարողացաւ սկսել մի սքանչելի մասնաժողովի խորհրդով, որի անդամներն էին վաղեմի կուսակալներ և Օ\* մակադրւած անուններ. երազում էր ամուսն վերջը տեղի ունենալիք համարատուութեան մասին, որը բեղմնաւոր էր երևում և լմփոշ ծիծաղելով ասում էր—ւամբողջ վաստակն այս է»:

Այսպէս անա նրա բաղտաւորութեան մէջ տեղի չունեցաւ ոչ մի կասկած, երբ կինը նրան յայտնեց թէ նա շուտով հայր է դառնալու և այդ յղութեան աչքալոցսը շատ ձշտօրէն ընդունեց, մի առանձին հպարտութեամբ, որը վայել է այնպիսի հանգամանքներում հիսունամեայ տղամարդուն, բորսայ յաճախող սամոյր օձիքաւոր բոլոր ջահիլների կողմից, որոնք նրան շնորհաւորելու եկան բաղտաւոր մանուկի պատճառով, բորսայի կամարադարդ սրահում: Ի՛նչ և է: Այն գիժ, հիանալի տիկին ծիշլէրի անձնաւորութիւնը չէր չարմարւում մայրութեան զաղափարին: Այդ ինչպէս. մօտ օրերումն նա օրդու տէր կը լինի, այն կապուտակն ու կիտրոնագոյն նուրբ պարիզուհին, որը ընթրիքների առիթով հնարել էր մի տեսակ զարգարանք, մի վերին աստիճանի հրապուրիչ սրտաձև ուսամերկութիւն. շուտով մայր էր դառնալու այն կոտիլիոնի թագուհին, որը բարեգործական նպատակով կայացրած մի վիճակախաղի միջոցին իրաւունք էր տւել, քսան ու հինգ ոսկի ստանալու հա-

մար, ամենախեղ հարստականներից մէկին համբոյցներ դրոշմելու շեղական թուլս կաշւից շինած ձեռնոցի ամբողջ երկարութեամբ, որը ծածկում էր նրա կլոր թւը: Պառաւ տիկին Բաղէրը, Սէնտ-Օնորէ արւարձանի այն ամենաչար լեզուն, որը Տիշլէրի դաշինք կապելու օրը ասել էր այս ուշադրաւ խօսքը, «այս կինը սարսափելի կը լինի յիսուն տարեկան հասկումն. այդ պառաւ տիկին Բաղէրը յայտնում էր ամեն մի ցանկացողին, որ այնպիսի «կիտախուր», չասենք աւելին, անընդունակ էր կատարել ընտանիքի մօր պարտաւորութիւնները:

\*  
\* \*

Բայց չէ, ամենեւին: Այն Կարաբոս ջաղուկը սխալեց իւր գուշակման մէջ, կամ, ուրիշ ոչինչ չլինի, սկզբում այնպէս էր թւում թէ սխալում էր: Տիկին Տիշլէրը ծնեց մի թմբիկի տղայ—խնդրեմ, լնւ հասկացէք, — և Ֆրանսիայի թագաժառանգի ծնունդը, որ իր օրօրոցի վրա կապոյտ ժապակէն էր կրում, աւելի սիրալիր ընդունելութիւն չէր գտնի քան թէ փոքրիկ Գիւստաւինը: Ի հարկէ, երբ զգիտութեան իշխանը մանկաբարձուհու ձեռքով լողացրած և բարուրած նորածինը ներկայացրեց ծննդկանին—կոնդ զլուխ, անասամ, կոյր, մորթին կարմիր և խորշումած ինչպէս մի պահուցի խնձոր—ջահիլ կինը իսկոյն և եթ բացականչեց. «Տէր Ասուած, ի՛նչ տղեղ է»: Բայց մայրական բնազդը յաղթանակեց և այնպէս եղաւ, որ հետաքրքիր գունատ հիւանդը, բարձի վրա սպառկած առանց զգանքի համբուրեց հինգ բուսական հասակի արարածին, որի գէմքը, նոյն միջոցներում, ձեռագիր յիշատակարանների և գեղեցիկ դպրութեան ակադեմիայի անդամի երեսին էր նմանուում: Իսկ ինչ վերաբերում է հօրը, այս դէպքում նա կատարեալ էր, ցոյց աւեց ամենահաճելի քնքշութիւն, և, մեղայ քեզ տէր Ասուած, Քի քառորդ ժամ ուշ ոտք կոխեց բորսայի շէմքի վրա, որտեղ այն օրը մի շատ նշանաւոր ժամագրութիւն ունէր Սեղէլմայէր միջնորդի հետ,—գանգրամորուս մի գեղեցիկ հրէաց, որը սխալելու չափ նմանում էր Ասուր Բանիփալ արքային, որպիսին կարելի է տեսնել Լուվրում ասորական թանգարանի արձանների շարքում:

—Մծմայրը... որտեղ է ծծմայրը, բացականչեց ծննդկանը, հէնց որ ջահել ակադեմիկոսը իր առաջին ճիշերն արձակեց:

Ծծմայրն այնտեղ էր, որին ընտրել էր կանխապէս պիտու-  
թեան իշխանը: Սա մի Պիկարդուհի էր ահագին ազդրներով, հրէ-  
շաւոր կոկորդով. դէմքի գոյնը աղտոտ ծիրանի գոյն էր ներկայաց-  
նում, հիւանդանոցում սպասուորող աղախնի գլխնոցով և հագին  
ուներ մի ծաղիւաւուն դէիրա, որը տեսնողին նողկանք էր ազդում:

—Սարսափելի տղեղ էք, սիրելիս, բայց ոչինչ, ձեր մասին  
կը հոգանք:

Իսկոյն և եթ մտածեցին, սենեկակիներ, որ տիկնոջ հետ միա-  
սին աչցելել էր բրետոնական ծովափները, յիշեց Կոնկարնօի կա-  
նանց համազգեստը:

—Յիշում էք, տիկին... այն ժիլետը և թևատ բաճկոնակը, որ  
փոքր ինչ նմանւում է զուարների բաճկոնակին՝ ուսերը դեղին ժա-  
պաւէնով ծրած:

—Իրաւունք ունէք, Ծաննի... իսկ գլխնոցը սքանչելի է:

\*  
\* \*

Տասն ու հինգ օրից յետոյ, —ապրիլի վերջին օրերից մէկն էր,  
երբ հասարակաց պարտէզներում կաստանենիք բացել էին իրանց  
ճերմակ և վարդագոյն ծաղիկները —տիկին Տիշլէրի որդու ծծմայրը  
հասարակութեան համար հարցասիրական առարկայ էր դարձել Մոն-  
սօ պարտէզում: Իր սարդիկների գլխնոցով —որի համար տան  
բարեկամներից մի նկարիչ մի մանրանկար էր կերտել ձեռաց —Պի-  
կարդուհին նմանւում էր քսան ու չորս թնդանօթակիր մարտանա-  
ւին —գլխնոցը ծոծրակին զցած ճեմում էր, որի տակից երևում էին  
բոլոր զանգուրներն ու ժանեկիկները: Գեղեցիկ տիկին Սերֆը, որ  
մօտ ժամանակներում լոյս աշխարհ էր բերել մի փոքրիկ աղջիկ,  
փորձեց մրցել զարդարելով իւր աղջկայ ծծմօրը Ֆրիզօի ձևով և մի  
ոսկեզօծ սաղաւարտով. բայց բոլոր մայրերը միահամուռ համաձայ-  
նեցին, որ բրետոնական համազգեստը առաւել «ճաշակաւոր» էր:  
Այս բանում տիկին Սերֆը «փուստ» մնաց:

Սակայն երեխան, ժանեկիկներում թաղւած, իւրաքանչիւր օր  
փոքր առ փոքր կորցնում էր գիւանապահ-հնագրի դէմքի ձևը, որ  
ձերացել էր XII դարի վանական գրութիւնների մեկնաբանութիւն-  
ներով: Նա արդէն սկսել էր մի առանձին եռանդով ամուր բռնել

Իւր կապկաչին ձեռնիկներով ծծմօր կարմրաւուն բութ մատը, նրա բերանը կերտում էր փոքրիկներին յատուկ անմիտ ժպիտներ և բազուկները այժմ մեծ-մեծ բացած փայլում էին մի այնպիսի պաշտեղի կապտազունութեամբ, որը մեզ խորին կերպով համոզում է թէ երեխաները երկնքիցն են իջնում:

Եւ իրաւ, մայրն սկսեց համարեա թէ սիրել նրան: Վերջապէս, նա փոքր եղած ժամանակ երբէք չէր ունեցած աւելի գեղեցիկ խամջուկ (տիկին) և իր որդին աւելի լաւն էր քան թէ այն խամջուկները, որոնց փորին սեղմելով կարելի էր ասել տալ—հայրիկ, մայրիկ: Պարանքները կրկնապատկեցին և երբէք ոչ մի ուրիշ երեխայ չի եղել նրանից առաւել զարդարուն: Տեղի ունեցաւ մկրտութիւնը—այն հրէաները բոլորն էլ մկրտուած են, կամ մօտաւորապէս—և պէտք էր տեսնել թէ ինչքան շաքարի անուշեղէն թափւեց: Սեղէլմայէր կնքահայրը փոքր ինչ նեղի ընկաւ Հաւատամքի վերաբերութեամբ և ծիսակատարութիւնը տեղի ունեցաւ մի փառաւոր՝ Սուրբ Օգոստինոս կամ Երրորդութիւն եկեղեցում. քահանան իբր լաւ սկեպտիք պարիզեցի՝ գործը վերջացրեց ամբողջը մի շնչում ասելով.

—Կամենում էք քրիստոնեայ լինել: Ասեցէք կամենում եմ: Հրաժարում էք սատանի փորձութիւններից: Ասեցէք—հրաժարում եմ: Կրկնեցէք հետո հաւատամքը—հաւատամք ի մի Աստուծ, բլա, բլա, բլա, բլա, բլա, և ի կեանս յաւիտենական ամէն:

Այն օրը տիկին Տիշլէրը կրում էր մի սքանչելի գդակ և ամենը անցաւ հիանալի կերպով:

Եւ իրաւ, պառաւ տիկին Բադէրը, որին այս բոլոր պարոնները ատում են վիստ խաղալու միջոցին նենգութիւններ անելու պատճառով, շատ շար կինմարդ էր: Նա բամբասել էր տիկին Տիշլէրին, այն խեղճ, փոքրիկ կինմարդուն:

—Նա պաշտելու չափ է սիրում իր որդուն. այնպէս չէ, սիրելիս:

Այն, նա սիրում էր իր որդուն. բայց ինչպէս մի խաղալիք և ոչ առաւել: Որովհետեւ ձեզ էլ լաւ յայտնի է, որ նրա պէս մի շնորհալի անձնաւորութիւն, այնպէս «ժամանակակից»—Տէր Աստուծ, որքան շարն են գործածում այս խօսքը—մի անձնաւորութիւն, որն այնքան հրապուրիչ էր «շարժմունքների մէջ», զժամ

էր հնոտիների առուտուրով: Օրւայ մոլութիւն է այս, որ ոչ մի կապ չունի արեւստասիրութեան զգացմունքի հետ, բայց որը միջոց է տալիս գլխաւորապէս հարստականներին՝ հաւատացնելու իրանց բարեկամներին, որ իրանք հազազիւտի և նրբի ճաշակ ունեն և այսպիսով լցնել իրանց մտքի և սրտի ստակալի դատարկութիւնը: Գուշակում էք անշուշտ, որ տիկին Տիշլէրի բուզուարն ու դահլիճը լիքն էին զարդարանքներով (bibelots), նոյն իսկ շատ անյարմար էր այնտեղ մտնելը, երբ մարդիկ զալիս էին «jour fixe»-ին պէտք էր զգուշանալ ամենափոքր շարժմունք գործելուց անգամ, որպէս զի չկտորեն Միւրանտի մի բաժակ կամ Ռուանի մի հին եղջիւրանօթ, չնայելով որ աթոռները, բոլորն էլ «հին դարի», անյարմար էին ինչպէս տանջելու գործիքները: Եսպոնականութիւնը նոյնպէս իշխում էր տան մէջ. տիկին Տիշլէրը մինչև անգամ փոքր ինչ ճաշակ էր ներշնչել իւր ամուսնուն «բրոնզի առարկաների» և «պատքաշների» մասին. և երբեմն նկատելի էր նրանց մէջ Գրուօ հիւրանոցի, հակառակորդների հետ մրցող վազեմի «հնոտիավաճառը» աճուրդում գնած ալբոմի մի կտորով կամ մի թրի պատեանով:

\*  
\* \*

Այսպէս ուրեմն փոքրիկ Գիւստաւը մի խաղալիք էր, սիրուն տիկին Տիշլէրի հաւաքածոյքի ամենագեղեցիկ զարդարանքը: Հէնց որ նա կարողացաւ քայլել, նրա մայրը ազատ ընթացք տւեց իւր տարազագէտ հանճարին և որդուն զարդարեց ինչպէս բալետում պարողին: Նրա գդակների վրա կղզիաբնակ թռչունները տարածեցին իրանց երփներանգ թւերը, կօշիկների կոճակների վրա Հռենոսի կոպիճները փայլատակեցին, նրա վզնոցը թանգագին ժանեակներից էր կարւած, բոսորագոյն մախմարի և հին ոսկեգոյն ատլասի հագուստներ ունէր և տամուլթ ամսեայ հասակում արդէն ձեռնոցներ հագաւ: Բայց որովհետև նա խիստ գեղեցիկ սրունգներ ունէր և հարկաւոր էր անպատճառ նրանցով էլ հիացնել մարդկանց, ման էր զալիս սրնգաբաց, ինչպիսի եղանակ կուզէ թող լինէր, և դողում էր ցրտից թշառ աղքատի զսւակի նման: Այս մասին գովասանք էր, որ թափուում էր ամեն կողմից: Որքան էին սխալել

սքանչելի տիկին Տիշլէրի վերաբերութեամբ: Նրանից առաւել լաւ մայր չկար, զաւակը փառաւոր էր... Գիտէք որչափ մեծացել է նա... Տեսել էք նրան, սիրելի տիկին, անհաւատալի հագուստով Պերերաների տանը տեղի ունեցած մանկական երեկոյթում: Որչափ զարծալի էր նա իւր երկճիւղ բուշտիով և զալարուն ձեռնափայտով: Որովհետեւ նա այժմ յաճախում էր բոլոր հանդէսներին, այն երեխայ-զարգարանքը, լաւ հասկացէք թէ ինչ բաներ են զգեստաւորւած երեկոյթները: Հագուստների ամենալաւ պատճառ: Մարդիկ սքանչացել էին տեսնելով նրան Հենրիկոս III-ի մանկալաւիկի տարագով, Լուդովիկոս XV-ի ժամանակակից արքայի շորերով, Մաջաւի հագուստով և Աբրուցների զեղացու համազգեստով: Նա մի հիանալի փոքրիկ աղայ էր, խօսք չկայ, իւր սեւ թաւ մազերով և լճանման խորունկ աչերով: Նա այնչափ յայտնի էր դարձել, որ մարդիկ ասում էին. «գեղեցիկ, ինչպէս տիկին Տիշլէրի որդին», և երբ հինգ տարեկան եղաւ, մայրն այլ ևս չբիմանցաւ և նրա պատկերը նկարել տւեց:

Մտաբերում էք թէ որպիսի աջողութիւն ունեցաւ: Այս եղաւ առաջին Սալոնուս՝ պատերազմից յետոյ և ականաւոր նկարիչ Պետրիւս Բերտրանը չէ նկարել, կարելի է, առաւել լաւ պատկեր: Հէնց նշանակած օրը՝ պատկերը անւանել էին — Սպիտակ երեխայ: Եւ իրաւ, արեւտագէտը իր վրձիններով և ներկապնակով զօրծ էր ածել բոլոր ոյժը այնպէս, ինչպէս Քէօֆիլ Գոթիէն իւր գրչով, երբ նա գրում էր *Symphonie en blanc majeur* երկի ընտիր տողերը: Ոտնկայս սառուցեալ բեւեռային արջի մորթու վրա և սեղաւորւած ձերմակ մետաքսեայ պաստառւածքի ղիմացը, երեխան սպիտակ կոշիկներով, թաւշեայ ձերմակ բլուզով և գլխին մի սպիտակ խոյր կարապի փետուրով զարգարած. մի ձեռին բռնած ունէր շուշանի մի ոստ և միւսով կրթնել էր Ասորեստանի խոշոր բարակ շան վրա, ձերմակ ինչպէս ինքը:

Ամբոխը այս տեսնելով՝ գլուխ գործոց կոչեց — ասենք որ չէր էլ սխալուում — այս ձերմակութիւնների ցոլութեան առաջ, և Բերտրանը շքանշան ստացաւ:

Գեղեցիկ տիկին Տիշլէրը ուրախութիւնից արբեցած՝ այլ ևս չէր բաժանուում Շանգէլիզէի պալատից, քաշ տալով իր հետ

փոքրիկ Գիւտտաւին որ հագնւած էր, շատ հասկանալի է, ինչպէս իր պատկերն էր ցոյց տալիս: Նա անցնում էր հարստ-հարստ իր չորս կողմը շշուկներ լսելով:

— Դէհ, նայեցէք... նա է... ահա պալիս է այն ձերմակ երեխան: Որքան ծանօթների էր հանդիպում նա:

— Ո՛հ, սիրելի բարեկամուհիս, այս ի՞նչ աջողութիւն է... Մարդ շնչասպառուում է այս պատկերների առաջ... սա մի հրաշակերա է:

Եւ ամենքը համբուրում էին փոքրիկ մոդէլին, որ քաշ գալով երկու ժամից ի վեր՝ սովածութիւնից փորը վեց-վեց էր անում, իսկ ինքը յոգնածութիւնից չօրանջում էր:

\*  
\* \*

Այս բոլորից ի վեր երեսաց-զարգարանքը, որի փառքը գազաթնակէտին էր հասել, ընկերակցում էր իր մօրը ամեն հանդէսներում, ուր նրան տանում էր. նա մասնակցեց ամբողջ Պարի-րիզին: Զիարշաւներում թողից կուրացած, բաց օդից թմրած և ժխորից ապշած՝ նա ձանձրոյթից չօրանում էր կառքում նստած մնալով և թատրոնական առաջին ներկայացումներին նրա տըժ-գոյն քնարբի երեսը խիստ աչքի էր ընկնում նախաբեմի կարմիր մախմարի վրա: Այժմ նա հուշակած էր բոլոր յայտնի տեղերում, Նիցցայում, հանքային ջրերի քաղաքներում, ծովափնեայ մոդայի լողարաններում. երբ Լիւշոնի պանդոկապետները տեսնում էին նրան անցնելիս պիրենացի ուղեցոյցի տարազով հալնւած և վարձու առած էջի վրա հեծած, կամ երբ Տրուվիլի հիւրանոցի տէրերը նկատում էին նրան նաւաստու կոկիկ հագուստով զնդախաղին (Lown—tennis) նայելիս, իրանց ձեռները շփում էին ասելով:

— Ահաւասիկ փոքրիկ Գիւտտաւ Տիշլէրը այստեղ է... սեզոնը աջող կը լինի:

Տարիները սահում էին սակայն, անդամնալի տարիներ: Փոքրիկ Գիւտտաւը աճել էր արագապէս և այն երկարատև բարեկենդանը, որ նա վայելել էր մինչև այն օրը, մօտենում էր իր վախճանին. և այժմ հարկաւոր էր անպատճառ շնորհալի երեսուածին հազցնել մեծ տղայի ձեռով ինչպէս միւսները առհասարակ: Տիկին

Տիշլէրը—քանի մի ժամանակից ի վեր գեղեցիկ տիկին Տիշլէրը— միջոց գտաւ իր որդու զարդարանքով նորից մի «շիք» անելու. նա հաւանեց իր որդու համար և գնեց բաճկոն և վարտիք, դէպի ուսերը տարածող լայն ճերմակ օձիք և ծխնելոյզի նման գլանաձև գդակ, որով զարդարած boys-ներին տեսել էր նա յաղթական կամարի թաղում, երբ այդ երեխաները գնում են աստուածացիին պաշտամունքի, որը կատարում է մի բուրժուացի տանը. այս տան դուռը կրում է իր վրա մի պղնձեայ թիթեղ վրան հետեւեալ խօսքերը փորագրած. «Պաշտամունքը երրորդ յարկունքն է»:

Բայց իրաւ որ այն պառաւ գիծ տիկին Բադէրը—ի դէպ, խիտ պառաւ պէտք է լինի նա, ասում են, որ Կազիմիր Պերիէին շատ բարութիւն է արել—այն անիճւած լեզուն իրաւունք ունէր, որ ասում էր թէ տիկին Տիշլէրի մայրական սէրը հաստատուն չէ: Հէնց որ երեխայ-զարդարանքը boy ձևով հագնեց՝ զարմանալի կերպով նմանում էր երիտասարդ մարդուն և մօտիկ բարեկամուհիները չղլացան նկատողութիւն անել այս մասին:

—Ա՛խ, սիրելիս, ինչպէս մեծ որդի ունէք... Որչնփ պառաւեցնում է ձեզ այդ:

Այնպէս որ Գիւստաւին կոխեցին վարժատուն և անցեալ հոկտեմբերին—ժամանակն ինչպէս անցնում է— առաջինից փոխեց երկրորդ դասատունը:

Այժմ նա արդէն մի «դմբօ» է մօտ տասնուհինգ տարեկան: Բթացած զիշերօթիկների կեանքից՝ նա մի զզւելի աշակերտ է, որ թագչելով անկիւններում ծխում է իւր կօշիկների կապիճները և որը զրկում է յաճախ տուն գնալուց: Բայց նրա մայրը չէ տրտնջում այս մասին, շատ էլ չէ ցանկանում ամենքին ցոյց տալ այս կարճավարտիկ աշակերտը: Երբ, բախտի բերմունքով, նա պատժւած չէ կիրակի օրերը և գալիս է տուն, — բախտ չունի խեղճը, նրա ծնողները քաղաքումն են ընթրում: Նրան կերակուր են տալիս սեղանատան մեծ սեղանի մի ծայրի վրա: Յետոյ նա սպասում է միակ լամպարով վատ լուսաւորւած, ահագին, դատարկ դահլիճում, որ սենեակի ծառան լիցէօն տանի նրան և տեսնելով մթութեան մէջ ճերմակ երեխայի պատկերի ազօտ ցոլումը, որը չիշեցնում է այն վաչկեանները, երբ իր մայրը թւում էր թէ սիրում էր, լալիս է այն մեծ տղան, որի բեղերը բուսնում են արդէն:

Խեղճ երեխայ-զարդարանք, այլ ևս ոչ ոքին դուրս չէ գալիս նա:

## ԲԺՇՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԲԺՇ. Թ. ՉԱՔԱՐԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ):

Գ.

Բնութիւնը թուչկոտել չգիտէ. նա ամեն ինչ կատարում է աստիճանաբար: Այդ մի գիտական առած է, որ ներկայ դէպքում մենք կարող ենք ասել սերհատութեան վերաբերութեամբ: Եւ իրաւի նորանոր հետազոտութիւնները ցոյց տւին որ Մորէլի գտած սերհատութեան բոլոր երևոյթները նոյնպէս մէկ անգամից երևան չեն գալիս. սերհատութիւնից առաջ երևում են նորա թեթև՝ համարեա աննկատելի աստիճանները, որոնք, կամաց կամաց զարգանալով ապագայ սերնդի մէջ, կազմում են սկսող չարիքի առաջին օղակները միայն: Այդ օղակներն են ջղասպառութիւնը կամ ջղերի թուլութիւնը (նեւրոստենիան) և ուղեղի ծանրաբեռնութիւնը կամ ուղեղային խոնջութիւնը (переутомление мозга): Այդպիսով մենք ստանում ենք մի բարդ ախտաբանական (պաթոլոգիական) սանդուխք, որով կատարում է մարդու Ֆիզիքական, մտաւոր և բարոյական կործանումը: Այդ սանդուխքի առաջին աստիճանը կազմում է խոնջութիւնը, այնուհետև գալիս է ջղասպառութիւնը, որին արդէն հետևում են սերհատութեան զանազան աստիճանները: Եւ երբ այդ երեք երեւոյթներից մէկն ու մէկը ցոյց է տալիս իրեն որ և իցէ ցեղի կամ

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1894 թ. № 1 և 2:

ընտանիքի վրայ, այդ նշանակում է, որ նրանց ապագայի վրայ արդէն դրոշմւած է օրհասական դատավճիռը—բիոլոգիական «մանէ, թէկէզ, փարէսը»:

Ձարիքի սերմը նոյն իսկ պատահամբ ընկնելով ծնողներից մէկի ջղաշին սխտէմի մէջ, ժառանգական փոխանցումով աւելի ևս ամրապնդւում է: Մանուկը, որի չղութիւնը տեղի է ունեցել ծնողների խոնջութեան կամ ջղասպառութեան վիճակի մէջ, աշխարհք է գալիս արդէն թուլացած և հիւանդոտ ջղերով: Կեանքի պայմանները և զոյութեան կուէի հետ կապւած անխուսափելի աշխատանքը աւելի ևս սաստկացնում են այդ թուլութիւնը: և ինչ սկսել էր ծնողների մէջ, գումարւում և բարդւում է ապագայ սերնդի վրայ: Այդ է ահա ընդհանուր պատկերը այն նշանաւոր բիոլոգիական ևրևոյթի, որը ասւում է «ժառանգականութիւն», և որի մասին մենք կաշխատենք աւելի մանրամասն ծանօթութիւն տալ ընթերցողին մի առանձին յօդւածով:

Սկսող սերհատութեան կենսական նշանակութիւնը առանձին պարզութեամբ երևան է գալիս կեանքի այն նշանաւոր տարրի մէջ, որ է աշխատանքը: Բոլոր հետազօտութիւնները միաբերան վկայում են որ սերհատութեան ենթակայ եղող անհատները աւելի շուտով են յոգնում և աւելի անընդունակ են երկարատև աշխատութեան քան թէ աւողջները: Ահա այդ երևոյթն է որ մենք անւանեցինք խոնջութիւն և որը աւելի բացայայտ կերպով արտայայտւում է դպրոցական և պատերազմական ասպարէզների մէջ:

Դպրոցական խոնջութիւնը վերջին տարիներս առանձին ուշադրութեան առարկայ եղաւ. մինչև անգամ կազմւեցին ընդհանուր միջազգային կոնգրէսներ խնդիրը բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար: Եւ այդ ամենի հետևանքը եղաւ այն, որ անհերքելի ֆակտերով և վիճակագրական առատ թւանշաններով հաստատուեց դպրոցական խոնջութեան զոյութիւնը եւրոպական համարեա բոլոր տէրութիւնների մէջ: Սակայն ֆակտերի մօտիկ ուսումնասիրութիւնը ցոյց տւեց, որ խոնջութեան ենթակայ են գլխաւորապէս այն մանուկները, որոնք արդէն կրում են իրանց վրայ սերհատութեան դրոշմը. նրանք ծնւել են արդէն թուլացած ջղերով, և անկարող լինելով զիմանալ երկարատև աշխատու-

Թեան՝ աւելի ևս թուլանում են դպրոցական զբաղմունքների շնորհիւ։ Սրանից պարզ երևում է թէ ինչ մեծ նշանակութիւն ունի հոգեկան և ջղային երևոյթիների ուսումնասիրութիւնը մանկավարժական նպատակների համար։ Հոգեկան և ջղային խանգարումները շատ անգամ հետևանք են սխալ և անկանոն կրթութեան։ Կանոնաւոր կրթութեան գլխաւոր պայմաններից մէկը այն է, որ մանկավարժութիւնը միշտ ինկատի ունենայ աշակերտի բնածին յատկութիւնները, նրա խառնածքը (տեմպերամէնտ), նորա հակումները և ժառանգական սրամազրութիւնը։ Եթէ ընդունենք որ մանկավարժութիւնը նոյնն է մարդու հոգու համար, ինչոր է բժշկականութիւնը նորա մարմնի համար, ապա ուրեմն մանկավարժը պէտք է նոյնպէս ծանօթ լինի իւր աշակերտի հոգեկան և ջղային կարողութիւնների հետ։ Եթէ մանկավարժութիւնը աւելի խորը կերպով ուսումնասիրէր մարդու բոլոր թուլութիւնները և առաւելութիւնները — ասում է հոգեկան և ջղային հիւանդութիւնների նշանաւոր պրոֆեսոր Կրաֆտ-Էբինգըր — այն ժամանակ մանուկների կրթութեան գործից կը վերանային շատ սխալներ և խորհուրդութիւններ, աւելի կանոնաւոր ընարութիւն կը լինէր անհատի ապագայ զբաղմունքների և գործունէութեան համար և գուցէ շատերը ազատ կը մնային այն հոգեկան և ջղային հիւանդութիւններից, որոնք կազմում են ներկայ դարուս գլխաւոր չարիքներից մէկը»։

Խոնջութիւնը աւելի խիստ և աւելի փտանգաւոր կերպարանք է ստանում մանաւանդ պատերազմի ժամանակ, երբ Ֆիզիքական աշխատութիւնը և հոգեկան վրդովմունքները հասնում են արդէն իրանց զագաթնակէտին։ Ճրանս-Պրուսական կուլի ժամանակ, 1870/71 թ. շատ անգամ խոնջութիւնը ստանում էր կատարեալ հոգեկան հիւանդութեան կերպարանք. միայն մի քանի օրւայ հանդստութիւնից յետոյ, երբ զինւորների ոյժերը փոքր ի շատէ կազդուրւում էին, յայտնւում էր որ այդ բուն հոգեկան երևոյթները հետևանք էին ջղերի չափազանց խոնջութեան։

Մենք մի ուրիշ յօդւածում <sup>1)</sup> խօսել ենք միլիտարիզմի և

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1893 թ. №№ 7—8.

առհասարակ այն բոլոր պայմանների մասին, որոք նպաստում են մարդկային սեռի սերհատութեան: Այս անգամ զարձեալ փոքր ինչ կանգ կառնենք միլիտարիզմի վրայ, որովհետև նորանոր հետազոտութիւնները ցոյց են տալիս որ թէ խոնջութեան, թէ ջղասպառութեան և թէ սերհատութեան ամենազօրաւոր ազբիւրներինց մէկը կազմում են ժամանակակից պատերազմները: Առաջ, երբ զոյութիւն չունէին զինուորական-առողջապահական վիճակագրութիւնները, այդ սարսափելի չարիքը խոց էր տալիս զիտութեան աչքերինց և մնում էր ծածկւած: Մենք գիտէինք միայն վէրքերի քանակութիւնը, սպանւածների թիւը, բայց չգիտէինք թէ ինչ է նստում պատերազմը կուռղների ջղային համակարգութեանը: Նոր հետազոտութիւնները պարզում են այժմ այդ մանրամասնութիւնները: Պատերազմը վերջանում է, խաղաղութեան դաշնը կապում է, ծածկւում են պատերազմի հերոսների վէրքերը, ծածկւում են և նրանց սրտի վէրքերը, որոնք կորցրել են կուռի դաշտի մէջ իրանց մերձաւորներին. վերջանում են պատերազմի տեսանելի թշուառութիւնները, սակայն չարիքը դեռ վերջացած չէ, նա շարունակում է ապրել և զարգանալ այն ամենքի շղերումն ու ուղեղում, որոնց պատերազմը հասցրել է խոնջութեան և ջղասպառութեան: Պատերազմի արհաւիրքը, հոգեկան և ջղային կարողութիւնների վերին աստիճանի լարւած դրութիւնը, դիսցիպլինայի խտուրթիւնը, հայրենիքի վիշտը, ընտանիքի կարօտը, մերձաւոր ընկերների մահը—այդ ամենը այնպիսի պայմաններ են, որոնք չեն կարող խորին ազդեցութիւն չանել ուղեղային և ջղային համակարգութիւնների վրայ: Թէ մինչև որ աստիճանի կարող է հասնել խոնջութիւնը պատերազմի ժամանակ, սորան ճարտար ապացոյց կարող են լինել վերջին ռուս-տաճկական կուռի ժամանակ տեղի ունեցած Ֆակտերը: Զինւորների համար պատրաստած կերակուրը ամբողջ օրերով մնում էր կաթասների մէջ—առաւօտը չէին ուտում, որովհետև ամբողջ գիշերը անքուն էին մնացել. իսկ երեկոյեան չէին կարող ուտել, որովհետև ամբողջ օրուայ կուռից յետոյ բոլորովին ուժասպառ էին լինում: Մի քայլ ևս և ահա երևան են դալիս ջղային և հոգեկան խանգարումները իրանց բազմատեսակ երևոյթներով: Գերմանական բանակի մէջ, ինչպէս երևում է բժիշկ Արնդտի վիճակագրութիւնինց,

1866 և 1870 թւականներում հոգեկան հիւանդների թիւը շատ աւելի բարձր էր քան թէ խաղաղութեան տարիներում: Եւ որ ուշադրութեան արժանի է, այդ այն է, որ պատերազմական ժամանակի ջղաջին և հոգեկան խանգարումները աւելի ծանր կերպարանք են ունենում և աւելի մեծ տոկոս են տալիս անբուժելի հիւանդների:

Թէ ինչքան մեծ ազդեցութիւն ունի պատերազմը ջղաջին համակարգութեան վրայ, այդ ապացուցանում է նաև վարակիչ հիւանդութիւնների ընթացքով, որը բոլորովին ուրիշ է լինում պատերազմի ժամանակ: Յայտնի է որ հարկնքը (տիֆ), թոքերի բորբոքումը և ուրիշ նոյնանման հիւանդութիւնները շատ անգամ պատճառ են լինում ջղաջին և հոգեկան խանգարումների. սակայն ոչ մի ժամանակ այդ խանգարումները այնքան յաճախ և այնպէս ծանր չեն լինում ինչպէս պատերազմի միջոցին: Յրանս-պրուսական կռիւ ժամանակ գերմանական բանակում տիֆով հիւանդների թիւը հասնում էր 65,000-ի, իսկ ռուս-տաճկական պատերազմում տիֆով հիւանդացան 200,000, իսկ ուրիշ վարակիչ հիւանդութիւններով մօտ մէկ միլիոն հոգի. այդ հիւանդների մեծ մասը միաժամանակ ենթարկւում էին նաև այլ և այլ ջղաջին և հոգեկան խանգարումների: Այնքան է որ այդ երկուցթի մէջ մեծ դեր էին խաղում խոնջութիւնը և ջղասպառութիւնը:—Բժիշկ Արդտի վիճակագրական տեղեկութիւններից երևում է որ զինւորականները պատերազմից յետոյ շատ անգամ ծնունդ են տալիս հիւանդոտ և ախտաւոր սերնդի, որը վերին աստիճանի ենթակայ է ջղաջին և հոգեկան խանգարումներին: Սորանով կարելի է բացատրել այն Ֆակտը որ նշանաւոր զինւորականների զաւակները մեծ մասամբ լինում են թոյլ և միանգամայն անընդունակ իրանց հայրերի ծանր ծառայութեան համար. մի Ֆակտ որը պարզ ապացոյց է թէ մինչև իր աստիճան պատերազմը կարող է պատճառ լինել ծանր ժառանգական սերհատութեան:

Այդ ամենից յետոյ մենք իրաւունք ունինք ասելու որ պատերազմը ինչքան որ արիւն է կլանում, այնքան ևս, զուցէ և աւելի, ջղեր է խորասկում: Պատերազմը ազգերի ամենաառողջ և ամենաթարմ մասի ջղաջին համակարգութեան մէջ մտցնում է խոնջութեան և ջղասպառութեան վտանգաւոր տարրը: Եւ եթէ աչքի

առաջ ունենանք որ ժամանակակից պատերազմները պահանջում են միլիոնաւոր մարդիկ, այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ի՞նչ սարսափելի կորուստ է ունենում մարդկութիւնը այդ անազին բազմութեան ջղերի խանգարումով, որը օրհասական կերպով պէտք է փոխանցւի ապագայ սերնդին և առաջնորդի նրան զէպի անխուսափելի սերհատութիւն:

Դ.

Խոնջութեան և սերհատութեան ազդեցութիւնը տարածւում է նաև այնպիսի զուտ բարոյական երևոյթների վրայ ինչպէս են ինքնասպանութիւնը և յանցանքագործութիւնը: Սրանք այնպիսի ծանր չարիքներ են, որ մարդկութիւնը չէր կարող հաշուել նրանց հետ և չհետաքրքրել նրանց պատճառներով: Այդ երևոյթները բացատրելու համար մարդկային խելքը ստեղծել է բազմաթիւ միջեր, բազմաթիւ ենթադրութիւններ և ամբողջ փիլիսոփայական սիստէմներ: Ամեն անգամ երբոր յայտնւել է բարոյական երևոյթների քննութեան մի նոր ճանապարհ, մի նոր եղանակ (մեթոդ), մարդկութիւնը իւր հալածքը դարձրել է զէպի նա և լուծում է խնդրել իրեն տանջող չարիքների համար: Ինքնասպանութիւնը հին ժամանակներից սկսած վերաբերում էր բարոյական փիլիսոփայութեան. այնուհետև, իբրև հասարակական կեանքի երևոյթ, նա անցաւ վիճակագրական գիտութեան առարկաների շարքը. իսկ յանցագործութիւնը միշտ եղել է քրէական գիտութիւնների բովանդակութիւնը: Սակայն վերջին ժամանակներս այդ երկու երևոյթներն էլ բաւական լայն չափով մտել են արդէն բժշկականութեան շրջանի մէջ: Ինքնասպանութիւնը այժմ կազմում է հոգեկան հիւանդութիւնների հետաքրքրական և գլխաւոր խնդիրներից մէկը, իսկ յանցանքագործութիւնը առարկայ է դարձել քրէական մարդաբանութեան, որը իւր բացադրութիւնները այդ չարիքների ծագման մասին հիմնում է սերհատութեան, ջղասպառութեան և խոնջութեան երևոյթների վրայ: Ոճրագործ մարդը քրոնիկական հիւանդ մարդ է, հիւանդ իւր ջղերով, իւր ուղեղով և իւր բոլոր կազմաւածքով, ասում է լոմբրոզօն. և իւր այդ եզրակացութիւնը հաստատելու համար առաջ է բերում մի շարք փաստեր, որոնք հիմնւած են 26,000-ից աւելի հետազօտութիւնների վրայ:

Այն բազմաթիւ փաստերով, որը արդէն հաւաքել է քրէական-մարդաբանութիւնը, աւելի ևս հաստատուում է Մորէլի հիմնական սկզբունքը թէ սերհատութիւնը հաւասարապէս ներգործում է մարդկային կազմածքի բոլոր մասերի վրայ. նա լինում է թէ Ֆիզիքական, թէ մտաւոր և թէ բարոյական: Քրէական մարդաբանութիւնը ապացուցեց, որ այդ միւսնոյն զարտուղութիւններին ենթակայ է նաև յանցանքագործների մեծամասնութիւնը. նա ցոյց տւեց որ բնաւորութեան անկանոնութիւնը, բարոյական զգացմունքների բթութիւնը, որոնցով սովորաբար ճանաչոււմ է սերհատուող անհատը, շատ աւելի յաճախ նկատելի է յանցանքագործների քան թէ սովորական մարդոց վրայ: Եւ որ ուշադրութեան արժանի է, յանցանքագործներից շատերը իրանց գանդի և մարմնի վրայ կրում են այն Ֆիզիքական արատները և խտորումները, որոնք կազմում են սերհատութեան տեսանելի և շօշափելի նշանները: «Արիզում, Բրոկայի թանգարանում, կարելի է տեսնել հայրասպանների և ուրիշ ծանր ոճրագործների գլխատւած գլուխները, որոնք առատ նիւթ են աւել քրէական-մարդաբանութեան սկզբունքները կազմելու համար: «Այդ գլուխները, ասում է պրոֆ. Սիկորսկին, ապակեայ պահարանների ետեւից յառում են իրանց անխօս հաշւածքը թանգարանի այցելուների վրայ և ձգում են մարդուն աւելի խորը փիլիսոփայական խորհրդածութիւնների մէջ քան թէ լուռ գերեզմանները:

Այսպէս ուրեմն. քրէական-մարդաբանութիւնը հաստատեց այն կապը, որ գոն ում է յանցանքագործութեան և սերհատութեան վիճակի մէջ. նա ցոյց տւեց դարաւոր չարիքի մի նոր, նշանաւոր ազբիւրը—այն է բիոլոգիական ազբիւրը: Տարակոյս չկայ որ սրանով դեռ չեն լուծոււմ յանցանքագործութեան բոլոր կողմերը, յանցանքագործութիւնը ունի նաև ուրիշ շատ արմատներ և ազբիւրներ, որոնք բղխում են սոցիալական կենքի բազմադիմի պայմաններից: Հասարակական գիտութիւնները ցոյց տւին այն կապը, որը գտնոււմ է հասարակական ու անհատական խղճմտանքի և յանցանքագործութեան ու յանցաւորի կենսական պայմանների մէջ: Իսկ քրէական մարդաբանութիւնը ցոյց է տալիս, որ բացի այդ վերացական կապից, յանցանքագործութիւնը կարող է կապ ունենալ

նաև այն բիոլոգիական պայմանների հետ, որոնց մէջ սեղի է ունենում մարդու բեղմնաւորութիւնը, նորա կազմաւածքի ստեղծագործութիւնը: Այդպիսով ամեն մի յանցանքագործութեան դէպքում դատաւորին մնում է վճռել թէ արդեօք ներկայ դէպքում այդ պայմաններից որը պէտք է ունենայ գերակշռող նշանակութիւն: Մի վճիռ՝ որը շատ անգամ կարող է կեանքի և մահուան խնդիր լինել յանցաւորի համար. մի վճիռ, որը միևնոյն ժամանակ չէ կարող արդար լուծում ստանալ առանց բժշկականութեան օգնութեան:

Այդպէս ուրեմն ժամանակակից բժշկականութիւնը հաստատում և սնդուում է որ յանցանքագործութիւնների, ինքնասպանութիւնների և խեղացնորութիւնների մի որոշ մասը առաջանում է անհատի սերնատութեան վիճակից, իսկ այդ չարիքների միւս մասը ունի այլ ծագում և այլ պատճառներ, որոնց մէջ առաջին տեղը բռնում են անշուշտ հասարակական կեանքի ներկայ անկանոն և անբնական պայմանները:

Այդ թեթև ակնարկից, որի նպատակն էր հարևանցի կերպով ցոյց տալ բժշկականութեան արած քայլերը հոգեկան բարդ երևուցթիւների ուսումնասիրութեան ասպարէզում, երևում է որ գիտութիւնը, չնայելով իր արած յառաջադիմութեան, դեռ ևս շատ հեռու է այն իդէալից, որին նա ձգտում է հազարաւոր դուցէ և բիւրաւոր տարիներից ի վեր. մարդկային ուղիղը, որը զարմանալի յանդրդնութեամբ թափանցում է երկնքի անսահման տարածութեան, ծովերի անհուն խորութեան և երկրի մութ անդունդների մէջ. որը թռչկոտում է մի աստղից միւս աստղի վրայ, երկնային մի համաստեղութիւնից դէպի միւս համաստեղութիւնը, և իւր շնչին ու ժերով զննում է նրանց էութիւնը, որոշում է նրանց չափը և կշիռը, գտնում է նրանց կեանքի անխախտելի օրէնքները, միևնոյն ժամանակ շատ քիչ է ճանաչում ինքնիրան, շատ քիչ տեղեկութիւններ ունի ինքը իւր էութեան մասին:

Սակայն այդ տեղեկութիւններն էլ իսկապէս քիչ չեն, եթէ աչքի առաջ ունենանք որ ընդ ամենը դեռ կէս դար չկայ, որ գիտութիւնը այդ հարցերի լուծումը դրել է փորձնական ուղիղ ճանապարհի վրայ:

Անցան այն ժամանակները երբ փիլիսոփաները երես էին դարձնում տեսանելի աշխարհից և, խորասուզելով վերացական մետաֆիզիկայի խորքերը, իրանք իրանց մէջ էին փնտռում տիեզերական գաղտնիքների լուծումը: Այն ժամանակ այդպիսի իմաստասիրութիւնը համարում էր մարդկային մտածողութեան պսակ և գիտութիւնների ծայրագոյն աղբիւր:—Այդ ժամանակները անդառնալի կերպով անցան: Այժմ մարդկային գիտութեան բոլոր ասպարէզներում ձգտում են պտնել ճշմարտութիւնը՝ ուսումնասիրելով իրական աշխարհի երևոյթները, քննելով բնութիւնը իւր ամբողջութեամբ, որի մէջ է նաև մարդը իւր հոգու բոլոր կարողութիւններով:

Այդ ուղղութեամբ է ընթանում այն գիտութիւնը, որի նպատակն է պարզել մարդկային հոգու էութիւնը, նրա բարդ ու բազմակողմանի երևոյթները.—կը հասնի՞ արդեօք նա իւր նպատակին թէ ոչ, այդ կորոշէ միայն ապագան. իսկ մարդը չնայելով ոչ մի դժարութեան և ոչ մի խոչնդոտի, համարձակ նայում է առաջ, համոզւած լինելով որ միայն մտաւոր աշխատութեան և բարոյական կատարելագործութեան մէջ է կայանում երկրային կեանքի խորհուրդը, երկրային երջանկութիւնը:

## ԽԱՒԱՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

ԱԼԵԿՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Խաւարի մէջ ճարպիկ ու քաջ,  
Ինչքան սրբէք լեզուներ.  
Խղճալի էք լուսոյ առաջ,  
Գիշերասէր շղիկներ!

Խաւարի մէջ դուք, ոյժ առած,  
Յանցեր հիւսէք, ինչպէս սարդ...  
Մերն է զարուն, վարդ-լուսաբաց,  
Եւ ապագան լուսազարդ:

Մեզ լոյսն է—կեանք. ձեզ—գերեզման.  
Ահա փայլեց արեգակ...  
Դէհ, շուտ արեք, խլուրդի նման,  
Դուք պահւեցէք հողի տակ...

10 յունւարի 1894 թ. Մոսկւա:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԼԵԻՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

I

ԼԵԻՈՆԸ ՍՄԲԱՏԻՆ

Սիրելի բարեկամ!

Իմ ուրախութեանը չափ սահման չկայ: Ես չեմ կարող ինձ զսպել, որ քեզ չպատմեմ այն բոլոր նորութիւնները, որ տեղի են ունենում մեր ուսումնարանում: Նոր է մեր տեսուչը, մեր հասարակութեանը յայտնի Սամէլ Սարգսեանը: Նոր է և ամբողջ ուսուցչական խումբը, բացի ինձնից որ երկրորդ տարին է ծառայում եմ: Նկատելի է թէ աշակերտները ինչ յոյսեր են դրել մեր նոր ուսուցիչների վրայ: Սոքա բոլորն էլ համալսարանականներ են, ոմանք՝ նորաւարտ, միւսները՝ վաղուց աւարտած և յայտնի գրականութեան մէջ:

Սիրելի Սմբատ! Այսուհետեւ ես պիտի սկսեմ քեզ հետ կանոնաւոր նամակագրութիւն: Ես ցանկանում եմ քեզ հաղորդակից անել իմ տպաւորութիւններին և դպրոցական դիտողութիւններին: Բայց խնդրում եմ, յանուն մեր բարեկամութեան, չզլանաս դու ևս կանոնաւորել նամակագրութիւնդ և յայտնել ձեր դպրոցի նորութիւններից: Թէպէտ շատ սարեր ու ձորեր են մեզ բաժանում, բայց թող մեր հոգիները միասին լինին, միասին ուրախանան, միասին արամեն!

Այսօր, սեպտեմբերի երեքին, մեր ուսումնական տարին սկսւում է: Առաւօտեան, դասերը սկսելուց կէս ժամ առաջ, հան-

դիսարանում հաւաքւած էին բոլոր ուսուցիչները, վերակացուները և աշակերտները: Մինչև տեսչի գալը բոլորեքեան լուռ էին, և մեր աչքերը անդադար շրջում էին մեր նոր ուսուցիչների դէմքերի վերայ, կարծես ուզում էին ուսումնասիրել նոցա և կարգալ աչքերի մէջ նոցա ներքին աշխարհը, որ դեռ անյայտ էր մեզ և խիստ հետաքրքրում էր բոլորիս: «Արդեօք արդարացնելու են նոքա մեր յոյսերը և կարողանալու են արդեօք իրանց պահել կոչման բարձրութեան վերայ? Օ, եթէ անկարող պիտի լինին մեր խորին շարժանքը և սէրը դրաւելու, այն ժամանակ սատանան տանի նոցա իրանց զիտութիւնների հետ միասին»: Այս էր կարգացում գրեթէ բոլոր աշակերտների աչքերում: «Բայց ոչ. մենք նախազգում ենք, որ նոքա պիտի լինին այն, ինչ մենք երազում էինք, որ նոքա պիտի լինին մեզ հաւար թէ ուսուցիչ-դաստիարակ, թէ՛ ընկեր-բարեկամ»:

Մի հազիւ նշմարելի իրարանցում, շշնջիւն, և ահա տեսուչը եկաւ: Մի ձախ և մի աջ գլուխ խոնարհելով, նա զնաց և կանգնեց դահլիճի ճակատին, որի պատի վերայ կախւած են մեր կայսեր և երկու կաթուղիկոսների մեծագիր պատկերները:

Տեսչի աջ և ձախ կողմին շարեշար կանգնած էինք ուսուցիչներս:

Ափսոս, որ ես նկարիչ չեմ: Հէնց այստեղ՝ վրձինի մի քանի շորժումով կը դնէի քո առաջ մեր զեկավարի բարձր հասակը, լայն ճակատը, լուրջ և մտախոհ դէմքը և յոգնած, բայց խորաթափանց հայեացքը: Սակայն պատկերացրու նորան, ինչպէս կ'ուզես, բայց հետևիք նորա ճառին, տես, ինչ արամբանական ճանապարհով է գնում նորա մտքերի ընթացքը, և որքան ճիշդ է ըմբռնել նա լուսաւորութեան գաղափարը: Ուշադրութիւն դարձրու նոյնպէս և այն բանի վերայ, թէ ինչպիսի խորը գիտակցական նպատակ է դրել նա իւր առաջ և ինչ պատասխանատու պաշտօն է ստանձնել իւր վերայ: Որքան լայն և անսահման են նորա հայեացքները կրթութեան մասին, զիտութեան մասին, դպրոցի մասին!

«Յարգելի պաշտօնակիցներ և սիրելի աշակերտներ...!»

Այսպէս սկսեց նա: Բայց ինչ խրոխտ ձայն էր այն ձայնը. խորին լուռութեան մէջ գմբեթաւոր հանդիսարանում դղրդում էր այն ձայնը, որպէս պատերազմական երաժշտութիւն:

«Անհրաժեշտ է, շարունակեց նա, որ մենք սկզբից արդէն իրար լաւ ճանաչենք, որպէս զի ապագայում ոչ մի թիւրիմացութիւն առաջ չգայ: Նախ և առաջ մի քանի խօսք մեր ուսումնարանի մասին: Քաջ յայտնի է ինձ, թէ նորքան մեծ է այն պատասխանատուութիւնը, որ ինձ վերայ բարձրաձ է, և որքան ծանր է այն պաշտօնը, որին ես կոչուած եմ: Մեր գործի առաջադիմութիւնից կախուած է լինելու սերունդների վիճակը, մեր ապագայ հասարակութեան կազմը: Լաւ պայմանների մէջ կը լինի մեր դպրոցը—լաւ սերունդներ կ'արձակենք, վատ պայմանների մէջ կը լինի—վատ սերունդներ:

«Ինչ է այս կրթարանի վերջնական նպատակը? Պատրաստել մարդկանց այս կամ այն պարագմունքի համար? Պատրաստել ուսուցիչներ, հոգեւորականներ? Ո՛չ: Սորա նպատակը այն է, ինչ նպատակ պիտի ունենայ ամեն մի դպրոց նախ և առաջ—պատրաստել լուսաւորած, բառիս բուն նշանակութեամբ լուսաւորած, և բարեկիրթ քաղաքացիներ: Իսկ վարդապետ, քահանայ, ուսուցիչ—դա երկրորդական բան է: Առաջ մարդ և ապա պաշտօնեայ: Ահա այն բնաբանը, որ փորագրուած պիտի լինի իւրաքանչիւր ուսումնարանի դրան ճակատին:

«Այո, մեր ամենամեծ նպատակն է—լուսաւորութիւնը, ինչպէս նա հասկացուած է քաղաքակիրթ հասարակութեան մէջ: Մենք բախտաւոր ենք, որ մեր անմոռանալի նախորդները դրած են արդէն լուսաւորութեան հիմքը: Մտ կէս դար է, որ սկսած է մեր մէջ մտաւոր շարժում, մտքի վերածնութիւն: Մեր վերածնութեան առաջին եռանդուն գործիչները,—Նազարեան՝ իւր հետեւողներով, Շահազիզ, Պատկանեան, Բաֆֆի և սոցա հետ միասին շատ շատերը,—բոլորն էլ լայն աշխարհահայեացքի մարդիկ էին, ազատ դարաւոր նախապաշարմունքից, և բոլորն էլ ծառայում էին միևնոյն բարձր գաղափարին: Ընդհանրութիւնը—ժողովրդի սեփականութիւն դարձնելը—անա այն իգէալը, որով տողորած էին նոքա, որ, ինչպէս փարոս, փայլում էր հեռուից և զէպի իրան քարշում նոցա բոլորին: Նոքա առաջ են բերել մեր մէջ կենսական հոսանքներ, որոնց առաջ դժուար թէ կարողանայ զիմանալ մի որ և իցէ խոչնդոտ: Եւ այդ հոսանքները—ազգային, ժողովրդական,

հասարակական և գրական—իրանց հարթած շաւղով առաջ են ընթանում, և առաջ գնալով խորանում են և լայնանում: Գալիք սերունդների անէծքը պիտի ծանրանայ այն անձանց չիշատակի վերայ, որոնք ամենայն ճիգ և աշխատանք էին գործ դնում այդ հասանքների առաջն առելու:

Յարգելի ուսուցիչներ! դուք և ես ձեզ հետ միասին—մենք ամենքս կոչւած ենք այստեղ մեր լուսաւորութեան սկսւած գործը շարունակելու: Եւ դուք, սիրելի աշակերտներ, դուք ևս պիտի ծառայէք ասպագայում նոյն սուրբ գործին, և այժմեան ձեր զարուցական տարիները ուրիշ բան չեն, եթէ ոչ նախապատրաստութիւն նոյն նպատակը իրագործելու: Բայց մեր կրթութիւնը արդիւնաւէտ կը լինի միմիայն այն ժամանակ, երբ բոլորեքեան պարզ ըմբռնենք մեր նպատակը և նոյնժամայն այն սերտ կապը, որ պիտի լինի տեսչի, ուսուցիչների, վերակացունների և սաների մէջ: Ես կամենում եմ, որ մեր կրթական գործը լիովին զիտակցական լինի ոչ միայն ձեր ղեկավարների համար, այլ և ձեզ համար, սիրելի աշակերտներ: Կարևոր է, որ մենք հասկացած լինինք մեր ժամանակի ոգին, մեր ժամանակւայ պահանջները: Այս պայմանով միայն մենք չենք շեղւիլ մեր ուղիղ ճանապարհից:

Ե՛րբայց վայ մեզ, եթէ չենք ըմբռնել մեր ժամանակը! Մեր բնածին բոլոր ընդունակութիւնները, անցեալի բոլոր փառաւոր գործերը, մեր փառքը, մեր ժողովրդականութիւնը, ոչինչ, մի խօսքով, չէ կարող պահել մեզ մեր նախկին բարձրութեան վերայ, հէնց որ կը սկսենք մեր ժամանակակից լաւագոյն հոսանքների դէմ ժայռեր գլորել:

Այնուհետև տեսուէր շեշտեց մի քանի պարտականութիւնների վերայ, որոնք հաւասարապէս վերաբերում են թէ իրան, թէ ուսուցիչներին, թէ վերակացուններին և թէ աշակերտներին: Նա ասաց թէ մեր յոյսերը օգը կը ցնդեն, ինչպէս միրաժ, եթէ չլինի մեր մէջ եռանդ, տոկոճ աշխատանք և պարտաճանաչութիւն: Միևնոյն ժամանակ նա ցանկութիւն չաջանեց, որ ուսումնարանի բոլոր անդամների մէջ՝ սկսած տեսչից մինչև ստորին դասարանի աշակերտը՝ անսպառ գոյութիւն ունենայ փոխադարձ սէր և յարգանք: Ընթէ մեր մէջ բացակայ լինի փոխադարձ յարգանքը, աւելի լաւ է թող-

նել մեր գործը, գոցել այս հիմնարկութեան դռները և մեր բանին գործին երթալս:

Վերջումը ներկայացնելով աշակերտներին նոր ուսուցիչներին, պատւիրեց աղօթք ասել և զնալ դասի:

Սիրելի Սմբատ! Դու չես կարող երևակայել, թէ ինչ մեծ ոգևորութիւն առաջ բերեց աշակերտների մէջ իրանց պաշտելի տեսչի ձառը: Նորա արտասանած ամեն մի բառը կարծես մի աստիճան բարձրացնում էր նոցա հոգին: Բոլորեքեան՝ աչքները նորա վառվռուն դէմքին յառած՝ կարծես չէին ուզում բաց ու խուփ անել, որպէս զի նոյնիսկ մի հատ վայրկեան չզազարէին սիրելի տեսչի վեհ կերպարանքը տեսնելուց:

Բոլորի երեսին ներքին գոհութիւն էր փայլում և հիացման մեղմ ժպիտ:

Երկար տարիներ մեր փայփայած զաղափարները, մեր բոլոր պայծառ յոյսերը ահա իրագործւում են: Այսպիսի մի տեսուչ էին ուզում սաները, և նա կարծես երկնքից իջաւ նոցա համար:

Նոցա ուրախութիւնը, նոցա բախտաւրութիւնը, սահման չունի:

Սիրելիս! կրկնում եմ նորից. դու ևս սկսիր, ինձ նման, քո զպրոցական տպաւորութիւններդ հաղորդել:

Մնամ նամակիդ սպասող

Ք ո Լ և ո ն:

## II

### ՍՄԲԱՏԸ ԼԵՒՈՆԻՆ

Սիրելի Լևոն! Ստացայ քո նամակը և յափշտակութեամբ մի քանի անգամ կարդացի ծայրէիծայր: Ընկերներիս էլ աւի կարդալու: Յուսով եմ, որ դու չես նեղանալ սորա համար: Ինչ մենք կորցրել ենք այստեղ, այդտեղ գտել ենք: Երանի ձեզ! Ձեր ուսումնարանի վերայ նոր օրերի արշալոյս է բացւում, իսկ մերի վերայ իջնում է խաւարը:

Ինչպէս նոր են ձեր տեսուչը և ուսուցչական խումբը, նոյն-

պէս նոր են մեր տեսուչը և մեր ուսուցչական խումբը: Աւելի ճիշդն ասեմ, մեր տեսուչը շատ հին է: Հինգ տարի առաջ այդ պաշտօնով էր նա մեր դպրոցում: Բայց մի քանի հանգամանքներ, տնւրութեան մի կողմից և հոգաբարձական խմբի կազմութեան փոխելը միւս կողմից՝ պատճառ եղան նորա հեռանալուն մեր այս գիտութեան չարկի տակից: Այժմ ծեծը մոռացւած է, և հոգաբարձուները, որ նոր ընտրուեցին, նորա կողմնակից և պաշտպաններն են: Ահա ինչու հնարաւոր եղաւ վերստին նորա տեսչութիւնը: Առաջ ես լսելով էի ճանաչում այդ վատահամբաւ մարդուն: Այժմ ամեն օր աչքովս տեսնում եմ նորա նեղ ճակատը, աչքերի արագաշարժ բիբերը, այծի մօրուքը, որ տըմբաւմբում է խօսելու ժամանակ, և ականջովս լսում եմ նորա անսխորժ ձայնը և մեռելութեան քարոզները:

Ես էլ, քո օրինակին հետեւելով, բերում եմ մեր տեսչի ճառը: Համբերութիւն ունեցիր լսելու: Եթէ այս ճառը, քո բերածին հակառակ, անհետաքրքրական և ձանձրալի լինի, մեղադրիր ոչ թէ ինձ, այլ մեր պատուելի ղեկավարին:

Նախ և առաջ քեզ զգուշացնեմ, որ չաշխատես որոնել նորա ճառի մէջ խիստ տրամաբանական հետեւողութիւն. զուր պիտի փնտրես այնտեղ մի լուսաւոր գաղափար, մի ոգևորիչ նախադասութիւն: Բայց փոխարէնը դու կը գտնես նորա մէջ բազմաթիւ վերաւորական ակնարկներ, վերաբերեալ իւր նախորդ վարչութեանը, հեզնական նկատողութիւններ, վերաբերեալ նախկին ուսուցչական խմբին, և վերջապէս առատաձեռն խոստումներ դպրոցի լուսատու ջահը հանգցնելու և անդորր խաւարի մէջ նորան պահելու:

Սեպտեմբերի մէկին առաւօտեան կանուխ բոլոր աշակերտները հաւաքուել էին դպրոցը: Ոմանք խաղում էին բակումը, որ, ի դէպ է ասել, շատ նեղ է և փոքրիկ՝ հարիւրաւոր սաների թւի հետ համեմատած, միւսները, աւելի մեծերը, պատշգամբում անցուդարձ անելով խօսում էին: Հէնց որ տեսուչը հրամայեց վերակացւին աշակերտներին դահլիճ ժողովել, մեր պատուելին՝ ամբողջովին եռանդ դարձած՝—զանգը հարեց երկու անգամ: Բայց որովհետեւ շատերը խումբ-խումբ կանգնած՝ դարձեալ հանգիստ շարունակում էին իրանց գրոյցը, կարծես զանգը նոցա համար չլինէր, այդ պատճառով նա

տաքացաւ, ընկաւ այս ու այն կողմ, ինչպէս կրակ ընկած մի մուկ, և հրամայելով, սպառնալով, հրելով քշեց բոլորին դէպի դահլիճ: Ես՝ հեռու կանգնած՝ դիտում էի նորա շարժումները և հիանում նորա վայրենի եռանդի վրայ: Դէմքիս ծաղրական ժպիտը, երևի, իւր հասցէին ընդունելով, նա գոռաց մի աշակերտի վրայ պատըշգամբի հակառակ ծայրից:

— Ե՛յ, պարոն, զանգը չլսեցիր, ինչ է?

Դու, ի հարկէ, նկատած կը լինես, որ այսպիսի գոռգոռացող և զուր տեղը մեծ աղմուկ հանող վերակացուները ամենաքիչ գործ են կատարում դպրոցում և ամենաքիչ յարգանք վայելում աշակերտների առաջ: Այդպիսիներին շատ անգամ՝ նոյն իսկ ձեռք են առնում, որպէս զի չարացնեն նոցա և իրանք ներքուստ զւարճանան: Ինձ ևս մեծ հրճւանք է պատճառում այսպիսի կարգապահների անտեղի բարկութիւնը և դժութիւնը: Երբ նա հրամայեց աշակերտին դնալ դահլիճ, ես դիտմամբ անշարժ մնացի. ուզում էի տեսնել թէ ինչ պիտի անէ: Մէկ էլ տեսնեմ, իմ պատուելի վերակացուն՝ չարացած, յօնքերը հաւաքած, կուները թափահարելով արագ քայլում է աշակերտի կողմը: Ես աւելի հեգնական դիւք եմ բըռնում: Բայց զարմանալի բան պուրս եկաւ: Այնպէս որ նա էր զալիս, ես կարծում էի թէ առանց աշակերտին խփելու՝ նա չպիտի հանգըստանար: Բայց ինչ? Քանի մօտ էր զալիս, այնքան աւելի մեղմանում էր, իսկ երբ հասաւ, արդէն քաղաքավարի և կիսախրատական եղանակով ասաց.

— Տեսնում ես, բոլորեքեան գնացին. պու ինչու չես գնում? Եուս գնա՛, հիմա պ. տեսուչը կը գնաց դահլիճը:

Աշակերտը ներս մտաւ առանց մի խօսք ասելու: Զգիտեմ, Աւոն, մեր դահլիճը դու տեսած կաս թէ ոչ: Ասուած դահլիճ համարէ այս երկար ու ձիգ, ցած ու մուկ սենեակը: Առհասարակ, պէտք է ասել, թէ մեր դպրոցի անյարմար շինութիւնը թէ անհնար կրթութիւնը իրար սազ են զալիս:

Աշակերտների մէջ ընկած իրարանցումը և փսփոսոցից ես իմացայ, որ տեսուչը զալիս է: Եւ իրօք: Զանցած մի բոպէ, կապոյտ շորով ծածկւած ամբիոնի վերայ երևաց մի փոքրիկ գլուխ: Դա ինքը տեսուչն էր: Նորա սրածայր մօրուքը տըմբատմբալուց կարելի

էր հասկանալ, որ նա սկսել է խօսել: Չայնը այնքան ցածր էր, որ հեռու կանգնած մարդուն հասնում էր միայն անորոշ, խուլ շշուկ: Հրելով սրան նրան մէկը մի կերպ անցկացաւ և ուղղակի նրա քթի տակ կանգնեց: Ինչպէս երևում էր, նա հրամայել էր աղօթք ասել, որովհետև դահլիճի մի ծայրից լսեց աղօթքի ձայն: Երբ լսեց այս ձայնը, տեսուչը սկսեց.

«Այսօր մեր դասերը կը սկսեն: Բայց ամենից առաջ ես հարկ եմ համարում մի քանի խօսքով նախազգուշացնել ձեզ, որպէս զի ձեզ լաւ պահէք և կարգ ու կանոն ճանաչէք. քանզի խիստ պատիժ կայ: Այո, խիստ և խիստ պատիժ կայ: Դուք գիտէք ինչ է նշանակում կարգ ու կանոն? Հաւանական է, որ չ'իմանաք, որովհետև որ սովոր չէք կարգ ու կանոնի, էնդուր որ ձեզ չեն սովորեցրել: Բայց ոչինչ. առաջ չէք սովորել, հիմա կը սովորէք: Կարգ ու կանոնը, սիրելի աշակերտներ, ուսումնարանի հոգին է: Առանց կարգ ու կանոնի ոչ մի բան չէ կարող զլուխ դալ աշխարհումս: Ուրեմն դուք պէտք է պինդ պահէք մեր դպրոցի կարգ ու կանոնը:

Երեք, որ ազգի և եկեղեցու ապագայ անդամներն էք, գիտէք թէ ինչքան երախտասպարտ էք ազգի առաջ? Նա ձեզ հաց է տալիս, որ սոված չմնաք, նա ձեզ շոր է տալիս, որ հագնէք և չմրսէք ցուրտ ժամանակ. նա ձեզ ուսում է տալիս, որ լուսաւորուէք և ազգի, եկեղեցու, ծնողների արժանի զաւակներ դառնաք: Հիմա, ասէք տեսնեմ, վայել է ձեզ, որ երս խտամոսաց լինիք և այս հաստատութեան կարգ ու կանոնին չհետևէք?»

«Համեստ եղէք, սիրելի աշակերտներ, քան զի համեստութիւնն է, որ մարդու հոգին պայծառացնում է և առաջինի է դարձնում մարդու հոգին, և առանց համեստութեան ուսում չկայ: Թէ տեսուչ, թէ վարժապետ, թէ վերակացու — ամենքի հետ պէտք է լինիք խոնարհ և համեստ: Միթէ դուք կարող էք սիրել այն որդուն, որ հօրը յանդուգն պատասխաններ է տալիս? Այնպէս էլ մենք չենք կարող սիրել այն աշակերտին, որ յանդուգն է, որ խառնակիչ է, որ ըմբոս է և յանդուգն պատասխաններ է տալիս իւր վարժապետին կամ վերակացուին:

«Այս վերջին տարիներս ինչեր չէ տեսել մեր այս խեղճ հաստատութիւնը: Ինչքան անկարգութիւններ ասէք, ինչքան անվայել

բաներ ասէք... Է՛հ, այս թողնենք, որովհետև որ ով որ մեղաւոր է, նա էլ պատասխանատու է Աստուծոյ դատաստանի առաջ: Գուք ինչ մեղաւոր էք, սիրելի աշակերտներ? Մեղաւորը նրանք են, որ ձեզ կարգ ու կանոն չեն սովորցրել, ձեզ համեստութիւն չեն սովորցրել, այլ, փոխանակ ուղիղ ճանապարհ ցոյց տալու, ծուռ ճանապարհ են ցոյց տուել: Եթէ ուսուցիչը ինքը ըմբոստ է, յանդուգն է, խառնակիչ է, դէ, ի հարկէ, նորա աշակերտն էլ կը լինի ըմբոստ, յանդուգն և խառնակիչ:

«Մի մոռացէք, սիրելի աշակերտներ, թէ ինչ կոչման համար էք դուք պատրաստուում: Ձեզնից շատերը պիտի քահանաներ դառնաք: Ուրեմն այստեղից հասկանալի է, որ մեր բոլորիս ուշ ու միտքը պիտի դարձնենք կրօնական-բարոյական կրթութեան վերայ, որպէսզի բարձր պահենք ժողովրդի հաւատը, կրօնը և բարոյականութիւնը.

«Մի բանից էլ եմ ձեզ զգուշացնում, սիրելի աշակերտներ: Մեր մէջ հիմայ դուրս են եկել իմաստականներ, որոնք փառքի համար կանգնում են միամիտների առաջ ու բարձր բարձր խօսում—բնական գիտութիւններ, բնական գիտութիւններ...» կարծես մեր ժողովրդի փրկութիւնը հէնց բնական գիտութիւնների մէջ է, որ կայ: Այս տեսակ սուտ փիլիսոփաներից եմ ձեզ զգուշացնում, որ նոցա չհաւատաք, քանզի նոքա իրանց անձի համար միամիտներին մոլորեցնում են, ուղիղ ճանապարհից հանում են և ծուռ ճանապարհի վերայ դնում: Գոքա բոլորն էլ փառամոլ, եսամոլ, թեթեամիտ, մեծ-մեծ խօսող կորած մարդիկ են: Ելի ասում եմ, դուք չպէտք է մոլորուէք, որովհետև որ ձեր կրթութիւնը պիտի լինի կրօնական-բարոյական կրթութիւն, այսինքն՝ ճշմարիտ և իսկական կրթութիւն:

«Այդ պատճառով ես հանեցի ուսումնարանի ծրագրից բոլոր մոլորեցուցիչ առարկաները և ազատ մնացած դասերը յատկացրի կնօնին և բարոյագիտութեան:

«Գուք, յարգելի ուսուցիչներ, և վերակացուներ, և դուք, սիրելի աշակերտներ, և ես, մենք բոլորս, մի խօսքով, պէտք է աշխատենք, որ սիրով տանենք մեր գործը, որ կարողանանք արդարացնել մեր ժողովրդի յոյսերը, որովհետև որ ազգն և եկեղեցին մեզնից լաւ պատրաստուած հոգևորականներ են պահանջում:

«Ուրեմն մենք պարտական ենք չարգել և սիրել միմեանց:»  
Երբ աշակերտները դասարանները ցրւեցին, յիշեալ աշակերտին կանչեց տեսուչը և խիստ յանդիմանեց:

— Ամօթ չէ քեզ համար? Կու չգիտես, որ վերակացուի պատիւը պէտք է պահես?

— Պարոն տեսուչ, ես... վերակացուին...

— Լռիր, յիմար: Քեզ մի արդարացնիլ: Ձեզ ճանաչում ենք: Մի նայիր մօրուքիդ և ապա տես կոպտութիւնը քեզ սազում է: Փոխանակ փոքրներին հեզութեան օրինակ տալու, դու քեզ թոյլ ես տալիս անպատել մեծիդ, արհամարել, վիրաւորական խօսքեր ասել?

— Վիրաւորական խօսքեր? պարոն տեսուչ, ես վիրաւորական խօսք չեմ ասել, ես...

— Կորիր: Այս անգամ քեզ ներում եմ. ուրիշ անգամ խիստ կը պատժեմ:

Սերելի Լևոն! հօ տեանում ես, ինչպէս է սկսում մեր ուսումնական տարին? Առաջին օրը արդէն դժգոհութեան և ատելութեան առաջին տասը կաթիլը ընկաւ երեխաների սրտի վրայ: Չնայելով, որ մի տարուց յետ այդ աշակերտը ուսուցիչ պիտի լինի, բայց մեր տեսուչը նորա հետ վարեց այնքան անմարդավայել կերպով, այնքան կոպիտ, որ նոյն իսկ գիւղից եկած ծառան դժւար կը համբերէր:

Ինչ և իցէ: Առ այժմ այսքան: Նամակներս չկորցնես, Լևոն: Ես ևս խոստանում եմ խնամով պահել քո նամակները: Մի օր նոքա հարկաւոր կը գան:

Քո Ս մ բ ա տ:

(Կը շարունակւի)

## ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Գ. ՂԱՐԱՋԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

V

ՆԱԽԸՆԹԱՅ ԵՐԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՅԱՐՈՒՅԱԾ ԴԺԳՈՀՈՒ-  
ԹԻՒՆԸ ԵՒ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՐԱՆՅ ԴԷՄ

Վերոյիշեալ երկու հաստատութիւնները առաջ բերին դժգոհութիւն հասարակութեան որոշեալ շրջաններում: Կապիտալիստը օրէնքով զրամական պարտադիր պատասխանատուութեան է ենթարկուում տէրութեան առաջ բանւորների հետ պատահած հիւանդութեան և դժբախտութեան դէպքերում: Գերմանական տէրութիւնը ուզեց ցոյց տալ դրանով, որ խնամակալ և պաշտպան է հանդիսանում բանւորական շահերի: Այդ նոր օրէնքների գործադրութեան սկզբում հէնց՝ ապահովող հաստատութիւնների Բերլինի կայսերական խնտիտուտը յայտնեց արդէն, որ ինքը գործելու է հայրական պարտաճանաչութեան՝ ղիտակցութեամբ: Իրաւի տէրութիւնը աշխատեց ցոյց տալ իւր պատրաստականութիւնը բանւորների պահանջներին ճշտութեամբ բաւարարութիւն տալու այն բոլոր առաւելութիւններով, որոնք նախատեսնւած էին օրէնքով: Պէտք է արդարը խոստովանել, Բերլինի կայսերական բարձրագոյն

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2.

ինստիտուտը չէ դադարել, իւր բարի դիտաւորութիւններին հաւատարիմ մնալու համար, օրէնքի իմաստին հետեւել և արդար որոշումներ կայացնել յօգուտ բանւորի: Կարելի է աւելին ասել. կայսերական Բերլինի այդ հաստատութիւնը առաւելապէս դժբախտ դէպքերի խնդիրներում յաճախ ոչ թէ միայն համակրութեամբ է վերարեւել, այլ մինչև անգամ կողմնապահ է ցոյց տւել բանւորների շահը պաշտպանելու գործում: Յայտնի է, որ օրէնքը ինկատի ունի միայն այնպիսի դժբախտ դէպքեր, որոնք տեղի են ունենում աշխատելու ժամանակ, կամ առաջ են գալիս նոյն իսկ աշխատանքի բնաւորութեանը յատուկ պատճառներից: Բայց Բերլինի ինստիտուտը օրէնքի պահանջածից անցաւ. նա իրան չկաշկանդեց և ազատ կերպով նպաստներ նշանակեց ընդհանրապէս բոլոր դէպքերի համար. վարձատրութիւն և թոշակ կապեց այնպիսի դժբախտ դէպքերի համար, որոնք ուղղակի թէ աշխատանքի բնութիւնից չէին առաջ գալիս և թէ պատահում էին մինչև անգամ բանւորի սխալմունքով:

Այսպէս, օրինակ, մի օր մի որմնադիր կաշճակահար է լինում: Այն կորպորացիան, որին անգամ էր դժբախտը, յայտարարում է թէ ինքը չէ կարող պատասխանատու լինել մի այնպիսի դէպքի համար, ճակատագրական է և կապ չէր կարող ունենալ աշխատանքի հետ. մի դէպք, որ ամեն մարդու հետ կարող էր պատահել: Հանգուցեալի այրին դիմում է Բերլին. կայսերական բիւրօն յօգուտ որմնադրի ընտանիքի վճիռ է կայացնում և պարտաւորացնում կորպորացիային տալ ողբալի ընտանիքին օրէնքով նախատեսուած օգնութիւնները:

Ուրիշ օրինակ. մի օր մի բանւոր մազլցելով վեր է ելնում երկու արհեստանոցները միմեանցից բաժանող տախտակէ պատը մարմնամարզական վարժութիւններ անելու դիտաւորութեամբ. զգուշացնում են կարգի հրաւիրելով նրան. բայց նա շարունակում է, ցած է ընկնում և ծանր կերպով փնասւում: Բերլինի կայսերական բիւրօն այս դէպքումն էլ պատւիրում է կորպորացիային՝ տալ անզգուշ երիտասարդին օրէնքից սահմանած օգնութիւնները, պատճառաբանելով թէ դժբախտ դէպքը տեղի է ունեցել օրւայ աշխատելու ժամանակը:

Կենդրոնական ատեանի բունած ընթացքը տեղիք տւեց առանց այն էլ դժգոհ գործատէրերին տրտունջներ և աղմուկ բարձրացնելու: Միթէ կարող էր այլապէս վարւել կենդրոնական ատեանը: Որմնադիրը այսօր կարող է վայր ընկնել պատից, վաղը մի քար ընկնել ձակատին, մի ուրիշ օր կաշճակը խփել. սրանք անտարակոյս այնպիսի փորձանքներ են, որոնց աւելի յաճախ ենթակայ են որմնադիրները, քարտաշները, որ բացօդեայ են աշխատում քան թէ ուրիշ արհեստաւորները: Աերջապէս բանւորը անմեղ մարմնամարզական վարժութիւն անելու փորձից վնասուում է. այդ վնասը հիվ կարող է ասել թէ հետեւանք չէ աշխատանքի ծանրութեան: Ում յայտնի չէ, որ բանւորները չափազանց ծանրաբեռնուած լինելով երկարատեւ աշխատանքով՝ ուրախ կը լինէին ժամանակ առ ժամանակ մի քանի րոպէ ազատ շունչ քաշել, թէկուզ մարմնական շարժողութեան մի թեթեւ փորձ անելով հաւասարակշռելու համար մարմնի լարւած, թուլացած անդամների ոյժերը: Եթէ այդ միջոցին տեղի է ունենում մի որ և է վնաս, մի անկում, օրինակ, չվերագրել այդ այն հանգամանքին, որ բանւորը այնքան ուժասպառ էր եղել յարատեւ աշխատանքից, որ անկարող գտնւելով հաւարակշռութիւն պահպանել՝ ցած գլորւեց:

Բերլինի կենդրոնական վարչութիւնը չէ միայն որ մեղադրուում է կապիտալիստների կողմից կողմնապահութեան և օրէնքի կամայական բացատրութեան մէջ, այլ նրանք զխաւոր չարիքը համարում են նոյն իսկ օրէնքի գոյութիւնը: Յաճախ նրանք առաջ են բերում օրինակի համար հետեւեալ դէպքը. որ և է սպահովագրեալ մի կերպ պատուհասուեց. դիցուք թէ մատից զրկւեց. վնասուածը օրէնքով, մասնաւոր աշխատելու անկարողութեան համար, ստանում է թոշակ. բայց ի՞նչ ենք տեսնում. մատը փչացած և արդէն այժմ մասամբ աշխատելու կարող բանւորը թողնում է իւր նախկին տեղը և զնում ծառայում աւելի մեծ վարձով ուրիշի մօտ, շարունակ ստանալով սակայն իւր թոշակը նախկին գործարանատիրոջից: Միթէ այդ արդար է, տանելի է, որ բանւորը, որին իր կրած վնասի համար շարունակուում է թոշակ տալը, դնայ և ուրիշին՝ նւիրէ իր ոյժն ու ժամանակը, բացականչում են գործատէրերը: Զարմանալի բան. ինչ են ուզում ասել գործատէրերը այդ-

պիսի առարկութիւններով, վերադառնալ կրկին ճորտութեան շրջանը, երբ ճորտ բանւորը անխղիւ կապանքներով կապւած էր հողի և հողատիրոջ հետ. վարձկանութեան շրջանի յատկանիշներինց մէկն էլ հէնց այն է, որ վարձկան բանւորը վայելում է ազատութիւն աշխատանքի ընտրութեան և մրցութեան մէջ և ոչ ոքի հետ իր աւաբանօրէն կապւած չէ կարող լինել. հէնց այնպէս, ինչպէս դուք գործարանատէրեր, ազատ էք արդիւնագործային մրցութեան ասպարէզում գործելու ըստ ձեր հայեցողութեան: Եթէ վնասւած բանւորը առողջ լինէր, դուք նրա ձեռք ու ոտները չէիք կարող կապել, որ չկարենայ ուրիշ տեղ որոնել: Նոյնը կարելի է ասել և մատը զրկւած ժամանակ. դուք թոշակ տալիս էք ոչ թէ նրա համար, որ նա պարտաւորւած լինի շարունակել իր ոյժն ու ժամանակը ձեզ տալու, այլ որովհետև ձեր գործարանում ձեր պատճառով նա իր մարմնի օրգանների մէկինց զրկւեց:

Այլ առակ լւարուք: Օրէնքը խրախուսում է բանւորների մէջ ծուլութիւնը, ասում են գործատէրերը, թէ բանւորը օրէնքով նախատեսնւած թոշակի բարձրագոյնը ստանալու համար ցոյց է տալիս վնասւած ժամանակը աշխատելու բացարձակ անկարողութիւն: Մենք չենք հերքում թէ կարող են թոյլ, դանդաղ բանւորներ լինել, ինչպէս և կարող է բանւորը վնասւած ժամանակ աւելի ծանր ցոյց տալ իրս զրութիւնը քան թէ իսկապէս նա է: Բայց չպէտք է մոռանալ, որ բանւորի թուլութիւնը և կամ դանդաղութիւնը առաջ է դալիս զլիսաւորապէս աշխատանքի միապաղաղ լինելուց, յարատև աշխատանքի չափսզանցութիւնից, մի խօսքով այն վատթար պայմաններից, որոնց գոյութիւնը յայտնի է ամենքին ներկայ արդիւնագործական աշխարհում: Իսկ եթէ թոշակի բարձրագոյնը ստանալու համար վնասւած բանւորը աշխատելու բացարձակ անկարողութիւն կը յայտնի՝ կրած վնասի աստիճանը աւելի լաւ կարող են որոշել քննութեան ժամանակ քննիչները քան թէ գործատէրերն են կարծում:

Այլ առակ ևս լւարուք: Մենք ինչ մեղաւոր ենք, գոչում են կապիտալիստները, որ, ճակատագրի բերմունքով, նոյն իսկ բանւորի արարմունքով և անզգուշութիւնով դժբախտ դէպքեր են տեղի ունենում. ինչո՞ւ մե՞նք պիտի տուժենք այս բոլորի համար:

Պատահաբար թէ անձնական սխալմունքով է տեղի ունեցել այս կամ այն դժբախտ դէպքը՝ դժւար է ապացուցանել, որովհետեւ պատահականութիւն և անձնական սխալմունք խօսքերը բազմատեսակ կարելի է հասկանալ:

Իրօք դժբախտ դէպքերի մեծամասնութեան մէջ կարելի է, եթէ կուզէք, փնտաւած բանւորի սխալմունք գտնել միշտ, եթէ սխալմունք խօսքը ընդունենք իր ամենալայն նշանակութեամբ, եթէ այդ խօսքով ամենաներելի անդգուշութիւններ, ամենաթեթեւ անփոյթութիւնները հասկանաք: Այդ դիպի անդգուշութիւնները և զանցառութիւնները, եթէ կարելի է այսպէս ասել, ճակատագրական են, մանաւանդ արդիւնագործութեան ներկայ պայմաններում: Ներքին և միջազգային մրցութիւնը ստիպում է գործատիրոջ որքան կարելի է շուտ և աժան արդիւնահանել. վասն որոյ գործատէրը ամեն կերպ ճիգ է թափում շատ օգուելու իւր վարձկանների ոյժերից հէնց այնպէս, ինչպէս իր մեքենաներից: Այս շտապողական դրութեան մէջ բանւորը շատ անգամ անկարող է լինում լիովին ուշք դարձնել իրան սպառնացող վտանգների վրայ, մտածելու փորձանքի դէմն առնելու միջոցների մասին. այսպիսի նախազուշական վերաբերմունքով չէ որ գործը կուշանար, գործը դանդաղ կընթանար... Իսկ այդ ամենեւին հաճելի չէ կարող լինել մրցութիւնից և տնտեսական վրէժխնդրութիւնից լարած գործատիրոջ, որը անհամբերութեամբ շտապում է վաճառ հանել իր ապրանքները: Աշխատանքի առաջին ժամերին բանւորը աւելի արթուն է և աւելի էլ զգուշութեամբ է վերաբերւում դէպի վտանգը, այն ինչ աշխատանքի յարատեւումն (prolongation) և այդ բանից առաջ եկող տաքութեան, յոգնածութեան, թուլութեան պատճառներով բնականաբար նոյն զգուշութիւնը անհնարին է լինում գործ դնել, բանւորի ուշադրութիւնը ցրւում, կորչում է: Աշխատանքի յարատեւման այդ սարսափելի իրողութիւնը կարելի է այսօր մաթեմատիկապէս ապացուցած համարել:

Գերմանիայում այդ մասին վիճակագրութիւնը պարզ ցոյց է տալիս թէ օրւայ որ ժամերին աւելի մեծ թուով դժբախտ դէպքեր են տեղի ունենում. բերենք այդ վիճակագրութիւնը.

առաւօտեան

6—7 ժամին . . .	435	դժբախտ դէպք
7—8 » . . .	794	»
8—9 » . . .	815	»
9—10 » . . .	1069	»
10—11 » . . .	1598	»
11—12 » . . .	1590	»

Կէսօրից յետոյ

12—1 » . . .	587	»
1—2 » . . .	745	»
2—3 » . . .	1037	»
3—4 » . . .	1243	»
4—5 » . . .	1178	»
5—6 » . . .	1306	»
6—7 » . . .	979	»

Թողնում եմ առաւօտայ 6—7—8 առաջին ժամերը, որովհետև ամեն տեղ միաժամանակ չէ սկսում աշխատանքը արհեստանոցներում: Առաւօտեան 8—10 ժամերին տեղի է ունենում 1884 դժբախտ դէպք, 10—12 ժամերին—3188: Հաւանական է, որ այս վերջինը աւելի մեծ թիւ ներկայացնէր, այնպէս որ 11—12 ժամին դժբաղտ դէպքերի աւելի մեծ թիւ պէտք է լինէր քան 10—11 ժամին—և այս այն պատճառով, որ շատ արհեստանոցներում աշխատանքը 12 ժամից մի քիչ սուաջ է կանգ առնում: Կէսօրից մինչև ժամի 1-ը դժբախտ դէպքեր համեմատաբար քիչ են պատահում, որովհետև արհեստանոցների մեծ մասը փակած է լինում այդ ժամին ճաշի ժամ լինելու համար, բայց ժ. 1-ից արդէն նորից սկսում է առաւօտեան ժամերի պրոգրէսիան: Պրոգրէսիան կանգ է առնում 4—5 ժամին. այդ միջոցին երեկոյեան հանգիստն է լինում: Ամենևին հաշի տակ չպէտք է առնել 6—7 ժամին պատահած դէպքերի նւազ թւանշանը, որովհետև այդ ժամանակ շատ արհեստանոցներում աշխատանքը դադարեցրած է լինում արդէն. իսկ մի բանխոներում ցերեկւայ աշխատանքի ժամը փոխարինւում է գիշերային ժամով: Ապահովագրական հաստատութեան Բերլինի կայսերական ինստիտուտն ևս վերոյիշեալ վիճակագրութիւնը հետևեալ կերպով

է մեկնաբանում. «Իժբախտ դէպքերի թիւը զարմանալի արագութեամբ աճում է հետզհետէ, որքան անզգալաբար աւելի յոգնածութիւն և թուլութիւն է առաջ գալիս բանւորի մէջ»:

Այսպէս ուրեմն բանից զուրս է գալիս, որ ինչ տեսակ էլ ղժբախտ դէպք տեղի ունենայ, պատահաբար թէ սխալմունքով՝ բացատրուում է և հասկանալի դառնում ներկայ արդիւնագործական աշխարհում տիրապետող թէ տեխնիկական պայմաններով և թէ մարդոց տնտեսական փոխադարձ յարաբերութիւններով. ուստի գործատէրերը, բանւորների հիւանդութեան և ղժբաղտութիւնների դէպքերում, որքան էլ իրանք ցանկանային և առարկէին, չեն կարող և չպիտի կարողանան ազատ մնալ պարտադիր պատասխանատուութիւնից: Ճիշտ է, օրէնքի գործադրութեան ժամանակ կարող են պատահել զանցառութիւններ և այս կամ այն սխալմունքը և նոյն իսկ օրէնքի մի քանի կէտերը թերևս թերակատար լինին և անյարմարութիւններ ներկայացնեն, բայց ժամանակով դրանք կը հարթւեն, կը կատարելագործւեն: Ապահովող հաստատութիւնները ներկայացնում են մեծ կարեորութիւն և նոյնքան գնահատելի են, որքան նրանք ինկատի ունին հարիւր հազարաւոր, միլիոնաւոր ընտանիքների պաշտպանութեան գործը:

Ի լրումն այստեղ պէտք է չիշել, որ 1886 թւին ապրիլի 9-ին հրատարակեց դարձեալ մի նոր լրացուցիչ օրէնք 143 յօդաձևերով. վերջինս պարտադիր է դարձնում նոյնպէս զաշտային և անտառային բանւորներին ապահովագրելու վերոյիշեալ երկու հաստատութիւններում: Հիմնուում են գիւղատնտեսական կորպորացիաներ, որոնց ծախսերը հոգում են գիւղատնտես արդիւնագործ կալաճատէրերը: Մի ուրիշ աւելի նոր հրատարակած օրէնք պարտադիր դարձրեց ապահովագրելու առևտրական նաւազնացութեան մէջ ծառայողներին, շնայելով արմատորների (նաւատէրերի) յամառ դիմագրութեան, որը շատ շուտով բնականաբար տեղի աւեց օրէնքի պահանջներին:

## VI

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ ԾԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ  
(1889 թ. մայիս)

Երկու նշանաւոր օրէնքներն արդէն հաստատուն հիմունքների վրայ զնելուց յետոյ, գերմանական կառավարութեան մնում էր ապահովութեան սիստէմը ամբողջացնելու համար հիմնել ծերութեան անկարութեան դէմ պարտադիր ապահովութեան երրորդ աստիճանի նշանաւոր օրէնքը: Այս մեծ գործը գլուխ բերելը այնպէս հեշտ չէր, ինչպէս կարելի էր կարծել, մի կառավարութեան համար, ինչպէս գերմանական կառավարութիւնն է: Ինչպէս առաջին դէպքերում, այնպէս էլ այս վերջին օրինադրի քննութեան ժամանակ տեղի ունեցան հակառակութիւններ և զօրեղ դիմադրութիւն զանազան կուսակցութիւնների կողմից. այդ պատճառով բաւականի յետաձեգւեց խնդրի լուծումը: Վերջապէս 1889 թւի մայիսին նա ընդունւեց Ռէյխստագից իբր օրէնք 185 ձայնով ընդդէմ 165-ի: Յամառ վիճաբանութեան տեղիք տւեց գլխաւորապէս № 14 յօդուածը, որը վերաբերում էր պետութեան զբաղման հարմարութեան խնդրին: Սակայն այդ պարագրաֆն էլ անցաւ առանց փոփոխութեան: Առաջ բերնէք օրէնքի ամենաէական կէտերը:

Ծերութեան դէմ ապահովագրւելու իրաւունքը տարածւում է ստորին դասակարգերին պատկանող այն բոլոր անձերի վրայ, որոնք արդէն 70 տարեկան են: Անկարութեան դէմ ապահովագրութիւնը վերաբերում է ամեն մի անձի, որ զրկւած կը լինի ապրուստի միջոցներ վաստակելու կարողութիւնից, լինի այդ հիւանդութիւն, ֆիզիքական վատառողջութեան կամ փեշակի աշխատանքից դուրս հանդիպած որն է զժբախտ դէպքի պատճառներով: Այս երկու պարտադիր ապահովող հաստատութիւններն էլ ինկատի ունեն որոշ կարգի մարդիկ՝ այն բոլոր վարձկան բանւոնները և ստորադաս ծառայողները, որոնք ապրուստի սուղ միջոցներով միայն կարողանում են մի կերպ քաշ տալ իրանց ողորմելի գոյութիւնը և որոնք բաւականաչափ ապահովւած չեն բախտի չար պատահմունքներից. զրանք կազմում են իսկապէս վերոյիշեալ ապահովող հաստատութիւնների կլիէնտելը: Այդպէս ապահովագրւելու պարտաւորւածների

Թիւը հասնում է Գերմանիայում աւելի քան տասն և երկու միլիոնի: Ապահովացման այս երրորդ ճիւղի գործունէութեան օրգանը մնում է դարձեալ նոյնը ինչ որ ապահովացման երկրորդ ճիւղի համար— այսինքն պրոֆեսսիօնական կորպորացիները:

Ապահովագրեալներին յատկացրած կենսաթոշակը միջոց է տալիս շատ համեստ կերպով ապրելու: Թոշակաւորները ընդհանրապէս պէտքէ վերաբնակւին գիւղերում, ուր նրանք կանցկացնեն իրանց կեանքի վերջին օրերը հանգստութեան մէջ:

Անկարների կենսաթոշակ նշանակւած է 120—250 մարկ (60—125 ու.) տղամարդկանց, իսկ այդ զումարի  $\frac{2}{3}$  մասը՝ կանանց համար: Իսկ ծերերին կենսաթոշակ նշանակւած է մինչեւ 200 մ. (մօտ 100 ուոլքի):

Բոլոր ապահովագրեալները վայելում են հաւասար իրաւունքներ. նրանք ամենքն էլ տալիս են անդամավճար: Անդամավճար նշանակւած է տղամարդկանց համար շաբաթական 21 պֆէննինգ, տարեկան 10 մարկ 92 պֆ. որ անում է մօտ 5 ր. 40 կ., կին անդամը վճարում է տղամարդկանց անդամավճարի  $\frac{2}{3}$  մասը:

Տէրութիւնը և գործատէրը նոյնպէս վճարում են ընկերութեան ամեն մէկը նրանցից այնքան, ինչքան իւրաքանչիւր նոր անդամ և անդամուհի միասին: Այսպէս տէրութեան անդամավճարը կը լինի ուրեմն իւրաքանչիւր ապահովագրեալի համար 10 մ. 92 պֆ. + 7 մ. 28 պֆ. = 18 մ. 20 պֆ. կամ 9 ուոլքի գործատէրը վճարում է նոյնքան: Տարեկան ամեն մի ապահովագրեալին մուտք լինում է 32 մարկ. 76 պֆ. (մօտ 16 ու. 20 կ.), իսկ կին ապահովագրեալին 21 մ. 84 պֆ. (մօտ 10 ու. 80 կ.):

Ամեն մի անդամ իրաւունք ունի և կարող է հրաժարւել անդամակցութիւնից զանազան հիմնաւոր պատճառներով. կարող է պատահել, որ անդամը խնայողութեան շնորհիւ ապահովացրած լինի իրան, կամ ժառանգութիւն է ստացել, վերջապէս մի բաղձի է հանդիպել և այլն. այսպիսի դէպքերում նրան իրաւունք է տրւում ազատ լինելու. եթէ ի հարկէ այդ և նման պատճառներով ցանկութիւն կը չայտնէ դուրս գալու ընկերութիւնից:

Անդամը դուրս գալուց յետոյ՝ անդամակցական վճար չէ վճարում այլ ևս. իսկ կենսաթոշակ ստանում է համեմատ իւր

անդամակցական վճարած գումարի: Եթէ մի բանւոր անկարող լինի, թերևս պարապութեան պատճառով, շարունակել անդամակցական վճար տալը, դործի մէջ մտնելով պարտաւոր է ապառիկները բարդ տոկոսիքով հանդերձ հատուցանել:

Օրէնքը պատւիրում է անդամակցական աւելի մեծ վճարներ պահանջել այն դործատէրերից, որոնց արդիւնագործութիւնը հակառողջական է և ընդհանրապէս առողջութիւնը խախտող կը ճանաչուի:

Զինւորակոչի հրաւիրւած ապահովագրեալ բանւորների անդամակցական վճարները պարտաւորում է տէրութիւնը հատուցանել զինւորական ծառայութեան ընթացքում:

Թոշակները բաշխւում են փոստային հիմնարկութիւնների ձեռքով:

Այս օրէնքը, ընդունւելով Ռէյխստագից ինչպէս ասացի 1889 թւի մայիսին, սկսեց գործադրութեան մէջ մտնել 1891 թւակաւնից. դժբաղդաբար մեր ձեռքի տակ շունենք առ այժմ տեղեկութիւններ գործերի ընթացքի մասին: (Համեմատէք յօդւածի վերջում դրած յաւելւածը: Ման. Խմբ.): Այսքանը կարելի է ասել, որ այս ապահովող ընկերութիւնը կարող էր թոշակ բաց թողնել տարեկան մինչ 200 միլիոն Ֆրանկ, հանելով այդ գումարից այն դէպքերի ծախսերը, որոնք կընկնեն հիւանդութեան և պատահարքների դէմ ապահովացման ճիւղերին. երրորդ տեսակի ապահովացման վրայ անելիք ծախքը կարելի է հասցնել մինչ 180 միլիոն Ֆրանկի:

Ընթերցողը թերևս նշմարած լինի արդէն այս երրորդ նշանաւոր օրէնքի մէջ մի քանի աւելի ընկնող թերութիւններ, որոնք հարկաւ ժամանակով կողողեն: Նախ՝ կը նկատենք օրէնքի այն կէտի մասին, որը բանւորից պահանջում է անգործ մնացած ժամանակի ապառիկների հատուցումն և այն էլ՝ բարդ տոկոսիքով միասին: Եթէ օրէնքը նրա համար է, որ թեթևացնէ բանւորի անմխիթար վիճակը, ապա ուրեմն օրէնքի այդ կէտը չէ համապատասխանում իր իմաստին. թեթևացնելու փոխարէն այդ կէտով աւելի ևս կը ծանրաբեռնէինք նրա վիճակը: Բանւորը իր սուղ միջոցներով, իր սահմանափակ վարձով ինչպէս կարող է համ տէրունական հարկ տալ, համ ապահովագրական վճար տալ, համ էլ անդամակցական վճարների ապառիկները վճարել տոկոսիքով հանդերձ. այդ աւելի քան անար-

դար կէտ է, որ սպորդել է օրէնքի մէջ: Երկրորդ՝ ծերերին և անկարնե-  
րին նշանակած է մինչ հարիւրական մանէթ կենսաթոշակ. ինչ թոշակ  
է այդ, ասէք խնդրեմ. ի հարկէ այդ աւելի լաւ է քան պատահա-  
կան ողորմութիւնը. բաց մի՞թէ 100 մանէթով անկարը կամ ծե-  
րունին կարող են ապրել թէկուզ գիւղերում. մի գումար, որը եթէ  
թոշակաւորը ընտանիք էլ ունի, թերևս հազիւ բաւականութիւն  
տալ ցամաք հացի: Վերջապէս ներկայ արդիւնագործական աշխար-  
հում, եթէ չ'ասենք ամենևին, զոնէ շատ քիչ կը պատահի որ բան-  
ւորը 70 տարեկանի հասնի. ընդհանուր վիճակագրութեան նախելով՝  
Ֆրանսիայում օրինակ՝ արական սեռի ծնւածներէից 1000-ին միայն  
245-ը հասնում են 70 տարեկան հասակի. իսկ 383-ը 60 տարե-  
կան: Այդ թւերի ո՞ր 1/10 են կազմում արդեօք մեռնող բանւորները.  
շատ չնչին: Բանւորները միջին թւով 45 տարեկան հասակից աւե-  
լի չեն ապրում: Հազիւ է պատահում, որ բանւորը 60-ից անց շա-  
րունակէ աշխատել: Այդ պատճառով անհիմն չեն բանւորների հե-  
տևեալ առարկութիւնները. ամենք երբէք, ասում են նրանք, 70  
տարեկան հասակի չենք հասնում, որ քաղէինք այն զոհաբերու-  
թիւնների պտուղները, որ պահանջում են այժմ մեզ անել:

Այս և նման զգալի թերութիւնների պատճառով է, որ ինչ-  
պէս օրաթերթերը յայտնում էին, օրէնքի գործադրութեան հէնց  
սկզբում բանւորները սկսել են յամառութեամբ բողոքել թէ օրէնքի  
դէմ և թէ գործատիրոջ կողմից վարձագնի որոշեալ մասն իբր ան-  
դամակցական վճար վերապահելու դէմ: Որպէս զի գերմանական կա-  
ռավարութիւնը սոցիալական մեծ բեփորմները յաջողութեամբ իրա-  
գործի, պէտք է համեմատաբար էլ մեծ ծախսերի բիւջէտ կազմէ.  
նա իր այդ նպատակին կը հասնի աստիճանաբար նւազեցնելով զին-  
ւորական բիւջէտը:

\*  
\* \*

Համառօտենք այժմ երեք տեսակ ապահովացման գործու-  
նէութեան հաշիւները պարզ ցոյց տալու համար թէ ով ինչ շա-  
փով է դրամապէս մասնակցում:

Ապահովացումն հիւանդութեան դէմ.

1885 թւին այս ճիւղի հաշիւը ցոյց էր տալիս, որ իւրաքան-

չիւր անդամի վրայ ծախս տարեկան եղել է 16 Ֆր. <sup>1)</sup> որից 10 Ֆր. 66 սանտիմ ընկնում է բանւորին և 5 Ֆր. 33 ս. գործատիրոջ:

Ապահովագրումն դժբաղդ դէպքերի դէմ:

Ընդունենք իբր հիմք 1886 թւի հանքային կորպորացիայի հաշիւները: Այդ թւին ամեն մի բանւոր իր գործատիրոջ վրայ նստել է 2 Ֆր. 20: Բայց գործատիրոջ այս վճարը տարէ ցտարի կաւելանայ մի քանի տարի շարունակ, որովհետև իւրաքանչիւր տարւայ մէջ տեղի ունեցած դժբախտ դէպքերի համար եղած ծախսերի վրայ կը գան նախորդ տարիների թոշակները: Այսպէս կը շարունակւի մինչև որ թոշակաւորների իւրաքանչիւր հին շրջան մեռնելով տեղի կը տայ կենդանի սերնդի նոր թոշակաւորներին. այդ ժամանակից ուրեմն առաջ կը գայ բիւջէտի հաւասարակշռութիւն: Միւս կողմից սպասելի է, որ հետզհետէ կը պակասին դժբախտ դէպքերի թիւը այն նախազգուշական միջոցների շնորհիւ, որ իւրաքանչիւր գործատէր անպատճառ գործ կը դնէ իւր նիւթական շահի անսակէտով: Թէ գործատէրերի նիւթական պատասխանատուութիւնը, թէ խիստ հսկողութիւնը արդիւնագործութիւնների վրայ և վերջապէս այն վարձատրութիւնները, որ կորպորացիաները կանոնադրութեան հիման վրայ տալիս են դժբախտ դէպքերից ազատող կամ նախազգուշացնող անձերին՝ թոյլ են տալիս հաւատարմութեան մեզ, որ դժբաղդութիւնները պէտք է անպատճառ նւազեն ժամանակի ընթացքում:

Մեք ու թեան — անկարողութեան դէմ ապահովագրումն:

Մարդու վրայ տարեկան ծախք լինում էր 40 Ֆր. 95 ս. (վերև հաշուել էինք գերմ. դրամով 32 մ. 76 Ֆ.), կնոջ վրայ 27 Ֆր. 30 (21 մ. 84 պֆ.): Իւրաքանչիւր ապահովագրեալ տալիս է 13 Ֆր. 65 (10 մ. 92 պֆ.). գործատէրը և տէրութիւնը ամեն մէկը նոյնքան. կինը տալիս է 9 Ֆր. 10 (7 մ. 28 պֆ.), միւս մասնակցողներից էլ ամեն մէկը նոյնքան:

<sup>1)</sup> Յարմար ենք գտնում հաշուել Ֆրանկերով իբր ակելի ընդհանրացած և չարմարութիւններ ներկայացնող դրամական սխտէմ: Ֆրանկը հաւասար է 25 կ. ոսկու, իսկ կուրսով՝ ուրբլին տատանւում է 2—3 Ֆր. մէջ: Ֆրանկը ունի 100 սանտիմ:

Այժմ տեսնենք ամեն մէկ մասնակցողի վրայ ինչքան է ընկնում տարեկան:

Բանւորը տարեկան կը վճարէ հիւանդութեան համար 10 Ֆր. 66 ս. ծերութեան և անկարութեան համար 13 Ֆր. 65 ս. ընդամենը 24 Ֆր. 31 ս.:

Գործատէրը կը վճարի իւրաքանչիւր բանւորի հիւանդութեան համար 5 Ֆր. 33. դժբախտ դէպքերի համար 22 Ֆր., ծերութեան և անկարութեան համար 13 Ֆր. 65., ընդամենը 40 Ֆր. 98 ս.:

Տէրութիւնը վճարում է ծերութեան և անկարութեան համար տարեկան 60 միլիոն Ֆր.:

Աւելորդ է ասել, որ այս թւանշանները ցոյց են տալիս մօտաւոր ճշտութիւն. այդպէս էլ ընդունել ենք նրանց: Թէ ինչ արդիւնք կ'ունենայ այս մեծ սոցիալական ընդհարումը Գերմանիայում, տեղական կը լինի թէ ոչ այդ հաստատութիւնը—այդ ժամանակը և փորձը ցոյց կը տան մեզ: Ինչ որ կարելի է հենց այժմ ասել այդ այն է, որ հաստատութիւնը ինքնըստինքեան մարդասիրական մեծ նպատակ ունենալով՝ պահպանել բանւորին հոգեկան և մարմնական քայքայումից, կարող է տեղական լինել, եթէ պետութիւնը բացի բարոյական զօրեղ պաշտպանութիւնից աւելի մեծ զբամական մասնակցութիւն կ'ունենայ քան թէ այժմ և եթէ նոյնանման հաստատութիւններ կը հիմնեն ուրիշ երկիրներում զանազան կառավարութիւնների նախաձեռնութիւնով՝ այնպէս որ մի երկրի փորձը և օրինակը ևս կարող է միւսներին դաս լինել և նպատակ ընդհանրապէս նոյն իսկ հաստատութեան տեղութեան և բարգաւաճման:

### Յ Ա Ի Ե Լ Ի Ա Մ

«Русск. Вѣд.» լրագրի Բերլինի յայտնի թղթակիցը իւր մի զրութեան մէջ (տես «Русск. Вѣд.» № 359, 1893 թ.) հետաքրքիր, թարմ անդեկութիւններ է հաղորդում Գերմանիայի ապահովազրական ընկերութիւնների վերաբերեալ, որոնք կարևոր համարելով առաջ ենք բերում այստեղ: Աւելացնենք, որ տեղեկութիւնների ճշտութեան լիովին կարելի է վստահ լինել, որովհետև նրանք հաղորդում են արժանահաւատ և բաղմահմուտ անձի ձեռքով:

80-ական թւականների սկզբում, գրում է յիշեալ թղթակիցը, յայտնի է թէ ինչքան ազմուկ և կրքոտ քննադատութիւն առաջ բերեց բանւորների պարտադիր ապահովացման սխտէմը. մինչդեռ, հարցրէք, այժմ Գերմանիայում ամենածայրայեղ Մանչէստրեան որ և է անտեսագէտի թէ կը ցանկանար նա արդեօք ապահովագրութեան վերաբերեալ օրէնքների վերացումն, նա ձեզ կը պատասխանէր,—եթէ միայն նա ինքը գործարանատէր չէ, —թէ այդպիսի մի ցանկութիւն խելագարութեան նշան կը լինէր և ուրիշ ոչինչ: Հետզհետէ աւելի ևս պարզում է, որ բանւորների ապահովացումը ընդդէմ հիւանդութեան և դժբախտ դէպքերի կուտուրական մեծ գործ էր, Բիսմարկի ամբողջ գործունէութեան շրջանի լաւագոյն ծառայութիւնն էր: Բանւորների ծերութեան-անկարութեան դէմ ապահովագրութիւնը խիստ քննադատութեան առարկայ է դառնում աւելի և աւելի, որը սակայն չէ ուղղւած օրէնքի գաղափարին, այլ նրա կազմակերպութեան:

Գժբախտ դէպքերի դէմ ապահովագրութեան հետևանքների մասին նորերս Բէյլստագին ներկայացրած հաշիւը ցոյց է տալիս, որ հաշուէտութեան տարում աշխատանքի ժամանակ փնասւած բանւորներին վճարւած է եղել  $32\frac{1}{2}$  միլիոն մարկ (մտ 16 միլ. ո.): Նոտ աննշան բացառութիւններով բոլոր փնասւածները—առանց որևէ դատարանական տարուբերումի, առանց բժախնդրութիւնների, վարձատրւած են եղել, այսինքն հիւանդութեան ժամանակ ստացել են որոշած օգնութիւնները, աշխատելու կատարեալ անկարողութեան դէպքում ապահովութիւն է տրել. կամ թէ թոշակ է բաշխել (մահւան դէպքում) նրանց կանանց և երեխաներին:

Նկատելի բան է, որ ներկայ սխտէմով ամեն մի ձեռնարկութեան վրայ ընկնող ծախսերի բաժինը ամենևին մեծ չէ, ծանրաբեռնող չէ կարող լինել իւրաքանչիւր գործատէրի համար:

Գերմանիայի բանւորական ամբողջ ժողովուրդը հաւատացած է, որ տժբաղդութեան դէպքում փնասւածը այսուհետ ստիպւած չի լինիլ սրան նրան դիմելու ողորմութեան համար: Ինչպէս արդէն յայտնի է, գժբաղդ դէպքերի դէմ ապահովութիւնը տարածւում է ոչ թէ միայն գործարանների վրայ, այլ և բոլոր արդիւնահանող և մշա-

կող արդիւնագործութեան, գրեթէ նաև վարձաճ աշխատանքի միւս բոլոր ճիւղերի վրայ: Այսպէս ապահովագրեալների թիւը հասնում է աւելի քան 17 միլիոն հոգու:

Բանւորների 'ապահովութեան հակառակորդները սովորաբար ասում են թէ պարտադիր ապահովագրութիւնը նպաստում է անզգուշութեան անման, հեռաբար տեղի են ունենում աւելի մեծ թւով դժբաղդ դէպքեր: Գերմանիայում «դժբաղդ դէպքերի» թիւը իրօք անում է, սակայն ոչ թէ բանւորների թեթեւամտութեան պատճառով (ով արդարև այն աստիճան խելքը կը կորցնի, որ մի համեստ թոշակ ստանալու համար զիտմամբ իրան որ և անպամից զրկի), այլ հետևեալ երկու շատ հասկանալի պատճառներով. 1) զործարանական արդիւնագործութիւնը հետզհետէ աւելի զարգանում է, կը նշանակէ աշխատանքի վտանգը և բանւորների թիւն էլ մեծանում է. 2) բազմաթիւ դէպքեր, որոնք առաջ երևան չէին գալիս միայն նրա համար, որ բանւորը յոյս չունէր թէ կարող էր վարձատրւած լինել, այժմ կանոնաւոր կերպով արձանագրւում են: Բայց կը հարցնէք դուք, միթէ առաջ վնասւած մատով կամ ջարդւած կողքով բանւորը կարող էր շարունակել աշխատանքը? Այո, այդպէս էլ պատահում էր. կարիքը ստիպում էր նրան այդ անելու. բայց քանի քանի մարդիկ են այդպիսով վաղահաս մեռել, ինչքան աւելորդ ինվալիդներ էին շատանում առաջ...

Բաւական է միայն աւելի ուշադրութեամբ հետամոնա լինել պարտադիր ապահովագրական ընկերութիւնների գործունէութեան համոզւելու համար թէ նրանք ոչ թէ միայն հնարաւորութիւն են տալիս վնասւածներին ապրելու, իսկ այրիին և որբերին կենսաթոշակ հասցնելու, այլ և պահպանելու բանւորների կեանքն ու առողջութիւնը: Մահւան ելքով պատուհասւածների թիւը անկասկած նւազում է. օրինակ ներկայ տարւայ ընթացքում նրանց թիւը եղել է 5,911. այն ինչ նախընթաց տարին 6,428. երեք տարի սրանից առաջ մեռնողների թիւը դեռ աւելի մեծ էր: Եւ այդ շատ հասկանալի է. բացի այն որ նշանակւած են զործարանական վերատեսուչներ, որոնք հսկում են նախագողշական միջոցների ձեռնարկութեան վրայ, նոյն ուղղութեամբ գործում են նոյնպէս 158 ինժեներ-վերատեսուչներ և աւելի քան 20,000 այսպէս

անլանլած հաւատարմատար անձեր: Տեսնելով մի այսպիսի վերահսկողութիւն վստահութեամբ կարելի է ասել, որ արդի նագործութեան ձեռնարկութիւնների կողմից արւած է ինչ որ հնարաւոր է բանւորների կեանքը խնամելու համար:

Վժբաղդ դէպքերի դէմ ապահովագրական կասսաները արդէն ունին իրանց տրամադրութեան ներքոյ 85 միլիոն պահեստի դրամագլուխ, ապահովագրութեան միւս ճիւղերը (Kranken, Altersversicherung, այսինքն հիւանդութեան և ծերութեան անկարութեան համար) զիզել են աւելի քան 200 միլիոն: Պահեստի մայր գումարները այսուհետև շարունակ կ'աճեն և հարց է առաջ գալիս թէ ինչպէս նրանց զեւեղել: Մինչև այժմ նրանց շահեցնում էին պետական արժէթղթերով և իսկոտէկայով անշարժ կաշքերի գրաւ), բայց վերջերս սկսել են մտածել լաւագոյն գործադրութիւն տալ պրոլետարիատ բանւորների ահագին պահեստի մայր գումարներին, նոյն իսկ իրանց պրոլետարիատների օգտին: Բաղէնում արդէն փորձ է եղել գործադրել ապահովագրեալ կասսաների գումարները բանւորների համար բնակարաններ շինելու վրայ: Ոմանք էլ ուրիշ ծրագիր են առաջարկում—նպաստել գիւղացիների կոլոնիզացիային: Ինչպէս երեւում է բանւորների ապահովութեան հաստատութիւնը բացի իրաբուն կոչման ծառայելուց, այլ կերպ էլ կարող է ծառայութիւն մատուցանել ժողովուրդին:

(Կը շարունակւի)

## Ջ Ա Տ Ի Կ

### ԱՂԵՔՍԱՆԵՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԵՐ

#### I

Օ՛, ի՛նչ սքանչելի, վսեմ տես սրան.  
Ահա Աստուծոյ սուրբ օթեանում  
Խուռն բազմութիւն ճնկաչոք, անձայն,  
Կարծես մարմնացած մի ջերմ զգացում,  
Վուռ աղօթում է... և վառ յոյսերով  
Հայեացքը յառած դէպի սուրբ սեղան՝  
Նա սպասում է անհամբեր սրտով  
Լսել մեծագոր ձայնը աւետման—  
Թէ յարեալ այսօր Փրկիչ-Նահատակ,  
Մահւան կուռ շղթան նա խորտակելով,  
Յարեալ—ազնոտ կեանք, Սիրոյ յաղթանակ  
Իւր յարութեամբը մեզ պարգևելով:

#### II

Եւ սրբավայրի օրհնեալ յարկի տակ  
Վեր են առաքւում Բարձրեալի անւան  
Անհուն օրհնութիւն. հնչում ներդաշնակ  
Հոգեբուղի տաղեր փառաբանութեան:  
Վառւում են մոմեր սուրբերի առաջ,  
Ծխում է անոյշ խունկը բուրվառում,  
Եւ այդ սրբազան սրտներն ակնահաճ  
Միաք է կախարչում, սիրա հրապուրում...

Եւ ինչպէս խաղաղ, ինչպէս սիրառատ՝  
 Աստուծոյ տան մէջ գլուխ են խոնարհած  
 Հգորն ու անգորն, հարուստն ու աղքատ,  
 Ո՞ր ու թշնամանք սրտերից հանած...

## III

Եւ չը կան այտոեղ ոչ աղի արցունք,  
 Ո՛չ հեգնւած սրտի անգոր փոթորիկ...  
 Ո՛չ բռնի գործեր, ամարդի վարմունք,  
 Ո՛չ առօրէական կրքեր ու չարիք...  
 Այտոեղ էլ մարդիկ կեղծ մտերմութեամբ  
 Ձեն լարում դարան իրար ոտքի տակ,  
 Ձեն ասում իրար կոյր ատելութեամբ,  
 Անպարտի գլխին չէ շողում դանակ...  
 Հաշտութեան հրեշտակն իջած սուրբ Տաճար  
 Մարդկանց մէջ, ասես, շրջում է անտես.  
 Այտոեղ ամենքն էլ եղբայր են իրար.  
 Օ՛, այտոեղ կեանքն է—մե՛ծ Սիրոյ հանդէս...

## IV

Նայում եմ ես լուռ... Եւ հազար մտքեր—  
 Աւրախ ու տխուր, պայծառ ու մթին—  
 Որպէս անհանգիստ ծովի ալիքներ,  
 Ինձ պաշարում են այդ վսեմ ժամին...  
 Ես մտածում եմ—գեռ քանի արիւն,  
 Քանի արտասուք աշխարհիս վերայ  
 Պէտք է ծովանան—մինչ Սիրոյ զարուն  
 Մարդկային կեանքում ջաւերթ կը եռայ...  
 Ես մտածում եմ—գեռ քանի, քանի  
 Փրկչաւանդ սիրով բորբոքւած հողիք  
 Պէտք է զո՛հ զնան լոյս-զաղափարի,  
 Մինչ կը պատրաստեն մեզ մի նոր Չասիկ...

ՍԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԼԵԶՈՒՆ ԵՒ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

† ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ <sup>1</sup>)

Դիմենք այժմ բացատական ապառնու կազմութեան մէջ մասնակցող էական չ՛ճ բալին. եթէ չը բացատականը, ինչպէս վերև տեսանք, չառաջաթեք բառ է (proclitica) դորա հակառակ ի՛ճ էական բալը (և իւր խոնարհման բոլոր ձևերը, ներկայ, անց, անկառ.) վտաթեք բառ է (enclitica) ասել է թէ թեքվում է դէպի այն բառը որից լետոյ նա դըրված է և արտասանվում է իրանից առաջ կանգնած բառի հետ իբրև մի բառ, բայց մի՛ արտասանութեամբ և ոչ գրութեամբ: Արտասանվելով իր նախադաս բառի հետ իբրև մի բառ էնկլիտիկան կորցնում է իւր սեպհական շեշտը (որովհետև մի բառը երկու շեշտ չ'է կարող ունենալ), բայց կորցնում է ոչ առանց հետևանքի նախադաս բառի շեշտի համար. այդ բառի շեշտը աւելի ուժ է ստանում. ահա թէ ինչպէս և ինչո՞ւ. ինչպէս չալանի է, մեր գրականական <sup>2</sup>) լեզվի մէջ բառերը, շատ քիչ բացառութեամբ, ստանում են շեշտը իրանց վերջին վանկի վերայ (offitono). ով ուշադրութիւն է դարձրել, նա նկատել է նոյնպէս, որ մի շարք վերջին վանկերը շեշտովոյ բառերից բաղկացած նախադասութեան մէջ, կարգալիս կամ խօսելիս, մենք բոլոր բառերն էլ հաւասարապէս չենք շեշտում. առ-

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1894 թ. № 2:

<sup>2</sup>) Ես գիտութեամբ եմ ատում «գրականական լեզվի», որովհետև մեր բարբառները ունին այլ օրէնք շեշտադրութեան. դորա մասին կը խօսենք լետոյ հերթը բարբառներին հասած ժամանակը. առ այժմ տես իմ «Ազուլեցոց բարբ.» 38:

նենք, օրինակ, ալփայտի մի նախադասութիւն՝ «հարցը մնաց առանց պատասխանի» (Սամ. Բաֆֆի եր. 409): Նթէ լաւ գիտելու լինենք կը տեսնենք որ այս նախադասութեան մէջ վերջին բառը աւելի ուժով է չեշտվում քան թէ առաջին երեք բառերը, որոնց չեշտերը հումեմատարար աւելի թույլ են, և այլ կերպ չէ էլ կարող լինիլ: որովհետեւ եթէ այդ բառերից ամեն մէկը նոյնպիսի ուժով չեշտենք ինչպէս վերջինը՝ դուրս կը գալ որ մենք նախադասութիւնը չենք արտասանում այլ երգում ենք: Նթէ նշանակելու լինինք չեշտերը լուսարէնում ընդունված ձևով՝ զօրեղ չեշտը՝ (accentus acutus) թույլ՝ (accentus gravis), մեր նախադասութիւնը կը ստանալ հետեւեալ չեշտադրութիւնը՝ «հարցը մնաց առանց պատասխանի» իսկ փորձեցէք կարդալ նոյն նախադասութիւնը արտասանելով ամեն մի բառը չեշտի նոյն ուժով, որ ունի վերջին բառը, դուք կը ստանաք հետեւեալ ծանր արտասանվող (համարեա կրգվող) նախադասութիւնը «հարցը մնաց առանց պատասխանի»: Ուրեմն մի սր և է նախադասութիւն ժիր արտասանելու համար նորա οαχτοնները (վերջաշեշտ բառերը) թուլացնում են իրանց չեշտերը բացի նախադասութեան վերջին բառից, բալց կան դէպքեր երբ նախադասութիւն կազմող բառերը չեն թուլացնում և չեն կարող թուլացնել իրանց չեշտերը: Այդ լինում է 1) երբ նախադասութեան մէջ մի որ և է բառ՝ ըստ պահանջման մտքի՝ առանձին զօրութիւն ու նշանակութիւն է ստանում. այդ տեսակ բառը նախադասութեան մէջ մենք առանձնապէս և աւելի ուժով ենք չեշտում և մի քանի դէպքերում նշանակում էլ ենք. 2) երբ նախադասութիւն կազմող բառերի շարքը ընդհատվում է կամ բնականապէս կամ մի որ և է նշանակելով, այդ երկու դէպքումն էլ կանգ առնող բառերը վերադարձնում են իրանց չեշտի ուժը. օր. «Այդ միջոցին՝ ներս վազեց մի՛ ուրախ, վառվառ՛ն օրի՛որդ, ո՛րը անգաղա՛ր ի՛ւր վրա՛ նաչելո՛վ, մօտեցա՛ւ, կանգնե՛ց տիկնոջ առջև՛ և՛, ի՛ւր լի՛ բերկրութեա՛մբ աչքե՛րը դարձնելո՛վ դէպի՛ նա՛, հարցրե՛ց...» 1):

3) Շեշտը չէ՝ 2) թուլանում երբ նա բառի վերջին վանկի վերան չէ. որովհետեւ մեր (գրականական) լեզվում այդ տեսակ բառեր չունինք կամ

1) Բաֆֆի Սամուէլ. եր. 409. այս կտորի մէջ «և իւր լի բերկրութեամբ աչքերը» եթէ տեղաւորէինք ալփպէս՝ «և (առանց ստորակէտի որ աւելի բնական է թվում, արտասանողը այդ ստորակէտի առջև չէ կանգնում) իւր՛ բերկրութեամբ լի աչքերը», այն ժամանակ կը չեշտէինք ալփպէս - և՛ ի՛ւր բերկրութեամբ լի՛ և ալն:

2) Հարկ ենք համարում ասել որ հանգ. Սարգսեանը իւր լօղաձում ամեն տեղ գրում է չէ (և ոչ չէ): Բացի այդ՝ անխնամ կէտադրութեան պատճառով շատ տեղ ստիպւած եղանք բնագրի կէտադրութիւնը փոխել:

համարեա չ'ունինք: Բայտարենք ալդ դէպքը ուուերէն օրինակներով. մինչդեռ ալուպիսի մի նախադասութիւն (վերջաշտ բառերից բաղկացած) **когда отецъ вчера пришелъ домой** արտասանուում է թուլացնելով շեշտը բոլոր բառերի վերաջ բացի վերջինից ալսինքն ոչ **когда отецъ вчера пришелъ домой** ալ՝ **когда отѣцъ вчера пришелъ домой**, հետեւալ նախադասութեան մէջ շեշտերը ալդ վիճակին չեն ենթարկվում՝ **если хоти-те сдѣлать удовольствіе вашему брату**, այս նախադասութեան մէջ, ինչպէս կը նկատէ ընթերցողը, բոլոր բառերը հաւասար ուժով են շեշտվում և ալդ անշուշտ ալն պատճառով որ նոցա շեշտերը վերջին վանկերի վերաջ չ'են: Ահա ալդպէս և հալերէնում չէ թուլացնում իւր շեշտը ալն բառը որը զրված է լինում էնկլիտիկան է՝ բալ է (նորա խոնարհման բոլոր ձևերի) առաջն անմիջապէս, ապացոյց որ էնկլիտիկան բառը միանում է իւր նախադաս բառի հետ իւր արտասանութեամբ և ալդպիսով մենք ստանում ենք իբր մի նոր բառ, որի շեշտը ոչ վերջին վանկի վերաջ լինելով չ'է թուլանում, ինչպէս որ կը թուլանար եթէ վերջաշտ բառերում լինէր նախադասութեան անընդհատ շարժվածքում, օր. ազվէ՛սը տեսնում է ագուաւին. այս օրինակի մէջ «տեսնում» բառի շեշտը նոն ուժը սենի ինչ որ «ազուաւին», այս վերջինը չէ թուլացնում շեշտը վերջին բառը լինելով նախադասութեան մէջ. իսկ «տեսնում» չէ թուլացնում, սրովհետև միանալով հետեւալ և չետաթեքի հետ՝ կազմում է մի նոր բառ, որի շեշտը չլինելով վերջին վանկի վերաջ՝ չէ թուլանում, փորձենք ալդ և դեւել «ազվէսը» բառից չետոյ և դուք կը տեսնէք որ ալդ բառը, որը իւր ներկալ գրութեամբ թուլացնում է իւր շեշտը, ալն ժամանակ չի թուլացնիլ և իւր վերաջ առնելով և ալդ իսկ պատճառով նախապերջաշտ դառնալով իսկ «տեսնում» մնալով առանց և կը թուլացնէ իւր շեշտը. օրինակ, ազվէ՛սն է տեսնում ագուաւին. էական է՝ բալի ալդ չտոկութիւնը ցոյց տալու համար տեղափոխենք նորան մի քանի կերպ՝ նոն նախադասութեան մէջ.

ազվէ՛սը տեսնում է ագուաւին

ազվէ՛սն է տեսնում ագուաւին

ագուաւին է տեսնում ազվէ՛սը

տեսնում է ազվէ՛սը ագուաւին

բայց է տեսնում ազվէսը ագուաւին

կամ է ագուաւին տեսնում ազվէսը: ալսինքն նախադասութիւնը էական է՝ բալով չէ կարող սկսվել և ալդ ուժով հասկանալի է թէ ինչո՞ւ. էական եմ բալը պահանջ է զգում թեքվելու նախադաս բառին, բայց չը գտնելով ալդպիսին իւր առջևից, ինքն էլ հեռանում է նախադասութեան սկզբից. Բաւական է եթէ նախադասութեան սկզբին լինի գոնեա մի թէկուղ փոքրիկ բառ, օրին. չս, և մենք, որ չ'էինք կարողանում ասել՝

է տեսնում ազվէսը ագուաւին,

կարողանում ենք ասել

չ'է տեսնում աղվէսը ագուաւին,

չ'է ագուաւին տեսնում աղվէսը և ալլն.

ապացոյց, ի միջի ալլոց, որ չք առանձին խօսք է և ապա առանձին գրելու է:

Էական է՞ բալի լետաթեքութեան, ալսինքն արտասանութեամբ իր նախադաս բառին հետ միանալու՝ ուրիշ ապացոյցներ էլ կան.

1) Կենդանի խօսակցական լեզվում մենք շատ ժամանակ է, էի, էր և ալլն ձևերից առաջ կանգնած \* (և ոչ \*\*) վերջացած բառերը աչնպէս ենք արտասանում որ ալլ \*-ի և ք էական բալի չիչեալ ձևերի մէջ մտնում է յ բերանի լարման առաջն առնելու համար. ճիշդ աչնպէս ինչպէս որ ալլ լինում է մի բառի մէջ ձայնաւորների իրար հանդիպած ժամանակը. օրինակ Եւրոպա, բաց Եւրոպա-չ-ի, բոպէ՛ բոպէ-ի իբր՝ բոպէ-յ-ի և ալլն-ալղպէս է և նա է իբր՝ նա-չ-է, դա է իբր՝ դա-չ է և ալլն <sup>1)</sup>:

2) Եթէ մի որ և է բառ արտասանութեան չարմարութիւնների պայմանով կորցնում է իւր վերջին բաղաձայնը, էնկլիտիկական բառի հանդիպելով կրկին վերականգնում է իւր կորցրած բաղաձայնը նու՛ն բառի միջին նշումելիս կամ ածանցական ժամանակ ձայնաւորի հանդիպելով. օրինակ, օր, սեռ. օրվա(ն), բալց՝ օրվանից. կաթ(ն) բալց՝ կաթնակեր. մաս(ն) մասնաւոր: Գեղեցիկ օրինակ է ներկայացնում ալղ զէպքի համար և մեր ցուցական կամ որոշիչ լողը ք՛ (==աչն). բաղաձայնով վերջացած բառերի վրա զնվելով՝ ալղ ք՛ լողի մէջ շ աւելի լսելի է լինում քան նո-րա ն, որը առանց աչն էլ հակումն ունի ընկնելու բառի վերջից, օրինակ առաջի(ն), վերջի(ն), երա(ն), օրվա(ն), ամառվա(ն) և ալլն և ալղ համարեա իբրև հաստատ օրէնք, երբ որ նորա առաջից կալ մի ուրիշ բաղաձայն, ինչպէս՝ մուկ(ն), ամառ(ն), ձմեռ(ն), հակ(ն), կաթ(ն) և ալլն. նու՛ն

<sup>1)</sup> Այս երևութիւնը նկատում է Աղալեանը ասելով՝ «...կիսաբաղաձայն յին բառերի վերջիցն անգամ փախչում կպչում է լաջորդ բառի ձայնաւորին, ինչպէս—հալ է==հա լէ: Այսպէս ենք անում նաև չեղած չին, ինչպէս՝ սա է==սա լէ»։ Բալց ոչ փախչում կպչում է նա լաջորդ բառի ձայնաւորին ալ լաջորդ բառի ձայնաւորը գալիս կպչում է նախադաս բառին և ալլ՝ ոչ միայն լաջորդ բառի ձայնաւորը միայն, ալ ամբողջ լաջորդ բառը գալիս կպչում է նախադաս բառին, խառնովելով նորա հետ և արտասանվելով նորա հետ իբրև մի բառ, և աչն էլ ոչ ամեն մի բառ, ալ միայն էնկլիտիկական բառերը. ինչպէս որ «չեղած չին» երևան է գալիս ոչ ամեն մի ձայնաւորով սկսվող բառի առջև ալ միմիայն էնկլիտիկական բառերի ( ի հարկէ ձայնաւորով սկսվող) առջև. և ալլ սա է==սա-չ-է, բալց՝ սա իմանում է և ոչ սա-չ-իմանում է. դա էր իբր՝ դա-չ-էր, բալց դա ասաց ոչ իբր՝ դա-չ-ասաց և ալլն:

ալդ պատճառով և (բն) ցուցական կամ որոշիչ չօղը, զնվելով բաղաձայնով վերջացած բառի վերայ կորչում է, թողնելով միայն իւր ընկեր կիսաձայն շ-ը որը միայն ալդ ժամանակն է գրվում. օր- մարդն, գործն, գիրքն, աշակերտն և այլն. ալս դէպքում և նոյն հեշտութեամբ ընկնում է ինչպէս և վերև բերած օրինակներում՝ կաթ(ն), մաս(ն) և այլն. բայց որովհետև ալս անգամ և ընկ նելով բառի միտքը փոխվում է կամ աւելի ճիշտն ասած՝ նա չ'է ստանում ալն նշանակութիւնը որը պիտի տար որոշիչ և չօղը, ալդ պատճառով և ընկնելով երևան է գալիս նորա մասնակից և առաջընթաց շ, որը մինչև ալդ ժամանակ միայն լսելի էր և զօրութեամբ էր զգացվում, իսկ ալժմ և կորչելով նշանազրկում է. եթէ ոչ ցուցական կամ որոշիչ չօղի հետքն անգամ չ'էր մնալ: Ի դէպ՝ ալդ շ ոչ միայն զգալի և պաւզ լսելի լինելու պատճառով պիտի գրված լինի, ալ էախմորդիկական հիմք ունի նշանագրված. լինելու. դա ներկայացնում է ա լանկի սղումը. ցուցական կամ որոշիչ չօղ է ոչ միայն և տառը ալ շ որը սղումն է աշ դերանվան. (ալս, ալդ, ալն=ըս- ըդ, ըն). և եթէ և-ի հետ միասին չ'ենք զնում բաղաձայնով վերջացած բառերի վերայ, դա մենք անում ենք աւանդաբար և ալն հիման վերայ, որ հալերէն մի բառի մէջ բաղաձայններ կուտակված ժամանակը ինքն ըստ ինքեան ենթադրվում է շ կիսաձայնի գուլութիւնը <sup>1)</sup> Ինչ և իցէ և չօղը ընկած ժամանակը երևան է գալիս նորա ուղեկից շ (բն) նոյն ալնպէս ինչպէս սառն, դառն, և ալն=սառը, դառը և այլն: և

<sup>1)</sup> Կան մի քանի դէպքեր, որ ալդ շ բաւական չ'է որ լսվի և են թաղրվի, ալ հարկաւոր է որ և գրվի. օրինակի համար ստացական ասված չօղնակիւում շ կիսաձայնը բալի, որ շատ լսելի է, նշանադրելը ունի ալն մեծ չարմարութիւնը որ քերականական տարակուսութիւնների և խառնակութիւնների տեղիք չ'էր մնալ. ինչպէս չալանի է, միալանկ բառերը կազմում են իրանց չօղնակին առնելով եբ և ոչ ևեբ, օրին. միտք—մտքեր, ձեռ—ձեռեր, (?) գործ—գործեր և այլն. բայց մի և նոյն բառերի համար—մենք կարող ենք պատահել և մտք-ն-եր, ձեռ-ն-եր, գործ-ն-եր և այլն <sup>1)</sup>. եթէ ալդպէս էլ հէնց գրելու լինենք, դուրս կը գալ հակասութիւն լիշած քերականական կանոնին, և, բացի դորանից, եթէ մենք առաջուց չ'իմանալինք թէ ալս տեսակ չօղնակները արտասանվում են մտք-ըներ, գործ-ըներ, ձեռ-ըներ, մենք կարող ենք արտասանել առանց շ գործներ, ձեռներ և ալս վերջին բառի մինչև անգամ նշանակութիւնը կը փոխէինք. ալ է ձեռներ (руки), ալ է ձեռ-ըներ (դ, ըն=РАДЯ (РАДЯ, БХТ) РЯТ. Ալս ստացական անվանված չօղնակու մասին մանրամասն օրէն կը խօսենք քերականութեան մէջ:

<sup>1)</sup> Ալդ տեսակ չօղնակները ունին իրանց վերջից գլխորդական չօղեր՝ ս, դ, ն:

ինչպէս որ բառի վերջից կորած ն վերագառնում է եթէ նոյն բառի նո-  
ւորման կամ բարդութեան ժամանակ ձայնաւորի է հանդիպում՝ օրին. դառ-  
նութիւն, դռներ, մկեր և այլն, ալդպէս և ընկած ցուցական չօղը ն վե-  
րականգնում է, երբ պատահում է անմիջապէս էնկլիտիկական բառի, որը  
խառնվելով նախադաս բառի հետ և կազմելով իբր մի բառ՝ չառաջ է բե-  
րում նոյն այս բոպէիս շիշած երևութիւն. օրին. մարդը էգուց գալու է, բայց  
մարդն է էգուց գալու. նոյն է հնչիւնը առաջ մենք տեսնում ենք առա-  
ջին ղէպքում ը, երկրորդում ն և այդ աչն պատճառով որ առաջին օրինակում  
մարդը և էգուց առանձին թէև խօսքեր են, բայց արտասանվում են ոչ առան-  
ձին այլ անընդհատ իբրև մի բառ և այդ պատճառով կորած ն վերագսու-  
նում է ինչպէս որ վերագառնում է կաթ(ն)—կաթնակեր, սառ(ն)—սառ-  
նամանիք, դառ(ն)—դառնութիւն. ալդպէս և մարդը(ն) է—մարդն է,  
գործը(ն) է—գործն է և չէ կարող լինել մարդ է, գործ է, ինչպէս որ  
չէ կարող լինել սառ է, դառ է և այլն: Ուրեմն ոչ թէ հետեակ բառը  
սկսող ձայնաւորի չատկութիւնն է որ վերականգնում է ն չօղը, այլ էնկլի-  
տիկական բառի թիւքվիւր ղէպի նախադաս բառը և միանալը նորա հետ  
իբրև մի բառ. ալդպէս որ զուր է պ. Աղայեանցը կապում ը և ն չօղերի  
գործածութիւնը հեռեակ բառեր սկսող ձայնաւորների չատկութեան հետ.  
«հատ բառերում, ասում է նա, որոնց վրա փոփոխողը կանգ առնել ու-  
նի, արտասանելիս դնում է ը և ոչ ն, թէկուզ չաջորդ բառը ձայնաւորով  
լինի սկսած...: Ես ինքս գրելիս ոչ մի կանոն չեմ ունենում ի նկատի,  
այլ միայն իմ բնազդումս և ականջս, որոնց անպայման հաւատում եմ:  
Սրինակ՝ նուրբ ձայնաւորների առաջ, ինչպիսիք են ե (և), եա, եու և  
եօ, չեմ դնում ն, այլ ը, գրում եմ Աքպարն ու Քեարամը և՛ Քեարամը և  
Աքպարը, «-ից առաջ ն, ն-ից առաջ՝ ը և՛ բառը եթէ էական բառ է,  
եչը հաստ է հնչուում, ինչպէս ք, իսկ եթէ էական դերանուն է՝ բարակ  
Աքս պատճառով էլ ես գրում եմ՝ այս չօղածը ես եմ գրել և՛ դու այս  
չօղածն ես գրել: Ուրեմն՝ եմ, ես, ենք, են՝ թէև առանձին առած՝ եչը  
հնչում ենք բարակ ձայնով, բայց նախադասութեան մէջ ալդպէս՝ ինչպէս  
բառերի մէջ ենք հնչում, որ էից չի զանազանում»<sup>1)</sup>: Այս կտորը, իրաւ որ,  
գեղեցիկ կերպով ցուց է տալիս Աղայեանցի առողջ և խելօք բնազ-  
դ ու մը. նա բնազդմամբ կարծես զգում է չետաթեք բառերի գոյու-  
թիւնը և չատկութիւնը<sup>2)</sup>, բայց ծուռ մեկնութիւն է տալիս այդ երևոյ-

1) «Աղբիւր». 1888 № 12, էր. 99:

2) Ատելով՝ «եմ, ես, ենք, են՝ թէև առանձին առած՝ եչը հնչում ենք  
բարակ ձայնով բայց նախադասութեան մէջ ալդպէս՝ ինչպէս  
բառերի մէջ ենք հնչում. որ է-ից չի զանազանվում». վիշակ բա-  
ռերի է ինչպէս բառերի մէջ հնչելը (այսինքն է—է) ինքն ըստ ինքեան

թիւն, անպաղման հաւատարով իւր ա կանջին. ձաջնաւորներն նուրբ կամ հաստ արտասանութիւնը այս դէպքում ոչինչ նշանակութիւն չ'ունի, ապա-  
ցոյց մեր վերև բերած օրինակը՝ մարդը եզուց գալու է և՛ մարդն է եզուց  
գալու. և միշտ է-ին, բայց այնու ամենայնիւ մի տեղ մենք տեսնում ենք  
է-ից առաջ ը, միւս տեղում է ից առաջ ն: Բերենք ուրիշ օրինակ.  
հալըն ա՝ մալըն ա՝ րախացան. մի ա՝ ից առաջ ն, միւս ա՝ ից առաջ ը,  
բայց խօ ուսու. այն, հնչում են միատեսակ, բայց այն զանազանու-  
թիւնը ունին, որ առաջին ա՝ (չաղկապ) չետաթեք բառ լինելով արտա-  
սանվում է իւր նախադաս բառի հետ իբրև մի բառ. նոյնպէս և բար-  
բառներում. հալըն ասում աչ որդուն, բայց՝ հալըն աչ ասում որդուն <sup>2)</sup>:  
Արեմն մեր դիտողութիւններից չառաջ է գալիս հետեւել մի օրէնք՝ ցու-  
ցական կամ սրտչիչ ըն յօղի ը թէ ն գրելը ոչ բնազդումից, ոչ կամաւոր  
ընտրութիւնից և ոչ չաջորդ բառը սկսող ձայնաւորի չատկութիւնից է  
կախված, այլ ուղղակի՝ չետաթեք բառերի առաջ լսվում է և գրվում է ն,  
իսկ բոլոր մնացեալ դէպքերում ը: Այս վերջինի գործածութեան մէջ լօ-  
գուտ ն-ի բացառութիւններ լինում են չափաբերական գրվածների մէջ.  
ոտանաւորի մէջ, ինչպէս ամեն մէկը մեղանից զգում է, ը աւելի երկար  
ձայն ունի քան թէ արձակում. չափաբերականում նա համարեա մի ամ-  
բողջ վանկ կազմելու ընդունակութիւն է ստանում և այդ պատճառով  
եթէ սողի մէջ հարկէ լինում վանկ պակասացնել՝ այն ժամանակ ը-ի տեղ  
զնում են ն:

Գիմենք այժմ է նախդրին, որը մտնում է բացասական ապառնու  
կազմութեան մէջ. այդ նուն է նախդիրն է որը մասնակցում է սահմանա-  
կան եզ. ներկայ կազմելուն մէջ. միայն այն տարբերութեամբ որ սահ. եզ.  
ներկալում մասնակցող է ցոյց է տալիս առարկայի գործողութեան մէջ  
լինելը, իսկ ապառնում նա ցոյց է տալիս առարկայի գործողութեան  
նպատակը <sup>2)</sup>:

հետեանք է այդ բառերի չետաթեքութեան, այն է նախադաս բառերին.  
միանալուն իբրև մի բառ իրանց արտասանութեամբ:

<sup>2)</sup> Տես իմ Ազուլ. բար. գլ II § I ծանօթ. I.

<sup>2)</sup> Յօդածի շարունակութիւնը չի գտնւած:

# ՀՈՐԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԸ ՀԻՆ ՀԱՅՄԱՍՏԱՆՈՒՄ

(ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ)

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

## IV°

Հայկազուններից ծագած ազգերը և ծնունդները, Ազգերի իրաւունքները, ծնունդների տարածելը, տեղ բռնելը, սահմանը, ժառանգութիւնը, Ազնըւականների առաջ գալը: Շէնը: Շէնը սկզբում կլանն էր: Ինչ էր նշանակում չէնը Արշակունեաց ժամանակ: Քաղաք, գիւղ, դաստակերտ: Աւան, չէն և չինանիստ աւան: Շէնք պարզեցը: Շինականների դասակարգը: Շէնը ցեղական եղանակով ապրող ժողովուրդն էր: Ամփոփումն:

Թէ ինչպէս էին Հայկազուններից ցեղեր և ծնունդներ ծագում, ինչպէս էին զրանք տների բաժանում, ժառանգութիւն և կալւածք հաստատում, սահմաններ որոշում: Թէ ինչ էին ցեղապետների առաւելութիւնը և իրաւունքները, ինչ տեսակ ցեղերի բաժանեցան և այլն, այդ ամենը հասկանալու համար կը բերենք մի բաւականին խոշոր կտոր Խորենացուց, Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէի Թարգմանութեամբ:

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 1, և 2:

«Նա (Հայկը) զալիս բնակում է մի սարի ստորոտի մօտ դաշտավայրի մէջ, որտեղ բնակում էին արգէն առաջագոյն ցրտածներինց սակաւաթիւ մարդիկ: Սոցա հնազանդեցնելով իրան, Հայկը շինում է այնտեղ բնակութեան աներ և տալիս է ժառանգութիւն Կաղմոսին, Արմենակի որդուն: Բայց ինքն, աւում է, մնացած մարդիկների հետ գնում է դէպի հիւսիսային արևմուտք (էջ 29), զալիս բնակում է մի բարձր դաշտի մէջ և այս լեռնադաշտի անունը գնում է Հարք, այսինքն այստեղ բնակողները Թորգոմեան տան ազգի Հայրեր են: Այստեղ շինում է մի դիւղ, որը իւր անունով կոչում է Հայկաշէն... Այս դաշտի հարաւային կողմում մի երկայնանիստ սարի մօտ դեռ առաջագոյն բնակում էին սակաւաթիւ մարդիկ, որոնք ինքնակամ հնազանդեցան դիւցազնին (եր. 30):

...«Իսկ Կաղմոս թռանը հրամայում է իւր առաջին բնակութեան տեղը բռնել: Ինքը գնում է և բնակում է Հարք կոչւած տեղում: Քանի մի սարի ապրելով Բաբելոնում ծնել էր իւր Արմենակ որդուն... (Հայկը) մեռնում է յանձնելով ազգը իւր Արմենակ որդուն: Սա թողնում է իւր եղբայրներից երկուսին Խոռին և Մանաւազին բոլոր իրանց ընտանիքով, նոյնպէս և Մանաւազի Բաղ որդուն, Հարք կոչւած տեղում: Սոցանից Մանաւազը ստանում է ժառանգութիւն Հարքը, իսկ նրա որդին Բաղը ստանում է ազի ծովի հիւսիսային արևմտեան եզրը և բոլոր գաւառին ու ծովին գնում է իւր անունը: Սոցանից, ասում են, սկսել են Մանաւազեան, Բզնունի և Որդունի անւանւած նահապետութիւնները, որոնք, ինչպէս պատմում են, միմեանց պատերազմով ջնջեցին սուրբ Տրդատից յետոյ: Իսկ Խոռը բազմանում է հիւսիսային կողմերում և շինում է իւր համար շէնքեր: Արանից, ասում են, սկսել է Խորխոռունի ազգի մեծ նախարարութիւնը: Իսկ Արմենակը, առնելով բոլոր բազմութիւնն իւր հետ, գնում է դէպի հիւսիսային արևելք և զալիս իջնում է բարձրագագաթ սարերով պատած մի խոր դաշտավայր... Արմենակը բնակելով այս խոր դաշտի մէջ, շէնցնում է նորա մի մասն հիւսիսային կողմից և սարի նոյն կողմի ոտը և սարը կոչում է իւր անունով Արադած, իսկ իւր կալւածքներն Արագածոտն (եր. 35):

...«Մեր նախնի Հայկի դալուց առաջ մեր երկրի մէջ շատ տեղերում ցիր ու ցան բնակած գտնուել են սակաւ մարդիկ: Այս Արմե-

նակը տարիներ ապրելով մեռաւ: Իսկ նորա որդին Արմաշխը շինուամ է իւր բնակութեան տունը մի բլրի վերայ, զեախ ավին մօտ, և իւր անունով կոչում է «Արմախր», և զետի անունը դնում է «Երասխ», իւր Արաստ թուռի անունով: Իսկ իւր բազմածին և շատակեր որդուն Շարային ուղարկում է բոլոր նորա ընտանիքով մերձակայ բարեբեր դաշտը, որը Արագած կոչւեցաւ: Սորա անունով, ասում են, այն գաւառը «Շիրակ» կոչւեց: Այդ Արմաշխը տարիներ ապրելով ծնում է Ամասիայ որդուն, որից յետոյ զարձեալ բաւական տարիներ ապրելով մեռնում է: Ամասիան Արմաւիրում բնակելով քանի մի տարուց յետոյ ծնում է Գեղամին: Գեղամից յետոյ ծնում է արի Փառսխին և Յոլակին: Սոցա ծնելուց յետոյ... շինում է երկու տներ, մեծամեծ ծախսերով: Եւ այն տները ժառանգութիւն տւեց երկու որդիներին—արի Փառսխին և կայտաւ Յոլակին, որոնք այնտեղ բնակելով այն տեղերն իրանց անունով կոչեցին, Փառսխից—Փառախոտ, և Յոլակից—Յոլակերտ: Իսկ Գեղամը ծնեց Արմաւիրում Հարմայ որդուն և թողնելով սորան Արմաւիրում, որոնց հետ բնակում էր, ինքը զնաց արեւելահիւսիս, սարի միւս կողմը մի ծովակի փո: Նա շէնցնում է այն ծովակի փոյը, թողնում է այնտեղ բնակիչներ և կոչում է սարը իւր անունով Գեղ, իսկ շինւած տեղերը Գեղարքունի. այսպէս է կոչում և ծովը: Այստեղ նա ծնեց իւր որդի Սիսակին... Տալով նրան իւր ունեցածի մեծ մասը և բազմաթիւ ծառաներ, Գեղամը կտրում է նրան ժառանգութեան սահման ծովից զէպի արեւելք մինչև մի դաշտ... Սիսակը բնակելով այստեղ, լցնում է շինութիւններով իւր բնակութեան սահմաններն և այն աշխարհը կոչում է իւր անունով Սիւնիք, որը պարսիկներն առաւել մաքուր Սիսական են ասում: Ահա սորա սերնդակիցներին էին այն անւանի մարդիկը, որոնց գտաւ այստեղ Վաղարշակ, Պարթևներին Հայերի առաջին թագաւորը, և տէր կարգեց այն աշխարհի վրայ. ահա Սիսական ազգը:

...«Իսկ ինքն Գեղամը մի ամուր ձորի մէջ շինում է մի ձեռակերտ և կոչում է նրան Գեղամի, որ յետոյ նրա Գառնի թուռի անունով Գառնի կոչւեց: Սրա սերունդներին, Վաղարշակի Արտաշէս թուռի ժամանակը կտր Վարժ անունով մի պատանի, որ շատ ջաջող և քաջ էր եղջերուներ, այժեամբեր և վարազներ որսալու

և նեո ձգելու մէջ: Արտաշէսը կարգում է նրան արքունի որսերի վրայ և պարգևում է նրան գիւղեր այն գետի ափի մօտ, որ կոչուում է Հրազդան: Այս գեղումը, ինչպէս ասացինք, քանի մի տարիներ ապրելուց յետոյ, ծնեց Հարմային, սրանից յետոյ և ուրիշ որդիներ և մեռաւ: Իւր որդի Հարմային հրամայեց բնակել Արմաւիրում (38):

...«Այս է ահա Յաբեթի որդու, Քամերի որդու... Քորգոմի որդին Հայկը, հայերի նախնին. ահա նրա ազգերը, ծնունդներն և բնակութեան աշխարհը: «Եւ այնուհետև սկսեցին, ասում է, բազմանալ և լցնել երկիրը»: Իսկ Հարմայ քանի մի տարուց յետոյ ծնեց Արամին (38):

...«Սա աշխատասէր և հայրենասէր մարդ լինելով—լաւ էր համարում մեռնել հայրենիքի համար քան թէ տեսնել, թէ ինչպէս օտարազգիների որդիներն ուրի տակ էին կոխում հայրենի սահմանները և օտար ազգի ճարտիկ տիրում էին իւր արիւնի հարազատներին: Այս Արամը... իրան շրջապատող ազգերից նեղւելով, հաւաքում է ընտանի քաջ աղեղնաւոր մարդիկների բազմութիւն» (եր. 39):

Քննելով բերած հաստատութիւնները, մենք տեսնում ենք, որ Հայկազանց մէջ նախ կային Հայկից ուղիղ գծով ծագածները, որոնք առաւելութիւն էին վայելում միւսներից: Հայկը, ամբողջ զաղթականութեան գլուխ կանգնած, եկաւ Հայաստան. պատերազմներում նա առաջնորդում էր բոլորին: Գիւղ և դաստակերա շինեց: Տեղացիք նորան հնազանդւեցան: Իր ընդօժիններից անւանիները տալով Կաղմոսին՝ թողնում է ժառանգաբար իր առաջին իջւանած տեղը, և ինքը բազմութիւնը առած անցնում է «Հարք» անւանեալ տեղը իւր մահւանից առաջ բովանդակ ազգը յանձնելով Արմենակին: Հարքում և դորա շրջակայքում Արմենակը թողնում է իր Խոռ և Մանաւազ եղբայրներին և Բազ եղբօր որդուն՝ իրանց աղխով, իսկ ինքը բազմութիւնը առած գնում է մի ուրիշ տեղ է շէնցնում և այդ տեղը Արագածոտն է անւանում:

Արմենակից ուղիղ գծով ծագած՝ Ամասիան, Արմայիս, Գեղամը, Հարման և Արամը բնակւում են այնտեղ, ուր դրանց տունը մի բլրի վրայ էր և անւանւում էր Արմաւիր: Դրանց նմանապէս մենք

միւսների վրայ գլուխ կանգնած ենք՝ տեսնում: Ամասիան իրան որդւոց համար Փառախոտն և Յոլակերտն է շէնցնում և այդ տեղերը Փառախին և Յոլակին է ժառանգութիւն տալիս: Արմաշիսը իր Նարայ որդուն իր աղխով տեղաւորում է մի ուրիշ կողմում, ուր Նարան տարածելով, զառաւր իւր անունով է կոչում: Գեղամը թողնելով Հարմաշին Արմաւիրում բազմութեան մի մասը՝ նստացնում է Գեղարքունի անւանեալ տեղը, որոնցից իբրև բնակիչներից այստեղ շէն գոյացաւ: Սիսակին տալով իր ծառաներից մեծ մասը, Գեղամը նրա համար սահման է որոշում ժառանգութեան և նմանապէս Գառնի անւանեալ ձեռակերտն է շինում: Այստեղից մենք տեսնում ենք որ Հայկը, Արմենակը, Ամասիան, Արմաշիսը, Գեղամը, Հարման և Արամը մի տեսակ իրաւունք և առաւելութիւն էին վայելում միւսների վրայ: Կազմոսը, Խուրը, Մանաւազը, Բազը, Փառախը, Յոլակը, Շարան, Սիսակը, զուրկ էին այդ իրաւունքներից: Սրանք իրանց մօտակայ զեւերի, լեռների և մինչև անգամ ծովերի և իրանց տեղերի, գաւառների և աշխարհների վրայ իրանց անունն են դնում և այդ տեղերը ժառանգում են: Մեր հայազէտները նրանց, որոնք միւսների վերաբերեալ իրաւունք, իշխանութիւն և առաւելութիւն են ունենում, ազգ են անւանում: Ուրեմն հէնց սրանց վերաբերեալ է Խորենացին ազգ խօսք գործածում ասելով. «ահա Հայկից ծագած ազգերը, ծնունդները»: Ինչպէս Խորենացին Հայկայ ցեղը կազմողներին մանրամասն կերպով նկարագրում է, երբ դրանք մոտում են Հայաստանս այնպէս էլ մոռացութեան է տալիս նկարագրելու այդ ցեղի և գոյացած ծնունդների կազմակերպութիւնը, երբ դրանք տարածւում են Հայաստանի զանազան կողմերում: Բազմութիւնը մնացել էր Արագածոտնում, ուր Ամասիան, այդ բազմութեան գլուխ կանգնածը, հաւանական է և ցեղապետը, Արմաւիրն էր շինել և այդտեղ բնակում էր: Միւս ցեղապետներից շատերն էլ այդտեղ ծնւեցան և ապրեցին: Յայտնի բան է, որ այդ բազմութիւնը՝ ցեղն էր, որը, ինչպէս Խորենացին նկարագրել է, բողոքացած էր որդիներից, դուստրներից, որդւոց որդիներից, ընդոճիներից և աղխից: Մնունդները նկարագրելու համար Խորենացին երբեմն չիշում է դրանց գլուխ կանգնածներին: Երբեմն էլ ասում է, որ այդ ծնունդների գլուխ կանգնածները իրանց աղխով և կամ ընդօժինե-

րով և կամ ծառաներով, այս ինչ կամ այն ինչ տեղում, կամ գաւառում և աշխարհում տարածւեցան:

Այս մեր ենթադրութիւնները նրանով են հաստատուում, որ Խորենացին ասում է, թէ Վեղամբ ծնեց Հարմա որդուն Արմաւիրում և թողնելով նրան Արմաւիրում, որոնց հետ բնակւում էր, ինքը ուրիշ տեղ գնաց (Խ. 42): Երբ Հարմայ ասելով միայն մի որդի պիտի հասկացէր, այն ժամանակ Խորենացին կ'ասէր, որ Վեղամբ թողեց Հարմայ որդուն Արմաւիրում, որտեղ նրա հետ, և ոչ թէ նրանց հետ, բնակւում էր: Ուրեմն Հարմա ասելով մենք պէտք է հասկանանք Հարման իւր ծննդակիցներով կամ Հարմա անունով որդիքը: Մի խօսքով Խորենացին ցեղերի և ծնունդների գլուխ կանգնածների անունները տալով՝ այդ ցեղերն և ծնունդներն էր հասկանում այնպէս, ինչպէս Հարման ասելով նա հասկանում էր Հարման իր ծննդակիցներով և կամ ցեղակիցներով:

Միւս կողմից, ինչպէս երևում է, Խորենացին շատախօսութիւնից փախչելով, ծնունդների մանրամասն կազմակերպութիւնը չի նկարագրում: Ասել թէ Մանաւազը, Խառը, Բազը, Շարան իրանց աղիտով այս ինչ կամ այն ինչ տեղը տարածւեցան, նշանակում է, որ սոքա իրանց ցեղով կամ ծնունդով բնակութիւն հաստատեցին. որովհետև աղիս խօսքը այս նշանակութիւնն էլ ունէր: Կադմոսին ընդօրինակելով և Սիսակի ծառաներով իրանց մեծերը որոշ տեղերում բնակեցնելով, անտարալոյս պէտք է հասկանալ, որ սրանք ստորագրեալ ծնունդների գլուխ կանգնած այդ երկիրներում տատարածւեցան. որովհետև ընդօրինակ ստորագրեալն էր, իսկ ծառայ խօսքը ինչպէս կը տեսնենք, հին Հայաստանում նշանակում էր հպատակ:

Ինչպէս երևում է, Հայկազունք վաղ բաժանւեցան ցեղերի, որովհետև Հայկազուններից զոյացած ծնունդները, ցեղերը շատ վաղ ունեցան իրանց ջով սահմանները և իրաւունքները: Սրիւակ՝ Ռէլը հետևակ զօրքով գալիս է «Ռերձ ի տունն Կադմեայ» (Խ. 34)<sup>1</sup> Կադմոսը...» չիմացեալ իմ գմերձ լինելն նորա ի տուն իմն<sup>2</sup> փա-

<sup>1</sup>) Կադմոսի կալածից մօտ (Խ. ծ. վ. Ս. 31):

<sup>2</sup>) Եւ ես իմանալով նորա իմ երկրի մօտ լինելը (31):

խուստ է տալիս Հաչկի մօտ: Բէլը շտապում է հասնել թի սահմանս բնակութեան Հաչկայ» (Խ. 35) <sup>1)</sup>. Վաղարշակը պատերազմից յետ դառնալու ժամանակ հասաւ թի տեղիս խոտաւէտ մերձ ի սահմանն Շարայի (Խ. 108) <sup>2)</sup>: Նոյն այդ Շարայից ծնունդներ էին ծագել, հետեւապէս դա ջոկ ցեղ էր դարձել: Արամը Հայաստանի արևելեան և հարաւային մասերը նւաճել էր և արևելքը յանձնել էր Սիսական ցեղին, իսկ հարաւը Կաղմեան տան... «Եւ քանզի զարևելեացն և զհարաւայինն նւաճեալ ի ձեռն յանձնեալ էր երկուց ցեղիցս այսորիկ, Սիսակեանցն զարևելս, և որի ի Կաղմեաց տանէն՝ զԱսորեստանին (Խ. 48) <sup>3)</sup>:

Յեղական կազմակերպութեան նախապիտելիքից մենք տեսնք, որ ցեղի մէջ մայրական ընտանիքի միջոցով կլանն էր առաջ գալիս: Եւ երբ ցեղի միատեսակութիւնը ոչնչանում էր, ցեղը ցեղերի էր բաժանւում: Տեսնք նաև, որ կլանը ստորադրեալների թւում էր և ցեղի հարազատ ծագումն ունեցողների կարգադրութեան տակ էր: Այդպէս էլ Հաչկազանց մէջ էր: Ինչպէս վերևում յիշեցինք, սրանց հարազատ և ստորադրեալ ցեղերը և ծնունդները իրանցից ծագումն առած հարազատ առաջնորդների հետ տարածւեցան զանազան կողմերում: Գեղամը բազմութեան մի մասը տանում է և իբրև բնակիչ նստացնում է ծովեզերքում և ինչպէս Խորենացին ասում է, գոյանում է շէն, որը անւանւում է Գեղարքունի: Խորենացին ասում է թէ Խոռը հիւսիսային կողմերում է բազմանում և աւելացնում է թէ նա «կարգէ զշէնս իւր»: Աւրեմ շէնը գոյանում է այն ժամանակ, երբ ցեղի բազմութեան մի մասը բաժանւելով ցեղից, նոր տեղ էր նստում և այդ շէնը իրան գլուխ կանգնածի կարգադրութեան տակ էր: Այսպիսի բոսկները ցեղական կեանքում կարող էին տեղի ունենալ այն ժամանակ, երբ զրա անդամները քիչ շատ մէկը միւսից սկսում էին զանազանւել կլաններ գոյանալու միջոցին: Աւրեմն այս դէպքում շէնը կլանը պիտիլին էր:

<sup>1)</sup> Հաչկի բնակութեան սահմանները (նոյն 36):

<sup>2)</sup> Շարայի սահմանի խոտաւէտ տեղերը (Խ. ծ. վ. Ս. 32):

<sup>3)</sup> Եւ որովհետև արևելեան և հարաւային կողմերը նւաճել էր և յանձնել էր հետեւեալ երկու ցեղերին, արևելքը—Սիսական ցեղին և Ասորեստանը—Կաղմոսի ցեղին (նոյն, 42):

Եթէ շէնը լինի կլանը կամ ստորադրեալ ծնունդը, մեզ հասկանալի կը լինի թէ ինչու Հայկի շինած գիւղը Հայկաշէն անւանւեց. նմանապէս թէ ինչու Մարաց գերութիւնից շէն էլ գոյացաւ: Յայտնի բան է, զիւղում բնակող, պատկանելի մարդից և կամ գերիներից՝ մայրական ընտանիքի միջոցով՝ կարող էր կլան գոյանալ, որը մեր մատենագիրները շէն խօսքով են արտայայտում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ցեղական կազմակերպութիւնը փոփոխւելու ժամանակ՝ նախ առաջ էր գալիս շէնը կամ կլանը. երբ ցեղի և կլանի անդամների մէջ աւելի միասնակցութիւն կար, զրանց անդամները միեւնոյն մանկունք անունն էին կրում:

Խորենացին օրինակ (եր. 104) ասում է «և զծովեղերեայսն մանկունս, որք ի Գեղամաց և ի Քանանացոց, և Շարաչի ծնունդք և Գուշարաց, և առ Թերսիսակեանսն, և զՎաղմեանսն և զնոցա մերձաւորսն 1):

Այս հատուածը մեզ ցոյց է աւելիս, որ հարազատ արիւն ունեցող Գեղամաց սերնդից և օտարածին քանանացիներից ծագածները նոյն մանկունք անւամբ էին յայտնի, որ ապացուցանում է զրանց մերձաւոր լինելը և վերջապէս Սիսականները և Վաղմեանները ունէին և իրանց բարեկամ կամ մերձաւոր ցեղերը:

Ուրեմն երբ շէնը կլանն էր, այդ ժամանակ զրանց անդամները առ հասարակ մանկունք անւամբ էին յայտնի, ինչպէս և ցեղի միւս անդամները, իսկ յետոյ շէնը ջուկում է ցեղից և կազմում է անկախ և բարեկամ կամ մերձաւոր բայց ստորադրեալ ցեղ, որոնք նմանապէս այդ մտքով շէնի հաշուումն էին, բայց Արշակունիները այդ ստորադրեալ ցեղերից մի քանիսը բարձրացրին և միւսներին հաւասարացրին:

Հին Հայաստանում Հայկազանց հաւասար, եթէ ոչ աւել, բազմաթիւ օտար ցեղեր կային՝ մարք, հրէայք, քանանացիք, իւերացիք, ասորիք և այլն: Գրանցից շատերը թէև գերի բերածներիցն էին, կամ հալածանքներից էին փախուստ տւել դէպի հայաստան,

1) Եւ ծովեղերեայ մանուկներին, որոնք Գեղամի և քանանացիների և Շարաչի և զուգարացի ծնունդներն էին, նմանապէս և Սիսականներին և Վաղմեաններին և Տոցա մերձաւորներին (Ս. ծ. վ. Ս. եր. 89):

բայց երբեմն լաւ իրաւունք էին վայելում, օրինակ մարաց թագուհին և աղջկունքը, որոնք գերի էին բերւած, մեծ պատուով էին բնակեցրած: Բագարտուր ստորադրեալներ ունէր: Բուղդարացիք շէներ էին կազմում. մարաց գերութիւնից շէն գոյացաւ և այլն: Վերջապէս այս օտարածիւնները այն աստիճան էին ուժեղացել, որ Վաղարշակը սրանց նա և լաւ իրաւունքներ էլ տւաւ:

Ինչո՞վ էին կարող այդ գերիները և հալածանքներից փախուստ տւածները այս տեսակ իրաւունքների տիրանալ, եթէ ոչ խառնեւորով Հայկազանց հետ և մայրական ընտանիքի միջոցով կլաններ կամ շէներ գոյացնելով: Եւ իրօք՝ մի ընդհանուր երևոյթ էր աչքի ընկնում հին Հայաստանում. դա օտար ցեղերի ընտանեանալը և մերազնանալն էր:

Խորենացու ջանքերիցն էլ մէկը այն էր, որ քննի թե ո՞վ ոք ի ցեղիցս որոշելոց ընտանի և մերազնեայ և ոչք ոմանք եկք ընտանեցեալք և մերազնացեալք (Խոր. եր. 8) <sup>1)</sup>:

Հին հայոց կեանքում մեծ դեր էին կատարում այդ օտար ցեղերի անուն կրող մերազնեայ դարձածները, որոնց մեր մատենագիրները հայեր էին ներկայացնում: Եւ շատ բնական է կարծել, որ սոքա Հայկազաններից ծագած կլաններ և յետոյ ամեն մէկը անկախ ստորագրեալ ցեղեր դարձած լինէին. և ուղիղ այդ մերազնանալը քայլ առ քայլ էր լինում:

Երբ հարազատ ցեղերը մերձաւոր ցեղերից բաժանւում էին, էլ դոցա անդամները մանկունք էին անւանւում այլ զաւակակցութեամբ էին միմեանցից սկսում զանազանել: Ասում էին օրինակ ի զաւակէ Սենեքերիմայ, ի տանէ Սանասարայ, ի զաւակէ Աժդահակայ, ի զաւակէ քանանացւոց, յորդւոցն Եարայի, ի զաւակացն Գուգարայ հայ Հայկազնոց, ի զաւակացն Խոռայ Հայկազնոց և այլն:

Հարազատ և արտօնութիւն վայելող զաւակներից ազնականները առաջ եկան, մնացեալները շէնի շարքը ընկան:

Հայկազանց ժամանակ թագաւորներից ծագածները զարմ եր

<sup>1)</sup> Եւ թէ այս զանազան ցեղերից ո՞վ էր ընտանի հալացեղ և որոնք փսոջ եկան ընտանեցան և հալացան (Խ. ծ. Վ. Ս. եր. 9):

էին անւանուում, և դոքա ամեն մէկը գիւղերի և դաստակերտների տէրեր էին: Դոցա նահապետը իշխան էր Ատրպատականից մինչև Զուալ և Նախճւան երկիրներին, հետևապէս դոքա էլ ցեղական կազմակերպութեան մէջ էին: Ազնւականները հետևեալ կերպով էին առաջ դալիս. նախ ցեղերի մէջ միատեսակութիւնը կերպարանափոխուում էր՝ առաջ էին դալիս ուժեղ, երևելի և անւանինները, որոնք Արշակունիներից առաջ էլ և Արշակունեաց ժամանակ էլ իբրև հարազատ և որոշ ծագումն ունեցող զաւակներ թէ ժառանգութեամբ և թէ թագաւորից ստացած ունէին զանազան տեսակ իշխանութեան, տէրութեան և սեպհականութեան իրաւունքներ. այս իրաւունքներին դոքա տիրացել էին նախ հարազատ ծագմամբ: Հարազատ ազգերը և ծնունդները, երբ ցեղական կապը անխախտ էր, մի ընդհանրութիւն էին կազմում և ցեղից ջոկւած չէին: Ազգը գերիշխանութիւն ունէր ծնունդների վրայ, իսկ ծնունդների մէջ հարազատ ծագումն ունեցողները գերիշխանութիւն ունէին ընդոճիներու վրայ:

Երբ ցեղերից կլաոնները կամ շէները ջոկւեցան, հարազատ ծագումն ունեցողներն էլ իրանց կողմից ջոկ տոհմեր կամ ազատայնոց տներ կազմեցին:

Արշակունիք իրանց կողմից ազնւականներին ուրիշներից զանազանելու համար, դոցա ազգ էին կոչում, ինչպէս Դիմաքսեանք, Տրունիք, Առաւելեանք, կամ ազգանուն կրելու իրաւունք էին տալիս, ինչպէս Բագարատից ծագածները իրաւունք ստացան Բագրատունի անւանելու և այլն:

Վաղարշակը գտաւ Սիսականներից մէկին և աշխարհի վրայ տէր կարգեց և ահա Սիսական ազգը առաջ եկաւ: Երբեմն էլ անազգիներին ազգ էին կոչում: Երբ միատեսակ զաւակների մէջ ազգերը առաջ եկան, միւս արտօնութիւն վայելող զաւակները կամ ծննդակիցները տոհմ անւանեցան: Մանրամասնօրէն տոհմը կը քննենք մեր գրեածքի երկրորդ մասում թագաւորութիւնը ջոկ է: Նախարարութիւնը ջոկ է: Թագաւորը պիտի կարգէր այսպէս և ի նախարարութիւն կամ այդ աստիճանին պիտի բարձրացնէր, որ մէկը նախարար լինէր: Եւ ուղիղ մենք տեսնում ենք ազգերը և տոհմերը առանձին գոյութիւն ունէին, նախարարները առանձին (Փ. 37): Կար

Աղձնեաց Բղեշխը, կար Աղձնեաց նախարարութիւնը, կար և զօրք և տունն տոհմին Աղձնեաց: Կար Արծրունեաց իշխանը—որը ազգն էր, կար և Արծրունեաց տոհմը (Թով. Արծ. Եր. 109): Տոհմակցութիւնը նոյն ցեղակցութիւնն էր, որը վերաբերում էր ազատացնոց, կային տոհմակիցք, տոհմայինք, տոհմիկներ: Տոհմերին պատկանող անձնաւորութիւնները մէկը միւսի հետ սերտ կապւած էին. դռքա ունէին իրանց տունը և տանուտէրը: Սոււմ էին օրինակ, տանուտէր-նահապետ Մամիկոնեան տոհմին: Ազգը տոհմին վերաբերեալ գերիշխանութիւն ունէր. կարելի է ասել, որ ցեղերի մէջ հարազատ ծագումն ունեցողներից ազգերը և տոհմերը առաջ եկան, որոնք մեր ազնւականներն էին: Գոքա ցեղական սովորութեամբ սնովի էին ապրում: Թագաւորը ամբողջ Հայաստանը իրա տունն էր համարում: Քրմերը, օրի նակ, Տրդատի կողմից իրանց դէմ կուելու ուղարկւած իշխաններին պատասխանեցին՝ «Արդ մեք պատերազմաւ չկարիմք ձեզ ընդդիմանալ, զի այս տունն է թագաւորին հայոց և զուք իշխանք նորա (Ձեն. գլ. 27):

Այն շրջանը, որին տիրում էր նախարարը, նորա տունն էր համարում: Մամիկոնեանք, օրինակ, քաշւելով իրանց աշխարհներից մէկը, Փաւստոսը ասում է թողին զայլ տուն իւրեանց (Եր. 40): Պարսից թագաւորը թոյլատրել էր Ս. Սահակին տիրելու իրանց տան պատկանեալ գիւղերի մի մասը թողու ինա սակաւ գիւղս ի նորին տանէ (Խոր. Եր. 400):

Տոհմերի մէջ սեպհականութիւնը և իշխանութիւնը տանն էր համարւում (Խոր. 349, 364, 367). բարեկամութիւնը տան հետ էր կապւում (Փ. Եր. 25): Տները ունէին իրանց զօրքը և այլն: Մի խօսքով այն շրջանը, որին մէկը տիրում էր, իշխում էր, կամ ուր մէկը սեպհականութիւն և այլ տեսակ իրաւունք ունէր, նրան տուն էին ասում: Հետևապէս ազնւականները ցեղական սովորութեամբ էին ապրում, այսինքն սնովք:

Դառնանք և քննենք ցեղի ստորադրեալ մասը:

Յեղի ստորադրեալ մասից, ինչպէս տեսանք, «չէնը» առաջ եկաւ, որ սկզբում կլանն էր: Հետզհետէ ցեղի կազմակերպութիւնը փոխւելուն պէս, շէն խօսքի իմաստն էլ փոխւում է:

Շէն խօսքի իմաստը լաւ հասկանալու համար, հարկ եմ հա-

մարում մի կարճ հաչեացք ձգել թէ ինչ էր նշանակում շէնը հաչկազեան շրջանին մտակաջ Արշակունեաց ժամանակը, երբ այդ խօսքը մտաւորապէս նախկին նշանակութիւնը կունենար:

Բայց դորա համար առարկայից քիչ շեղուել է հարկաւոր: Նախ քննենք թէ շէնը՝ բնակավայրը թէ ժողովուրդն էր հասկացուում:

Արշակունեաց ժամանակ, որմով պատած տեղը, լինէր դա եկեղեցի, անտառ և մինչև անգամ ամաչի տեղ, քաղաք կարող էր անւանուել: Ասում էին, օրինակ, «քաղաք որմն եկեղեցւոյն Աշտիշատու (Փ. եր. 7) Ղազար Փարպեցին մի տեղ (եր. 16) ասում է, որ անտառը պատեցին քաղաք որմնով և այդ տեղի անունը Խոսրովակերտ դրին: Ազատանգեղոսը ասում է (եր. 448) որ աղօթարան շինեցին մի տեղ և «բարձր քաղաքորմով փակեալ զտեղին ի պատիւ, և դրամբք և դռնափակօք ամրացուցեալ և կանգնեալ անդ զնշան փրկչական խաչին, զի առհասարակ հասեալ ոք այն տեղի. արարչին Աստուծոց երկրպագեալ ծունր կրկնեսցին»: Աւրեմն հաւանական է, որ քաղաքները՝ պարսպով պատած տեղերն էին անւանուում, կամ բերդերը և ամրոցները: Չէնոք Գլակը (եր. 43—45) կարծես քաղաքը, բերդը և կամ ամրոցը մէկը միւսից չի զանազանում: Հաւանական է, որ քաղաքներում, այսինքն իրանց ամրոցներում և բերդերում, նստում էին, ինչպէս Եւրոպայում, աւատական տէրերի պէս բարձր դասակարգի մարդիկը և հէնց այդ պատճառով Ղաղարշակը հրամայեց, որ զեղջուկները իշխանների պէս պաշտեն քաղաքացւոց:

Բայց մինչ ամրոցը և պարսպապատած տեղն էլ կարող էր քաղաք անւանուել, լինում էին և մեծ քաղաքներ: Շամիրամը, օրինակ, հաւանելով Այրարատ դաշտի հարաւային լեռնակողմերը, մտածում է այդտեղ քաղաք և արքունիք <sup>1)</sup> շինել բնակութեան (Խոր. եր. 54). և այսպէս էլ անում է և քիչ տարիներից յետոյ աւարտում է հրաշալի շինութիւնը պղնձէ ամուր դռներով. նմանապէս «զարդարէ դաստակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւարաց» (Խոր. եր. 57) <sup>2)</sup> «և անթիւ բազմութիւն մարդկան

<sup>1)</sup> Բաղաք և պալատ շինենք... (Խ. ծ. վ. Ս. եր. 47):

<sup>2)</sup> Զարդարում է շինութիւններով, տերեւալի ճիւղաւոր ծառերով, (Խ. ծ. վ. Ս. եր. 49):

ի ներքս բնակեցուցանէ» (Խոր. եր. 57) <sup>3</sup>);

Քաղաքները շինողների սեպհականութիւնը կարող էին լինել, և այդ պատճառով ասում էին «քաղաք Շամիրամայ» (Խ. եր. 117), «քաղաքն Երուանդայ (Խոր. 265) Զարիշատը արքունական քաղաք էր (Խոր. 312)» Մծբինը շինելու համար Սանատրուկը իւր բոլոր գանձերը ծախեց (Խոր. 168):

Երբ թագաւորն էր նստում քաղաքում, ասում էին արքայա- նիստ քաղաք (Խոր. 229): Քաղաքը կարող էր յատկացրած լինել զօրքին կամ բազմիներին, օրինակ ասում էին, քաղաք տեղի բնա- կութեան գնդին հայոց (Խոր. 144), քաղաք Բագնաց (Խորեն. 174, 175):

Քաղաքի մէջ, ինչպէս տեսնեք, կարող էր և ժողովուրդն էլ նստել, այդտեղ կարող էր և թագաւորը նստել. այդ պատճառով այն քաղաքամասը, ուր թագաւորն էր նստում, ասում էին ար- քունիք: Ժողովրդի նստելու տեղը աւանն էր, օրինակ «յաւանի ի քաղաքին Տիգրանակերտի», ասում է Փաւստոսը (եր. 187): Կը տես- նենք, որ գերիներին կամ պատկանելի մարդկանց նստացնում էին գիւղում, ուր կարող էր ապարանքը, նմանապէս և բերդը լինել, ինչպէս Խախ գիւղում ապարանք կար (Փ. 182) և այլն: Գերու- թիւնը գիւղ խօսքի հետ կապւած է, և ուղիղ, Վարդկէսի աւա- նում, երբ Տիգրանը հրէից գերութիւնը նստեցրեց, այդ տեղը ան- ւանեց աւանագիւղ, իսկ երբ Վաղարշակը պարսպով պատեց՝ այդ տեղը անւանեց Վաղարշապատ կամ նոր քաղաք:

Ուրեմն ժողովրդի նստած տեղը աւան էր, իսկ երբ այդ տեղում և գերութիւնն էլ է նստում, գիւղ խօսքն էլ է աւելանում: Եւ երբ այդպիսի տեղը պատում էին, քաղաք էր դառնում:

Երբ աւանը մէկին էր պատկանում, դա նորա գիւղն էր ան- ւանում, օրինակ սուրբ Ներսէսի մարմինը տարան «ի Թիլն յաւանն յիւր գիւղն (Փաւ. եր. 184): Աւան խօսքը մի ընդհանուր նշանա- կութիւն ունէր, դա ժողովրդի բնակելու տեղն էր: Երբ գերին կամ պատկանելի մարդն էր այդտեղ նստում, դա տիրոջ գիւղն է:

<sup>3</sup>) Եւ բնակեցնում է նորա մէջ մարդիկների անթիւ բազմութիւն (Խ. ծ. վ. Խ. եր. 50):

բայց ասանում կարող էր և շէնը նստել, ինչպէս որ էր և քաղաքում: այդ դէպքում ասում էին «շինանխտ քաղաք» կամ «շինանխտ աւան» կամ «շէն աւան»:

Խոսքովը աւերում է, օրինակ, պարսից երկիրը «զշինանխտ քաղաքացն և աւանացն ցանկալեաց, զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր (Ագտթ. 29): Ծժմայրը, օրինակ, Արտաշէսի «Սանսորուկ մանկանը փախցրուց» ի շէնն Ուրբատաւանի (Խոր. 170):

Բայց աւանը ոչ շէնն էր և ոչ գիւղը:

Արտաւազըը հանել էր, օրինակ, Մուրացաններից նրանց գիւղերը, բերդերը և պալատները, բայց դրանով չբաւականանալով, գրաւում է և դրանց բոլոր շէնը:

Մանաւազեան տոհմի իշխանի ապստամբութեան պատճառով Խոսքով թագաւորը նւիրում է եկեղեցուն «զաւանն և զբուն զահոյից գիւղն նահապետին Մանաւազենից... զՄանաւազակերտ ամենայն սահմանքն և զաւառակաւն հանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր» (Փաւ. եր.):

Ուրեմն չենք սխալւիլ եթէ ասենք, որ կային շինանխտ կամ շէն աւաններ, ուր ժողովուրդն էր բնակւում, և կային գիւղ դարձած աւանները, որոնք մասնաւորաց սեփականութիւնն էին դարձած. վերջիններում պատկանելի և կամ սորուկ մարդն էր նստում:

Այդ պատճառով բնակավայրերը Արշակունեաց ժամանակ երկու տեսակի էին բաժանւում՝ կային շէն, կային և անշէն տեղեր: Օրինակ Ագանթանգեղոսը (եր 486) ասում է «գունդս վանականաց ի շէնս և յանշէնս... հաստատէր» Փաւստոսը (եր. 193, 194) ասում է, որ Սրբոյն Ներսէսի օրերով «կարգ վանականաց և ի շէնս և յանշէնս... ծաղկեալ» էր:

Միս կողմից Արշակունիներից կարգած նախարարները նոյն ժողովրդի միջից դուրս եկած շէների և գաւառների անունով կոչւած աէրեր էին (Խոր. եր. 115):

Նոյնն էին նոքա, որոնք շէն էին պարգև ստացել:

Վաղարշակը, օրինակ, իւր ուսուրրներին բնակեցնում է Հաշտեանք և նրա գաւառներում, «ի նոսա թողլով զշէնս ամենայն,

հանդերձ յաւելւածով մտից առանձինն ռոճկաց կարգելոց յարքունուստ (Խ. 118) <sup>1)</sup>;

Արտաշէսը իւր եղբայրներին և քոյրերին ժառանգեցնում է Աղիովտի և Աբերանաց գաւառների վրայ «Թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէնս այնմ գաւառաց, հանդերձ առանձին մտից և ռոճկաց (Խ. եր. 140) <sup>2)</sup>;

Վաղարշակը Վարժ անունով պատանուն «շէնս պարգևեալ նմա առ Հրազդան գետով, յանուն նորա կոչի սզգն Վարաժնունի» (Խ. 122) <sup>3)</sup>;

Գաբաղին և Աբեղին Վաղարշակը «շէնս պարգև է նմա, յորոց և անուն կոչին. այսպէս և նախարարութիւնքն՝ Աբեղեան և Գաբեղեան» (Խ. 110) <sup>4)</sup>; Արտաշէսը պարգևեց Սմբատին «զմասն արքունի, որ ի շէնս Գողթան և զՈւղտու Ակունս» (Խ. 155) <sup>5)</sup>;

Այս օրինակներից մենք տեսնում ենք, որ շէնք չէր նշանակում անձնաւորութիւնները, ընտանիքները կամ գիւղերը, դաստակերտները և աւանները. որովհետև այդ պէքսովմ դրանք որոշւած կը լինեն թւով, անունով, սահմաններով և այլն: Պարգևել շէն, ճիշելով, որ դա այս ինչ կամ այն ինչ գաւառն էր բռնել, կամ որոշ գետերի ափերումն էր, կամ մինչև անգամ չորոշելով այդ շէնը— նշանակում է տալ գաւառի կամ գետի ափերի բնակիչներին կամ ժողովրդին:

Պարգևել Գաբաղին և Աբեղին շէնը, չցիշելով դրա տեղը, ինչ լինելը և այլն, և երբ դրանց նախարարութիւնները այդ շէների անունով էին կոչուած, նշանակում է, որ այդ շէները իրանց ցեղի

<sup>1)</sup> Նոցա թողնելով բոլոր գիւղերը, աւելացնելով առանձին եկամուտ և թաղաւորական դանձից նշանակւած ռոճիկ (Խ. ծ. վ. Ս.):

<sup>2)</sup> Թողնելով Նոցա այն գաւառների գիւղերում եղած արքունական մասն առանձին եկամուտով և ուտելիքով (Խ. ծ. վ. Ս. եր. 119):

<sup>3)</sup> Եւ գիւղեր է պարգևում նորան Հրազդան գետի մօտ, նորա անունով նորա ազգը Վարաժնունի է կոչուում (105):

<sup>4)</sup> Եւ պարգևում է նոցա գիւղեր, որոնց անունով և կոչուում են նոյնպէս և նախարարութիւններն—Գաբեղեան Աբեղեան:

<sup>5)</sup> Արտաշէս նորան տալիս է արժանի պարգև, թագաւորական հոգերի մասն Գողթնի գիւղերում և Ուղտու ակունքը (Խ. ծ. վ. Ս. 165):

Ճնունդի կամ կլանի անունները ունեցող ժողովուրդներ էին: Ժողովուրդը այդ ժամանակ ցեղակցութեամբ էր որոշուում և մինչև անգամ մեր ժամանակներում քրդերի, թարաքամանների և այլոց մէջ մարդիկ ցեղակցութեամբ են որոշուում. օրինակ ասում են «Զիւլանլու, Գարդելու, Սոփուլու, Այրում, Իմիրդասանլու և այլ ցեղերի քրդեր կամ թարաքամաններ: Սրանք իրանց անունները կրող ժողովուրդներ են: Նմանապէս Արշակունեաց ժամանակ պորգեել շէնը և կամ ժողովրդի վրայ նախարարներ և կառավարողներ նշանակել շէների և կամ գաւառների անունով, նշանակում էր պարգեել ժողովուրդը, որ ցեղական կազմակերպութեան մէջ էր և հաւաքական մարմին էր կազմում,

Մինչև Տրդատի օրերը շէնը դասակարգ էլ չէր կազմել,—չկար շինականը կամ շէնի մէջ անձնաւորութիւնները մէկը միւսից չէր էլ ջոկուում: Շինական խօսքը մեր մատենագիրները Տրդատի ժամանակից են գործ ածում:

Շէները, ենթարկելով տէրերի իրաւասութեան, այն աստիճան էլ չակարացան և սպասաւորաց շարքը չընկան, ընդհակառակը՝ դրանցից մի ուժեղ դասակարգ առաջ եկաւ: Արանք իրանց ոյժը, նշանակութիւնը և տասնապետներ ունէին, տէրութեան գործերին էլ էին խառնուում, ունենում էին իրանց կալւածքը, զօրքեր էլ էին տալիս տէրութեան:

Այստեղ միայն մի քանի օրինակներ կը բերենք մեր ասածները հաստատելու համար:

Թագաւորները, զիմելով ժողովրդին, միշտ իրանց հրովարտականերով զիմում էին և շինականներին: Տրդատը, օրինակ, զիմում է «առ աշխարհս և առ գաւառս, առ նախարարս, առ զօրս և առ շինականս և առ ամենեսեան»... (Աղաթ. եր. 86):

Արշակի աւած չարչարանքների առաջն առնելու համար, Սուրբ Ներսէսի մօտ ժողովեցան «մեծամեծք, նախարարք, կուսակալք, կողմնակալք, գաւառատեարք և դասապետք շինականաց» (Փ. 136). Պարսից մարզպանը, իւր հրովարտակով համոզում է «ազատներին», «շինականներին» և «եկեղեցականներին» որ նրանք դառնան իրանց բնակութիւնները և ասում է. «զինչ կեանս և թողեալ իցեն եկեսցեն և կալցեն զիւրաքանչիւր զարար... Որ և բազում իսկ եկին...»

և կալան զիւրաքանչիւր կալած» (եղիշէ 261, 262):

Թէև դասակարգերը կազմւելուց յետոյ շինականները «ռամիկ» անունն էին ստացել և ջոկ ռամիկսպաս զօրք էլ կար. բայց հազարապետը ժողովրդականների հայրն էր համարում, տէրութիւնը տարածում էր իւր խնամքը շինական դասակարգի վրայ: Ահա ինչ է ասում Փաւստոսը (եր. 56) հաղարապետութեան մասին. «Եւ սկիզբն գործակալութեան հաղարապետութեան, աշխարհատես խնամակալութեան, աշխարհաշէն դէհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց»:

Շինականները ուրախութեամբ էին պատերազմ դուրս գալիս Վարդանանց ժամանակ ընդհանուրի շահը պահպանելու համար: Դրանց աղքատացնելով և հարկերով ծանրաբեռնելով էին Պարսիկները ցանկանում հայերին մոզութիւնը ընդունել տալ: Հայաստանի ամուր լեռներում և երկիրներում, ուր տէրերը չէին կարող այնքան ընկճել ժողովուրդը, սա բնակիչ անւամբ էր յայտնի: Դրանք մինչև Բագրատունեաց ժամանակ էլ իրանց ազատութիւններից շատերը պահպանել էին: Խութ լեռան բնակիչները իրանց ցեղական կազմակերպութիւնն անգամ պահպանած էին Արաբացոց ժամանակ, և այդ մի բուռն ժողովուրդը կարողանում է յաղթել Արաբացոց զօրաբաժնին: Սլիւնեաց նահապետը ապստամբում է Տրդատի դէմ «ապաւէն առնելով իւրանց զբնակիչս Սիմն կոչեցելոյ լերին... «Խոր» (եր. 249). Կորդուաց, Կորպեաց, Տմարեաց, Մարաց և Արցախաց «ամուր աշխարհների և երկիրների բնակիչները ինքնազուխ ապստամբութիւն սարքեցին Արշակ Թագաւորի դէմ (Փ. 135, 136): Այս օրինակները մեզ ցոյց են տալիս, որ ամուր լեռնային երկիրներում բնակիչը իւր ոյժը և նշանակութիւնը չէր կորցրած: Դրանք մինչև անգամ Բագրատունեաց ժամանակ չէին կազմում դասակարգ և եթէ իբրև ստորագրեալ ժողովրդի մտքով շէն էլ անւանէին, բայց իրանց շատ իրաւունքները պահպանել էին:

Շէնը ուրեմն կարելի է որոշել հետևեալ կերպով: Դա կլանն էր գերութիւնից կամ ստրուկ կանանցից մայրական ընտանիքի միջոցով գոյացած: Շէնը ցեղի ստորագրեալ մասն էր, որովհետև ցեղի հարազատ արիւն ունեցողներիցն էին միայն գլուխ

կանգնածները և ազնւականները առաջ եկել և Արշակունեաց ժամանակ շէն խօսքը ստորագրեալ ժողովրդի մտքով էր գործածուում, և ոչ թէ ստրուկ, սպասաւոր, զեղջուկ և կամ՝ սլաականելի մտքով: Աւելորդ չենք համարում կարճ կերպով մտաբերել այս զլխի իմաստը և յետոյ էլի դառնալ մեր առարկային:

Նախ մենք տեսնում ենք որ Հայկից ուղիղ զծով ծագած՝ Արմենակը, Ամասիան, Արմայիսը, Գեղամը, Հարման, Արամը մի տեսակ առաւելութիւն էին, վայելում իրանց ցեղակիցների վերայ, պատերազմներին դրանք առաջնորդում էին, սահմաններ էին կտրում, ծնունդներն էին տեղաւորում և այլն: Արանք էին ազգերը, այսինքն իշխողները կամ ցեղապետները և կամ սրանց կարելի է և նախարարներ էլ անւանել, ինչպէս Խորենացի, այդ տիտղոսը Հայկին է վերագրում: Կաղմոսը, Խոռը, Մանաւազը, Բազը, Փառտիսը, Յոլակը, Շարան և Սիսակը ծնունդներ էին: Բայց Խորենացին շատ տեղեր միայն ցեղերի և ծնունդների անունները տալով զրանով այդ ցեղերը և ծնունդներն էր հասկանում այնպէս, ինչպէս մենք տեսանք, որ Հարմա ասելով նա հասկանում էր Հարման իւր ցեղակիցներով կամ ծննդակիցներով:

Այնուամենայնիւ Խորենացին տեղ տեղ այդ ծնունդների կազմութեան վերայ քիչ շատ գուշակել է տալիս: Այս ծնունդների գլուխ կանգնածները տարածուում էին որը աղխով, որը ընդոծիններով և որն էլ իր ծառաներով: Դրանք իրանց տների բռնած տեղերի կամ մօտակայ գետերի և լեռների և մինչև անգամ ծովերի և իրանց բռնած գաւառների և աշխարհների վերայ իրանց անունն էին դնում և այդ տեղերը ժառանգում էին: Բայց մենք տեսնում ենք, որ Հայկազանց ցեղի կազմութեան մի մասն էլ բաժանւելով ցեղից, ոչ թէ իբրև ջոկ ծնունդ այլ իբրև բնակիչ նոր տեղ նստեց և դրանք «շէն» անւանեցան:

Եւ մենք եկանք այն եզրակացութեանը որ դա կլանն էր:

Կլանը սկզբում շէնն էր: Այդ եզրակացութեանը մենք եկանք և ուրիշ եղանակով: Նէնը առ հասարակ թէ Արշակունեաց և թէ Հայկազանց ժամանակ, ինչպէս մենք տեսանք, ոչ զիւղը, ոչ դաստակերտը, ոչ աւանը և քաղաքը և ոչ առհասարակ որ և իցէ բնակավայրն էր: Նէնը՝ ստրուկը և սպասաւորը չէր, այլ նա լաւ իրաւունք էլ

էր վայելում: Վերջապէս շէնը դասակարգի պատկանող ժողովուրդն էլ շէր, որովհետեւ շէնը դառնում է մասամբ իբրև դասակարգ միացն Տրդատի ժամանակ, երբ շինական խօսքն էին սկսել գործածել:

Բայց տեսանք, որ առաջի Արշակունիների ժամանակ պարգեւել գաւառում եղած արքունի մաս կամ բոլոր շէնը կամ անուն ունեցող և կամ գետի ափերում բնակող շէնը կարող էր նշանակել թէ պարգեւում էր ժողովուրդը, որը բռնած ունէր գաւառը կամ գետի ափերը և կամ անուն ունէր, այսինքն ցեղական կազմակերպութեան մէջ էր և որը հաւաքական մարմին լինելով՝ այդ ցեղի անունն էր կրում:

Շէնը պարգեւել կամ տալ, կամ շէնի անունով տէրեր նշանակելը, նոյնն էր թէ այդ ժողովուրդների վրայ տէր նշանակել, ինչպէս Մուրացանը ոչ թէ Մուրացան տէր, այլ Մարացոց տէր էր անւանւում:

Շէնը կամ կլանը ցեղի ստորադրեալ մասն էր, որովհետեւ ցեղի հարազատ արիւն ունեցողներից էին միացն գլուխ կամ գնաճները և ազնւականները առաջ եկել:

Երբ շէնը հարազատներից դեռ ջոկւած շէր, դրանց անդամները միատեսակ մանկունք անունն էին կրում, բայց շէնը, հարազատներից բաժանւելով ջոկ, մերձաւոր ցեղ էր կազմում:

Անտարակոյս կլանների միջոցով էին առաջ եկել այսպիսի ընտանեցած ցեղեր՝ մարք, իւերացիք, քանսնացիք, հրէայք, Սանասարեանք, Սենեքերիմեանք և այլն, որոնք հայերի հաւասար իրաւունքներ էին վայելում Հայկազանց շրջանի վերջում և դրանց պէս էլ պարտականութիւններ էին կրում, խառնւելով հայոց գործերին և այլն:

Հարազատ ցեղերից յայտնի էին Սիսակայ, Կալմեայ, Խոռայ, Պաքսամայ, Տորքայ, Զոփաց, Որդունուց և այլ ցեղերը, որոնք ճնունդներիցն էին գոյացել:

Սկզբում ցեղի և շէնի անդամները միատեսակ մանկունք անւամբ էին յայտնի:

Երբ շէներից մերձաւոր ցեղեր կամ ստորադրեալ շէներ առաջ եկան, այդ ժամանակ անձնաւորութիւնները սկսեցին միմեանցից զաւակակցութեամբ զանազանւել: Զաւակը ծագմանն է վերաբերում:

Օտարաճինները մերազնանալով իրանց մայրական անունը և ծագումն էին իրանց վերայ սլահում՝ իրանց մայրական ցեղերի զաւակներ անունն էին կրում:

Հարազատ զաւակներից ազնւականները առաջ եկան, և սկզբում դրանք ազգեր և ճնունդներ էին անւանւում: Երբ հարազատ և մերձաւոր ցեղերը միմեանցից բաժանւեցան, առաջիններից գոյացածները ազգեր և տոհմեր սկսեցին անւանւել:

Տոհմերը նոյն ցեղական կազմակերպութեան մէջ էին և տնովի էին ապրում:

Մերձաւոր ցեղերիցն էլ յետոյ ազգեր և տոհմեր առաջ եկան:

(Կը շարունակւի)

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ.—«Դե՛ի» արևելեան վիպասանութիւնն—Թարգմանութիւնն † Մ. Սաղաթեանցի: Հրատ. «Աղբիւր» և «Տարազ» հանդէսների Թիֆլիս, տպ. «Արօր», 1891 [թ. 1]:

Լերմոնտովի «Դև» արևելեան վիպասանութիւնը, որի առաջին նրմուշները լուս են տեսել 1829 թ. և շարունակ 9 տարի՝ մինչև 1838 թ. մշակել, ճշմարիտ բանաստեղծական մի գրեանք է: Այդ պոէմայի գեղարւեստական և հոգեբանական արժանատրութիւնը այնքան մեծ է, որ կրիտիկայի դեռ չվարժած ռուսի աչքը չի կարողացել նշմարել նորա բոլոր փալ-գեղեցկութիւնը: Միայն օրերս Գր. Կոնդր «Новая любовь»—«Դև» ի հոգեբանական անալիզի մէջ ցոյց տուց ռուս ընթերցող հասարակութեան անգիտակցութիւնը դէպի Լերմոնտով և նրա գրեածներն առ հասարակ: Գր. Կոնդր ասում է, թէ այդ հասարակութիւնը չի հասկացել Լերմոնտովին, չի հասկացել նրա շարադրութիւնները, ինչու և չի կարող

զանում արժանապէս գնահատել, «մինչդեռ նրա տեղը, աւելացնում է նոր բանադատը,—Շեքսպիրի, Գեթէի, Բայրընի հետ հաւասար մի կարգումն է»:

Հայ ծանօթ է «Դև»-ի հետ Մառուկ Սաղաթեանցի թարգմանութեամբ, որ վերաբերում է 60-ական թւականներին և որը նաև առանձին հրատարակեց 1891 թ.: Հանգուցեալը միայն այդ թարգմանութիւնն է կտակել իւր ազգին, բայց որքան ծանրակշիւ կտակի Բանաստեղծ հրապարակախօս Սմբատ Շահ Աղիզեան, ներկելով իր «Յոբելեանի Տարեդարձ»-ը Մ. Սաղաթեանցի չիշատակին՝ ասում է՝ Ո՛վ իմ սիրելի, քնարիդ լարերը մի անգամ միայն թնդացին և էլէքտրական հոսանքի պէս արագ անցան դոքա և լռեցին. վիշտը կուրծքիդ

1) Համեմատեցէք «Դև» պոէմայի մասին ընդարձակ մի գրախօսութիւն պ. Տ. Յովհաննիսեանի տպւած «Մուրճ» 1891 միացեալ № 7-Ց, էջ 925—934:

մէջ, սէրը չըթուծուի, դու վնդ հեռացար մեզանից. բայց բնութեան օրէնքով ոչ մի ուժ, ոչ մի զօրութիւն ձրի չէ անցնում. ա՛նա կենդանի ես դու և քո սաղանդը»։ Մինչև այժմ ոչ մի թարգմանութիւն հաշկական գրականութեան մէջ, կարելի է ասել, աչնպէս չի հնչել, ինչպէս «Գե» վիպասանութեան թարգմանութիւնը։ Նթէ չիչենք մի քանի գրաբառ ձևեր, մի քանի պակասորդութիւններ տաղաչափութեան վերաբերեալ և երկու-երեք չհասկացած ստղեր, «Գե» ի թարգմանութիւնը, համարեա, կատարեալ գրւածք է։ Գեղեցիկ ո՞՞ք քնքուշ ներդաշնակութեամբ լարած՝ գրւում է մեզ մի կախարդական ուժով. մենք նրան կարդում ենք երկու, երեք, հինգ, տասն անգամ, — կարդում և չենք չափենում. ինչպէս կրակը, որքան շատ փչես, աչնքան էլ կը լաչնացնէ իր սահմանները, — աչնպէս էլ՝ որքան չաճախ է կարդում ընթերցողն Մ. Սաղաթեանցի թարգմանած սուղերը, աչնքան ջերմ սիրով կապւում է աչք տողերի հետ, աչնքան էլ շատ համակրում է նոցա թարգմանչին և անկեղծ չարգանք վերաբերում դէպի աչք թարգմանչի անմուռայ վիշտակը։ Մեր ժամանակակից երիտասարդ թարգմանիչները, երիտասարդ պոէտները շատ քան կարող են սովորել «Գե» ի թարգմանութիւնից՝ և՛ բանաստեղծական երևէջները ներդաշնակութիւն, և՛ թարգմանական ճշտութիւն, և՛ ճշմարիտ հաշկական տաղաչափութիւն... Որքան հարստութիւն էր խոստանում հարազատ գրականութեանը Մանուկ Սաղա-

թեանցի լուսապաճառ տաղանդը, և ինչպէս շուտ հանգաւ աչք տաղանդը... Գեղեցիկ օր էր, երկինք անամպ. բայց հազիւ նաւորը հեռացաւ ավերից, ինչպէս փչեց դաժան քամին, նաւը խորտակեց, նաւորը աւար գնաց ծովի սառն ալիքներին... Աչքպէս չանկարճակի էր և Մ. Սաղաթեանցի մահը։ Երբ որ նորա աչքերը փակեցին չախտեանական քնով, հաչ ընթերցող հասարակութիւնը չկարողացաւ գոնէ բնազդօրէն դուշակել թէ որպիսի զաւակից է գրկում... Սակայն՝

„Блаженъ, кто молча былъ поэтъ  
И, терномъ славы неувитый,  
Презрѣнной чернью забытый,  
Безъ имени покинулъ свѣтъ. —

(Պուշկին)։

Հազար երկու հարիւր տողից (մտաւորապէս), որ պարունակում է իրա մէջ «Գե» ի հաշկէն թարգմանութիւնը, 40 տող միմիաչն հնչում են աններդաշնակ, որոնցից 26-ը կարելի է ուղղել չմեղանչելով թարգմանչի «չորացած գերեզմանի» առաջ։ Եւ մեր կարծիքով աչք 26 տողի աններդաշնակութեան պատճառը ոչ աչնքան թարգմանչի անհմտութիւնն էր, որքան վիպասանութեան հրատարակողի անտարբերութիւնը։ — Հաւանական է, որ «ը» տառը հաչ լեզուի մէջ՝ իբրև երրորդ գէմքի դիմորոչ լօղ՝ երկու պէս է գնում՝ «ը» և «ն»։ Աչք հնչիւնից է կախւած երբեմն և հաչ ոտանաւորական տողերի ներդաշնակութիւնը։ Տաղաչափութեան մէջ «ը» փոխելով «ն»՝ բանաստեղծը իմանալ է տալիս իր ընթերցողին, որ կարդալու ժամանակ՝ ներ-

դաշնակութեան համար՝ պէտք չէ առանձին վանկ նւիրել այդ հնչիւնին<sup>1)</sup>: Օրինակ.

«Ո՛հ, մի կանչէք ինձ, որ ձեզ բան  
երգեմ,

Որ ձեր լսելիքն երդով փալիսպեմ»:  
(«Յորելեանի Տարեդարձ» էջ 20):

«Գե»-ի աններդաշնակ տողերից 21 տողի մէջ «ն»-ի փոխարէն «ը» է դրած, ինչ անմարտելի ծանր տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ: Նթէ բնադրումն անդամ ալդպէս է, հրատարակչի սուրբ պարտականութիւնն էր, մեր կարծիքով, ուշադրութիւն դարձնել այդ պակասութիւնների վրայ. թէ ալդպէս անթիւնների ուղղելուց տողերը չէին կորցնիլ իրանց ներքին նշանակութիւնը, — ալդ պարզ է, և թէ դորանից չէր անպատել Մանուկ Սարգսիանցի վիշտակը, — նույնպէ՛ս պարզ է, դորան ապացոյց են շատ տողեր նոյն իսկ վիպասանութիւնից, որտեղ բանաստեղծ «ը»-ի փոխարէն՝ ներդաշնակութեան համար՝ «ն» է գործածել: Օրինակ.

«Ի՞նչ է մի կուսի ողբն ու արտօսըը  
Նդեմալ կողմի բընակչի համար»:

<sup>1)</sup> Սարգիս Սարգսեանը «Մուրճ»-ի սոյն այս համարում (էջ 412) նոյնն է պնդում. ոտանաւորի մէջ, ասում է նա, ինչպէս ամեն մէկը մեղանից զզում է, ք աւելի երկար ձաջն ունի քան թէ արձակում, չափաբերակաւնում նա համարեա մի ամբողջ վանկ կազմելու ընդունակութիւն է ստանում և այդ պատճառով եթէ տողի մէջ հարկ է լինում վանկ պակասացնել՝ ք-ի տեղ դնում են ն:

Ման. Խմբ.

(«Գե»), արեւելեան վիպասանութիւն՝ էջ 27):

Ողբն և ոչ ողբը, և ուրիշ շատ տողեր:

Ալժմ՝ —

ա) «Խաւար վաղում եր, թըռչում էր արագ»...

(ib էջ 37):

տողի մէջ «էր»-ը աւելորդ է և ներդաշնակութիւնը խանգարող կրկնութիւն. կարելի է, անկասկած, չմեղանչելով՝ նրան բաց թողնել:

բ) «Ունայն դարերի շարունակութիւնը

Չէր նորա միտքը սարսափեցնում»...

(ib. էջ 5):

«ը» անպէտք պոչ է «շարունակութիւն» բառին. նա մեղանչում է և՛ տաղաչափութեան, և՛ ոտի (չանդի) դէմ:

դ) «Բայց մատաղ փեսան հեռացաւ  
ալժմ

Խբ նախահայրերի սովորութիւնից»...

(ib. էջ 14):

«իւր»-ը աւելորդ է. նա ոչ թէ բացատրական դերանուն է հանդիսանում (առանց նրան էլ՝ ներքին մըտքից՝ հասկանալի է, որ փեսան հեռացաւ Խբ նախահայրերի սովորութիւնից և ոչ «արեւն»), — ալ միայն ոտանաւորի ներդաշնակութիւնը խանգարող: — Իսկ հետեւալ ստորոջալի (տուն):

«Գորերը մօր հետ՝ քողերով ծածկած՝

Նեւի տեղերից երբէք չեն դալու,  
Վչտով, կսկիծով և աղօթքներով  
Գերեզմանների վերայ ողբալու»...

(ib. էջ 15):

առաջին տողը պիտի այսպէս կարգալ՝

«Բուրբը մօր հետ՝ ծածկած քօղերով»,— որովհետեւ «քօղերով» բառի ոտը (լանգ) «աղօթքներով» է, բայց «ծածկած» բառին ոչ առաջիկայ, ոչ էլ լետազայ ստորոգայում ոտ կայ:

Եթէ այդ մի քանի, ըստ երևութիւն թեթեւ, չափաբերութեան դէմ մեղանշող, պակասութիւնները և մի քանի սխալները կետադրութեան

վերաբերեալ հեռացին պոէմալի թարգմանութիւնից, այն ժամանակ հալը աղատ կարող է ասել, թէ ոչ մի ազգ չունի թարգմանած «Ռև» ը այնպէս ճիշտ, այնպէս դեղեցիկ, ինչպէս իւր գրականութիւնը:

Մեծ արդիւնք կը լինէր եթէ նորից հրատարակէր այդ պոէման:

Յովհաննէս Գեղանի

1894 թ. Յունար, Մոսկա:

БРЭМЪ А. — „Жизнь животных“, въ десяти томахъ, переводъ съ 3-го нѣмецкаго изданія подъ редакціею магистра зоологіи К. Сентъ-Илера.

Քառածայ, Պետերբուրգ, 1893—1894 թ.

ԲՐԷՄ, Ալֆրէդ.—«Կենդանիների կեանքը»: Թարգմանեց ռուսերէն գերմանական երրորդ սպազրութիւնից կենդանաբանութեան մագիստրոս Կ. Սէնտ-Իլէր: Տասը հատոր: Գինն է 60 ռուբլի:

Ռուսաց գրականութիւնը վերջին ժամանակները հարստացաւ մի վերին աստիճանի նշանաւոր գրածքով. թարգմանաբար սկսեց դուրս գալ լայտնի գերմանացի գիտնական Ալֆրէդ Բրէմի «Կենդանիների կեանքը» հոշակաւոր գրածքը:

Մինչև վերջին ժամանակներս կենդանաբանները ամենեւին ուշադրութիւն չէին դարձնում կենդանիների ներքին, հոգեկան կեանքի վրայ: Գիտնականներին համարեա բացառապէս հետաքրքրում էր միմիայն կենդանիների մարմնի կազմածքը և դրա զարգացումը: Գրւում էին և հիմա էլ գրւում են ահագին հատորներ մի որ և է որդնի կամ միջասի

մասին, և այդ ահագին հատորները բաղկացած էին լինում ըստ մեծի մասին կենդանիների կազմածքի ամեն մի մասի մանրամասն նկարագրութիւններով:

Մինեղն ժամանակ այդ ահագին հատորների մէջ համարեա ոչ մի էջ չէր նւիրում նոյն կենդանիների սովորութիւններին, նիստ ու կացին... Այդ ուղղութիւնը այժմ էլ դեռ նկատւում է համալսարաններում, ուր ընդարձակ կերպով անցնում են կենդանաբանութիւնը, սակայն չաթական մի ժամ էլ չի նւիրում կենդանիների կեանքին:

Այդ ուղղութեան դէմ սկսել են արդէն դանազան կողմերից բողոք-

ներ չպտնեւել. ընդունելով, որ կենդանիների անատոմիան սաստիկ կարևոր է, բողոքողները առաջարկում են չլինել աջն քան էլ միակողմանի ալ հետաքրքրել նաև կենդանիների ներքին կեանքով:

Այս վերջին հոսանքը սաստկացաւ մանաւանդ Գարւինի ազդեցութեան տակ. երբ Գարւինը ապացուցեց, որ մարդը անջառած չէ միւս կենդանիներից ալ կապած է դրանց հետ թէ կազմածքի և թէ հոգեկան երևութներով, ալն ժամանակից վետոյ գիտնականները սկսեցին մեծ եռանդով ուսումնասիրել կենդանիների սովորութիւնները, խելքը և միւս հոգեկան երևութները:

Այդտեղից առաջացաւ կենդանիների համեմատական հոգեբանութիւնը, որի վրալ ալժմ մեծ տեսեր են դնուում:

Այդ ուղղութեան արտադրութիւններից մէկն է Ալֆրէդ Բրէմի «Կենդանիների կեանքը» գրւածքը:

Բրէմը առաջին անգամ չէ լուստեսնում ուսաց լեզուով, նրա գրւածքի թարգմանութիւնը մի անգամ արդէն կատարւած է եղել, սակաւն ալ թարգմանութիւնը կորցրել է իւր թարմութիւնը: Նոր թարգմանութիւնը անհամեմատ աւելի լիակատար ու հարուստ է քան առաջւածը:

Բրէմի «Կենդանիների կեանքը» պատկանում է մեծածաւալ հրատարակութիւնների թւին: Ռուսաց թարգմանութիւնը բազկացած պիտի լինի տասը հատորից: Լուս են տեսիլ արդէն չորս հատորներ: Ամեն մի հատորը պարունակում է իւր մէջ

մօտ 600—800 մեծադիր երեսներ բաղմաթիւ գեղեցիկ նկարներով:

Իր գրւածքի մէջ Ալֆրէդ Բրէմը հաւաքել է ոչ միայն ուրիշ գիտնականների արած գիտողութիւնները, ալ և իր սեպհական գիտողութիւնները, որ նա արել է իր ճանապարհորդութիւնների ժամանակ, իսկ ճանապարհորդել է նա սաստիկ շատ, եղել է Եւրոպայի բաղմաթիւ անկիւններում, Սիբիրում, Ամերիկայում, Աֆրիկայում... Մանաւանդ նշանաւոր է նրա ճանապարհորդութիւնը Աֆրիկայի խորքերում, ուր նա ապրել է մի քանի տարի:

Իւր ճանապարհորդութիւնների ժամանակ Բրէմը չէր սիրում ապրել քաղաքներում, նա շուտով հեռանում էր անտառները, ուր ուշի ուշով ուսումնասիրում էր կենդանիների գոցա կեանքի բնական պայմաններում: Բացի դրանից, նա աշխատում էր կենդանիների կենդանի բռնել, որպէս զի տանը շարունակի ուսումնասիրել նրանց սովորութիւնները: Կսկ եթէ ալ չէր չաջողւում, նա հրացանի օգնութեամբ սպանում էր կենդանիներին և ժողովածուներ կալում նրանցից:

Քանի քանի անգամ վտանգի է ենթարկւել նրա կեանքը ճանապարհորդութեան ժամանակ վայրենի երկիրներում:

Ալն հանգամանքը, որ «Կենդանիների կեանքի» մէջ բերւած գիտողութիւններից շատերը կատարւած են հեղինակի ձեռքով, աւելի ևս մեծացնում է նրա արժէքը:

Առաջին հատորի մէջ հեղինակը նկարագրում է կապիկներին, կիտա-

կապիկներին (подубебяны), գիշատիչներին և չիխչերին:

Այդ կենդանիները բոլորն էլ կաթնասուններ են: Նրկրորդ և երրորդ հատորներն էլ են նւիրած կաթնասուններին, աջնպէս որ միմիայն կաթնասունների դասակարգին նւիրած են մօտ 2200 մեծադիր երեսներ: IV, V և VI հատորները պիտի նւիրեն թռչուններին: Հետեւեալ հատորներում պէտք է նկարագրեն սողունները, երկակենցաղները և ձկները:

Աջնպէս որ, նիւթի հարստութեան տեսակէտից, Բրէմի «կենդանիների կեանքը» չունի իր նմանը եւրոպա-

կան գրականութեան մէջ:

Հարուստ նիւթին միանում է հեղինակի գրաւիչ պատմելու ձևը:

Բացի բազմաթիւ հասարակ նկարներից, գրւած քում կան նաև մի քանի շքեղ խրոմոլիտօղրաֆիաներ:

Ափսոս միայն որ այդ հիանալի գրւածքը քիչերը միայն կը կարողանան ձեռք բերել, որովհետև Նրա գինը շատ բարձր է, ամբողջ հրատարակութիւնը կարժեհաջ մօտ 60 ռ.:

Ոճը պարզ ու հասարակ է, աջնպէս որ գրւածքը հեշտ կարող են հասկանալ նաև ոչ մասնագէտները:

Ս. Բ.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՅՅԻ վարդապետի Հայոց պատմութիւնը. թարգմանեց Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց: Ալեքսանդրապոլ, տպարան Ա. Մ. Մալխասեանի. 1893 թ. 233 էջ, ութածալ, գինն է 60 կոպէկ:

Մեր դասական մատենագրութեան զարկ տւեց Թորենացու աշխարհաբարբ, որին չաջորդեց Նդիշէի երկրորդ թարգմանութիւնը և ալսօր էլ անալոյս է տեսել Լաստիվերացու թարգմանութիւնը: Անտարակոչս, ցանկալի է, որ մեր բոլոր դասական գըրւածների թարգմանութիւնն ունենալինք աշխարհիկ լեզուով, բայց կորիւնը, Բիւզանդը, Փարպեցին, Աէմէսը, Ասողիկը և այլն թողած ձեռնամուխ լինել Լաստիվերացու թարգմանութեան, մեզ օտարութիւթում: Թէև սա ժ.Ա. դարու միակ պատմիչն է, բայց թէ իւր նշանակութիւնով և

թէ պատմական ոճով շատ երկրորդական տեղ է բռնում մեր հին գրականութեան մէջ, Վանաւանդ Նա աւելի մի ողբերգու վարդապետ է, քան իսկական պատմիչ, որ ամեն մի երևոյթ բացատրում է մամանակակիցների մեղքերի շատութեամբ և շարունակ ողբում է Հաչատանի թըլւառութիւնը, անհամար, շատ անգամ անկապ և անտեղի վկայութիւններ մէջ բերելով Ս. Կրքից, որին ինչպէս երևում է, շատ է տեղեակ:

Կրքի բովանդակութիւնից ամենահետաքրքրական կտորներն են Բագրատունեաց անկումը և թոնգ-

րակեցոց աղանդին ներբաժ տեղեկութիւնները:

Լատիվերոցին առհասարակ նկարագրում է իր ժամանակակից դէպքերը և ըստ երևութին ստուգատում է:

Այս պատմիչը թարգմանած է նաև Ֆրանսերէն:

Աշխարհիկ թարգմանութեանը կցած են 137 ծանօթութիւն և չատուկ անունների մի ցանկ: Վերջինս ամբողջովին քաղած է Վենետիկեան բնագրից և չարմարեցրած է թարգմանութեան էջերին, որ անշուշտ կարևոր է ուսումնասիրութեան ժամանակ: Գանձութիւնները, սակաւ բացառութիւններով, աշխարհագրական անուններին են վերաբերում: Բայց ազդ ծանօթութիւնները ցանկալի էր որ աւելի որոշ լինէին, օրինակ՝ բաւական չէ առել թէ «Խլաթը Բղնուհեանց գաւառի քաղաքն է» (223 եր.), «Նինին՝ Մանան աղի գաւառի բերդաքաղաք է» (223). «Ապահունի գաւառը Մեծ Հալքի Տուրուբերան

աշխարհի գաւառներից մէկն է» (208) (ընդգծումները մերն են), ալ պէտք էր ասել նաև որ Խլաթը գտանոււմ է Վանայ ծովի ափին և ալն.

Թարգմանիչը նշանակել է ս. Գըրքից քաղած գլուխների և հատուկների տները, որոնք պատահում են բնագրում: Թէև ինքը գրան առանձին արժէք չի տալիս, (առաջաբան) բայց իսկապէս դա կարևոր է և մեծ դիւրութիւն կարող է տալ ձեռագիրների համեմատական ուսումնասիրութեան և բնագիրը վերականգնելուն:

Թարգմանութիւնը ընդհանրապէս բաւական աջող է. լեզուն կոկ, պարզ և ընթերցողների մեծամասնութեան համար շիւրամատչելի, ահպէս որ, եթէ վիշելու չլինենք մի քանի չնչին անհարթութիւնները, թարգմանիչը հասել է իւր նպատակին:

Թուղթը և տպագրութիւնը մաքուր են և պարզ, գինը համեմատաբար թանկ չէ: Տպագրական սխալները շատ են:

Գ. Վ. Կ.—

## ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՒ «ԹՈՒԵԼԵԱՑ ԵՐԳՔՐ»:

ՄԿԻՏ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Ձը նախերով գիտնականների բազմաճմուռ փորձերին, լուս սիրելու համար մեր ազգավրն պատմութեան վրա, մեր Մովսէս Խորենացու պատմութեան մէջ շատ կէտեր, խօսքեր և նախադասութիւններ, ինչպէս լատինի է, տակաւին, եթէ ոչ անվերծանելի, գոնէ բաւականին մութն են մնացել ցալսոր վիճելի խօսքերի շարքում գտնուած է Խորենացու հալոց պատմութեան Լ. գլխում վիշտակած թուելեաց խօսքը, որը հանգուցեալ գիտնական Լեմին իր ուսերէն թարգմանութեան մէջ «Хронологическія» բառով է թարգմանել, տես *Исторія Арменіи Моисея Хоренскаго* էջ 44, գլ. 30: Բայց թէ ինչ բանի վրա լինելով Լեմինը այսպէս է թարգմանել, այս մասին իր տաճ ծանօթագրանութեան մէջ ասում է Т'уеііацъ ёргк', թուելեաց երգք, перевели слово въ слово черезъ „хронологическія пѣсни,“ подъ которыми должно разумѣть историческія пѣсни, собранныя и расположенныя по своему содержанию въ хронологическомъ порядкѣ“. (տես էջ 234. ծանօթ. 94): Վերոյիշեալ թուելեաց խօսքի մասին Խորէն ծ. վ. Ստեփանէն Մ. Խորենացու պատմութեան աշխարհարաւ թարգմանութեան մէջ հետեւեալ բացատրութիւնն է տալիս ծանօթութիւնների մէջ. «Թուելեաց երգք» մենք թարգմանեցինք «Թուական կամ ժամանակագրական երգեր», ուսերէն «Хронологическія пѣсни», իսկ Ֆրանսերէն «Les chants chroniques»: Եւ իր բացատրութիւնը ընթերցողի համար աւելի պարզ կայցուցանելու համար շարահարում է այսպէս.— Այս խօսքով հասկանալու է աչն պատմական երգերն, որոնք հաւաքւած և տեղաւորւած են իրանց բովանդակութեան համեմատ ժամանակագրական կարգով, (Գիրք Բ., Գլ. ԽԹ.): Եթէ մտաբերենք, որ Պարսկաստանի ամբողջ հին պատմութիւնը բովանդակուած էր երգիչների երգերի մէջ, որոնք հաւաքւեցան և ժամանակագրական կարգով դասաւորւեցան միայն լեալին ժամանակում, ինչպէս տեսնում ենք Ֆիրդուսու Շահ-Նամէի մէջ, աչն ժամանակ թուելեաց երգք մեր ժամանակագրական

ե ր գ և ր թարգմանելն օտարտի չի երևի: Այս խօսքերից մենք ուզողակի եզրակացութիւն ենք անում, թէ Հին Հայաստանում եղել է երգիչների երգերի ժողովածու, որի մասին վկայում է բնագրի չաջորդ նախագէտութիւնը: Ուստի մեզ բոլորովին անհիմն է թւում այն մեկնութիւնը, որ տալիս են այն խօսքին գիտնական Միրթարեանները Մովսէս Խորենացու պատմութեան խառական թարգմանութեան ծանօթութիւնների մէջ, որտեղ 88 թէ երեսի վրա թ ու ե լ ի ք բառը գուրս են բերում թ իւ ը բառից, ուրեմն թ ու ե լ ի ք նշանակում է «չափած, չափարեւեկան» և «երգ թ ու ե լ է ա ց», նոցա կարծիքով, նշանակում է ոտանաւոր երգ (?!!): Թողնենք այն որ մինչև այժմ չէինք կարծում, թէ կալ արձակ ոճով երգ, հարկաւոր է նկատել այն, որ թ իւ երբէք չէ գործածում ոտանաւորի մտքով և նշանակութեամբ: Աորա համար Հայերս ուրիշ բառ ենք գործածում չափ և սրանից չափաբերական—ոտանաւոր, չափած գրութիւն:—Ննթերցողը կարող է նկատել, որ վերոյիշեալ համարեա թէ նոյնանման երկու կարծիքները, դարձեալ լաւ չեն պարզած թ ու ե լ է ա ց խօսքը, այլ մնում է անլուծանելի Գողգիան հանգուց: Բայց նախ քան մեր կարծիքը չափնելու, հարկ ենք համարում դարձեալ հաւոյ լեզւի և պատմութեան քաջահմուտ անձնաւորութիւնների արժէք ունեցող կարծիքները մէջ բերել այստեղ թ ու ե լ է ա ց խօսքի վերաբերութեամբ:

ա. Մասնագէտներից մի քանիսը, որոնք մասնագիտաբար ուսումնասիրած են հաւոյ հին լեզուն ու պատմութիւնը, ասում են թէ Մ. Խորենացու գործածած թ ու ե լ է ա ց և գ ու ս օ ն ա ց խօսքերը համարեա թէ միևնոյն նշանակութիւնն ունին. որովհետև Մ. Խորենացին իր գրած պատմութեան մէջ մի անգամ է լիչում միայն թ ու ե լ է ա ց խօսքը: Բայց մեր կարծիքով սխալ բացադրութիւն է այս, որովհետև հէնց ներկալ ժամանակներում որ և է պատմաբան, ասենք թէ, Պարսից պատմութիւնը գրելու լինի և, ի միջի աւրոց, լիշատակի պարսկական երգերի և սրանց եղանակների մասին, օրինակ—Սըհարի, Քիարուլի, Սեգեան, Դաստանի և այլն ու մի անգամ միայն լիշատակի օրինակ Սեղեանը, իսկ մնացածները շատ տեղերում:

Սրանից պատմութեամբ հարցասիրւողը այն հետեանքը չը պէտք հանի, որ Սեղեանն ու Սըհարին միևնոյն եղանակներն են, ամենևին ոչ, քանի որ մեզանից շատ շատերին քաջ չափնի է թէ պարսկական վերոյիշեալ եղանակները բոլորովին գատ զատ բաներ են և ոչ մի նմանութիւն չը կալ նրանց մէջ այնպէս, ինչպէս եւրոպական Վալլս, Մաղուրկա և Պօլլիպօլի մէջ:

Իսկ եթէ Մ. Խորենացին մի անգամ է լիշատակում թ ու ե լ է ա ց խօսքը, այս շատ պարզ է այն պատճառով, որ խնկելի ձերունուն մի անգամ է հարկաւորել և մի անգամ էլ գործ է ածել:

ութիւնս Երբ մենք բախտ ունեցանք անձնապէս ծանօթանալու Նոնդոնում Վենետիկի միաբան հայր Ս. Պարոնեանի հետ, աչն միջոցներում հայր սուրբը մի քննութիւն էր աշխատասիրում Մ. Խորենացու երկերի մասին: Մեր խօսակցութիւնը դառնալով ընդհանրապէս աղղալին պատմագրողներին շուրճը, վերջապէս խօսքը հասաւ դարձեալ թուրքաց բառին, որի վերաբերութեամբ հայր Սուքիասը, համարեա թէ միևնույն բացատրութիւնն էր տալիս, ինչպէս մեր ա. կետում բերած քանի մի մասնագէտների կարծիքը, միայն փոքր ինչ տարբեր ձևակերպութեամբ.— Արովհետև հին դարերում հայերը գրում էին հալիկան երկաթապիր տառերով և այս տառերը եղծելով ու ալ տառերի կերպարանք ստանալով կարդացում էին մի բոլորովին ալ խօսքի նշանակութեամբ, որ հեղինակը ամենևին չէ գրել և բառերի աղաւաղումին աւելի օժանդակել են իրանց սգիտութեամբ գործին անհմուտ ընդօրինակողները, ասում էր հայր Սուքիասը, այս պատճառով շատ հաւանական է, որ թուրքաց խօսքը գուսանացի աղաւաղումն լինի: Եւ իր ենթադրութիւնը ակնաւանդի կացուցանելու համար գուսանաց խօսքը երկաթապիր տառերով գրելով և քանի մի ենթադրական եղծումներ մտցնելով մէջը, դուք էր բերում թուրքաց վերին աստիճանի ճարպիկ կերպով, որը կարող է փորձել ամեն մի հաւագէտ ու միևնույն հետեանքի համեմատել: Թէև հայր Սուքիասի բացատրութիւնը մի վերին աստիճանի սրամիտ ենթադրութիւն է մեր կարծիքով, ինչպէս նաև Էմինի, Խորեն Ստեփանէի և ալոց սւած բացատրութիւնները, աչնուամենայնի մենք բաւականի թերի և մութն Քնք համարում ալ բոլորը հետեւալ պատճառներով:

Առաջին, որ գուսանաց և թուրքաց երգերը միևնույնը չեն և ոչ էլ թուրքացը գուսանացի աղաւաղումն, որի մասին մենք մի փոքր փտող կը խօսենք. երկրորդ—եթէ հայր Ս. Ստեփանի աստիճան համեմատ Հին Հալաստանում եղել է երգիչներին երգերի ժողովածու, հետեւապէս գրի անցած մի բան, ապա ուրեմն Մ. Խորենացին օղուտ կը քաղէր աչն ժողովածուից նիւթեր հանելով իր պատմութեան համար: Բայց ալ չէ անում ինկելի ծերունին, ինչպէս ինքը պատմութիւնն է ցոյց տալիս. որովհետև աչպիսի մի ժողովածու գոյութիւն չէ ունեցել Հալաստանում, քանի որ իր աչն ժամանակներում լսածներից գրի է անցնում «Նրկիէր երկինք և երկիրը», բոլորովին օտարօտի է երևում թուրքացը «թուրքան կամ ժամանակագրական երգեր» թարգմանելը: Եւ ուղիղ, ինչ է նշանակում ժամանակագրական (Хронологическія) երգեր, քանի որ մինչ օրս անցած գնացած և ներկայումս էլ գոյութիւն ունեցող ազգերից ոչ մէկը չէ ունեցել «ժամանակագրական» անունով երգեր: Անշուշտ ամեն մի դար ունեցել է իր հերոսներն ու դիւցազները, որոնք իրանց գործունէութեամբ արժանացել են ժողո-

վրդական բանաստեղծութեան խիթ և գրգիւ տալ անմահանալու, հերոսների և զիւցազնների կարգն անցնելու, բայց չենք կարծում թէ երգիչները ժամանակագրական կարգով երգելիս լինէին, որը շատ ձանձուրալի բան կը լինէր լսողների համար. այլ կը երգէին նրանք աջնայես, ինչպէս ներկալ ժամանակներումն երգում են մեր աշուղները Շիրինն ու Ֆարհադ, Աշուղ-ղարիբ, Քեօօզլի և այլն, առանց ուշադրութիւն դարձնելու թէ սրանցից որն առաջ է եղել և որը չեաոյ: Այսպէս ասելուց չեաոյ դառնանք մեր խնդրին:

Մենք ենթադրում ենք, որ Մ. Խորենացու թուելեացը թեկեհաց պէտք է լինի, ալինքն և ըսելի փոխւած, որի արմատն է թե, բայց կը լինի թեկեհ, որը եթէ դուականապէս հոլովելու լինենք լոգնակի ուղղականում կը լինի թեկելիք ու սեռականում—թեկեհաց: Ահա այսպէս այս թուելեաց երգքը մենք թարգմանում ենք հսկելու կամ հսկման երգեր, հիմնելով հետեւալների վրա:

ա. Թե կը գրարառում ոչ մի տեղ երեան չէ դալիս թե խօսքը բացի Մ. Խորենացու պատմութեան մէջ, այն էլ թուելեաց-ով, բայց ներկալ ժամանակներում Ղազարի, Լուու և Ղարաբաղի հալերը գործ են ածում թե կամ թե ղնեկ խօսքը, որ աւելի հովիւնեհն են ասում երբ իրանց հօտերը ամառաւ ափշոցներին դուրսը, բաց երկնքի տակ պէտք է գիչերեն:

• Հովիւն իր հօտը մի չարմար տեղի վրա կանգնացնելով իսկոյն և եթ իր չնեքին թե է ղնում հօտի շուրջը, ալինքն նրանցից ամեն մէկի համար սեղ է նշանակում, որտեղ շունը պառկում է կծկւած ու պահպանում հօտը գողերի և գալերի դէմ աչալըջութեամբ մինչև լուսանալը, հետևապէս թեսում է:

բ. Նոյն խոյ ալմաս էլ մեր դարևոր հարևան վրացիք ասում են թեա (თვე) կամ դամիս թեա (დამის თვე), որ նշանակում է բառ առ բառ գիչերալին հսկումն. սրանք էլ հալերիս պէս ուխտի են դնում զանազան սրբերի դուռը և աչնտեղ մի գիչեր անքուն են լուսացնում, ուրեմն թեսում են: Այսպէս ասելով մենք ենթադրում ենք, որ Մ. Խորենացին պէտք է գրած լինի թեկեհաց և ոչ թէ թուելեաց ու ընդօրինակողների տղխտութեան կամ մեղ անպատ պատճառով և-ըսելի փոխւել. մենք թուելեաց երգք թարգմանում ենք, ինչպէս փոքր ինչ վերը ասեցինք, հսկման երգեր, ենթադրելով, որ հալերն էլ իբրև լեռնաբնակներ ունեցել են հին ժամանակներում հսկման երգեր աւ պարեր, որոնք կատարւում էին ուխտատեղիներում, թագաւորներին, իշխանների կամ վերջապէս հիւանդների մօտ սրանց զւարճացնելու և զբաղեցնելու համար: Այս միևնույն սովորութիւնը պահպանւել է մինչև այժմ Աովկասաբնակ Չիրքէզների մօտ, սրոնք եթէ պատուաւոր հիւր կամ հիւանդ ու-

նին իրանց տանը, աչն ժամանակ գրացի ջահլը տղաչ և աղջիկներ հաւաք-  
 ւում են հիւրընկալի կամ հիւանդատիրոջ տանը և շարունակ երգ ու պա-  
 րով զւարճանում են մինչև առաւօտը, այսպէս ասած թեւում են: Չերքէզ-  
 ները աչն համոզմունքի են, որ հիւանդին չպէտք է թողնել գիշերով  
 քնել, որպէս զի չար հոգին չտպանէ հիւանդին, որը, սրանց կարծիքով,  
 միայն գիշերով է չափանում: Արդեօք ներկայ ժամանակներում գոյութիւն  
 չունի մի և նոյն սովորոյթը հայերի մէջ Հալաստանի հեռաւոր խուչ  
 և մուխ անկիւններում:

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Արարատ»-ը Խրիմեան Հայրիկի, ներկայումս Հայոց Հայրիկի, բարձրագոյն տեսչութեամբ՝ իւր մարտի համարում խօսեց քահանայական խնդրի մասին «Արշէն էրէց»-ի բերանով: Մենք դարձնում ենք մեր ընթերցողներին ուշքը Արշէն էրէցի այդ յօդածի վրայ որ կրում է «Փիւղական քահանայի քարոզ» խորագիրը: Անշուշտ դա միայն սկիզբ է և իւր յօդածների շարունակութիւնների մէջ նա վերստին կը դիմէ նոյն առարկային: Այդ քարոզի մէջ Արշէն էրէցը ընդհանրացնում է Հայրիկի հայեացքերը քահանայական խնդրի մասին, նորա անունից է նա խօսում, նորա խօսքերն է մէջ բերում: Դորանով իսկ յօդածը ոչ միայն կրում է ընդհանուր հրապարակախօսական բնաւորութիւն, այլ և զործնական նշանակութիւն է ստանում:

Մեր տակիքը այդ մասին յայտնելուց առաջ, հարկ ենք համարում մեր ուրախութիւնը արտայայտել Արշէն էրէցի յօդածի առիթով, առ այժմ՝ ոչ նորա բովանդակութեան համար, այլ լոկ որպէս մի զրական երևոյթ էջմիածնի և յատկապէս Վեհափառ Կաթողիկոսի բարձրագոյն տեսչութեան ներքոյ հրատարակող մի թերթում: Տեսնել որ բարձր հոգևոր կառավարութիւնը իւր հայեացքները մի այդքան կարևոր խնդրի մասին հրապարակախօսութեան նիւթ է շինում, տնտնել որ իւր հայեացքները նա ինքը, ինքնաբերաբար, ոչ միայն անկեղծօրէն յայտնում է և քարոզում, այլ և ընդհանրապէս մամուլի քննութեան առարկայ է դարձնում, — դա ինքն ըստ ինքեան մի ուրախալի երևոյթ է և վկայում է այն բարձր հայեացքի մասին, որ ունի էջմիածնի ներկայ կառավարութիւնը հասարակաց կարծիքի նկատմամբ:

Ճիշդ է որ այդ բանը սպասելի էր ներկայ Հայրապետից, որի անցեալ զրական և հրապարակախօսական զործունէութիւնը ամենքիս յայտնի է:

Արշէն էրէցը շօշափում է իսկ և իսկ այն խնդիրներից մէկը, որը հասարակաց կարծիքը պէտք է սպասէր շօշափած և ամենալուրջ քննութեան առարկայ դարձրած տեսնել ներկայ Հայրապետութեան օրօք: Մեր ընթերցողները մոռացած չեն լինիլ այն ոգևորութիւնը որ տիրում էր ամբողջ ազգի լաւագոյն մասին, երևակայութեամբ տեսնելով մեր հոգևորականների գլուխ կանգնած բարձր առաքինութիւնների տիպար Խրիմեան Հայրիկին: Մենք ինքներս բազմիցս շեշտել ենք այդ հանգամանքը և մասնաձիշ արեւ այն բարոյական արդիւնքի վրայ որ կըստացէր բարձր առաքինութիւնների տէր մի մեծ մարդու անգամ լոկ ներկայութիւնից մեր հոգևորականների մէջ: Մեր ընթերցողները այդ մոռացած չեն լինիլ. դորան «Մուրճ»-ը նւիրել է ջերմագին էջեր երբ Եջմիածնի Գահը թափուր էր, նոյն ոգևորութեամբ նս ալոտայացուեց, երբ ազգի կամքը կատարեց և Հայրիկը մեր մէջ երևաց:

Արդ, մինչդեռ նորընտիր Հայրապետի դալուստի առիթով համայն ազգը շնորհաւորութեան մեծ տօներին էր սպասում, մենք հէնց այդ առիթից նորից օգտւեցինք չիշեցնելու մեր պահանջները, մեր սպասելիքները: Եւ մենք հաւատացած էինք որ դոքա միայն մեր սպասելիքը չէին, այլ և ամբողջ ազգի լաւագոյն մասի պահանջներն էին, դոնէ ինչ վերաբերում է հոգևոր դասակարգին: Մենք ասում էինք «Խրիմեան Հայրիկի գալստեան առիթով» յօդուածում («Մուրճ» 1893 թ. № 6), որ մենք, ժողովուրդս, թէ պահանջներ ունենք անելու և թէ պարտականութիւններ կատարելու: «Մեր պահանջները պէտք է լինեն նախ, որ ազգի հոգևոր դասակարգը մաքրւի իւր վատ անդամներից, ժողովուրդը՝ իւր անարժան հովիւներից, եկեղեցին՝ իւր անարժան սպասաւորներից: Եկեղեցու, ժողովրդի և դասակարգի շահերը պէտք է ի մի ձուլել, աւելի լաւ ասած՝ հոգևոր դասակարգի բարոյական ու մտաւոր մակերևոյթը պէտք է բարձրացնել, ինչպէս այդ պահանջում են եկեղեցու և ժողովրդի շահերը»:

Եւ մենք աւելացնում էինք՝ «Հոգևորական դասակարգի ընկածութիւնը ամենքին յայտնի է, և դանդատները այդ մասին նոր չեն: Ով, եթէ ոչ Խրիմեանը իբր կաթողիկոս, կարող է աւելի հեղինակօրէն սկսել բարոյական մաքրութեան դժւարին գործը: Ես

ասում եմ սկսել, բայց սկսել այնպէս հաստատ կերպով, որ անհնարին դարձնելի վերադարձը դէպի հինը, փոածն ու նեխածը: Պէտք է վերակենդանութիւն ներշնչել ս. Էջմիածնին, կիրթ, զարգացած և ժողովրդասէր ղեկավարներ պատրաստելով առաջնորդների և յաջորդների պաշտօնների համար: Պէտք է ասպարիզից հեռացնել անլնդունակ և անարժան վարդապետներին ու քահանաներին, փոխարինելով նոցա ժամանակի պահանջներին աւելի համապատասխանող վարդապետներով ու քահանաներով, անկաշառ քարոզիչներ թերանով յորդորելով ժողովրդին—առաջարկել քահանայացուներ միմիայն բարի, խելօք, կրթւած և ժողովրդասէր մարդկանց»:

Իոկ ցոյց տալու համար թէ անցեալում որքան մեղանշած են այդ բանի դէմ, թէ որքան մեծ է արդէն եղած չարիքը, մենք ոչ միայն յորդորում էինք այսուհետև միայն այդպէս գործել, այլ և առաջարկում էինք աւելի արմատական միջոցի ևս դիմել: «Պէտք է, ասում էինք մենք, ազգի ձեռնառութեամբ զանձարան հիմնել յատկապէս իրանց պաշտօններից հեռացողների համար, որոնք այդպիսով տեղ կը տան աւելի արժանաւոր նորերին, որոնք կը ձեռնադրեն նոր պահանջներին բաւարարութիւն տւող անհատների միջից»:

Ահա այս սողերն էինք գրում մենք այն րուպէներում, երբ հայ ազգը իւր ցնծութեան սօներն էր տօնում: Այժմ, երբ գործի ժամանակն է եկել, ֆինչպէս կարող ենք առանձին կարևորութիւն չտալ Արշէն երէցի գրածքին, որի մէջ ներկայ հստակութեան զբաղեց, նող առաջին առարկան քահանայական խնդիրն է ներկայացրած:

Դժւար չէ անշուշտ համոզել որ հոգևոր դասակարգի մէջ միմիայն քահանայական մասը չէ բարեփոխութեան կարօտ, այլ և հոգևոր վարչական պաշտօնեաների կազմը, հետևապէս վարդապետների և եպիսկոպոսների ներկայ կազմը. չէ որ եպիսկոպոսների ձեռքով է կատարւում քահանաների ձեռնադրութիւնը, և որ այն չարիքը որ գոյութիւն ունի այժմ՝ նոյն այդ եպիսկոպոսների ձեռքով է կատարւած?

Բայց առ այժմ թողնում ենք խնդրի այդ կողմը, Արշէն երէցի քարոզի այս սողերի վրայ մատնանիշ անելու համար, որ միանգամայն նաև մեր ասածն է:

Ասեցիք սր գիւղացի ժողովուրդ պահանջում էր հոգևոր Տեսուչէն (Կաթողիկոսից), որ իւր պարոք տեսչութենէն կատարէ կամ ձեռնադրել տաչ իւր ներկայացուցած տիրացունն և կամ երբ քննելով չի հաւնիր, կ'ասէ տգէտ է, ուսումն չունի, անարժան է և այլն, թող ինքն (հոգևոր կառավարութիւնը) ուսեալ և արժանաւոր ընծայացուն պատրաստէ մեզ համար: Այո, ժողովուրդին այս պահանջն արդար է. բայց միթէ հոգևոր Տեսչութիւն ևս նոյն ժողովուրդէն պահանջներ չունի կամ դուք ինքնին զգալով չէ՞ք մտածում, որ դուք էլ ձեր չափով ու վիճակով ձեր բաժին պարտքեր ունիք կատարելու:

Արշէն երէցը, շարունակելով խօսել Աեհափառ Հայրապետի անունից, խորը հասկանալով այն կապը որ կայ քահանայացուի ընտրութեան և ժողովրդի հասկացողութեան մէջ, դիմում է ժողովրդի միտքը բացանելու միջոցին՝ արժանաւոր քահանաներ ունենալու համար:

«Ահա Արշէն էրէց անդադար խօսելով, քարոզելով պիտի զգացնէ ձեզ, թէ ինչ է ձեր պարտիք և երբ զիւղական ժողովուրդ լսելով իմանայ և զգայ իւր պարտուց նշանակութիւնը, այլ ևս չի կարող չքմեղս լինել թէ անդէտ եմ, ուսման համն ու ճաշակ չգիտեմ:

«Սիրելի ժողովուրդ, ես գրելով և քարոզելով քո ճաշակ պիտի բանամ...»:

Այսպիսով ուրեմն բարձր հոգևոր կառավարութիւնը ցանկանում է նորից հաղորդել ժողովրդի հետ, մի բան, որ կարծես մուռացած մի պարոք էր նոյն այդ հոգևոր իշխանութեան շատ և շատ տարիներից, գուցէ և դարերից ի վեր:

Այո, մենք հաւատում ենք որ եթէ մենք ունենանք մի բարձր հոգևոր դասակարգ, որը ընդունակ լինէր Աշոտ էրէցի ժողովրդասիրական ոգին ըմբռնելու, եթէ ունենանք այն վարդապետներն ու եպիսկոպոսները, որոնց ոգին ընդունակ լինի ժողովրդի հետ հաղորդւելու—հաւատում ենք որ դորանից կը բզլսի հոգևորականութեան մի վերածնութիւն, միանգամայն արժանի Հայոց Հայրիկի անւան և նորանից տաճած սպասելիքներին:

Պարզ չէ արդեօք որ քահանայական խնդիրը անհնարին է լու-

Ճել թէ մեր և թէ Արշէն երէցի ասածի մտքով՝ եթէ միաժամանակ չսկսուի վերանորոգման գործը վարդապետների և եպիսկոպոսների համար?

Այդ որ կաշառակերի վրայ կարող է ազդել Արշէն երէցի քարոզը և դրդել նորան հաղորդել ժողովրդի հետ և սորա անկեղծ բարեկամը լինել:

Իւր ժամանակի համար խաւար ճանաչածներից այդ որ մէկը պէտք է կարողանայ իւր խաւար մտքով ըմբռնել այն լոյսը որ ժողովրդին հարկաւոր է:

Եւ վերջապէս մեր եկեղեցական-վարչական կազմակերպութեան մէջ՝ յաջորդները և թեմական առաջնորդներն են մերձաւորագոյն իշխանութիւն կազմում թեմի քահանաների համար: Հետեւապէս առանց իշխանութեան բարձր չարգլած վարդապետների և եպիսկոպոսների, առանց բարոյապէս և մտաւորապէս արժանաւոր և իրանց կոչմանը համապատասխան յաջորդների և առաջնորդների, առանց դոցա՝ ովքեր պէտք է լինեն իրանց վրայ յանձն առնող Արշէն երէցի դերը:

Այսպիսով, ահա, քահանայական խնդիրը բնականապէս ծնեցնում է նաև կուսակրօն հոգևորականութեան խնդիր, քանի որ ոչ միայն քահանաները չեն իրանց կոչման բարձրութեան վրայ, այլ և կուսակրօն հոգևորականները, ընդհանուր առմամբ: Ահա ինչու, շօշափելով քահանայական և եկեղեցական-դատաստանական խնդիրները, մենք մեր ինն ամիս առաջ գրած յօդւածը վերջացրինք այս տողերով՝

«Այս և նման բարենորոգումները սակայն ցնորական կը լինեն, մինչև որ լուրջ հոգս չի քաշել հարկաւոր բարձրութեան վրայ կանգնած հոգևորական դասակարգ պատրաստելու համար, որը պիտի ոչ միայն հմուտ լինի զուտ կուսակրօն գործին, այլ և ուժեղ լինի ընդհանուր զարգացման տեսակէտից»:

Նոյն կարծիքին ենք մենք նաև այժմ: Սակայն քահանայական խնդիրը որ այսօր դրւած է հրապարակի վրայ, պահանջում է աւանձին քննութիւն, որին և կը վերադառնանք:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆ ԴԱԿ

ՍՈՎԵԼՈՅ ԵՒ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԻ ԱՌԻՔՈՎ

Մկրտիչ Մառայ Յիսուսի Քրիստոսի և Ողորմութեամբ Աստուծոյ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:

Աւետարանի սիրոյ ողջոյն մատուցանեմ առ ամենայն Եկեղեցիս Հայոց, որք կան ընդ հովանեաւ Մեծին Ռուսիոյ Ինքնակալ Թագաւորութեան: Աղօթս առնեմ վասն ձեր ամենեցուն հանդերձ միաբանական ուխտիւս, կալ մնալ ձեզ ի շնորհս Տեառն ի ճշմարիտ հաւատս Աստուածաշտութեան ի սէր և ի պատւիրան Աւետարանի ընկերսիրութեան. որոյ շայտնացոյց նշանաւ միայն ճանաչէ զձեզ աշխարհ թէ դուք Քրիստոսին էք և Քրիստոս ձեր:

Յետ ողջունական բանիս, այժմ մասնաւոր կոնդակաւս պիտի խօսիմ ընդ քեզ, ժողովուրդ Հայոց, պարզ լեզուով և ոճով, որպէս զի դու չքմեղս լինելով չասես թէ չեմ հասկանար և չեմ իմանար գրոց լեզուն և այլն:

Ես գիտեմ քո բնաւորութիւն, դու շուտով կը գայթակղիս և գոցէ մեղադրելով կասես. Հայրիկ գնաց կաթուղիկոս եղաւ. մոռացաւ իւր պարտք և ամեն բան. միայն մի անգամ չոր ողջունի կոնդակ մի հրատարակեց, ոչ խրատ խօսեց, ոչ պատուէր տաւ, բերան փակեց, գրիչ վար դրաւ և այնպէս անհոգ նստած է Էջմիածնայ վեհարանում. չգիտենք, ի՞նչ կը խորհի, ի՞նչ կը մտածէ և ի՞նչ պիտի անէ, սպասում ենք և համբերութիւն հատաւ:

Այն այդպէս կը թւիմ՝ դատողաց առաջ, որովհետև չկամիմ փող հարկանել ի հրապարակս, այլ պէտք է պատմեմ քեզ, որ դու

իմանաս, խելամուտ լինիս, համբերես ու կարճես քո մեղադրանքը:

Քաւ թէ ես կը սրտմտիմ կամ խուսափել կուզեմ քո մեղադրանքէն. զի քաջ գիտեմ թէ այդպէս եղեր է մեր նախորդաց և ինձ համար էլ պիտի լինի, և ո՛վ կարող է բազմամիտ, բազմաբերան և պահանջող ժողովրդի դատաստանէն խոյս տալ:

Օրհնեալ լին՛, ժողովուրդ, դատել պահանջել իւր իրաւունքն է, եթէ չգատի, չպահանջէ՝ գիտեմ ես թէ էն ժամանակը մեք որչափ անհոգ և անպիտան կը դառնամք. միայն թէ ուղիղ դատի, տարածամ չպահանջէ և գիտենայ ժամանակ և թէ որչափ պահանջել պէտք է. «Զի ամենայն իրաց՝ ժամ է և ժամանակ» ասում է Սողոմոն:

Դու իմանալ կուզես թէ ի՞նչ կը խորհի Հայրիկ. ի՞նչ պիտի խորհի, Սաղմոս կը կարգաց, «Երանի՛ որ խորհի զաղքատն և զանանկն»: Այժմ թողած ամեն բան, աղքատներու համար կը խորհիմ. սոված ժողովրդեան համար կը խորհիմ: Եւ այս հրաւէր կարդամ քեզ, ժողովուրդ հայոց, որ դու էլ պահ մի թողուս ամեն բան և միայն աղքատին համար խորհիս. որպէս զի Դաւթի և Յիսուսի երանութեանց արժանի լինիս: Արդ սկսիմ մի համառօտ հաշիւ տալ քեզ և դու իմանաս թէ Հայրիկ իւր միաբանութեամբ ի՞նչ պիտի զանազան պաշարւած ու պարաւանդւած է:

Այսօր գրեթէ վեցերորդ ամիսն է այն օրէն, երբ ես արժանի եղայ ողջունել էջմիածնայ Մայր Աթոռ՝ շուտ անցան վնասցին այնչափ ովսանաներ և մեծազորդ կեցցէներն և այժմ խոր լուծութիւն և տխրութիւն տիրեցին մեր շրջապատը և միայն լսում են անօթի, քաղցած գիւղական ժողովուրդին և ընտանեաց մանրիկ զաւակներուն լացն ու աղաղակ:

Վեց ամսեայ միջոցում գրեթէ հազարէն շատ աւելի զանազան խնդիրներ եկան կուտուեցան առաջս: Այդ խնդիրներ բազմատեսակ էին, մեծ մասն ամուսնական կնճռալից գործեր էին, որք խնդրում էին լուծել և շուտափոյթ լուծել: Մի մասն ևս գիւղական ժողովրդի խնդիրներ էին, որք դաս-դաս խմբովին եկան ներկայացան հետզհետէ և մատուցին իրենց համախօսական թղթեր, որոց թիւ հասնում էր մինչև հարիւր յիսունէն աւելի, և ի՞նչ էին խնդրում. Հայրիկ, քահանայ կուզեմք, քահանայ: Ոմանք հաստա-

տելով ասում էին, Հայրիկ, մեր զիւղեր՝ կան որ հինգ տարի, ութ տարի և մինչև տասն տարի է, որ ծխատէր ու սեփական քահանայ չունիմք, որչափ դժարութեամբ ուրիշ զեղաններէ քահանայ կը մուրամք, մանաւանդ ձմեւը ձիւն ու բուք եղած ժամանակ: Ոմանք թէ, մեր զիւղերու քահանաներ ութսուն տարին անցուցած, խիստ ծերացած զաւամութեան վիճակին հասած են, էլ չեն կարող սլաշտօն կատարել: Ժողովուրդի այս խնդրոց համար չեմ ուզեր մանրամասն զրել. «Արարատի» մէջ թող կարգան ընթերցողներ Արշէն էրէցի քարոզ:

Այս խնդիրներ ամեն ժամանակ սովորաբար եղած են և այնքան վհատեցուցիչ չեն, որ և իցէ եղանակաւ կարելի է լուծել, կարգադրել և գոհ անել խնդրատուններն:

Բայց եկ տես, որ խնդրոց ամենամեծ մասն՝ զաղթականաց խնդիրն է, բոլորովին չքաւորած, կտոր մի հացի կարօտ զիւղական ժողովուրդի պաղատանքն է, որոնք խումբ-խումբ իրենց ընտանիքով, մանրիկ զաւակներով սկսեալ աշնանէն մինչև ցալսօր կուգան կը լեցւին Եջմիածնայ Հայրապետանոցը: Եւ տես զու ի՞նչ անհանդուրժելի տեսարան բաղուում է մարդոյն աչքին առաջ: Եւ ո՞վ կարող է զթոտ աչքով նայել ու չարտասուել:

Գիտես թէ լքեալ ու յուսահատ ժողովուրդի հոգին իւր անձկութեան մէջ բանաստեղծ կը դառնայ, և քանի բնական ու սրտառուչ նկարագիր կը հանէ թղթերուն վրայ և իւր կրած ցաւեր պատմելու մի ճարտասան կը լինի: Ես մտիկ արի վշտաղին ոգւով, դուք էլ մտիկ արէք, ժողովուրդ Հայոց, և տեսէք ի՞նչ կասեն:

Հայրիկ՝ մեք ոչ ամուսնական խնդիր ունիմք և ոչ քահանայի, մեք թողինք մեր քահանայն մեր զիւղի եկեղեցւոյն պահապան. եկեղեցին ու քահանայն մնացին առանց ժողովրդի, թողինք մեր շտեմարան, ալիւրի փեթակ, հացն ու թոնիր. տանտիկին ելաւ անէն, կարեցաւ ծովն երդիքէն, թողինք մառնի եղեր, լի ամաններով պանիրներ, թողինք մեր կանաչ արտեր, մեր գութան ու հարօրներ, թողինք անմամն Ալաշկերտու հայրենիք: Հապա մեր սուրբ Յովհաննու երեքխորան վանք, Նպատ լեռ. Եփրատայ սուրբ զետ, ամեն մեր ինչքեր կողոպուտ տւինք, առինք միայն մեր ընտանիք հարսներ ու հասած աղջիկներ, եկանք քրիստոնեայ երկրին

ապաստանեցանք: Մեք շատ զոհեր տւինք մեր ընտանեաց սիրոյն համար, որպէս զի ազատենք զանոնք առեւանգող բիրտ քիւրտերուն ձեռքէն: Ե՛, Հայրիկ, մեք այժմ՝ ուրիշ բան չենք խնդրեր, մեզ պէտք է միայն պատասխարան ու հաց, զի մեք անտուն անօթեւան մնացինք:

Այսպէս, ժողովուրդ Հայոց, աղւէսներ սեպհական որջ ունին, երկնից թռչուններ բոցն, ինչպէս ասաց Քրիստոս որ զլուս դնելու տեղ չունէր: Միթէ Քրիստոսի նման իւր հաւատացեալ զաղթական ժողովուրդ ունի՞ իւր զլուս դնելու տեղ:

Կարսի սահմանազլխէն սկսեալ գաղթական ժողովուրդի տարածութեան մի ծայր հասած է մինչև Երևանայ դաշտի գիւղեր: Թէև մեծագոյն մասն Կարսի նահանգում տեղաւորւած են 26 մ մոռանայ երախտագէտ ոգւով յիշել աստ և յանուն ազգին յայտնել իմ շնորհակալութիւնս Երևանայ և Կարսի նահանգապետներուն, որք բարձրագոյն հրամանաւ և իրենց բարեսիրտ ազնուութեամբ թոյլ տւին գաղթական անտերունջ ժողովրդին, որ մինչև զարնան հիւրընկալւին Հայոց գիւղերում:

Եւ ինչ պիտի լինի զարուն, որ եկաւ ահա, միթէ անաշխարհիկ անբնակ բունաւեր թռչնոց համար զարուն աւետաբեր է: Որոց համար աւանդ, որչափ յարմար է բանաստեղծին երգ. «Ինձ համար չէ զարնան գալլը»:

Նորա պիտի յիշեն Բագրևանդայ և Սուկաւէտ ծաղկազարդ ու ջրաշատ լեռան գարուն:

Օրհնեալ լինին Շիրակայ և Սրբատեան դաշտերու գիւղական բնիկ Հայ յողովուրդներ, որք հիւրասէր հայր Աբրահամու պէս իրենց դուներ բացին, ուր մտան տեղաւորեցան խեղճ ու թշւառ գաղթական ընտանիքներ:

Քանի՞ զառն ու դժար է, Բագրևանդայ ճոխ տանուտէր, որոյ դուռ բաց էր, հացալից սեղան պատրաստ ամեն հիւրերուն, նա մարագի մի քունջ հաւու պէս ծւարեցաւ իւր ընտանիքով և ձաղերով և լաւագոյն համարեց այս խղճուկ կեանքը, որ ազատեցաւ քիւրտերու սոսկալի բռնութենէն:

Այսպէս առ ժամանակ մի թէպէտ գիւղերում գետեղւած են գաղթական ընտանիք, այլ ամեն օր և շաբաթ դիմում են Մայր

Աթոռի դուռը, ոչ միայն կարօտութեան համար, զի մեզ շատ յայտնի է նոցա դառնալիշտ վիճակ, թողունք օրապահիկ հացի սնունդ. կը տեսնամ աչքովս իւրեանց պատառոտած կերպարանք սոսկ կտակէ շապկի մի կարօտ, մանկիկներ մերկ ու բոբիկ: Չարանքի վարժաւծ ժողովուրդը զեւ համբերում է այս տառապանքի մէջ և իւր ապագայն մտածելով հարցնում է, Հայրիկ, մեր վսիւճանը ի՞նչ պիտի լինի:

Իսկ ես խոր մտածութեան մէջ վարանած, չզիտեմ թէ ինչ պատասխանեմ կամ յուսադրեմ այդ լքեալ ու վհատեալ ժողովուրդ. կըսկսեմ վարդապետական քարոզ կարդալ, ամէն բան ու ժամանակի հանդամանքներ պարզ կերպով բացատրել իրենց և յորդորել, որ դարձեալ իրենց հայրենիք վերադառնան, վասն զի կարելի չէ, որ Արարատեան երկիր նոր գաղթականութիւն ընդունի, որովհետև իւր բնիկ ժողովուրդ այնչափ աճեր ու բազմապատկեր է, որ այլևս մշակելի հողեր բաւական չեն իրենց համար. դուք մի յուսաք թէ բնիկ երկրին ժողովուրդ թիզ մի տեղ ձեզ բաժին կուտայ. հաց ու պատասխարան տուաւ ձեզ մի փոքր ժամանակի համար, կարծում էք հոգ էլ պիտի տայ:

Դուք ձեր Ալաշկերտի դաշտում շատ հարուստ էիք ձեր ընդարձակ հողերով և իբրև տանուտէր կապրէիք, գիտէք ի՞նչ դառն է ձեզ համար երբ հողատիրութիւնէն զրկւելով՝ ծառայ և մշակ դառնաք այստեղ, և այնտեղ ձեր սեպհական հողերը օտարներ զրաւեն:

Ձէ, Հայրիկ, չէ, դու չգիտես, մեր քաշած անտանելի զրկանքներ, թէ միայն ընչից յափշտակութիւն լինէր, այդ ոչինչ էր, զի մեք շատ վաղուց ի վեր սովորած եմք այդ կերպ զրկանքներուն, բայց մեր աչքի առաջ մեր ամուսիններ և մեր աղջիկները ամենայն բռնութեամբ վայրենի քրդեր յափշտակում են և կը տանին բռնի կերպով Քրիստոսի հաւատք ուրանալ կուտան. այլ ևս մեք կարող եմք հանդուրժել:

Թող, Հայրիկ, թող, մեք ծառայ լինիմք, մշակ դառնամք միայն ապահով ապրինք մեր ընտանիքով ու զաւակներով:

Այսպէս կը մտածի կը խօսի ու պատասխան կուտայ վշտակիր ժողովուրդ և ո՞վ կարող է մեղադրիլ զինքն:

Թողունք գաղթական ժողովրդին այս ցաւն ու տառապանք,

մի այլ տառապանք ևս տառապանքի վերայ ծանրանալով՝ սաստկապէս ձնշում է Մայր Աթոռը:

Յայտնի է, որ երկու տարի իրարու վերայ երաշտութիւն լինելով՝ երկինք անձրև չի տուաւ որ երկիր հաց բուսցնէր. ուստի Արարատեան դաշտի և մի քանի ուրիշ գաւառներու գիւղական ժողովուրդ փող չունի. սորա համար ճարահատած խումբ խումբ դիմում են Մայր Աթոռին իբրև նորա հոգեծին զաւակներ ժտում են կամ հաց կամ փող և ուրիշ ոչինչ:

Այսպէս քաղցած ու նեղացած մեր Լուսաւորիչ սուրբ հօր որդիքներ իրաւունք ունին իրենց հօր տան և Աթոռին դիմել, հապա Հայրիկն ում դիմէ, ասացէք ժողովուրդ Հայոց, եթէ ոչ աւ ձեզ:

Ուստի հրաւէր կարդալով առ բոլոր սիրելի ազգայինս Ռուսիոյ, կոչեմ զձեզ ի գթութիւն, ի կարեկցութիւն գիւղական քաղցած ժողովուրդին: Ոչ եթէ խնդրում եմ, որ համայն ազգայինք հաւասարապէս ընդհանուր հանգանակութիւն բանան, զի այդ մասին քարձրադոյն հրամանի պէտք կայ, այլ մասնաւորապէս կարսդ անձիքներէն կամաւոր նպաստ և ողորմութիւն կը խընդրեմ ջանուն աղքատին, որ զիս իբրև իւր ձեռք կարկառում է:

Կարկառեցէք ուրեմն և դուք ձեր ձեռք այն բազմաթիւ աղքատ զազարոսներուն, որոնք Եջմիածնաց տաճարին տակ շարւած սպասում են կոչնակի ձայնին, տեսնանք թէ ինչպէս վաղելով կը թափեն ի սեղանատուն: Միայն իրենց փոր կըշտացնելով բաւական չէ, այլ սեղանէն ելնելով կը ժողվին Վեհարանին և գանձատան զրան առաջ և սկսում են իրեանց «ՀԱՅՐ ՄԵՐ», այսպէս. մեր փորը կշտացաւ, Աստուած շէն պահէ Սուրբ Եջմիածնաց վանք, բացց Հայրիկ, մեր ընտանիք, մեր մանրիկ տղէք անօթի նւաղած են, տան մէջ հալած աչքերով սպասում են որ շուտով դառնամք իրենց օրապահիկ հաց տանեմք: Երկու երեք օրով անօթի մայրեր կան, որոց ծծերուն կաթ ցամաքած է, կաթնկեր երեխաներն էլ իրենց զրկին մէջ ցամքած ու մարած են, Աստուծոյ սիրոյն լինի, տէք մեզ հաց կամ փող, տանենք հասուցենք մեր սոված ընտանիքներուն:

Այս նկարագիր պիտի շարժէ անշուշտ մեր ազնւագոյն մեծատանց և ամեն դասակարգ ժողովրդին սիրտ. պիտի շարժէ նաև Հայոց մայրերու սիրտ, իրենց առատ և ճոխ սեղանի փշրանք-

ներէն բաժին հանել աղքատ զաղարոսներուն: Երանի թէ ես էլ արժանի լինիմ կատարել իմ հայրական պարտիքս և իբրև սպասաւոր մատակարարեմ այդ փշրանքներ կարօտած խեղճերուն:

Խոստովանիլ պէտք է որ մեր սակաւ փշրանքներ նպաստ և ողորմութիւն մի մի կաթիլ ջուր են, երբէք չեն բաւական պասքած ժողովուրդին ծարաւն անցունել, դորա համար մի յորդառատ գեա պէտք է, և այդ գեա բղխում է Մեր Մեծ խնամակալ Կայսեր տէրութեան ակնէն, որ իբրև երկնուց Հօր պատկեր ներկայացնում է աշխարհիս վերայ. գիտէ Նորին Մեծութիւն իւր բարի կամք ի գործ դնել. և առատապէս բանալով իւր անսպառ աղբիւրին ակն և լիապէս ջուր տալ իւր հաւատարիմ հպատակ ծարաւած ժողովրդին:

Եւ ինձ կը մնայ յայնժամ աղօթել և հանապաղ աղօթել մեր գթառատ Կայսեր թանկագին կենաց համար, որոյ կեանքը բովանդակ երկրին և ժողովրդի բարօրութեան կեանքն է:

Աղօթեմ և վասն Ձեր, ժողովուրդ Հայոց, դուք ևս ընդունելով Հայրիկին հրաւէր ձեր փոքրիկ փոքրիկ աղբերակներու ակներ բանաք և ծարաւած ժողովրդին բաժակ բաժակ ջուր բաշխէք, դիտելով և հաւատալով որ վանձատրիչ Տէր Աստուծ ձեր բաժակներու փոխարէն երկնից արքայութեան դրախտի գետերէն պիտի բաշխէ, որոյ ջուրն կենաց անմահական ջուր է:

Իցիւ թէ արժանի անէ Տէր ամեն ծարաւած հոգիներուն ըմպել այդ կենաց ջուրէն և օրհնել զանուն նորա յաւիտեանս. Ամէն:

(Իսկականի վերայ ստորագրած է)

Մ Կ Ր Տ Ի Զ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գրեցաւ Կոնդակս ի 28 Մարտի 1894  
ամի Փրկչական եւ ըստ՝ տոմարիս ՌՅԽԳ,  
ի Մայր Աթոռս Հայաստանեայց ի Ս.  
Էջմիածին ի Վաղարշապատ:

## ՅՈՎՆ.-ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Մուրճ» ի չունարի տետրում հաղորդած էր այդ դպրոցի հոգաբարձու թիւնը ընտրելու համար կատարւած ծխական պատգամաւորների ընտրութիւնների մասին: Ինչպէս լիջում կը լինեն մեր ընթերցողները՝ կասկածելի մնում էին Բեթղեհէմի ս. Աստածածնու ընտրութիւնները, որոնց արդիւնքը հաղորդելով հանդերձ մենք մատնանիշ էինք եղել այն հանգամանքի վրայ որ այդ եկեղեցում ընտրողների թիւը ծխականների մի հինգերորդից ( $\frac{1}{5}$ ) պակաս էր եղած, հետեապէս պէտք էր կարծել թէ այդ եկեղեցու ընտրութիւնը կը բեկանէր պատշաճաւոր իշխանութեան կողմից: Զեկուցւած էր ուր հարկն է անվաւերականութեան մասին և այդ պատճառով վիշեալ եկեղեցու ծխականները չաջորդ կիրակի Նորից հրաւիրւեցին ընտրութիւններ կատարելու, որ սակաւն տեղի չունեցան ալն պատճառով որ նոյն եկեղեցու քահանաները ինքնիշխան կերպով փակեցին եկեղեցու դռները և չկատարեցին ընտրութիւնները: Այդ անցքից չետոյ Գէորգ եպ. Սուրէնեանց հաստատեց թեմիս առաջնորդ, որը ալ և ալ հիմունքներով առաջին ընտրութիւնները վաւերական ճանաչեց:

Մարտի 24-ին կատարուեցին նոյն դպրոցի հոգաբարձական ընտրութիւնները մասնակցութեամբ բոլոր տասներկու պատգամաւորների և նախագահութեամբ թեմական առաջնորդի: Նիստում ալ խօսակցութիւններ տեղի չունեցան, բացի ալն որ պատգամաւորներից մէկը հարց ուղղեց սրբազան նախագահին թէ ալ ինչ է նշանակում որ ընտրութիւնների մասին միայն երկու օր առաջ է ծանուցւել, քանի որ պատգամաւորների ընտրութեան օրից մինչ հոգաբարձական ընտրութեան օրը երկու ամիս է անցած. իսկ այդ ժամանակամիջոցում պատգամաւորներից ոմանք կարող էին բացակայ լինել քաղաքից. իբր օրինակ բերեց իրան, որը իւր պատգամաւորական պարտականութիւնը կատարելու համար, հեռագիր ստանալուն պէս, Երևանից ճանապարհ է ընկել և հազիւ նիստից մի ժամ առաջ Թիֆլիս է հասել: Այդ հարցին սրբ. առաջնորդ-նախագահը բաւականացաւ պատասխանելով թէ իւր կարգադրութեան հիմքում վատ դիտա-

տրութիւն չի եղել, այլ միայն ուզեցել է որ այդ օրը կատարեն ընտրութիւնները, ուրիշ ոչինչ:

Գալով բուն ընտրութիւններին, պատգամաւորները իրանց հակումներով բաժանուած էին երկու մասի: Մի մասը ղանկանուած էր ընտրել հոգաբարձուներ չատկապէս զպրօցի հիմնադիր հանգուցեալ Յովնանեանի տոհմից կամ ազգականներից, իսկ միւս մասը ցանկանուած էր որ ընտրուելի չորս հոգաբարձուներից երկուսը և կամ դոնէ մէկը ընտրուի միանգամայն անկախ ազգակցական կապերից:

Մեր ընթերցողներին հարկ ենք համարում հաղորդել, որ նիստից մի օր առաջ Յովնանեան զպրօցում կալացած պատգամաւորների մասնաւոր մի ժողովում մենք ծանօթացանք Գէորգ IV կաթողիկոսի կոնդակի, որպէս նաև Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան և հանգուցեալի կտակի և այլ պաշտօնական գրութիւնների հետ և հաւատարացանք որ այդ բոլոր պաշտօնական վկայութիւններում մի տող անգամ չկայ, որով պարտաւորութիւն դրած լինի պատգամաւորների վրայ հոգաբարձու ընտրել անսպառձառ Յովնանեան տոհմից կամ ազգակցականներից:

Միակ իրաւունքը, որ կարելի է տոհմի իրաւունք ճանաչել, այդ հետեւան է. կտակի զօրութեամբ զպրօցին չատկացրած քարւանսարալի եկամտից պէտք է գոյացնել 24000 ռուբլու մի ֆոնդ, որի տոկոսներով 10 որդեգրուհիներ պիտի պահեն չիշեալ զպրօցում. արդ, ընտրութիւնը այդ որդեգրուհիների վերապահուած է Յովնանեան տոհմի մէջ աւազին և ոչ զպրօցի հոգաբարձութեանը: Սե նոյն իսկ այդ տոհմական իրաւունքն էլ բաւականապի որոշուած չէ. մի տեղ այդ իրաւունքը չատկացրած է старшему въ его родѣ (նոր տոհմի աւազին), միւս տեղ աւազ է старшему въ родѣ (տոհմի աւազին), որով հասկացուած է թէ այդ իրաւունքը տրուած է նորա, այսինքն Ստեփանոս Անանեանցի՝ սերնդի մէջ աւազին, իսկ միւսով կարելի է հասկանալ նաև որ այդ իրաւունքը տրուած է առհասարակ Անանեան (Յովնանեան) տոհմի մէջ ամենահասակաւորին: Դրած ալպիսի անորոշ գրութեան մէջ՝ մինչ այժմեան խնամակալները և հոգաբարձութիւնները այդ իրաւունքը ճանաչել են հանգուցեալ Ստեփ. Անանեանցի մեծ որդու օգտին, իսկ հանգուցեալ հիմնադրի արական սերնդի իսպառ ջնջելուց չետոյ՝ հանգուցեալ հիմնադրի եղբայր պ. Ալեքսանդր Անանեանցի օգտին:

Բայց, կրկնում ենք, հոգաբարձական թեկնածուների խնդիրը ոչ մի բառով չի կապուած Անանեան տոհմի իրաւունքների հետ:

Չնայած դորան՝ նոքա, որոնք նոր տարր էին ուզում մտցնել հոգաբարձուների կազմի մէջ, և նոցա թւում նաև ամսագրիս խմբագիրը, միանգամայն արդարացի և խելացի էին դանում ընտրել հոգաբարձու առնուազն երկուսին և նոյն իսկ երեքին Անանեանների մերձաւորներից,

բազց ոչ որովհետև անուճով մերձաւոր են հանդուցեալ հիմնադրին, ալ որովհետև զոցանից երեքը՝ Ալեքսանդր Ստեփանեան Անանեանց, Յովհաննէս Ստեփանեան Խատիսեան և բժ. Միքայէլ Շահպարտեան գլխաւոր գործողներին են եղել հանդուցեալ հիմնադրին ղէպի ալդ բարեգործութիւնը մղելու և ամեն վտանգից դպրոցը մինչ այժմ զերծ պահելու և համեմատապէս բարեկարգ զրուժեան մէջ պահպանելու համար:

Այլ հիման վրայ՝ նոր տարր մտցնելու կուսակիցները իրանց պահանջը իջեցրին երկուսից մինչ մէկը, առաջարկելով ապալիսի ցուցակ. Ալ. Անանեան, Յովհ. Խատիսեան, Միք. Շահպարտեան, իսկ չորրորդը՝ պ. Յովհ. Սպենդիարեան: Հակառակորդները պնդեցին տոճմականների անունները վրայ: Գաղտնի ընտրութեան հետևանքը եղաւ հետևեալը.

1. Ալեքսանդր Անանեան 12 ձայն (միաձայն)
2. Յովհաննէս Խատիսեան 11 ձայն (միաձայն, ինքը իբր պատգամաւոր՝ ձեռնպահ իւր համար):
3. Միքայէլ Շահպարտեան 12 ձայն (միաձայն):
4. Բժ. Ստեփանոս Անանեան 7 քէ ընտրողական և 5 սև:
5. Յովհաննէս Սպենդիարեան 6 քէ ընտրողական և 6 ոչ ընտրողական:

Այսպիսով ընտրեցին առաջին չորսը:

Մասնակցեցին ընտրութեան՝

Վանքի մայր եկեղեցուց—պպ. Յովհ. Խատիսեան, Գաբր. Սունդուկեանց, Աբր. Բաբանեան և Խահակ Բուզղանեան:  
 Մողնու ս. Գէորդ եկեղեցուց—պպ. Ա. Արասխանեանց, Յակոբ Թաղէտեանց, Ստ. Լիսիցեան և բժ. Լուու-Մելիքեան:  
 Բեթղեհէմի ս. Աստածածին եկեղեցուց—պպ. Կոնստ. Ալիխանեանց, Նիկ. Խոսրովեան, բժ. Կուկուջանեան և Յ. Խուղաղեան:

Ա. Ա.

# ՆԱԻԹԱՐԴԻԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԸ

## ՖՐԻԴՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

### V

Մեր ներկա նամակը մտադիր ենք ներկել կերտինի արտասահմանեան առևտուրի համառօտ տեսութեանը և ամերիկական Standard oil Company կոչւած ընկերութեան կազմակերպութեանը: Լիալոյս ենք որ մեր հաղորդած տեղեկութիւնները շատերի համար հետաքրքրական կըլինեն, որովհետև մենք համոզւած ենք, որ մեր կերտինապործատէրերի սուար մասը ալլ մասին համարեա թէ ոչինչ չգիտէ:

Թէ ինչ գներով են վաճառուում մեր և ամերիկացոց կերտինը Անգլիալում, Ամստերդամում, Անտուերպէնում, Համբուրգում և Հէնէլում, ալլ մասին մենք միշտ տեղեկութիւններ կարող ենք գտնել „ВѢСТНИКЪ ФАВАСОВЪ“ շաբաթաթերթում: Իսկ ինչ վերարերում է մնացեալ տեղերի վաճառքների գներին, ալլ մասին մենք կարող ենք խմանալ միմիայն մասնաւոր վաճառքներից:

Ալլալէս, մանուֆակտուրալի և արդիւնաբերութեան դեպարտամենտին մեր արտահանողների տւած տեղեկութիւններից երևում է, որ Նգլիպտոսի և Տաճկաստանի վաճառքներից franco Բաթում ստացած գները համարեա թէ ոչնչով չեն զանազանուում Լոնդոնի, Անտուերպէնի և Ամստերդամի վաճառքներից ստացածից: Երկպտոսում և Տաճկաստանում կերտինի գինը նոյնպէս ընկած է, ինչպէս եւրոպական վաճառանոցներում: Վերջին ժամանակներս ալն տեղերում կատարւած վաճառքներից ստացւած է իւրաքանչիւր փութի համար franco Բաթում 16, 1/2 կոպ., մինչդեռ միմիայն ֆրախտ Բալից մինչև Բաթում տրւում է 19 կոպէկ: Իսկ Հնդկաստանում և հեռու արեւելքում կատարւած վաճառքներից ստացւած է franco Բաթում 18, 1/2 կոպ., ուրեմն քիչ աւել վեր վիշած տեղերի վաճառքներից: Բալց չպատք է մուանալ, որ ալստեղ ևս մեր և ամերիկացիների մէջ սկս-

ւել է արդէն կատաղի մրցումն և շատ կարճ ժամանակամիջոցում հաւանական է որ աչնտեղի վաճառքներից ստացածը պակասի:

Գնեքի ալդ միանմանութիւնը շատ բնական է. նախ որ երկու կողմից էլ բաւականաչափ քանակութեան կերտսին է արտահանում, և երկրորդ՝ երկու կողմն էլ միջոց ունեն ուր և երբ կամենան արտահանել կերտսին, չնորհիւ ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութեան: Աչնպէս որ եթէ մի որ և է վաճառանոցի վաճառքը արդիւնաւէտ է, երկու կողմն էլ կարելոյն չափ աշխատում են օգտուել ալդ վաճառքներից: Բնականապէս սկսւում է մրցումն, որի անխուսափելի հետեանքն է զնեքի անկումն և հետեապէս ստացած արդիւնքի աչն աստիճանի պակասելը, որ հաւասարւում կամ միանմանւում է մնացեալ վաճառանոցներից ստացած արդիւնքին: Բացառութիւն ալդ ղէպքում կարող են կազմել աչն վաճառանոցները որտեղ կառավարութեան կողմից արհեստական կերպով արգելքներ կը դնեն: Սրինակի համար, յտալիան և Չինաստանը կամենում էին սահմանել նաւթալին իւզերի մոնոպոլիա (մենավաճառութիւն) և կամ որոշել աչն վաճառանոցները, չուր մրցող կողմերից մէկը նոր պահեստներ կառուցանելու հնարաւորութիւն չունի:

Անգլիայի և հիւսիս-արևմտեան վաճառանոցներում գները աչն աստիճանի ընկած են և վնասաբեր, որ եթէ աչտուհետև ևս շարունակեն դէպի աչն կողմերը կերտսին արտահանել, ալդ կը նշանակէ որ նոքա ստիպւած են ալդ անել պալմանագրի զօրութեամբ, և կամ թէ ունին արած աչնպիսի ծախսեր, որ հնարաւորութիւն չկալ գործերը վերջացնելու: Բայց և աչնպէս վերջերումս նկատւում է որ դէպի ալդ վաճառանոցները արտահանածի քանակութիւնը աւելի և աւելի պակասել է:

Ներկայումս Անգլիայի աչն բանկերը, որոնք կերտսինի ապահովութեամբ փող ունին տւած Բազալ Ստանդարտին, ալդ կերտսինի իւրաքանչիւր գալստնը առաջարկում են աւնողներին  $3\frac{3}{16}$  պէսով, որը մեր հաշուով անում է մօտաւորապէս 13 կոպէկ իւրաքանչիւր փութի համար franco Բաթում:

Երկաթուղաչն գործերի դեպարտամէնտում կազմած ցուցակից երևում է, որ անցեալ ապրիլից դէս Լոնդոնում, Ամստերդամում և Հէնէնում կատարւած վաճառքներից իւրաքանչիւր փութի համար ստացածը franco Բաթում հաւասարւում է ղէքօի, մինչդեռ Բազալ կերտսինագործատէրերին կերտսինի փութը դեռ բարեւաջող հանդամանքներում նըստում է  $7\frac{1}{8}$  կոպէկ:

Անցեալ ամառը կառավարութեան կարգադրութեամբ Սերոպա էր ուղարկւած, կերտսինի առևտուրը աչնտեղ ուսումնասիրելու նպատակով,

ինժեներ-տեխնոլոգ պր. Գուլիչամբարովը: Այդ պարոնը Եւրոպայից վերադառնալուց շատ ու մի զեկուցում արեց մանուֆակտուրայի և արդիւնաբերութեան զեկարտամէնտում իւր ստացած տպաւորութիւնների և նոցա ուսումնասիրութեան մասին: Մենք աւելորդ չենք համարում այդ զեկուցումից մի քանի տեղեկութիւններ քաղածօրէն առաջ բերել:

Գերմանիայի հիւսիսային Նաւահանգիստներում ուսաց կերոսինի առետուրը վերին աստիճանի ընկած է, չնազելով որ այդ տեղերը արժանի են աւելի լուրջ ուշադրութեան, ուպէս մեծ վաճառանոցներ: Գերմանիայում գործածուող կերոսինի քանակութիւնը մեծ է և միայն ամերիկականն է. ուսաց կերոսինադործատէրերը մեծ ջանք են դրել այնտեղի առետուրը կանոնաւորելու համար, սակայն այդ ջանքը ոչնչով չպսակեց, այլ ընդհակառակը կատարելապէս ընկճեց հօր ամերիկական Standard Oil Company ընկերութեան առաջ:

Ռուսաց կերոսինը Գերմանիա տանում է երկու ճանապարհով. ա) Աստրախան, Յարիցին, Լիբաւա, Շտետին և Լիւբէկ, բ) Բաթում, Անտւերպէն, Բրէմէն և Համբուրգ:

Գերմանիայի շիջեալ կենտրոններից զանազան կէտերով կերոսինը տեղափոխում են զէպի երկրի խորքերը: Այդպէս՝ Լիւբէկից մինչև Բերլին և աւելի հեռու, իսկ Համբուրգից Էլբա, Վեզէր և Հոենոս գետերի կէտերով անցնում են մինչև անգամ Մանհէլմից հեռու: Լիբաւայով տեղափոխում է զլիսաւորապէս Նորբէլ ընկերութիւնը, իսկ Բաթումով—Նորբէլ, Ռոտշիլդ, Բազալ Ստանդարտ, Կասպեան ընկերութիւնը և մի քանի ուրիշները: Մեր վաճառականները բոլորն էլ, առանց բացառութեան, արտասահմանեան վաճառքներից վնաս են կրում: Այդ հանգամանքը պր. Գուլիչամբարովը ևս բացատրում է նրանով, որ ամերիկացիք գործում են միմիայն Standard Oil Company ընկերութեան անունով, իսկ մերոնք բաժան-բաժան: Իրա շնորհիւ մեր բոլոր ձեռնարկութիւնները օրատական դրութեան մէջ են գտնուում: Գերմանիայում մեր առետրի այդ աստիճանի անկումը սուսաջացել է երկու պատճառներից. ա) ամերիկացիների ընդդէմ մեզ խելացի և եռանդուն գործունէութիւնից և բ) գերմանացիների թըշնամաբար վերաբերելուց զէպի մեր կերոսինը: Այդ վերջին հանգամանքը առաջացել է դարձեալ շնորհիւ ամերիկացիների, որոնք կարողացել են գերմանացիներին արդէն համոզել, թէ մեր կերոսինը վատ է ալրուում, ալսինքն լուր մուսլ է: Բացի դրանից Գերմանիայում մաքսալին տուրքը վերցնում են ինկատի առնելով կերոսինի տեսակարար կշիռը, բաց որովհետև մեր կերոսինի տեսակարար կշիռը աւելի ծանր է, ուստի ընդհանուր հաշուով մենք ամերիկացիներից 3% աւել մաքս ենք վճարում: Այդպէս Գերմանիայի առետրի բոլոր պալմանները խօսում են լօգոտ ամերիկացիների, հետեապէս մտածել մրցման մասին— կը նշանակէ ցնորքներով զբաղել:

Անոււերպէնը, որպէս նաւահանգիստ, շատ առաւելութիւններ ունի Բելղիալի, Հոլլանդիալի և Գերմանիալի մնացեալ նաւահանգստներից: Բելգիան, չնորհիւ ակցիլի բացակայութեան, նաւթարդիւնքներ բերելը շատ հեշտութիւններ ունի, ուստի մեր վաճառականները այստեղն են ընտրել որպէս կենտրոն՝ Հռենոսի շրջակայքում մեր կերոսինը վաճառելու համար: Հէնց այդ իսկ պատճառով Անոււերպէն բերած մեր կերոսինի քանակութիւնը հետզհետէ աւելանում է:

Այդ դէս 1890	Թաւկանին բերած է	185,000	բարէլ <sup>1)</sup> :
1891	»	263,800	»
1892	»	272,000	»
1893	»	287,000	»

Սակայն, չնայելով այդ բոլորին, մեր առևտուրը Անոււերպենում աւելի ընկած է քան Գերմանիալի հիւսիսային նաւահանգիստներում:

Այստեղ մեր առևտուրը սկսել է Նորբել ընկերութիւնը, իսկ վերջերումս աւելացել է նաև Կասպեան-Ան-ծովեան ընկ. (Բոտշիլդ) և Բաղալ Ստանդարտը: Նորբել ընկերութիւնը, աջտեղացի հարուստ վաճառական Ռիտի հետ միանալով, կառուցել է աջտեղ կերոսինի համար մեծ պահեստներ, որտեղից գետալին շողենաւերով կերոսինը տեղափոխում են դէպի զանազան կողմեր, զլխաւորապէս դէպի Հռենոսի շրջակայքում գտնուող քաղաքները: Նախ կերոսինը Շելդա գետով է ուղարկւում, ապա Հռենոսով և հասնում մինչև Մանհէլմ քաղաքը, որտեղ թէ մեր և թէ ամերիկացի վաճառականները մեծ պահեստներ ունին կառուցած: Մի քիչ ժամանակ սրանից առաջ Մանհէլմը Հռենոսի վրայ ամենահեռւոր քաղաքն էր հաշւում, ուր կերոսինը նաւերով կարելի էր հասցնել: Իսկ այժմ տանւում է մինչև Ստրասբուրգ և, չնորհիւ մի քանի ջրանցքների, հասցնւում է նոյն իսկ մինչև Բաղէլ (Շէէցարիալում), ուր արդէն հանդիպում է Հէնէնով և Սէն-Գոթթարդի տոնէլով բերած կերոսինի հետ: Ուրեմն Բաղէլը այն վերջին կենտրոնն է, ուր Հռենոս գետով կարելի է տանել կերոսինը: Այդ ահագին տարածութեան վրայ Անոււերպէնից մինչև Բաղէլ, Ռիտը և Նորբել ընկերութիւն մի կողմից և Բոտշիլդը միւս կողմից կառուցել են բազմաթիւ պահեստներ:

Մեծ Բրիտանիալում (Անգլիա) կերոսինի վաճառքը կատարւում է գալունի հաշւով, որը հաւասար է 0,229 փուլթի. վաճառուող կերոսինի տեսակարար կշիռը անպատճառ պիտի լինի 0,828 Պր. Գուլիշամբարովի առաջ բերած տեղեկութիւններից երևում է, որ ամերիկացոց կերոսինի պահանջը հետզհետէ աւելանում է, իսկ մերինը պակասում:

<sup>1)</sup> Բարէլ հաւասար է 9,8 փուլթի:

Ազդպէս 1891 թ. մենք տարել ենք	46,835,000	գալոն:
1892 " " "	38,211,000	"
Իսկ ամերիկացիք 1891 թ. "	82,035,000	"
" 1892 թ. "	89,994,000	"

Ամբողջ 1892 թ. ընթացքում Մեծ Բրիտանիա կերոսին բերած է 22 նաւահանգիստների միջով, որոնցից մեր վաճառականները միմիազն եօթից կարողացել են օգտուել Standard oil Company գլխաւոր նպատակներից մէկը Անգլիայում, ինչպէս և ուրիշ երկիրներում, հղել է կարելոն չափ հեռացնել միջնորդների ազդեցութիւնը վաճառքների վրայ, որոնք իրանց միջնորդութեան համար ստանում են 1% կերոսինի գնից: Իւր նպատակին հասնելու համար Ստանդարտը միաժամանակ մեծաքանակ առևտրի հետ սկսել է նաև փոքրաքանակ առևտուր՝ ընդունելով պատւէրների ամենամեծ քանակութիւնից սկսած մինչև ամենաչնչինը: Եւրոպայի բոլոր մեծ քաղաքներում Ստանդարտը ունի վագոնէտներ (փոքրիկ վագոններ), որոնց մէջ կերոսինը հասցնում է քաղաքի բոլոր թաղերի բնակիչներին: Արդ մի ազդպիսի չարմարութիւն տալով իւր առնոյններին, պարզ է, որ միշտ նորա կլիենտների թիւը օրըստօրէ կըբազմանայ: Շնորհիւ այդ ձեռնարկութեան «Ստանդարտի» գործակալները միշտ կարողացել են իրանց կերոսինը աւելի ձեռնտու գներով վաճառել և ստանալ մեծամեծ օգուտներ, մինչդեռ մեր վաճառականները ոչ թէ կարողացել են ապրանքի արժուութիւնը հասնել, այլ ընդհակառակը նոքա ստիպած են եղել իրանց կերոսինը մնասով ծախել:

Անգլիայում մեր կերոսինը վաճառւում է գլխաւորապէս Նորբլի, Բոտշիլդի, Բազալ Ստանդարտի և Շիբալեի ձեռքով: Համերաշխութիւն ասած բանը սրանց մէջ չկալ, ամեն մէկը գործում է իրա համար՝ աշխատելով ուրիշի վարկը ձգել: Եթէ սրանք ևս կարողանալին ամերիկացիների նման համերաշխութեամբ գործել, դուցէ կարողանալին մի կերպ շարունակել իրանց գործը:

Մենք մեր նամակներում շատ անգամ լիշած ենք ամերիկական Standard oil Company անունը, սակայն երբէք կանգ չենք առած այդ մեծահոշակ ընկերութեան մասին մի քանի խօսք ասելու: Այս անգամ մենք մի ք պարտաւորւած ենք համարում մի քիչ կանգ առնել նաև այդ ընկերութեան մասին: Այն տեղեկութիւնները, որ այժմ կը հաղորդենք ընթերցողին, մենք քաղում ենք գլխաւորապէս գրքովիցս՝ „Die Monopolisirung des Petroleumhandels und der Petroleumindustrie von E. F. Seemann. Berlin“ 1893.

Standard Oil Company իւր ծագմամբ և գոյութեամբ պարտական է

գլխաւորապէս ամերիկացի մի ոմն Ջոն Ռոկֆելլէրին, որը մինչև 1865 թ. Ամերիկայի Օհայօ նահանգի փոքրիկ Կլեւլենդ քաղաքում հասարակ հաշապահի պաշտօն էր վարում և ունէր ալիւրի փոքրիկ առևտուր: Այստեղ նա ծանօթացաւ կերոսինազործարաններից մէկում ծառայող մի ոմն Ջոն Անդրէասի հետ, որը հնարել էր աւելի կատարելագործւած միջոց նաւթ գտելու համար, և սակայն ոչ ոք կերոսինազործատէրերից հաւատ չէր ընծայում նրան: Բոկֆելլերը իւր փոքրիկ կարողութիւնը դրեց Ջոն Անդրէասի տրամադրութեան տակ, որով հիմնեցին կերոսինի մի փոքրիկ գործարան Կլեւլենդում: Շնորհիւ հիմնադիրների եռանդուն և խելացի գործունէութեան՝ գործարանը տարէց տարի լաջնացաւ, ընդարձակեց իւր գործունէութեան սահմանները և հռչակեց Standard Oil Company անունով:

Սակայն Բոկֆելլէրը չէր բաւականանում իւր գործարանի ընտանի գարգացումով: Նա ամեն մի չարմար դէպք, որից իւր գործը աչապէս թէ աչնպէս կարող էր շահել, աչքից չէր թողնում: Նաւթային շրջանին կցւած մի քանի մասնաւոր բնաւորութիւն կրող երկաթուղիներում տարիֆները առանց վերստուգութեան էին մնում: Նա օգտուեց այդ հանգամանքից, պայմանաւորելով նոցանից մի քանիսի հետ (18 յունւարի 1872 թ.), որ նրա ապրանքի արտահանութեան համար տարիֆից զիջում անեն: Այդ պայմանագրով շատերը աչք երկաթուղիների վարչութիւնից պարտաւորեցին իւրաքանչիւր տակաւ կերոսինի տարիֆից Բոկֆելլէրին պակասացնել  $1\frac{1}{2}$  դոլլար: Հէնց այդ ժամանակին նա արդէն վերջացրել էր իւր երկրորդ գործարանի շինութիւնը Պետերբուրգում: Իւր այդ տեսակի վճռողական և եռանդուն գործունէութեամբ նա միւս կերոսինազործատէրերին աչն աստիճանի քաչքայման հասցրեց, որ նոքա՝ անկարող լինելով աչ ևս դիմադրել նրան, ստիպւած էին կամ դադարեցնել իրանց գործերը, կամ Բոկֆելլէրի տրամադրութեան լանձնել: Իսկ Բոկֆելլէրը, օգտուելով հանգամանքից, չնչին գումարով առնում էր ահագին գործարանները: Այդպիսով աչն 58 գործարաններից, որոնք 1867 թ. հաշոււմ էին իբր զանազան դրամատէրերի սեպհականութիւն, իննը տարւաչ ընթացքում արդէն 29-ը անցել էին Ստանդարտի ձեռքը, իսկ մնացեալ 28 գործարանները հազիւ հազ կարողանում էին պահպանել իրանց թշւառ գոյութիւնը:

Բոկֆելլէրը դորանով ևս չբաւականացաւ. նա 1874 թ. սկսեց ձեռք բերել ահագին քանակութեամբ նաւթ փոխադրող մի քանի ընկերութիւնների ակցիաներ և գլխաւորապէս աչն ընկերութիւնների, որոնք նաւթը հանքերից փոխադրում էին դէպի երկաթուղային կապարանները: Նրան շատ կարճ ժամանակամիջոցում չաջողեց ձեռք բերել Ամերիկայի ամենաշատ նաւթ փոխադրող ընկերութեան ակցիաների մեծ մասը, աչն է United pipe line և կարողացաւ երկաթուղային ընկերութիւններում զի-

ջում սահմանել տալ նաև այդ ընկերութեան համար: Այդպիսով նա նաև ժողովարար միւս ընկերութիւններին աչն աստիճանի նեղ դրութեան մէջ գրեց, որ նոքա ստիպեցան ծախել իրանց գործերը United pipe line ընկերութեան, կամ աւելի ճիշդն ասած՝ նոյն Standard oil Company-ին:

Բոկֆելլէրի չափողութիւնը հանգիստ չէր թողնում ամերիկացի միւս մեծ դրամատէրերին: Սակայն անարկու Standard oil Company-ի առաջ ոչինչ չէր դիմանում, ամեն նոր ձեռնարկութիւն խախտում էր հէնց իւր սկզբում, չնայած իւր դրամագլխի մեծութեան: Այդպէս խախտեց Empire Transportation Company, որը կազմեց 1877 թականի սկզբներին և տեղեց միմիայն տասը ամիս, աչն 1, մինչև 17 ն հոկտեմբերի նոյն թականին: Այդ նոյն պատճառով աչն մեծ ընկերութիւնը Tide water pipe line, որը նախնայց ունէր գրած Պիտոբուրդից մինչև Ֆիլադելֆիայի երկաթուղու գիծը, մօտ 280 վերստ տարածութիւն, մի տարի և կէս միմիայն կարողացաւ դիմանալ Ստանդարտի առաջ, աչն էլ մեծամեծ վնասներ կրելով, բայց և աչնպէս ստիպեց ծախել իւր բոլոր գործերը հէնց նոյն Բոկֆելլէրին:

Չեռք բերելով կերոսինի համարեա թէ բոլոր գործարանները և նախնայցերը. պայմանաւորելով զանազան երկաթուղիների հետ, Բոկֆելլէրը սակայն հարկ չէր գտնում անձամբ նախարարինաբերութեամբ պարապել, որը առանց այդ էլ իրանից էր կախած:

Այդպէս դառնալով Ամերիկայի ամենամեծ և ուժեղ կերոսինագործատէրը, Բոկֆելլէրը մտադրեց աւելի ընդարձակել իւր գործունէութեան ծրագիրը, նախ կամենալով իւր գործի մէջ ամիտիել մեծ գրամագլուխ և երկրորդ՝ իւր կողմը քաշելով դուրսը մնացած կերոսինագործատէրին: Այդ նպատակով նա 1882 թ. 2 չունւարին հիմնեց Standard oil Trust ընկերութիւնը, որի մէջ մտաւ նաև հուշակաւոր Standard oil Company:

Որպէս զի մեզ համար պարզելի նախնային Trust-ի (տրուստ) կազմակերպութեան էութիւնը, մենք հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել նաև Ամերիկայի արդիւնաբերական դաշնակցութիւնների կազմակերպութեան մասին: Մենք այդ կանենք օգտւելով պր. Բ. Բրանդի չօղածից „Союзы предпринимателей въ Соединенныхъ штатахъ С. Америки“ (Русская Мысль, Июнь 1893 г.), որը, ինչպէս ասում է ինքը հեղինակը, կազմած է ամենաստուգ տեղեկութիւնների հիման վրայ:

Ամերիկայի Միացեալ Նահանգներում նախաձեռնող դաշնակցութիւնները, շնորհիւ այդ երկրում տիրող իրաւական առանձին պայմանների, մի առանձին ձև են ստացել: Trustees ասելով Անգլիայի հին օրէնքների մէջ հասկացում է մի անհատ, որին չանձնում է ի պահեստ (in trust) կամ կառավարելու համար մի կալք՝ նշանակւած չօղուտ երրորդ անձնաւորութեան: Այդ ինստիտուտը սկզբում իւր գլխաւոր գործադրութիւնը գրա-

Նուժ էր Անգլիայի ընտանեկան և ժառանգական օրէնքներում, իսկ վետոյ նորա գործադրութեան ծաւալն ընդարձակեց այն աստիճանի, որ նոյն իսկ սկսեցին գործադրել և դաշնակցութիւնների վերաբերեալ օրէնքների մէջ, որ և զլիաւորապէս նպաստեց հզօր և բազմատեսակ սինդիկատներ կազմելուն:

Սկզբում մի քանի արդիւնաբերական ընկերութիւնների և մասնաւոր ձեռնարկութիւնների ներկայացուցիչները փորձեցին միութիւն ստեղծել իրանց գործավարութեան մէջ, ընտրելով իրանց միջկից կամրատ, որին և չանձնուժ էր գործի ամբողջ ղեկը: Կոմիտէաք ապրտաւոր էր հըսկել դաշնակցութեան գործավարների գործունէութեանը, որպէս զի նոքա բարեխիղճ կերպով կատարեն իրանց վրաչ առած պարտականութիւնները, զիտել գործի և արդիւնաբերութեան ընդհանուր ընթացքը, աշխատել կազմակերպել ապրանքի վաճառումը և առ հասարակ սրոնել միջոցներ, որպէս զի գործը աւելի բարեշարժ հանգամանքների մէջ դնել: Սակայն փորձը շատ կարճ ժամանակամիջոցում պարզեց, որ դաշնակցութիւնների գործունէութեանը մի աղբյուրի եղանակ տալը շատ սահմանափակ է և ունի բազմաթիւ անպարմարութիւններ: Նախ՝ դաշնակցութեան անդամներին ոչինչ չէր արդելում խանգարել կամ չկատարել այս ինչ կամ այն ինչ իրանց վրաչ առած պարտականութիւնը, և ճրկրորդ՝ երբ ցանկանալին՝ կարող էին թողնել դաշնակցութիւնը և հեռանալ առանց որ և է պատասխանատուութեան: Այդ տեսակի դաշնակցութիւնները միշտ կարճատե են եղել, հազիւ մի տարի կարողացել են քաջքել իրանց կեանքը: Իրերի այս դրութեան ժամանակ, շատ բնական է, որ պէտք էր ընտրել այնպիսի միջոցներ, որոնցով կարելի լինէր հաւասարաչափ պաշտպանել բոլոր անդամների շահերը, որպէս զի դաշնակցութեանը վտանգ կերպով կարողանալին մասնակցել նաև նոյն տեսակի արդիւնաբերող մեծ ընկերութիւններ, որպէս առանձին անդամ և ընդունէին մի ընդհանուր օրէնք: Ահա թէ ժամանակի ընթացքում ինչ տեսակ պայմանների անհրաժեշտ կարևորութիւն զգացուց: 1) Շահի ընդհանրութիւնը և նրա հաւասար բաժանումը, որոնք օրակի պէս կը կապեն բոլոր անդամներին, 2) բոլոր կորպորացիաները, առանց բացառութեան, պարտաւոր են ընդունել մի ընդհանուր մարմնի հեղինակութիւնը, որի մէջ կենտրոնացած պէտք է լինի թէ իւրաքանչիւր կորպորացիայի գործավարութեան և թէ ընդհանրապէս ամբողջ դաշնակցութեան ղեկը և 3) կորպորացիաներից ոչ մէկը միջոց չպէտք է ունենալ թէ իրա վրաչ առած պարտականութիւնները զանցառութեան տալու և թէ դաշնակցութիւնից հեռանալու: Այդ նպատակներին հասնելու ամենադարմար միջոցն էր trustees-ին աղբյուրի մի ձև տալը: Ահա թէ ինչպէս trustees քաղաքական իրաւունք ստացան Ամերիկայի տնտեսական կեանքում:

Trustees-ի գործը դարձեալ կենտրոնացած է կոմիտէտի ձեռքում (Boord of trustees), որը առհասարակ բաղկացած է լինում 9 կամ 11 անդամներից: Trustees-ի առանձին չատկանիչը այն է, որ այստեղ կարող են մասնակցել զանազան ակցիոններական ընկերութիւնների ակցիատէրեր, որոնք իրանց պատկանեալ ակցիաները չանձնում են ի պահեստ (in trust) ընտրած կոմիտէտին: Այդ վերջինը, ունենալով իւր ձեռքի տակ զանազան ընկերութիւնների ակցիաների ահագին քանակութիւն, միշտ կարողանում է այս կամ այն ընկերութեան ժողովներում վճռողական դիրք բռնել, և հետեապէս զանազան ընկերութիւնների գործավարութեան ղեկը իւր ձեռքն առնել: Գործերի ընթացքին մի ազդպիտի եղանակ տալու բնական հոտեանքն է միապետական գործավարութիւն: Միւս կողմից, trustees-ին մասնակցողների մէջ ամուր Լապ ստեղծելու և շահերի բաժանման մէջ հաւասարութիւն մտցնելու համար, չանձնարար կոմիտէտը ստանալով զանազան ընկերութիւնների ակցիաներ, նրանց փոխանակ տալիս է trustees կողմից վկայագիր (trust certificates): Ակցիաների երեսով զանազան ընկերութիւններից ստացած օգուտը կազմում է մի Փոնդ, որը և բաժանում է մասնակցողների մէջ հաւասարաչափ կերպով՝ ի նկատի առնելով նրանց տւած վկայագրերի գումարը: Այդպիսով իւրաքանչիւր վկայագրի տէրը ընդհանուր օգուտից ստանում է միևնույն տոկոսը, չնայելով որ նրան պատկանեալ ակցիաները կարող են և ոչինչ օգուտ տւած չլինել, կամ նոյն խել կարող են վնասւած լինել:

Գժար չէ տեսնել իրերի այդ դրութեան ժամանակ, թէ վկայագրերի տէրերը, առանց բացառութեան, որ աստիճանի հետաքրքրւած կը լինեն, որ աւելի բարեւաջող հանգամանքների մէջ դնեն այն ձեռնարկութիւնները, որոնք աւելի արդիւնաւէտ են, և ընդհակառակը ինչպիսի ջանք են դնում դադարեցնել այն ձեռնարկութիւնների գործունէութիւնը, որոնք արդիւնաւէտ չեն, կամ որոնց տւած արդիւնքը այնքան չնչին է, որ կարելի է անչահաւէտ ձեռնարկութիւն անւանել, առանց նայելու թէ պատկանում են արդեօք այդ ձեռնարկութիւնները իրանց ընկերութեան թէ ուրիշին:

Ահաւասիկ այլ են ամերիկական դաշնակցութիւնների կանոնաւոր կազմակերութեան գլխաւոր դերերը: Այդ տեսակի դաշնակցութիւնների ամենաուժեղ և արտապայտիչ ներկայացուցիչն է Standard oil Trust, որը տրուտտի կազմակերպութիւն ընդունող ակցիոններական ընկերութիւններից առաջինն է:

Standard oil Trust իւր խորհրդի համար Ամերիկայի նշանաւոր հարուստներից ընտրեց 9 հոգի ղեկավարներ, ի թիւս որոնց են Բոկֆելլէր, Չարլս-Պրատ, Բոջէրս, Ֆլեգլէր, Տալֆորդ, Բրիւատէր, Օլիւէր-Պէն և ուրիշ զբանց նմանները: Այդ դաշնակցութեան մասնակցում էին աւելի քան 50

հողի, որոնցից մի մասը մեծ կերտինագործ էին, իսկ միւսը զանազան տեսակի ակցիոններակաճ ընկերութիւնների նշանաւոր գումարի ակցիատէրեր, առհասարակ այնպիսի մարդիկ, որոնք իրանց ընկերութիւններում զիրք և վճռողական ձայն ունէին: Այդ բոլոր մասնակցողները իրանց պատկանեալ ակցիաները և կապը չանձնեցին «Տրուստին», փոխանակը ստանալով trust (сертификаты, վկայագիր) 100 դոլլար արժողութեամբ իւրաքանչիւրը: «Տրուստի» կապիտալը սկզբում հաշոււմ էին 70 միլիոն դոլլար, քիչ ժամանակում նա հասաւ մինչև 90 միլիոնի, իսկ այժմ հաշոււմ են 148 միլիոն դոլլար: 1883 թ. մինչև 1889 թ. այդ ընկերութեան ղեկիղէնդը միջին թւով հաշոււմ են  $11\frac{1}{2}\%$ -ի, բաց առեալ այն  $1-1\frac{1}{2}\%$ -ի, որը դուրս է եկած ընկերութեան ամբողջ օգտից պահեստի զբաղակալութեան կազմելու համար:

Ամերիկայի պէս երկրում, այդ ազատութեան աշխարհում, շատ բնական է, որ այդ ընկերութեան միապետական ձգտումները ոչ ոքի ղիւր չգալին: Եւ անա աչօր ամերիկացիք իրանք բացարձակապէս բողոքում են բոլոր զաշնակցութիւնների դէմ, մանաւանդ նաւթալին զաշնակցութիւնների դէմ: Այդ անբաւականութիւնները այն աստիճանի սուր կերպարանք են ստացել, որ Միացեալ Նահանգների նոր նախագահ Ալլիվէյնդը 4-ին մարտի 1893 թ. իւր արտասանած ճառի մէջ հարկաւոր համարեց ամերիկացիների ուշադրութիւնը դարձնել այդ օրըստօրէ զարգացող միապետական ձգտումների տէր զաշնակցութիւնների վրայ և իւր կողմից խոստանալ ամենաուժեղ և եռանդուն դիմադրութիւն դործ դնել: Անցեալ սեպտեմբերին, եթէ ընթերցողը փչում է, լրագիրներում մի լուր տարածւեց՝ իբր թէ Standard oil Trust-ը սնանկ է հրատարակել իրան: Սակայն այդ լուրը ոչնչով չհաստատուեց: Ֆակտը այն է, որ կառավարութիւնը բաց պատերազմ է չաւարարել զաշնակցութիւնների դէմ: Այժմ դժուար է որոշել թէ դէպի որ կողմը կը մնայ չաղթութիւնը, սակայն չենք կարծում, որ Բոկֆելլէրը և «Տրուստի» միւս անդամները թող ստան մի այդպիսի կազմակերպած դործի քանդակը:

Այդպէս դառնալով Ամերիկայի նաւթալին առևտուրի կատարեալ տէր, Standard oil Trust իւր ուշադրութիւնը բնականաբար դարձրեց Եւրոպայի վրայ, կերտինի այդ գլխաւոր գործածողի վրայ: Եւ այդ նա արաւ իւր ժամանակին, երբ արդէն ռուսաց կերտինի մրցումն աւելի և աւելի զգալի էր դառնում: Չկամենալով մենակ ընդարձակել իւր գործը, Standard ը սկսեց կանոնաւորել կերտինի առևտուրը Եւրոպայում, կամաց-կամաց գրաւելով այնտեղի զբաղակալներին և կերտինի մեծ առևտուր ունեցողներին: Եւ այդ նորան չաջողեց, այնպէս որ նա շատ կարճ ժամանակամիջոցում կարողացաւ կազմել մի շարք ակցիոններակաճ ընկերութիւններ չառկապէս ամերիկական կերտին վաճառելու համար:

Այդ բոլոր նորակազմ ընկերութիւններին նա մասնակցում է, սակայն այն չափով, որ միշտ իւր կողմն է ձաջների մեծամասնութիւնը: Այդ ընկերութիւններից ամենաառաջինը և աւելի ուշադրութեան արժանին է Deutsch-Amerikanische Petroleum Gesellschaft (գերմանո-ամերիկական նաւթաւին ընկերութիւն): Այդ ընկերութիւնը պաշտօնապէս կազմւած է 25 ին փետրւարի 1890 թ. 9 միլիոն մարկ հիմնադիր զրամագլխով, սակայն որը 1 յունւարի 1893 թ. արդէն հասել էր 20 միլիոն մարկի: Բացի դրանից նա կազմել է հետեւալ ընկերութիւնները. Բելգիայում և Շուարնգիայում „American Petroleum Company“, Շւէյցիւրիայում Նորեգիայում և Պանիալում „Danski Petroleum Actieselska“, Իտալիայում— „Societa Italo-Americana del Petrolio, Անգլիայում— „Anglo oil Company“: Միսիսիպի Ֆրանսիան մինչ վերջերս ազատ էր մնացել «Standard»-ի ազդեցութիւնից, այն էլ շրտհիւ այնտեղի երկաթուղիներում ախրող տարիֆին, որով հում նաւթ Ֆրանսիա բերելը և տեղական գործարաններում զտելով կերտին պատրաստելը աւելի ձեռնտու է, քան արդէն պատրաստի կերտին բերելը: Սակայն, ինչպէս խմանում ենք վերջին տեղեկութիւններից, Ստանդարդը Ռուան քաղաքում արդէն ձեռնարկել է կառուցանել մի այնպիսի կերտինագործարան, որի արդիւնաբերութիւնը կարող լինի բաւականութիւն տալ ամբողջ Ֆրանսիայի պահանջին: Ի հարկէ Ստանդարդը ինքը ալք գործարանի համար հարկաւոր քանակութեամբ նաւթ կը բերի, որպէսզի գործարանը անզաղար բանի:

Ստանդարդը ունի իւր բոլոր չարմարութիւնները, աչնպէս որ որ և է բանում նեղութիւն նա չի զգում: Ունի բազմաթիւ շոգեմաներ, թէ ովկիանոտում բանեցնելու, թէ ծովերում և թէ գետերում, ունի բազմաթիւ սեպհական վագոններ Նւրոպայի և Ամերիկայի երկաթուղային ղծերի վրայ, ունի բազմաթիւ սպահասներ Նւրոպայի կերտինի աւետարով բոլոր քիչ թէ շատ չափոնի քաղաքներում, խոլ ալժմ, ինչպէս մենք խմացանք ամենաստույգ աղբիւրներից, Ստանդարդը իւր ուշադրութիւնը արդէն դարձրել է հետու Արեւելքի վրայ, որտեղ 1893 թ. սկսած զանազան պահաստներ և ուրիշ անհրաժեշտ շինութիւններ է կառուցանում:

Ահաւաստիկ, չարգելի ընթերցող, թէ ինչպիսի կազմակերպւած ուժի դէմ է վիճակւած կուել մեր նորարողութիւնը դաշնակցութեանը: (Նապիլ ծանօթութեանը լօղածիս վերջում):

Մենք այն կարծիքի ենք, որ ալտուհետև չաղթութիւնը դարձեալ նոցա կողմը կը մնալ: Նոքա անհամեմատ ուժեղ են մեզանից: Մեր կերտինագործատւերը աւելի խելացի վարւած կը լինէին, եթէ հէնց աչժմեսից պատողամաւորութիւն ու զարկէին Standard ին համաձայնութիւն կազմելու համաշխարհային վաճառանոցները բաժանելու մասին:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ:

Մեր նախորդ նամակում արդէն հաղորդել էինք որ Բաքւի կերտսինագործատէրերի երկու խմբերի փոխադարձ պայմանագիրը արդէն քննուած է արդիւնաբերութեան և մանուֆակտուրայի ղէպարտամէնտում կազմուած լանձնատոճովում: Այժմ, ինչպէս լրագիրները հաղորդեցին, այդ պայմանագիրը վերջնականապէս մշակուած է: Մենք աւելորդ չենք համարում այդ պայմանագրի զլխաւոր կէտերի հետ ծանօթացնել նաև մեր ընթերցողներին:

Խմբերից իւրաքանչիւրը իւր ներքին գործերի վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները անում է բոլորովին անկախ միւս խմբից: Երկրորդ խմբի կարգադրչները առանձին հաւատարմութիւնով լանձնարարում են պրն. Մանթաշեանին կատարել իրանց գործակալի պարտականութիւնները, կերտսինի արտասանութեան և նրա վաճառման վերաբերեալ բոլոր գործերը: Երկու խմբերի գործակալները առանձին պայմանագրով սահմանում են իրանց փոխադարձ չարաբերութիւնները և որոշում վաճառման տեղերի սահմանները: Կործակալների մէջ ծագած տարաձայնութիւնները վճռուում են երկու խմբերի կարգադրիչների ձայների մեծամասնութեամբ: Վաճառքները արտասանմանում կատարուում են բոլոր կերտսինագործատէրերի հաշւին, այսինքն կերտսինագործատէրերից իւրաքանչիւրը արտասանմանեան վաճառքներում մաս ունի՝ համաձայն իւր մասնակցութեան չափի: Այն պայմանագրերը, որոնցով ներկայ դաշնակցութեան մասնակցողները մինչև օրս կապւելով վերցրած ունեն զանազան շոգեհուներ կերտսին արտահանելու համար, ունեն արտասանմանեան վաճառանոցներում կերտսինի պահեստներ, կամ վաճառած ունեն կերտսին, քաջ դեռ չեն լանձնած—այդ բոլորը պէտք է կատարեն ընդհանուրի հաշւին, սակայն առանց պատասխանատուութեան պայմանագրողների կողմից՝ նախընթաց պարտազանցութեան համար: Խմբերը փոխադարձաբար պատասխանատու են իրանց անդամների ու գործակալների կատարած զեղծումներին համար: Այն խումբը որի գործակալը կերտսին վաճառելիս կը խախտի պայմանագրի որ և է կէտը, պարտական է վճարել միւսին, իւրաքանչիւր խախտման համար 5000 ռ. տուգանք: Պայմանագրի ժամանակը որոշուած է մինչև 1899 թ. ապրիլի 1-ը, սակայն եթէ Նորէլ ընկերութիւնը կամ Բոտչիլըք այդ ժամանակամիջոցին հրաժարեն առաջին խմբին մասնակցելուց, այդ ղէպքում երկրորդ խումբը իրաւունք ունի ներկայ պայմանագիրը քանդուած համարել առանց դատաստանի և պատասխանատուութեան: 1897 թ-ից սկսած իւրաքանչիւր խումբը իրաւունք ունի լուսարին չափունել իսկ ապրիլին իրան ազատ համարել այդ պայմանագրի պայմանները կատարելուց, սակայն պատասխանատու լինելով այն պայմանագրերի կատարման համար, որոնք կազմած կը լինին մինչև խմբի չափարարութիւնը:

Այդ հիմունքների վրայ՝ դաշնակցութիւնը ներկայ մարտ ամսից սկսում է իւր կերտսինի վաճառումը: Ի ղէպ է ասել, որ սարիֆը 5 կոպ. պակասցրած է վեց ամիս ժամանակով:

Ծանօթութիւն Հեղինակի:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գլադստոնի հրաժարականը:— Խալիսա Ապստամբութիւն Սիցիլացում: Սիցիլիայի սոցիալական և տնտեսական վիճակը: Արիստի մինիստրութիւնը, ֆինանսական և վարչական ռեֆորմների ծրագիրը: Լիազորութիւնների խնդիրը:

### I

## Գ Լ Ա Դ Ս Տ Ո Ն

Մարտի 3-ը (նոր տումար) 1894 մի նշանաւոր թւական է համարելու Անգլիայի ներքին քաղաքական կեանքի պատմութեան մէջ: Այդ օրը Անգլիայի grat older man (մեծ ծերունին) Վիլիամ Էւարա Գլադստոն ներկայացրեց Վիկտորիա թագուհուն իւր հրաժարականը առաջին մինիստրի պաշտօնից, որ և ընդունեց: Գլադստոնը այդ ակտը կատարեց ոչ որպէս յաղթած իւր հակառակորդների ոյժից, այլ ինքնաբերաբար, իբր մի ծերունի, որի 85 տարեկան հասակը իրան այլ ևս չէ ներում տանել Անգլիայի առաջին մինիստրի պաշտօնի ծանրութիւնը: Նա հեռացաւ, երբ իշխանութիւնը իւր կուսակցութեան լիբերալների ձեռքումն է, և հեռացաւ առաջին մինիստրի պաշտօնի համար թագուհուն առաջարկելով մէկին, որին նա իւր քաղաքական ժառանգն էր ընտրել— լորդ Ռոզբերիին, արտաքին գործերի մինիստրին Գլադստոնի վերջին մինիստրութեան մէջ:

Մեծ ծերունին այդ պաշտօնական ակտով վերջ է դնում իւր քաղաքական ասպարէզին և հեռանում մասնաւոր մարդու կեանքի անկիւնը մտնելու համար: Ճիշդ է, նա դեռ մնում է համայնքների (պարլամէնտի պատգամաւորական) ժողովի անդամ. ճիշդ է նա խոստացել է իւր աջակցութիւնը Ռոզբերիին՝ ծանր րոպէնե-

րում, բայց Վլադստոնի քաղաքական կեանքի համար այնուամենայնիւ գիծը զորանով քաշուած պիտի համարել:

Չնայած որ մեծ հասակը և վերջերումն աւելացած աչքի տկարութիւնը ինքն ըստ ինքեան փոքրիկ պատճառ չեն կարող համարել Վլադստոնի գործերով ծանրաբեռնուած մի քաղաքական գործիչի հեռանալուն, բայց հասակի վրայ անկասկած է որ ներկայ դէպքում աւելացել են այլ ծանրակշիռ հանգամանքներ Վլադստոնին զրդելու համար այդ քայլն անելու: Պէտք է ասած, որ իւր հրաժարականի օրերը Վլադստոնը առիթ է ունեցել պարլամէնտում ճառախօսելու, և դէմքի զւարթութիւնը, ձայնի զիւրութիւնը այնպէս են եղել, որ ծերունու աւողջական գրութիւնը վկայուած է որպէս շատ բաւարար, ոչ պակաս քան վերջին տարիներս առհասարակ: Նա կարող էր յետ քաշել իւր պաշտօնից ծերութեան պատճառով, բայց միայն եթէ զորա վրայ դաշին ու աւելանային այլ ծանրակշիռ հանգամանքներ: Եւ այդ հանգամանքները իրօք կան: Եւ այդ նոր շառժառիթները այն բնաւորութիւնն ունեն, որ Վլադստոնի հրաժարականը զարձնում են մի նշանաւոր պատմական ահո՝ կապուած անգլիական լիբերալիզմի ապագայի հետ:

Վլադստոնը, ինչպէս ինքն էր ասել քսան ամիս առաջ և այդ ժամանակից դէս քանիցս կրկնել է, կառավարութեան ղեկը իւր ձեռքն էր վերցրել՝ իւր քաղաքական գործունէութիւնը պսակելու համար իրլանդական ինքնավարութեան (հոմ ուու) գործը զլուս բերելով:

Հետեւապէս նա ներկայացրեց հոմ ուուի օրինագիծը. համայնքների ժողովը, ինչպէս յայտնի է, ձայների բազմութեամբ ընդունեց այն (տես «Մուրճ» 1893 թ. միացեալ № 7—8 էջ 1285): Բայց յայտնի է նաև որ լորդերի ժողովը, որի համաձայնութիւնը պահանջուում է ամեն օրէնքի համար, մերժեց իրլանդական ինքնավարութեան օրինագիծը ահագին մեծամասնութեամբ (տես նոյնտեղ, էջ 1286): Օրէնքով այն, ինչ մերժուում է լորդերի պալատում՝ կարելի է նորից ներկայացնել միայն մի տարուց յետոյ, նախ համայնքների ժողովում, ապա լորդերի ժողովում, ինչպէս ամեն մի նոր օրինագիծ: Հարկաւ մի տարի սպասելը մեծ բան չէ մի այդպիսի մեծ գործի համար. բայց հանգամանքի ծանրութիւնը նրա-

նուսն է որ լորդերի ժողովը զրեթէ գլխովին պահպանողական է և հետևում է լորդ Սոլսբերիին, որի բռնած զիրքը դէպի իրլանդական բիլլը յայտնի է: Հանդամանքի ծանրութիւնը նրանումն է, ուրեմն, որ լորդերի ժողովի ներկայ կազմը չի թոյլ տալիս յուսալու թէ նա գալ տարի և մօտ ապագայում կը փոխի իւր զիրքը դէպի իրլանդական բիլլը:

Բայց միւս կողմից Գլադստոնը այն կերպ է զրել իրլանդական ինքնավարութեան խնդիրը և այնքան հաստատ քայլերով է տարել հասցրել նորան մինչ այժմ, որ վերագարձի մասին խօսք անգամ չի կարող լինել: Իրլանդական բիլլը անցողական խնդիր չէ, նա անպատճառ պէտք է իրագործւի. դա արդէն պատմական անհրաժեշտութիւն է, և այնքան մեծ՝ որ եթէ որ և է կողմից նա հանդիպի ամուր պարսպի՝ հարկ կայ այդ պարիսպը քանդել:

Իսկ այդպիսի մի պարիսպ է ներկայացնում այժմեան լորդերի ժողովը: Հետևապէս պէտք է քանդել վերջինս, գոնէ նորա ներկայ կազմը: Ահա այն եզրակացութիւնը, որին հասել է լիբերալ կուսակցութիւնը և յատկապէս Գլադստոնը:

Լորդերի ժողովի անցաղթելի կամակորութեան նկատմամբ Գլադստոնը համոզւել է նաև այլ իրողութիւններով, պարլամենտական անցած շրջանի ընթացքում: Լիբերալ մինիստրութիւնը հանդիպեց խիստ ընդդիմադրութեան նաև համայնքների ինքնավարութեան նոր ծրագրի խնդրում, որպէս նաև բանւորների ապահովացման օրէնքի նկատմամբ: Լորդերի ժողովը աշխատեց այդ օրէնքների էական մասերի զօրութիւնը ի չիք դարձնել: Լորդերի պալատը, սակաւ անդամների բացառութեամբ, սիստեմական ընդդիմադրութիւն է ցոյց տալիս լիբերալ մինիստրութեան, ունենալով իբր պարագլուխ լորդ Սոլսբերիին:

Այսպիսով ահա Գլադստոնը պէտք է միտք չղանար լորդերի դէմ ահեղ պատերազմ սկսել: Ինչով նա կարող է ազգի նոցա վրայ, եթէ ոչ սպառնալիքով լորդերի պալատը (ժողովը) ջնջել:

Սկսած 1832 թւականից, երբ կատարեց անգլիական մեծ ձեռնորմը, որով անգլիական արիստոկրատիան՝ օրէնսդրութեան գործում կորցրեց իւր նախկին իշխանութիւնը, այդ ժամանակահանց սկսած լորդերի ժողովը ծառայում էր իբր մի մեղմացնող օրգան,

իրան հաւասարապէս հեռու պահելով մեծ կուսակցութիւնների բացառիկ ազդեցութիւններից. նորա բռնած դիրքը այնպէս չէր որ խանգարէր կառավարութեան կանոնաւոր ընթացքը, միշտ մտաբերելով դուքս Վելլինգտոնի այս խօսքը թէ՛ «ամեն բանից առաջ պէտք է որ թագուհու կառավարութիւնը ընթանայ»:

Բայց այս վերջին տարիներս լորդերի ժողովը փոխել է իւր բնաւորութիւնը, ներկայացնելով պարզ ի պարզոյ մի մասնաձիւղ ծայրայեղ պահպանողականների ահումբիւ: Նորա մօտ 600 անդամներից լիբերալները (յառաջդիմականներ) հազիւ 40 հոգի են:

Նա իւր բնաւորութիւնը փոխել է նաև մի այլ կողմով: Մինչև մօտ ժամանակներս հողատիրական արիստոկրատիան իրան անկախ էր պահում մեծ գործարանական արդիւնաբերութեան գործատէրերի և բանւորների ազդեցութիւնից: Արդարութեան ոգուց և մասամբ նոյն իսկ մի տեսակ նախագծից զէտի կապիտալիստները, որոնք ներկայացնում են նոր ժամանակի իշխող և զեկավարող տարրը, լորդերի ժողովը անցեալներում քէտրկել էր յօգուտ այն օրէնքների, որոնք հովանաւորում են բանւորների աշխատանքը:

Իսկ ներկայումս սեփականութեան երկու տեսակների՝ հողայինի և դրամականի ներկայացուցիչների մէջ համաձայնութիւն է կաշացած երևում: Ներկայումս լորդերը պաշտպան են հանդիսանում միաժամանակ թէ՛ հողային սեփականատէրերի և թէ՛ գործարանատէրերի:

Այսպէս ուրեմն լորդերի դէմ կռիւը դառել է մի անհրաժեշտութիւն: Խնդիրը սա է թէ ինչ կասյ ունի դորա հետ Գլաշստոնի հրաժարականը:

Ահա թէ ինչումն է այդ կասյը: Իրլանդական ինքնավարութեան օրէնքը անպատճառ չաղթանակ է տանելու. այդ զգում են ամենքը. բայց քանի որ լորդերի ժողովը ներկայ կազմն ունի, այդ օրէնքը չի կարող ներկայ հանդամանքներում անցկենալ: Բայց ոչ միայն իրլանդական բիլլը այժմ չի կարող անցկենալ, այլ և ներկայ հանգամանքներում չեն կարող կատարել նաև ուրիշ, նոյնպէս շատ կարևոր և անհրաժեշտ վերանորոգութիւններ: Անգլիան կանգնած է այժմ այն կէտի վրայ որ պէտք է չեղափոխութիւն կատարի. այդ նա կանի իւր ձեռով՝ ռեֆորմների միջոցով, ինչպէս նա արել է ան-

ցեալում, հակառակ մի քանի ուրիշ ազգերի սովորութեան, որոնք, փոխանակ ռեֆորմներով յեղափոխութիւն կատարելու, յեղափոխութիւններով ռեֆորմներ են կատարում:

Բաժանել Յկեղեցին Պետութիւնից Ուէլսի իշխանութեան մէջ և Շոտլանդիայում, նորից ընտրողական ռեֆորմ կատարել, տալ բաւարարութիւն բանւորական ընկերութիւններին (տրէդ-ունիոնների, trade—unions) պահանջներին, տալ ինքնավարութիւն Իրլանդիային—ահա լիբերալների այժմեան ծրագրի գլխաւոր կէտերը:

Արդ, այդ բոլորից այն խնդիրը, որը Վլադստոնի համար կատարելապէս հասունացել է, դա՛ իրլանդական ինքնավարութեան խնդիրն է: Մնացած խնդիրների հետ Վլադստոնը այնքան մօտիկուց ծանօթ չէ, նոցա բաւականաչափ չէ մշակել: Իսկ իրլանդական խնդիրը, ներկայ հանգամանքներում, չի կարող անցնել մէն մենակ. նա կանցնի, բայց որպէս կէտերից մէկը լիբերալ կուսակցութեան ամբողջ ծրագրի: Իսկ այդ ծրագրի հետ ի միասին պէտք է նախապատրաստել լորդերի ժողովի նոր կազմակերպութիւն:

Այդ ամենի համար Վլադստոնը, իւր 85 ամեայ հասակի ծանրութիւնը ուսերի վրայ՝ արդէն շատ է ծեր: Գորա համար պէտք են նոր սերունդ, նոր ոյժեր: Վլադստոնը, իւր հրաժարելովը ներդործական դերից՝ լիբերալ կուսակցութեան ղեկավարութիւնից՝ փակում է ոչ միայն իւր քաղաքական ասպարէզը, այլ փակում է նաև լիբերալ կուսակցութեան կեանքի, գորանով իսկ անգլիական ներքին քաղաքական կեանքի մի մեծ շրջան, այն շրջանը որ արդիւնք էր 1832 թւականի ընտրողական ռեֆորմի:

Վլադստոնը, ամենափառաւոր ներկայացուցիչը ցայժմեան անգլիական լիբերալիզմի, այն շրջանում, որ բացել էր 1832 թւականի ընտրողական օրէնքը, հեռանում է այժմ գործերից կատարեալ գիտակցութեամբ իւր մեծ անւան, հեղինակութեան և դեռ ևս գործելու ընդունակ ժամանակ: Բայց հէնց դորանով նա հասկացնում է այն քաղաքական կտակի լրջութիւնը, որ նա այժմ թողնում է իւր քաղաքական ժառանգներին, լինի այդ ժառանգը իւր նշանակածը՝ լորդ Ռոզբերին թէ մի ուրիշը: Բայց նա դատել է որ յարմարագոյն մարդը այդ կտակը կատարելու՝ իւր աշխատակից

և բարձր ազնականութեան պատկանող Ռոզբերին է, որը իւր ծննդեան իրաւունքով՝ իբրև անգլիական պէր անդամ է այն լորդերի պալատի, որի դէմ պէտք է սկսի պատերազմը:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

## II

### Ի Տ Ա Լ Ի Ա

Երեք պետութիւններ այս վերջին երեք ամիսներս մանաւանդ ուշք դարձրին իրանց վրայ քաղաքական կեանքի անցքերով, որոնց կարևորութիւնը մեծ քաղաքական շահեր է ընդգրկում. դոքա են Խոալիա, Գերմանիա և Անգլիա: Առաջինում՝ այն գրութիւնն է որ ստեղծել է նորակազմ Կրիսպի'ի մինիստրութեան համար ի դիմաց ներքին ապստամբական խռովութիւնների Սիցիլիա կղզում և պետութեան այլ տեղերում, բայց մանաւանդ ի դիմաց այն ծանր Ֆինանսական կրիզիսի, որի դէմ հերոսական կռիւ է պահանջուում. Գերմանիայում՝ այն յաղթութիւնն է, որ տարաւ կայսերական կառավարութիւնը գերմանական-ռուսական մաքսային դաշնադրութեան խնդրում. Անգլիայում՝ Գլադստոնի անակնկալ հրաժարականն է և Ռոզբերիի մինիստրութեան կազմելը, որի հետ կապ ունի ոչ միայն հին մեծ մարդու Ֆիզիկական անկարութիւնը, այլ անգլիական ներքին քաղաքականութեան մի նոր Ֆազիսի մէջ մտնելը:

Ինչ վերաբերում է Գլադստոնին, զորան մենք առանձին յօդուած նւիրեցինք վերևում: Այստեղ մենք կանգ կ'առնենք Խոալիայի գործերի վրայ, որոնք մեր ընթերցողների համար առանձին լուսաբանութեան կարօտ են:

Սիցիլիայի ապստամբական շարժումները պատահական չեն կարող համարուել: Նոքա բղխում են մի դժգոհութիւնից, որ ոչ միայն պարբերական է, ժամանակ առ ժամանակ կրկնող, այլ և սուր կերպարանք է ստացել: Հազիւ Կրիսպի'ի նոր մինիստրութիւնը կազմակերպուած էր և ահա ամեն օր Սիցիլիայի մի որ և է տեղում ապստամբութիւն սկսեց պայթել աղաղակներով՝ «կորչի մաքսը, կորչի հարկը»: Եւ բնակիչների ու զօրքի միջև ընդհարումները դառան անխուսափելի: Նոր մինիստրութիւնը, իրերի այդ դրու-

Թեան մէջ, տւեց լիազօր իրաւունքներ գեներալ Մորրա դի Լաւրիանօին, հաստատելով այդպիսով այդ կղզում զինւորական կառավարութիւն, պաշարման դրութիւն: Դա բնական էր, և երբ, մարտի սկզբին, իտալական պարլամէնտում վիճուում էր այն բացառիկ միջոցների մասին, որոնց ենթարկւեց Սիցիլիան տարւայ սկզբում բռնկւած ասպտամբութիւնների պատճառով, պարլամէնտը 342 ձայնով ընդդէմ 45-ի իւր հաւանութիւնը տւեց կառավարութեան այդպիսի վարմունքին, տալով նրան այդ բանի համար եղած արտակարգ միջոցների վարիչ:

Վերը մենք արդէն ասացինք որ Սիցիլիացում կրիզիսները պարբերական են: Եւ այն, ինչ ընդհանուր նշանակութիւն է տալիս Սիցիլիացի ասպտամբական շարժումներին, այն կապն է որ կայ զոցա և Խաւիաչի ընդհանուր դրութեան մէջ: Սիցիլիան մի վերին աստիճանի բարեբեր երկիր է, հռչակւած հին դարերից ի վեր. դա հին Տրինակրիան է, հին յոյների այդ մենաշնորհեալ կղզին, որը շատ ազգեր աշխատել են իրանց ձեռքը գցել՝ Վարթագէնի Ֆինիկիացիք, Սիկելիացիք, Հռոմայեցիք, Սրաբներ, Նորմանդացիք, եթէ խօսենք միայն հին ժամանակներից: Ներկայումս նա, Սիջերկրական ծովի այդ ամենամեծ կղզին, չորս վերասաչալի նեղուցով միայն անջատւած Խաւիաչի ցամաքից՝ ունի մօտ 3 միլիոն 150 հազար բնակիչ, և բաժանւած է եօթ պրովինցիաների, Պալերմօ գլխաւոր քաղաքով: Հնումը նա աշխարհքիս ամենահացաբեր և զեղեցիկ երկիրների շարքումն էր: Ներկայումս այդ օրհնւած երկիրը ոռոգւում է մի թուլամորթ ազգաբնակութեան քրախնքով և արտասունքներով, մի ազգաբնակութեան, որը մնի համ չի տեսնում երբէք և ուտում է միայնպիսի հաց, որից մի նմուշ նորերումս դրւած է եղել Հռոմի լրագիրներից մէկի բիւրօներում և որը զարհուրանք էր պատճառում նոյն իսկ Պարիզի պաշարումը կրածներին: Հողային տնտեսութիւնը այդ երկրում ամենանտանելիներիցն է: Վաշխառութիւնը դրականապէս կրճում է այդ ժողովրդին: Հողը բաւական չէ որ տրւում է կապալառուների, վերջին ժամանակներս սկսել են երևալ բացի նոցանից նաև այլ տեսակ միջնորդներ սեպհականատէրերի և մշակողների մէջ, միջնորդներ, որոնք հողերը իբր դրաւ վերցնում են սեպհականատէրերից վաշխառւական տոկոս-

ներով տւած պարտքերի համար: Պաշտօնական նոր կատարած խուզարկութիւնը ցոյց տւեց որ Սիցիլիայում երկրագործական բանւորի օրական միջին վարձն է 60 սանտիմ (ոսկով հաշւած մեր 15 կոպէկը) և այն էլ տարւայ մէջ բանւորական օր ջհաշւում են միայն երկու հարիւր օր. իսկ պատգամաւոր Դէ-Ֆելլիս իջեցնում էր այդ թիւը հարիւր վաթսունի: Վաշխառութիւնը այնքան մեծ չարիք է, որ նախկին մինիստր-նախագահ դի Ռուզլինի, Սիցիլիայի ներկայ գրութիւնը բարւոքելու համար միայն մի դեղ է առաջարկում, այն է օրէնք վաշխառութեան դէմ: Բայց բնական է որ դա բաւարար միջոց չի կարող համարւել. նորա ներգործութիւնը կարող է միայն հեռաւոր ապագայում երեւալ, իսկ ներկան աւելի արմատական միջոցների է սպասում:

Այդ երկրում տիրող անոմալիաներից յիշենք նաև հարկային հանգամանքները: Հարկերը այդտեղ անտանելի են և անխիղճ: Բաւական է ասել որ Սիցիլիայի համայնքներից 345 զիւղական համայնքներ վճարում են 22 միլիոն 218 հազար Ֆրանկ ուտետի հարկ, որ անում է ութ Ֆրանկ ամեն մի զիւղական բնակչի համար, կամ 60/0 օրավարձ բանորի ամբողջ եկամտի, մինչդեռ Խալիայի շատ աւելի հարուստ պրովինցիաներից Պիեմոնտում 1,133 համայնքներ՝ հաւասար ազգաբնակչութեամբ՝ վճարում են միայն 17 միլիոն Ֆրանկ, Վենետիկի պրովինցիայում 771 համայնքներ՝ հաւասար թւով հարկատուներով վճարում են միայն 7 միլիոն 200 հազար Ֆրանկ:

Իոքա պերճախօս թւեր են: Եւ չպիտի զանց առնել նաև այն որ հարկահանները անողորմ են, և պէտք է վաճառել հունձը և անշարժ կացքեր—հարկի պակասորդը վճարելու համար: Վերջերքումս պատմւում էր Վալզուարնէրա զիւղացու մի դէպք. վերադառնալով դաշտից՝ նա իւր հետ բերել էր մի քանի կանաչեղէն. հարկահանը (Խալիայում, որպէս նաև Յրանսիայում գոյութիւն ունի համայնական մաքս, որ վերցնում են մի ապրանք զիւղ կամ քաղաք ներմուծելու ժամանակ, և որը յայտնի է octroi անունով), հարկահանը պահանջում է 35 սանտիմ մաքս. իսկ զիւղացին ունէր ընդամենը 30 սանտիմ: Եւ ահա առանց այլևայլութեան խըլւում է զիւղացուց սորա հագի շորը...

Չարմանալու չէ որ այդ համայնքում ժողովուրդը, մի քանի ժամից չետոյ՝ ամբողջապէս ոտի կանգնեց...

Ինչ վերաբերում է երկրագործութիւնից զուրս աւելի երկրորդական արդիւնաբերութիւններին, այդտեղ ևս, օրինակ ծծումբի արդիւնահանութեան մէջ՝ վրդովեցուցիչ բաներ են պատահում, որոնց վրայ կոմսուհի պէ Մէաթ (Meath) նորերումս զգացած խօսքերով հանրային ուշադրութիւնը դարձրեց:

Աւելցնենք նաև, որ ապստամբական շարժումներ տեղի ունեցան նաև Իտալիայի մի բոլորովին ուրիշ տեղում ևս՝ Մասսա-Վարրարա պրովինցիայում (Ճլորենցիայից արևմուտք-հիւսիս), ուր նոյնպէս հաստատուեց զինւորական վարչութիւն և պաշարման դրութիւն:

Փետրւարին արդէն կարգը վերականգնած էր ամենուրեք:

Սակայն մենք չենք ուզում փակել մեր տեսութեան այս զլուխը, առանց չիշատակելու միջազգային քաղաքականութեան համար մի շատ բնորոշ երևոյթ: Իտալական թէև ոչ կարևորագոյն թերթերից մի քանիսը աշխատեցին Սիցիլիայի ապստամբական շարժումները կապել ոմանք Անգլիայի և ոմանք Ֆրանսիայի գաղտնի դիտաւորութիւններին հետ: Իրողութիւնը սա է որ մի շարք սիցիլիական համայնքներ ինդիքներով դիմել էին Անգլիայի Վիկտորիա թագուհուն, խնդրելով յայտարարել կղզու վրայ իւր հովանաւորութիւնը և կղզին զնել այն քաղաքական դրութեան մէջ, որ կար լորդ Վիլիամ Բենտինկի կառավարութեան ներքոյ Նապոլէոնեան պատերազմների ժամանակ, ներկայ դարուս սկզբին: Եւ իբր թէ Անգլիան, օգտուելով այդ պետիցիաներից, խրախուսում եղած լինի սիցիլիական ապստամբութիւնները...

Բայց այնքան էլ անմեղ չէր մի այլ մեղադրանք, որի համաձայն իբր թէ Ֆրանսիան, որի հետ Իտալիայի շարաբերութիւնները, ինչպէս յայտնի է, բաւականին լարած են այն օրից երբ Իտալիան մտել է Քերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի հետ ևռապետական դաշնակցութեան մէջ, իբր թէ, ուրեմն, Ֆրանսիան իւր փողով նպաստում լինէր սիցիլիացի ապստամբներին, ինչպէս որ

հարիւր տարի առաջ, 1793 թւականին, Անգլիան էր իւր փողով նպաստում Ծրանսիացի դէմ եղողներին...

Վերջապէս գերմանացի սոցիալիստներին էլ խնդրի մէջ մտցրին, որոնք իբր թէ պէտք է զրգուած լինէին Սիցիլիացիներին թէ փողով և թէ այլ և այլ բրոշուրներով...

Սակայն իտալացոց համար հայրենասիրութիւնը միակ այն կը լինէր, որ զրպարտութիւնների տեղ՝ հիմնաւոր ուշք դարձնէին արդէն հանրաժանօթ սոցիալական և անտեսական անտանելի հանգամանքների վրայ...

Բայց պաշտօնական խուզարկութիւնները ցոյց տւին որ գաղտնի ընկերութիւններ Fasci անունով, այնու ամենայնիւ զեր կատարել են:

Բայց եթէ վերը պատմւած շփոթութիւններն էլ եղած չլինէին, Կրիսպինի մինիստրութիւնը ունէր ծանր և շատ ծանր խնդիրներ լուծելու: Անցեալ տարւայ «Մուրծ»-ի վերջին համարում արդէն ասել ենք թէ որն է այդ ծանր խնդիրը. դա՛ Ֆինանսականն է: Իրողութիւնը սա է որ Իտալիան, լինելով մէկը եւրոպական վեց մեծ պետութիւններից, չունի բաւականաչափ կարողութիւն իւր ծախսերը ծածկելու համար և այնու ամենայնիւ նա իւր զօրքի վրայ պարտաւորւած է համարում մսխել մեծ գումար՝ մեծ պետութեան վայել զիրքի մէջ իրան պահպանելու համար: Պետական բիւջէտի բացը հաւասար է լինում 100 միլիոն ֆրանկի, իսկ ներկայ 1894/95 բիւջէտային տարւայ համար, ինչպէս հաղորդեց հեռադիրը, Ֆինանսների մինիստր Սոնինօն հաշուել է 177 միլիոն ֆրանկ, որ ամբողջ բիւջէտի մօտ  $\frac{1}{10}$  է կազմում: Դա մի զեֆլեցիտ է, որից զարհուրել կարող է ամենահարուստ երկիրը: Եւ բացի այդ՝ կարճ ժամանակեաց պարտք պէտք է վճարել կէս միլիարդ ֆրանկ:

Երբ Կրիսպին, անցեալ տարւայ նոյեմբերին, կոչուեց երկրի կառավարութեան ղեկը իւր ձեռքը վերցնելու, դա արդէն նշան էր դրութեան անելանելիութեան: Իսկ Կրիսպին էլ իւր կողմից, տեսնելով թէ դժւարութիւնը ինչու՞ն է, Ֆինանսների մինիստր հրաւիրեց պ. Սոնինօնին, որին Ֆինանսական գործերում մեծ ձեռնհասութիւն են վերագրում: Բայց այն ծրագիրը, որ անցեալ ամիս

Սոննինսօն առաջարկեց խտալական պարլամէնտին—բաւարար լուծումն համարւեց: Դեֆիցիտը ծածկելու համար նա առաջարկում է մի կողմից խնայողութիւններ, միւս կողմից նորանոր հարկերի դիմել, մինչդեռ եղած հարկերի ծանրութիւնը անտանելի է համարուում: Խնայողութիւնները հաշւած են 45 միլիոն միացն, այսինքն դեֆիցիտի քառորդը: Իսկ նոր հարկերով նա ենթադրում է ձեռք բերել 100 միլիոն: Եւ այդ նոր հարկերից 17 միլիոնը ընկնում է ոչ-շինւած հողային սեփականութեան վրայ, որ նոյնն է թէ երկրագործութեան վրայ, այն, որի խղճալի դրութիւնը արդէն ամբողջ լուսաւոր աշխարհքի խիղճն է շարժում: Շարժական կայքերից պէտք է ստացւի նոր 52 միլիոն. գիւղական և քաղաքային համայնքները, որոնք հազիւ հազ կարողանում են իրանց հաշիւները ծայրը ծայրին հասցնել, պարտաւորում են համայնական հարկերի մի մասը պետութեանը տալ: Աղի հարկը որ առանց այն էլ ընդհանրապէս մի անիծւած հարկ է, աւելցրած է 8 միլիոն Ֆրանկով: Ժառանգութեան հարկերը համեմատապէս աւելի քիչ են աւելցրած, 4 միլիոնով միացն, մինչդեռ ներկայ ժամանակի ոգին աւելի այդ հարկի աւելացնելն է պահանջում: Մի քանի միլիոն էլ սպասուում են ալիոտլից և այլն:

Վերջապէս Սոննինսօն ստեղծում է մի ընդհանուր հարկ եկամուտների վրայ, որը յուշեւարից 1895-ի պէտք է տայ 10 միլիոն Ֆրանկ:

Այս ծրագրին հետևում են մի շարք միջոցներ հասարակաց պարտքի և գանձարանի պարտքերը թեթևացնելու համար, դրամական դրութիւնը բարւոքելու համար և թուղթ փողի մասին:

Իտալիայի ներկայ Ֆինանսական դրութիւնը որ արդէն շատ տարիների սովորական վիճակն է, անկասկած յառաջացել է ոյժից վեր զօրք պահպանելուց. բայց կան նաև այլ պատճառներ, որոնք Ֆինանսական լինելով՝ պակաս լոյս չեն սփռում երկրի ներքին քաղաքական հանգամանքների վրայ: Իտալական կառավարութիւնները սովորութիւն ունեն մեծ ձեռնարկութիւններից առաջ նախապատրաստել հասարակաց կարծիքը, յանձնարարելով մի հրապարակախօսի մինիստրական կարծիքները հրապարակ հանել: Եւ շատ կարելի է որ այդ գրածների բնաւորութիւնն է կրում անցեալ ամիս հրա-

տարակաճ պ. Տուրիէլլօ'ի մի բրոշիւրը Վարլամէն տիրիզմը Խտալիայում, որի մէջ կան էջեր նաև Ֆինանսական խնդրի մասին: Տուրիէլլօն դանում է Խտալիայի ներկայ Ֆինանսական, անտեսական, անգամ բարոյական կրիզիսի գլխաւոր պատճառը այն քաղաքական տրանսֆորմիզմի մէջ (կերպարանափոխութիւն), որ կատարեց հանդուցեալ Ղեպրետիս (չ 1887-ին), որ երրորդ անգամ մինիստր-նախագահ նշանակեց 1881 թւականին: Ղեպրետիսը աշխատեց և ջաջողեց քանդել պատմականապէս կազմած կուսակցութիւնները, պարլամէնտը դարձնելով անհատական պատուախնդիրների ժողով, սկզբունքների տեղ շահեր դնելով, կարծիքների խմբերի տեղ դնելով շահախնդիրների խմբեր: Այսպիսով պարլամէնտականութիւնը Խտալիայում ազաւազեց և այդ պէտք երկիրը այն վիճակի մէջ, որից պէտք է այժմ դուրս բերել:

Չուգրնթացաբար դորա հետ, Ղեպրետիսը, ի հաճոյս տեղական շահերի և շահախնդիրների, ծրագրեց հազարաւոր վերստերի երկաթուղային գծեր մի քանի միլիարդ Ֆրանկ արժողութեամբ: Խտալիայի ամենամեծ երկաթուղային շինողներից մէկի՝ պ. Կոտրան'ի հետ՝ Տուրիէլլօն հաստատում է որ դորանով ստեղծւեց 5 միլիարդ Ֆրանկի պարտք, տարեկան 100 միլիոն երկաթուղային բիւջէտով և 70 միլիոն Ֆրանկ դեֆիցիտով. և այդ է որ Խտալիայի Ֆինանսների մէջ ահագին ծակ բացեց:

Երևի Սոննինօ'ի վերը չիշած ծրագիրը կազմելու համար էր որ թագաւորական հրամանով պարլամէնտի նոր բացումը, որ պէտք է տեղի ունենար յունւարի 25-ին, յետաձգւեց մինչ 20 փետրւարի (նոր տոմար), այդ յետաձգումը կատարեց առանց բացատրութեան և միայն երկու օր առաջ քան պէտք է պարլամէնտը բացւէր: Պահանջւում էր մի փոքր խաղաղութիւն և հանգստութիւն՝ նախաճառածելու համար միջոցների մասին Ֆինանսական ծանր դրութիւնից դուրս գալու համար: Այժմ, երբ Սոննինօն իւր ծրագրի հետ արդէն ծանօթացրել է պարլամէնտին և ամբողջ երկրին, այժմ, ասում ենք, աւելի ևս պարզւում է որ դրութիւնից դուրս գալու համար՝ իրօք որ պահանջւում են ոչ սովորական միջոցներ և բեֆորմներ:

Ինչ վերաբերում է զուտ հարկերին, նոցա հետ մենք արդէն

Ճանօթացանք վերև: Բայց կայ մի այլ խնդիր որի մասին մեզ մնում է խօսել:

Ֆինանսական ծրագիրը ներկայացնելուց յետոյ Հումբերտ թագաւորի կառավարութիւնը, լաւ ատած՝ Կրիսպին, պահանջեց պարլամէնտից Վիազօր իրաւունքներ»: Այդ նշանակում է թէ կառավարութիւնը կամենում է զործել առանց պարլամէնտի: Այդ պահանջը ամբողջ Խաւիացում զործեց ամենախորին տագւորութիւն: Պարլամէնտական կեանքում դա ամենեւին չլսած մի բան է: Միմիայն ամենամեծ վտանգների ժամանակ կարելի է արդարացիել մի այդպիսի քայլ: Դա մի սեռակ զիջատորութիւն է: Երևի դրութիւնը այնպէս է որ արդարացի է այդպիսի մի պահանջ: Տեսնե՛ք առաջարկը ինչի մէջն է կայանում: Առաջին յօդւածով արւում է թագաւորին, մինխտորների պատասխանատու թեամբ՝ լիազօր իրաւունքներ: Երկրորդ յօդւածով ստեղծւում է մի մասնաժողով, բաղկացած հինգ սենատորներից, հինգ պատգամաւորներից և հինգ պաշտօնեաներից— թագաւորին օգնական լինելու համար: Եւ զոքա պէտք է նշանակեն թագաւորական ղեկըէտով: Երկրորդ յօդւածով յայտնւում է որ յունւարի 1-ին 1895 թ. պարլամէնտը վերստին բացւելու ժամանակ՝ կառավարութիւնը պէտք է հաշիւ ներկայացնի ազգային ներկայացուցչութեանը՝ կատարած զործերի համար:

Ար դա մի համարձակ առաջարկութիւն է, զորա մէջ կասկածել կարող է միայն պարլամէնտական պետութիւնների սահմանադրութիւններին անձանօթը: Պարլամէնտական երկրում մի տարի երկիր կառավարել առանց պարլամէնտի—դա չլսած բան է: Այ ոք ի հարկէ չէր կարող մի քանի ամիս առաջ կարծել թէ այդպիսի մի խնդրի առջև դրւած կը լինի Խաւիան. բայց միայն այսքանը յայտնի էր որ Կրիսպին, և միայն Կրիսպին բաւականաչափ քաջութիւն կունենայ որ և է համարձակ զործ կատարել ներկայ Խաւիացում: Նորա անվեհրութեան մասին մենք այս կարծիքն ենք յայտնել անցեալ տարւայ ղեկտեմբերին, թէ երկրի Ֆինանսները կանոնաւորել Խաւիացում «հնարաւոր է միայն զօրքը պակսեցնելով: Մեծ քաջութիւն է հարկաւոր զօրքի պակսեցնելը գլուխ բերել: Բայց այս ևս հաստատ է որ եթէ կայ Խաւիացում մէկը, որ այդպիսի մի քաջութիւն կարող է զործել առանց

վախենալու—դա՛րիսպին է (տես «Մուրճ» 1893 № 12, էջ 1942):

Կրիսպին պահանջում է «լիազոր իրաւունքներ» մինչ 1895 թ. յունւարի 1-ը այնպիսի արմատական գործեր կատարելու համար, որոնց իրագործելը նա, Իտալիայում գոնէ, անհնարին է համարում, եթէ միաժամանակ մինիստրութիւնը դրւած լինի անհրաժեշտութեան մէջ պարլամէնտի վիճարանութիւններին մասնակցել, այլ և այլ կուսակցութիւններին ընդդիմադրել, կուսակցական ինտրիզաների դէմն աւնել և այլն, մի խօսքով՝ եթէ նա ստիպւած լինի միաժամանակ նաև պարլամէնտական քաղաքականութիւն բանեցնել:

Լիազոր իրաւունքներ ձեռք բերելով՝ Կրիսպին ցանկանում է քաղաքացիական և զինւորական վարչութիւնների մէջ մեծ փոփոխութիւններ անել, այդ վարչութիւնները աւելի արժան նստացնելու համար պետական գանձարանին: Նւ որովհետև այդ փոփոխութիւնները պէտք է շօշափեն բարձրաստիճան բաղմաթիւ անձերի և տեղական համայնքների շահերը, այդ պատճառով է երևի Կրիսպին ցանկանում, որ այդ գործը կատարւի առանց միջամտութեան պարլամէնտի, որի անդամներից շատերը այսպէս կամ այնպէս կապւած են այդ անձերի և տեղական շահերի հետ:

Սրբարև սա հաստատ է որ միացած Իտալիայի համար (իսկ նա միացած է 1859 թւականից սկսած) կառավարչական և դատաստանական մեքենայի անիւները շատ շատ են: Այդ իրողութիւնը ոչ միայն նկատւած է, այլ և այնքան ճանաչւած է, որ երկու անգամ այս վերջին երեսուն տարիների ընթացքում, եթէ չենք սխալուում, առաջին անգամ 1861-ին, երկրորդ անգամ 1891-ին, իտալական պարլամէնտին ներկայացրած է եղել վարչական և դատաստանական ատեանների ընթացքը. բայց այդ նախագծերը երկու անգամ էլ դուրս են եկել պարլամէնտից՝ ձխլած, աղաւաղւած շնորհիւ այն բանի, որ անհնարին է եղել դիմադրել ճնշմանը այն բաղմաթիւ պատգամաւորների, որոնցից ամեն մէկը ուղեցել է իւր գաւառի ատեանները պահպանել ի վնաս պետական բիւջէտի:

Բայց որքան տխուր բան է մտածել որ մի մեծ երկրում, ինչպիսին Իտալիան է, մէկը այն մեծ պետութիւններից, որոնք աշխարհքի քաղաքականութիւնն են կառավարում, այդպիսի մի երկ-

րում, ասում ենք մենք, հարկաւոր է դատում զիջտատորութեան զիմեւ ներքին ընդհանր կատարելու համար, որովհետեւ, վերջ ի վերջոյ, ինչ բան է Վիսգոր իրաւունքների պահանջը, եթէ ոչ զիջտատորութիւնս...

Մարդու հաւատալը չի գալիս թէ մի որ և է երկու տասնեակ միլիոն ֆրանկ խնայելու նպատակով անհրաժեշտ վարչական փոփոխութիւններ անելու համար՝ այդպիսի արտասովոր քայլին զիմելը հարկաւոր լինէր: Թէ՛ զուցէ, Կրիսպիի մինիստրութիւնը ինկատի ունի նաև զօրքի կրճատումը, որի մասին նա ոչ մի խօսք չի յայտնել և խոյս էլ է տալիս բան ասել. և բացի դորանից՝ նորա ենթադրած փոփոխութիւնները աւելի մեծ ծաւալ ունեն քան ինչ յայտնել է նորա ճառերից: Սա հաստատ է միայն որ Կրիսպիին ապակենտրոնացման սկզբունքի պաշտպան է եղել անցեալում: Նա յայտնում է որ ներկայ կենտրոնականութիւնը (centralisation) միանգամայն հակառակ է իտալական դարևոր աւանդութիւններին և որ դա մի պարսաւելի ժառանգութիւն է օտարների (Նապոլէոնի) միջամտութեան իտալական գործերի մէջ, դարուս սկզբում: 1887-ին Կրիսպիին արտասանեց այս հռչակաւոր խօսքը—վերի ծայրում՝ միապետութիւն, հիմքում և տեղական հիմնարկութիւններում՝ հանրապետութիւն: 1889-ին Կրիսպիի զրգամբ Խտալիացում մտցրեց համայնքի և պրովինցիայի (գաւառի) ինքնավարութիւնը:

Սակայն աւելցնելու է, որ Կրիսպիին, հետևելով իւր հրամանատիրական բնաւորութեանը, չնայած ապակենտրոնացման քարոզին՝ մինիստր եղած ժամանակ իւրեց քաղաքային ինքնավարութիւններից օստիկանութիւնը և քաղաքացիական պահպանների պաշտօնը ջնջեց:

Վիսգորութիւնների առաջարկը իս'ոյն ընդունեց պատգամաւորների ժողովում մի մասնաժողովի քննութեանը ենթարկելու համար: Հետևանքը կը հաղարդենք իւր ժամանակին: Սակայն պէտք է կարծել որ հեշտութեամբ նա չի ընդունել պարլամէնտի կողմից—եթէ երբէք նա ընդունէր Այդանդ պակաս չեն մարդիկ որոնք միշտ պատրաստ կը լինեն Կրիսպիի հետ կուլի մտնելու: Նիկոտերա, Յանարզելլի, զի Ռուզինի, Ջիոլիտտիին անգամ կը գործեն: Ի զէպ յիշենք որ պատգամաւորների ժողովի նախագահ (փետրւարին) ըն-

տըրւեց Բիանքերի, որը թէև մեղմ բնաւորութեան տէր մարդ է (և 70 տարեկան), ըստ և այնպէս կուսակցական տեսակէտից պատկանում է այն խմբին, որի զուխը դի Ռուզինին է: Բայց անկարելով չէ իմանալ որ Յանարդելլի'ն, որը բարեկամ չէ Կրիսպին, ստացաւ պատգամաւորների թւի կէսից միայն չորս ձայն պակաս:

Z.

Յ. Գ.—Այն մասնաժողովը, որ կազմւել էր յօդւածում յիշուած լիազօրութիւնների խնդիրը քննելու համար, իւր անդամների ձայների մեծամասնութեամբ՝ վճռեց մերժել կառավարութեան առաջարկութիւնը: Հաւանական է որ պատգամաւորների ժողովն էլ նոյն կերպ կը վերաբերւի խնդրին:

Z.

## ԶԱՆՍԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՈՒՂԵՐՁ «ՄՈՒՐՃ»-ԻՆ: Մօտ օրերս ամսագրիս խմբագրին ճերկաչացան Թիֆլիսի 13 կրթւած արհեստաւորներ և չափոնցին իրանց շնորհակալիքը այն ուշադրութեան համար, որ նւիրում է «Մուրճ»-ը բանւորների և արհեստաւորների խնդրին:

«ՄՈՒՐՃ»-Ը ՆԻՒՐՈՂՆԵՐ — (Շարունակո թիւն. սկիզբը տես №№ 1 և 2):  
15) Կազմարար պ. Եղիա Տէր-Խաչատրեան (Թիֆլիսում) «Մուրճ» մի օրինակը նւիրում է իւր հպարտի Ազա գիւղի (Նախիջևանի գաւառ.) հաւոց եկեղեց.-ծխական դպրոցին:

16) Ղզլարից պ. Ալեքսանդր Մամաջանեան մի օրինակ «Մուրճ» նւիրում է Ղզլարի հաւոց եկեղ.-ծխակ. դպրոցին:

17) Մեր աշխատակից պ. Ս. Բալաղեան մի օրինակ «Մուրճ» նւիրում է Գանձակի Սուրբ Լուսաւորիչ հաւոց եկեղ.-ծխակ. դպրոցին:

18) Մեծ-Ղարաքիլիսից Խորէն քահ. Խանզազեանց, գրեւորով նոյն գիւղի հաւոց եկ.-ծխակ. ուսումնարանի համար, 3 ուրբլի ևս թողել է մեր կարգադրութեան տակ, որ և աւելցնելով Ալեքսանդրոպոլի գաւառի Գեչրլու գիւղի ուսումնարանից ստացած 3 ուրբլու վրա—չատկացրինք այդ ուսումնարանին ուղարկող «Մուրճ»-ի բաժանորդագինին:

ՆԻՒՐՆԵՐ ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ: «Արարատ» ամսագրի մարտի տետրում տպագրւած է հետեւալը Վեհափառ Հալրապետի ստացացած գումարների մասին, որ արտատպում ենք խմբագրական թեթև փոփոխութիւններով:

«Վեհափառ Հալրապետի Ս. Լջմիածին ժամանելուց մինչև այսօր Վեհարանում ստացւած դրամական նւիրաբերութիւնները սոքա են:

«Մեծ. Ժամհարեան եղբայրները նւիրեցին 17,000 ուրբլի անձեռնմխելի, որի տոկոսը պիտի գործադրելի կրթական նպատակով:

«Մոսկւաքնակ Նոր-Նախիջևանցի Հայերը Նւիրեցին»	3000	ա.
«Վարչաւարնակ — — — — —»	400	ա.
«Սեկատերինողարի — — — — —»	520	ա.
«Վարչաւալի — — — — —»	480	ա.
«Բաղւաքնակ — — — — —»	2200	ա.
«Մոսկւալից ժամհարեան եղբայրները կրկին»	2000	ա.
	<hr/>	
	Ընդամենը	25,610

Կուրս գալով ընդհանուր գումարից ժամհարեան եղբայրների 17,000 ուրբու պայմանական նւէրը, կրտսացւի 8610 ուրբլի, որ անպայման կերպով նւիրւած է Վ.ԵՏ. Հայրապետին: Այս գումարից Վ.ԵՏ. Հայրապետը բարեհաճեց 2000 ա. ուղարկել Կ. Պոլսի ս. Պատրիարքին՝ սովեալներին հասցնելու. իսկ մնացեալ գումարից ահա վեց ամիս է, որ ամեն օր երկու սեռի և ամեն հասակի սոված և մերկ հարիւրաւոր գաղթականներ և տեղակաւն ընակիչներ դիմում են Նորին Վեհափառութեանը և, զրամական ու բարոյական միխթարութիւն ստանալով, հեռանում են վեհարանից, օրհնելով Հալոց ազգի բարեւէր և եղբայրասէր նւիրատուներին: Միևնուց միջոցին, Վ.ԵՏ. Կաթողիկոսի անօրինութեամբ, կարօտեալներին մասնատրւում է զրամական օգնութիւն Մալր Աթոռիս գանձապահի միջոցով:

Այսպիսով, ուրեմն, վերջապէս հասկացեց հաշւետւութեան կարևորութիւնը ս. Էջմիածնի կողմից: Կարող ենք աւելցնել, որ դա մի անհրաժեշտութիւն էր այն սխալ լուրերից վտուց որոնց համաձայն Վ.ԵՏ. Հայրապետին նւիրւած գումարները իբր թէ փառն հազարի էր հասնում: Բացատրութեան կարօտ է, թէ սարածուղ սխալ լուրերը ինչ հետեանքներ կարող են ունենալ: Բայց մենք կը ցանկալինք որ այդպիսի հաշւետւութիւնները կատարւէին ոչ որպէս հերքումն սխալ լուրերի, այլ բողոքովին ինքնաբերաբար, իբր սխտեմ, իբր կարգի պահանջ:

Այս ստեղծուց վտուց մեզ մնում է միայն զարմանալ ստացւած գումարների փոքրութեան վրայ որը ոչ մի կերպ պատիւ չի կարող բերել Հալոց ազգին, այն ազգին, որը Վեհափառ Հայրիկի արժանավալել և փառալեղ ընդունելութիւններով՝ ամբողջ աշխարհին հասկացնել տւեց իւր պատրաստակաւնութիւնը մեծ զոհաբերութիւններ անելու: Խրիմեան Հայրիկը տեսել է ոչ թէ հազարներ, այլ հարիւրաւոր հազարներ դեռ ևս կաթողիկոս չընտրւած: Եւ միայն պատիւ է բերել Նորան այն գործադրութիւնը, որ Նա արել է իբր սոսկ վարդապետ, եպիսկոպոս և արք. եպիսկոպոս, իբր տուաջնորդ և պատրիարք:

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ԾՆՆԴԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԵԴԱՐՁԸ:** Ապրիլի 4-ին, Վեհափառ Կաթողիկոսի ծննդեան 74-երրորդ տարեդարձը մենք շնորհաւորեցինք հետեւալ հեռագրով.

«Էջմիածին».

«Սրբազնագոյն Կաթողիկոսին»:

«Մուրճ»-ի խմբագրութեան անունից շնորհաւորում եմ Ձերդ Վեհափառութեան մուտքը Ձեր թանկագին կեանքի եօթանասուն և հինգերորդ տարեշրջանը: Թող Տէրը պահպանի Ձեր ուժերը երկար տարիներ Հալքենիքի բարօրութեան և Հայաստանեայց եկեղեցու փառքի համար»:

**ՏԱՃԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ:** Հեռագիրը հաղորդեց թէ մինիստր Հարկորտ չափոնեց համալնքների ժողովում թէ Բարձրագոյն Գուռը ուղարկել է Տաճկա Հայաստան մի լանձնաժողով, որի տեղ համեւուն պէս՝ մի քանի հալ բանտարկեալներ, որոնք դաւադրութեան մէջ մեղադրուած են՝ ազատեցին. բանտարկութեան դատաւարուած են 17 հոգի, իսկ մահւան պատժի՝ 15 Հալքեր: Գուռը խոստացել է՝ դատաւճիռը չհաստատած՝ Կ. Պոլսում իբր թէ խնամքով վերտուղել դատաւճուի շարժառիթը:

**ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ ՍՈՎԵԱՆՆԵՐԻ ԵՒ ԿԱՐՕՏԵԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ:** «Արարատ» ամսագրի մարտի համարի լաւելաճում տպւած է Վեհ. Կաթողիկոսի կոնդակը, որով Նա դիմում է ռուսա-Հալքերին, չորդորելով որ հանգանակութեամբ Իրան միջոց տրել ալն բազմաթիւ կարօտեալներին օգնելու, որոնք Տաճկա-Հայաստանի սովի պատճառով դաղթածները և Կարսի ու Երևանի նահանգների տառապեալները ամեն օր իւր օգնութեանն են դիմում:

Այդ նշանաւոր կոնդակը մենք արտատպում ենք «Մուրճի» ներկալ համարում:

**Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԻ Խորէն արքեպ. Ա. շ ը գ ե ա ն ի ն** մարտի 13-ին, մի երիտասարդ՝ Յակոբ Կիրակոսեան, փորձեց սպանել ռուսներով: Պատրիարքը այդ օրը գտնուում էր Գում Գափուի մալք եկեղեցում, և անցքը պատահեց վանքի դրան մօտ, երբ պատրիարքը իւր սւխտալով դուրս էր գալիս եկեղեցուց: Ռուսէրը սակալն չգործեց, չնայած որ Յակոբը երեք անգամ փորձեց հարւածը: Վրիպելու պատճառը վերագրում են ալն բանին որ Յակոբը մոռացել էր ռուսերի շոմպուը բարձրացնել: Յակոբը 20—22 տարեկան է, ծառայում էր իբր դորձակատար շաքարի մի խանութում: Նորան ձերբակալեցին: Պատրիարք Աշըգեանը տեղափոխեց Մաքրիդիւղ թաղը և տեւց իւր հրաժարականը: Յալքնի է որ Աշըգեանը տարիներ առաջ տեւել էր իւր հրաժա-

րականը և Ազգային ժողովը ընդունել էր այն. բայց Սուլթանը չընդունեց այդ հրաժարականը և Աշըգեանը մնաց պատրիարք միմիայն ցանկութեամբ Սուլթանի, հակառակ Ազգային ժողովի, որը ալժամ միայն անունով գոչութիւն ունի: Ներկայ հրաժարականը նոյնպէս ընդունւած չէ դեռ ևս:

**ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԸՆԹՐԱԾ Է Այ. Լևոն Տիգրանեանց 13 ձախով ընդդէմ 8-ի: Նա միակ էր քւէարկում բոլոր առաջարկւածներին:**

**ԿՐՃԱՏԻԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:** Բացի այն քաղաքային ինքնավարութիւնից, որ գոչութիւն ունի Ռուսաստանի կարեւորագոյն քաղաքներում, որպէս նաև մեզանում՝ Թիֆլիսում, Բաքում, Երևանում, Բաթումում, կայ նաև քաղաքային ինքնավարութիւն աւելի կրճատւած իրաւունքներով, այսպէս կոչւած упрощенное городское управление: Կրճատւած քաղաքային ինքնավարութիւնը ներկայ դարնանից գործադրելու է կոջոր աւանում (որ Թիֆլիսին ամենամօտ ամարանոցն է), Ախալցխա և Գորի քաղաքներում, ուր առաջ գործում էր նախկին լիակատար քաղաքային ինքնավարութիւնը: Կրճատւած քաղաք. ինքնավարութիւնը ենթադրւած է մտցնելու Թիֆլիսի նահանգի նաև այլ գաւառական քաղաքներում, որպիսիք են՝ Սղնախ, Թելաւ, Գուչէթ և Ախալքալաք, ուր մինչ այսօր քաղաքային վարչութիւնը ոստիկանութեան ձեռքումն էր: Իսկ օրէնքով՝ ոստիկանական վարչութիւնից անցնելու համար լիակատար քաղաքային ինքնավարութեանը՝ պահանջուած է օրէնսդրական վճիռ: Նոյն հիման վրայ կրճատւած քաղաք. ինքնավարութիւնը երևի մուտք է գործելու նաև Անդրկովկասի բոլոր գաւառական փոքրիկ քաղաքները:

Կրճատւած քաղ. ինքնավարութեան գլխաւոր կէտերը ստաւ են. գործադիր մարմինը այլ դէպքում ոչ թէ քաղաքային վարչութիւնն է (ուպրաւա) մի քանի անդամներից բաղկացած, քաղաքագլխով միասին, այլ քաղաքային ստարոստա մի կամ մի քանի իրան ստորադրեալ օգնականներով. և փոխանակ մի քանի տասնեակ ընտրւած ձախաւորներից բաղկացած քաղաքային խորհրդարանի (դումա), այնտեղ կայ մի ժողով 12 կամ 15 քաղաքային լիազօրների (уполномоченные): Այդ ձև ինքնավարութիւնը աւելի էժան է նստում, մինչդեռ փոքրիկ քաղաքներում լիակատար ինքնավարութեան ծախսը կազմում էր՝ համեմատած քաղաքային եկամտ. տների հետ՝ օրի-

նակ Գուլթալիսում 15%, Ախալցխայում 25%, Գորիում մինչև անգամ մինչ 50%:

Միև կողմից, եթէ մեծ քաղաքներում լիակատար քաղ-  
ինքնավարութիւնով ձաջնաւորներին ընտրում են միաջն աջն  
անատէրերը, որոնց կալածքը առնուազն 300 ոււրլի արժողու-  
թիւն ունի, կրճատած քաղաք. ինքնավարութեան համար  
լիազօրններից ընտրում են բոլոր աջն անատէրերը, որոնց կալքը  
100 ոււրլու արժողութիւնից պակաս չէ:

Բայց կարևորագոյնը կրճատած քաղ. ինքնավարութեան  
մէջ աջն է, որ նա չունի երկու էական իրաւունքներ, 1)  
տալ պարտաւորիչ վճիռներ և 2) փոխել քաղաքալին պլան-  
ները: Մինչդեռ լիշւածներից մանաւանդ առաջինը շատ կա-  
րևոր նշանակութիւն ունի քաղաքալին բարեկարգութեան խնդ-  
րի մէջ:

Հիմնւելով աջն բանի վրայ որ լիակատար քաղ. ինքնա-  
վարութիւնը նշանակւած է ոչ միաջն «նահանգական շրջանա-  
լին և կարևորագոյն գաւառական քաղաքների համար», այլ և  
«ուրիշ քաղաքալին բնակութիւնների» համար, Անդրկովկասի  
մի քանի նահանգապետներ բարձր կառավարութեանը խըն-  
դիրք են մատուցել լիակատար քաղ. ինքնավարութիւնը մոյ-  
նել ոչ միաջն 30 հազար բնակչից աւելի ունեցող քաղաքնե-  
րում, այլ և ուրիշ աւելի փոքրիկ քաղաքներում: Թիֆլիսի քա-  
ղաքալին գործերի նահանգական օտեանը զիմել է նոյն խըն-  
դիրքով լոյրտա Ախալցխալի և նահանգի մի քանի այլ  
քաղաքների: Իսկ տեղական հասարակութիւններից, «Նովոէ  
Օբոդրենիէլի» վկայութեամբ, այդ խնդրով հետաքրքրւած են  
ցոյց տալիս միաջն սակաւները՝ Գանձակը, Ալէքսանդրապոլը  
և Սուխումը: Մնացածները մինչ այժմ կատարեալ անտարբե-  
ութեամբ են վերաբերել զէպի այդ կենսական հարցը:

**ՎԱՆԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐ ԳԱՀԱՆԱՑԱՑՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ:** Լուրեր են հաղոր-  
դում իբր Վահագնաւ Կաթողիկոսի հրամանով վանական զբա-  
րոցներ են հիմնուում մի քանի վանքերում՝ Հաղպատում, Տա-  
թևում՝ ընծայացուներ պատրաստելու համար:

**ԿՈՒՐՍԵՐ ԳԻՒՂԱԿԱՆ ՏԻՐԱՑՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ:** Թիֆլիսի թեմի առաջնորդ  
սրբ. Գէորգ եպ. Սուրէնեանց մի լանձնաժողով է կազմել Թիֆ-  
լիսի քահանաններից, որը զիւղական տիրացուների համար լա-  
տուկ կուրսերի ծրագիր պիտի մշակէ: Կուրսերում դասախօսե-  
լու են սրբազան առաջնորդից նշանակւած ձեռնհաս քահանա-  
ներ: Մանրամասնութիւնները մեզ չալտնի չեն:

**ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ-ՄԿՐՏՉԱՆ,** միաբան ս. Էջմիածնի, ընտրած է Մոսկուայի կաթերական Ընկերութեան թղթակից-անդամ, Ընկերութեան նիստում առ 28 փետրւարի, անդամները միաձայն հաւանութեամբ: Գալուստ Տէր-Մկրտչեան գրականութեան մէջ չափն է գլխաւորապէս իբր մեկնաբան Մովսէս Խորենացու, սրամիտ և հմտակից հետադատող հին ձեռագրերի և առ հասարակ ձայնչող մեր հին մատենագրութեան: Նորա ուսումնասիրութիւնների շարքը «Արարատ»-ում սպաղարեկիս շտապեցիկնք մեր ընթերցողների ուշքը դարձնել գրականութեան մէջ նոր երևացող և մեր հետադատողների մէջ այդ անսովոր թարմ մտքի և գրչի վրայ («Մուրճ» 1891, № 2), որպէս նաև «Մուրճ»-ը միակը եղաւ որ արժանի դատեց մի մանրամասն գրախօսութիւնով ծանօթացնել Միաբանի այն փոքրիկ գրածքի հետ Աւարտեան բնագրերի մասին, որ գրաւեց իւր վրայ Մոսկուայի կաթերական հնագիտական Ընկերութեան ուշադրութիւնը:

Գալուստ Տէր-Մկրտչեանը սրակաս չափն է նաև մեր անհամակրելի թերթերից, ուր նորա անունը աչքապէս չէ կոչուել մինչ ալժմ քան «տիրացու» անունով: Եւ բազրի տարօրինակ հեղձութեամբ մեր չարդելի բանասիրի մասին վերը առաջ բերած լուրը առաջին չափնողը «Արձագանքն» եղաւ, որը ոչ միայն իւր համար գործ ու փեշակ էր շինել Գալուստ Տէր-Մկրտչեանի հիւանդ գրութիւնը ծաղրել (նա չի կարողացել հոգևոր բարձր աստիճաններ ստանալ միմիայն իւր անբուժելի հիւանդ գրութեան պատճառով), այլ և մեծ զոչուցութեամբ աշխատում էր լուել նորա գիտական վաստակների մասին...

**ԹԻՖԼԻՍԻ ԼՍՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԻՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԱՆ** տարեկան ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ մարտի 26-ին, քաղաքալին խորհրդարանի դահլիճում, մասնակցութեամբ 60 - 65 հոգու, նախագահութեամբ բժշկ. պ. Բագրատ Նաւասարդեանցի, որը աչք պաշտօնին ընտրեց բաց քեթարկութեամբ, մեծամասնութեամբ 27 հոգու ընդդէմ պ. Ա. Արասխանեանցի որ ստացաւ 20 ձայն: Տպագրած Տեղեկագրից, որ կարգաց վարչութեան նախապահ պ. Ա. Բալանթարը, երևաց որ ընկերութիւնը հաշտարում հրատարակել է ընդ ամենը 12 գիրք կամ բրուշուր, որոնցից երկուսը (Խրիմեան Հաչրիկի «Գրախտի Ընտանիք» և «Միրաք և Սամուէլ») արտատպութիւններ են, մնացածներից 4-ը («Փարաւօնի աղջիկը», «Էլզոլա»), «Չորրորդ մոգ» և Ֆլամմարիոն «Աստղաբաշխութիւն») թարգմանութիւններ են, երկուսը մանր բրուշուրներ («Պատեօր», «Խողերա»)

մէկը աւելի խոշոր շարագրութիւն (Լուսկելիչ «Հանրամատչելի բնախօսութիւն») և մէկը ինքնուրույն փոքրիկ գրածք («Խարազի տղա») Ս. Քամալեանի),

Իբրև մի Բնկերութեան գործունէութիւն, մենք գտնում ենք որ դա «լղար» գործունէութիւն է:

Հաշէտարում (1893 թ.) Բնկերութիւնը ունեցած է 303 անդամ, 41 անդամ վարչութեան նիստ, 25 անդամ խմբագրական նիստ, 2 անդամ խառն նիստ, 1 անդամ ընդհանուր ժողով:

Մուտք ունեցած է 5156 ուրբլի 31 կոպ., ծախք՝ 5342 ու. 60 կոպ.: Ժողովը, նիստի վերջում, զբաղեց ընտրութիւններով փոխարէն աչն վարչական և խմբագրական անդամներին, որոնց ծառայութեան ժամանակամիջոցը լրացել էր:

Վարչութեան անդամ-գանձապահ ընտրեց պ. Արշակ Տէր-Գրիգորեան, սոսկ անդամ՝ Խ. Խաչատրեան, անդամ-քարտուղար՝ Յովսէփ Ամիրխանեան:

Խմբագրականի համար՝ պ. պ. Սամուէլ Բալաղեան և Արշակ Բարխուդարեան (գրեթէ միաձայն, ստացած լինելով միայն 3-4 սև, մնացած մօտ 60 քէ սպիտակ), Յակ. Քոչարեան (55 սպիտակ և 8 սև), Համբարձում Առաքելեան (17 սև): Քւէարկւողներինց էր նաև պ. Գէորգ Աստուածատրեան, որը պակաս քէ ստացաւ:

**ՀԱՅՈՅ ԲԱՐԵՎՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՇԻԱՅ ՃԻՂ:** Մարտի 13-ին Բնկերութեան ընդհանուր ժողովում ընտրեցին վարչութեան անդամներ՝ Ղուլիքիսպեանց Սարգիս, Ներսէսեանց Գաւիթ և Շահնազարեանց Նղիա: Փոխ-անդամներ՝ Տէր-Սահակեանց Բագրատ, Ղարաջեանց Գէորգ, Աբրահամեան Անդրէաս:

**ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ:** Մարտի 27-ին Երևանում կատարեցին նոյն քաղաքի թեմական զպրանոցի նոր հոգաբարձուների ընտրութիւնը, որի համար նախապէս ընտրւած էին քաղաքի հայոց եկեղեցիներում 38 ծխական պատգամաւորներ: Պէտքէ ընտրւէին 6 հոգաբարձու և 4 անձնափոխանորդ: Մասնակցութեամբ 32 ներկայ պատգամաւորների ձայների կէսից աւելի մեծամասնութեամբ ընտրեցին հոգաբարձու պ. պ. Յ. Սարուխանբէկեանց, բժ. Յ. Յովհաննիսեանց, Յ. Մելիք-Աղամալեանց, Ա. Աֆրիկեանց, Զ. Գէորգեանց և Գ. Սիմէոնեանց, իսկ անձնափոխանորդ՝ Գ. Տէր-Խաչատրեանց, Դ. Անտոնեանց, Լ. Նղիազարեանց և Յ. Մելիքեանց:

**ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԳԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ:** Այդ ընկերութեան տա-

րեկան ընդհանուր ժողովը կապացաւ 27-ին մարտի Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, մասնակցութեամբ 411 անդամներին: Նախագահում էր նախկին քաղաքապ. Ա. Մատինեան:

Հաշւետարաւ ընթացքում Ընկերութեան դրամա-  
գլուխը 872,480 ռուբլուց բարձրացաւ 919,160 ռուբլու,  
անդամների թիւը 1,070 հոգուց բարձրացաւ 1,108 հոգու,  
չնայած որ 46 հոգի զուրս էին եկել մահւան կամ այլ պատա-  
հական դէպքերով:

Ընկերութեան ընդհանուր շրջանառութիւնը հաւա-  
սարեց 199,830,064 ռուբլու 52 կոպէկի, այսինքն աւելի էր  
քան անցեալ տարի 61,811,634 ռուբլով:

Պահեստի գումարը, որ կազմում է տասը տար-  
ւանից դէս միայն՝ այժմ հասել է 127,181 ռ. 76 կոպ., իսկ  
հաշւետարաւ օգտի մասով և դրամադիւսի տոկոսներով նա այս  
տարի երեք հասնելու է 150,000 ռուբլու:

Աւետրական մուրհակներին զեղջը աւելացել է  
նախընթաց տարւաւ համեմատութեամբ 748,034 ռուբլով և  
37 կոպ., տոկոսաբեր թղթերով ապահովւած պարտք տրւած  
է աւելի քան նախկին տարում՝ 384,465 ռուբլով: Յատուկ  
ընթացիկ հաշիւը աւելացել է 204,370 ռուբլով և 70 կոպէկ:

Գործերի աղղլիսի զարգացման պատճառով հարկաւոր-  
ւեց աւելի լաճախ դիմումներ անել պետական բանկի տեղա-  
կան ճիւղին, մասամբ մուրհակների կրկնազեղջի, մասամբ չա-  
տուկ ընթացիկ հաշիւ համար:

Հաշւետարաւ զուտ օգուտը եղած է 116,269 ռ. 90 կ.,  
ուրեմն աւելի քան նախկին տարում 13,804 ռ. 67 կոպ.,  
այնպէս որ դիւլիգէնդ մնում է 9 ռ. 25 կ. անդամների ներ-  
մուծած ամեն 100 ռուբլու համար:

Ժողովում զեկուցեց որ ընկերութեան պաշտօնեաների  
կենսաթոշակապին կանոնադրութիւնը մշակելու գործը լետա-  
ծդում է:

Ապա ժողովը անցաւ այն պաշտօնատար անձերի ընտ-  
րութեանը, որոնց ծառայութեան ժամանակամիջոցը լրացել էր:  
ԱՂԱԼԱՐՈՎԻ ՀՈՂԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ: Մարտի 16-ին Գանձակ քաղա-  
քում կապացաւ աճուրդով վաճառումը Եւլախ-միւլքի հողերի,  
որ պատկանում էին հանգուցեալ Գաւիդ-խան Ջիւանչիր-Աղա-  
լարովին թրքական խաներից (քրիստոնէութիւն ընդունած  
ուռս զերասանուհի Սէտովսլի հետ ամուսնանալու համար):  
Աղալարովի վիշեալ կալքը գտանուում է Գանձակի նահանգի

Ջրամանշիրի գաւառում, որի մէջն է երկաթուղու Եւլախ կապարանը, ձգւում է մինչ 20 վերստ Կուր գետի աջ ափին, ներկայացնելով աղպիտով Կովկասի թերեւս ամենամեծ կալածքը, մօտ 34,000 ղեւեաւին կամ 37,000 ֆրանսիական հեկտար: Կալքը ծախւում էր աճուրդով, այսինքն դատարանական կարգով՝ հանդուցեալ տիրոջ պարտքերի համար որ համնում էին 200,000 ուրբլու, որից մօտ 70,000 ուրբլի հանդուցեալի կնոջ պահանջն էր: Աճուրդին մասնակցեցին չորս հողի, որոնցից երեքը տեղացի պ. պ. Առաքել Ծատուրեան (Քաղւից) բազմեցի թուրք հաջի Աղա Թաղիեւի հետ միասին և Գանձակեցի Նաբաթեան, և մէկը՝ Ռուսաստանի առաջին կարգի վաճառական ինժեներ Պալաշկովսկոյ: Կալքը մնաց ամենաչափ առաջարկող Պալաշկովսկու վրայ 205,000 ուրբլիով: Մրցողներից Նաբաթեանը գնաց մինչ 150,000 ուրբլու, Ծատուրեանը թաղիեւի հետ՝ մինչ 200,500 ուրբլի:

Բաց զանազան պատճառներով աղ աճուրդի օրինաւորութիւնը զիւր ևս վիճելի է. հետեապէս խնդիրը մնում է առկախ:

Մի համեմատութիւն Անգլիայի հետ 1863 թւականին չորրորդ տպագրութեամբ լուս տեսած Léonce de Lavergne'ի գրքում, *Essai sur l'économie rurale de l'Angleterre de l'Écosse et d'Irlande*՝ համբաւաւոր ներկնակը (էջ 115—116) չիշում է իբր Եւթ-Քրիտանիայի ամենամեծ կալածատէր՝ զուքս օֆ Սուլթերլանդ, որը մի հաս կտորով ունի 300,000 հեկտար հող (ուրեմն Աղալարովի միւլքից մինչ ութ անգամ աւելի մեծ՝ Շոտլանդիայի հիւսիսային մասում. բայց աղ հողերը, ասում է նա, արժեն միայն 100 ֆրանկ (25 ուրբլի ոսղի) մի հեկտարը ուրեմն ամբողջը  $7\frac{1}{2}$  միլիոն ոսկի ուրբլի, իսկ այժմեան թուղթ փողով 10—12 միլիոն ուրբլի: Մի այլ մեծ կալածատէր՝ մարկիզ օֆ Breadalbane Շոտլանդիայի մի այլ մասում ունէր գրեթէ նոյնքան նոյն արժողութեամբ: Բուն Անգլիայի ամենամեծ կալածատէր չիշում է զուքս օֆ Նորթհումբերլանդ, որի հողերի տարածութեան մասին սակայն թիւ չի բերած, բայց ի հարկէ պէտք է շատ աւելի փոքր լինի, քան վերը չիշածները, բայց և անհամեմատ նոքա աւելի արժէք էին ներկայացնում:

ՂԱԶԲԷԳԻ «ՀԱՅՐԱՍՊԱՆՆՐ»: Մեր աշխատակից պ. Մկրտ. Նաւասարդեան խնդրում է մեզ չափանել, որ արդէն սկսել է թարգմանել վրացերէնից ականաւոր վրացի վիպագիր Ալէքսանդրէ Ղազրէզի «Հայրասպան» (Մամիս մկլելի) վէպը:

ԹԻԻՔԻԱՅԻ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ հարկ ենք համարում չափանել որ

սուտական նոր կանոններով եթէ դրամ է ուղարկում ոչ «դրամական» այլ միայն պատւիրած (սեկոմանդէ) ծրարների մէջ, պոստի վարչութիւնը այդ պատւիրած նամակները բացում է և դրամ գտնելով՝ գումարի քառորդ մասը պետական գանձարանն է դրաւում, իսկ մնացած երեք քառորդը չանձնում է հասցեատիրոջ: Միւս կողմից, եթէ պատւիրած նամակը ճանապարհին որ և է մէկը բացանելու լինի և գումարը գողանալ—այդ կորուստի համար պոստի վարչութիւնը պոստախանառու չէ: Հետևապէս թիւրքահայերին, որոնք չաճախ սովորութիւն ունին բաժանորդագրները ուղարկել պատւիրած ծրարներով, խորհուրդ ենք տալիս այդպէս չանել, այլ դրամը ուղարկել դրամական ծրարներով մէջ:

«ԱՐՇԷՆ ԵՐԷՅԻ ՔԱՐԱՂԸ» ԵՒ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊ. ՍԵՂՐԱԿԵԱՆԻ ՅՕԴԻԱՅԸ: «Արարատ»-ում ապաճ «Արշէն Երեցի» Գիւղական քահանայի քարոզ՝ չօղածի առիթով, որի մասին մեր ընթերցողները կը կարդան ներկայ համարի Ժամանակակից Տեսութեան մէջ, «Մշակի» № 41-ում տպւած է Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանի մի չօղածը «Ով հաւատաց» խորագրով: Յօդածի գլխաւոր արժանիքը կաշնում է նրանում, որ Փակտօրէն մերկացում է եպիսկոպոսների կաշառակերութիւնը՝ քահանաներ ձեռնադրելու համար, 70-ական և 80-ական թւականներին, իսկ միւս կողմից՝ քահանայացու առաջարկող գիւղական հասարակութեան կողմից Հոգևոր իշխանութեան ներկայացրած համախոսականներից և ժողովրդի ստորագրութիւններից շատերի կեղծութիւնը, որպէս նաև այն դերը որ կատարում են այդ դործում գիւղական վարձկան փաստաբանները, բարեխօսները: Բացի այդ, Արիստակէս եպ. Սեղրակեան չափնում է, որ մօտիկ Ժամանակում նա լոյս է ընծայելու 1889 թւին իւր գրած և Սինոդին ուղղած մի ընդարձակ չափարարութիւնը, որի մէջ նա խօսում է 70-ական և 80-ական թւականներին կատարւած քահանայական ձեռնադրութիւնների մասին, կցելով գրքին այլ կարևոր չափեր: Աւելորդ է ասել թէ որքան մեծանահամբրութեամբ մենք սպասում ենք այդ գրքի լոյս տեսնելուն:

Այժմ դալով չօղածի տեսչենցիական կողմին, մենք պէտք է խոստովանենք, որ չնայած չօղածի բանակաւորական ձևին, հեղինակի պահանջները առհասարակ չեն տարբերում Արշէն երեցի պահանջներից: Արշէնի կարծիքով ներկայումս առաջարկող տղէտ տիրացուները անընդունելի են և որ աւելի լաւ է քահանայ չունենալ, քան անարժան քահանայ ունե-

Նալ, դորան հակառակ չէ և Արիստ. եպ. Սեղրակեան: Արշէնը պահանջում է որ հոգևոր կառավարութիւնը ինքը հոգս սանի արժանաւոր քահանայացուներ պատրաստելու, դորան հակառակ չէ և Արիստակէս եպ. Սեղրակեանը: Արշէնը պնդում է որ հոգևոր իշխանութիւնը իւր քարոզներով պիտի զաւթոցնութեան զիւղական ժողովրդին՝ արժանաւոր ընծայացուներ ընտրելու համար. նոյն միջոցն է առաջարկում նաև Արիստակէս եպ. Սեղրակեան: Արշէնը պնդում է թէ՛ ներկայումս վանական վարդապետները չեն համապատասխանում իրանց նախկին գերին և որ նոքա բարոյապէս և մտաւորապէս անանկ են. նոյնը պնդում է նաև Արիստակէս սրբազանը, հաստատելով այդ մի եղելութիւնով՝ Սեանայ վանքի վանահօր վերաբերեալ:

Մենք ալպիսով ուրախ ենք որ երկու յօդածագիրների հաջեացքները շատ կէտերում իրար հետ բռնում են: Միակ իրական, բայց և նշանաւոր տարբերութիւնը երկուսի մէջ մենք գտնում ենք նրանում, որ Արշէն երէցի ասածով՝ Հալբիլը կշռի ծանրութիւնը դնում է ժողովրդի ընտրութեան վրայ, իսկ Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանը՝ ձեռնադրողի իրատունքի՝ իշխանութեան վրայ: Այդ մասին մեր ասելիքը կասենք քահանայական ինդրի ուսումնասիրութեան մէջ: Իսկ առ այժմ միայն ցաւելով պէտք է վկայենք, որ «Ու հաւատաց» յօդածի վերջում չակերտների մէջ գրած տողերը բաւականաչափ զոլուցութեամբ և ճշդութեամբ չեն արտագրւած Արշէն երէցի յօդածից: «Տգէտ ժողովուրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր, և բնական կերպով չեն լարմարի իրար» խօսքերը սրբազան Արիստակէսի յօդածում վերագրւած են նաև Հալբիլին, մինչդեռ Արշէն երէցի քարոզում նոյն այդ խօսքեր արտասանողը միայն տգէտ ժողովուրդն է: Ահա բնագրի տողերը. «Եթէ թույլ տաս, Հալբիլ, գիւղացի կոպիտ խելքով մի փիլիսոփայութիւն անենք: Մեզ էնպէս կը թւի որ տգէտ ժողովուրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր» և այլն («Արարատ», էջ 73, երկրորդ սիւնակ): Եթէ գիւղական ժողովրդի խօսքերը ալոպէս առանց ալ և ալուցութեան իրան Հալբիլին վերագրելը թույլատրելի լինէր, ապա կարող կը լինէիք դորանից աւելի թունդ խօսքեր դնել Հալբիլի բերանը և պնդել իբր թէ Հալբիլը պահանջում է տգէտի համար նաև տգէտ քահանայ, քանի որ հէնց նոյն այն տողերից անմիջապէս առաջ նոյն գիւղացիք լատնում են հետեւալը. «Ալոպէս մեք խեղճ գիւղացիք ամեն կողմէ անբաղղ եմք. մեր ճակատագիրն զուցէ ալոպէս է, մեք տգէտ, մեր

քահանայն էլ պէտք է մեզ նման ազէտ լինի: Նթէ թող տաս, Հալըիկ, գիւղացի կոպիտ խելքով մի փիլիսոփայութիւն անենք... և այլն): Պարզ չէ միթէ որ գիւղացիներ ըր բերանով ինքը Հալըիկը չէ խօսում:

Իսկ իւր ընդհանուր աւամար սրբ. Արիտակէս եպ. Սեղրակեանի լողածը լրացուցիչ գրածք կարող է համարել Արչէն երէցի քարոզին. առանց հերքելու Արչէնի հպեացքները՝ նա նորա թող կողմերի հակակշիռն է կազմում:

ՍՈՎՂ ՏՍՃԿԱ-ՀՍՅԱՍՏԱՆՈՒՄ, ստուգ պարկերներից մեզ հասած տեղեկութիւնների համեմատ՝ խորը և լաջն ծաւալ է ստացել: Մենք կաշխատենք սովի դէմ գործ դրած միջոցների մասին Տաճկահայաստանում մեզ հասած տեղեկութիւնները իւր ժամանակին ի մի ամիտիել:

ՄԱՍՈՒՎ: «ՄԱՍՄ» շարաթաթերթը, Պոլսի Ուսումնական Խորհրդի օրգանի է փոխարկել:

† ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ, պրոֆեսոր, քաղաքացիական իրաւունքի, հոռմաշական իրաւունքի և մանաւանդ առևտրական իրաւունքի դասախօս Մոսկուի համալսարանում, վախճանեց մարտի 14-ին: Հանդուցեալը ծնել էր Շուշի քաղաքում 1848 թւականին, գիմնազը աւարտեց Թիֆլիսում, ապա աւարտեց Մոսկուի համալսարանում, 1875-ին տեց մագիստրոսի, 1889-ին՝ իրաւաբանի դոքտորի քննութիւն: Հանդուցեալը լաւ դասախօսի համբաւ ունէր: Պրոֆեսորական գործունէութիւնից դուրս հանգուցեալը սիրով մասնակցում էր Մոսկուի հալ կոլոնիալի հասարակական գործերին: 1884-ին ընտրեց Բեսարաբիալի թեմի պատգամաւոր կաթողիկոսական ընտրութիւնների համար, ուր պաշտպանեց երջանկալիչատակ Ներսէս պատրիարքի թեկնածութիւնը:

† ԲՐՈՒՆ-ՍԵԿԱՐ հռչակաւոր ֆրանսիացի բժիշկ և ֆիզիոլոգ վախճանեց ներկալ մարտին, 76 տարեկան հասակում: Պարիզի Collège de France բարձրագոյն դպրոցում նա բռնել էր նշանաւոր ֆիզիոլոգ հանդուցեալ Կլոդ-Բերնարի տեղը: Համաշխարհալին ուշադրութիւն դարձրեց իւր վրալ երբ 1889 թւականի 1/13 լունիսի բիոլոգիական ընկերութեան մէջ նա գեկուցումն արաւ ալն հետեանքների մասին, որ ստացել էր կաշի սակով մարդու մարմնի մէջ ներս սրակելով մի հեղանիթ, որ ստացում էր ծովալին խողի և շան մի քանի օրգաններից: Իւր անձի վրալ արած փորձերը ցոլց տւին, որ իւր պատրաստած հեղուկը ներս սրակելուց վետոյ՝ նկատում էր

միանների ուժի աճումն և մաաւոր գործունէութեան զօրաղումն: Այլ առիթ աւելց բաղմաթիւ հետազօտութիւնների և զխաղաղ-թիւնների հաս ալլ զիանականների կողմից:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 2 ում:

	Ղաղբէգի «Ձորի նահապետ Գոչա» վէպում՝	
էջ	սխալ	ուղիղ
183	դատաւոր	սրտաւաա
185	դահերեցութեան	գահերեցութեամբ
185	գօրապետներ <sup>1)</sup>	գօրապետներ, առաջնորդներ, քա- մանդարներ <sup>1)</sup>
188	չը կարողացաւ	կարողացաւ միաձն
192	չի մեղքանում	մեղքանում է
195	դալարադարդ	դալարազարդ
195	մի անդամ վրա բե- րենք	մի անդամ վրա բերելու փոխանակ երկու անդամ վրա բերենք
208	սպառում	սպառում
	Պ. Արգահատեանի «Հրէշ» պատմածքում՝	
239	հնաւարտ	հնաւանդ
»	մարդու ներքինին	մարդու ներքինը
237	զավթեց	թարթեց:

«Փառքի տենչը» ոտանաւորը սխալմամբ տպւած է սրպէս հեղինակութիւն պ. Ա. Ծատուրեանի, ուղիղն է՝ հեղ. Պուշկի-նի, թարգմ. Ա. Ծատուրեանի:

ՆՈՐ ՍՍԱՅԻԱԾ ԿՐԲԵՐ

- 1) ՖՐԴՈՒՍԻ.—«Ձոհակ Բիւրասպի Աժղահակ». ամբողջ վէպ Շահ Նամա-  
լից. Ա.—Թարգմանից բնագիր պարսկերէնից Սամուէլ Գիւլզա-  
դեանց: Շուշի, տպ. Մ. Մ. Յակոբեանց, 1894, գինն է 30 կ.
- 2) КАЖЕВНИКОВЪ, В. А.—«Безцвѣльный трудъ». Не-дѣланіе или  
дѣло? Разборъ взглядовъ Эм. Зола, А. Дюма и графа Л.  
Толстого на трудъ. Второе исправл. изданіе М. В. Клюки-  
на. Москва, тип. Тербекъ 1984. цѣна 20 коп.
- 3) ՊՈԿՐՈՎՍԿԻ, Ե. Ա.—«Մանուկների հոգատարութիւնը», թարգմ. բժ.  
Թ. Ջաքարեանի, Հրատ. Թիֆլիսի Հայոց Հրատ. Բնկերութեան:  
Հանրամատչելի գիտական գրադարան Թիֆլիս, տպ. վրաց  
Հրատ Բնկ. 1894, գինն է 20 կոպ.
- 4) ԵՐԵՅԵԱՆ, Արեքսանդր.—«Ամենաձն Հայոց կաթողիկոսութիւնը և կով  
կասի Հայք XIX-երորդ դարում»: Մտան Ա. 1800 — 1832: Թիֆ  
լիս, տպ. Մ. Մարտիրոսեանցի և ընկ.: 1894, գինն է 2 ա.  
50 կոպ. ճանապարհածախսով 3 ուսուրլի:
- 5) ՆԱԶԱՐԵԱՆՅ, Էմմանուէլ քահ.—«Չարչարանքի շարաթը». (ժողովրդ-  
դական ընթերցանութեան համար), վեց պատկերով, Թիֆլիս,  
տպ. Շարաձէի: 1894, գինն է 15 կոպ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### „ՄՈՒՐՇ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՅԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառուում էն հեղինակ գրքերով

Նշանակած գները անփոփոխ պահպանելու եւ մինչև վերջը 1895 թ.)

«ՄՈՒՐՇ» 1889 թ. անկազմ. . . . .	4 ռ. — կ.
«ՄՈՒՐՇ» 1890 թ. անկազմ. . . . .	5 » — »
«ՄՈՒՐՇ» 1891 թ. (սակաւաթիւ.) անկազմ. . . . .	10 » — »
«ՄՈՒՐՇ» 1892 թ. անկազմ. . . . .	9 » — »
«ՄՈՒՐՇ» 1883 թ. անկազմ. . . . .	10 » — »

#### Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Ի Ի Կ

Ճանապարհածախքի համար ուղարկուում է մի-մի սուբլի  
ամեն տարւայ համար:

Կազմի համար վճարուում է վերադիր 60 կոպ. ամեն կիսա-  
մեակի համար (այսինքն 1 ռ. 20 կ. ամեն տարւայ հա-  
մար):

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.  
Tiflis, Rédaction de la Revue „Mourtch“.

# ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐ

## ԱՐՏԱՏՊԻԱՆՆԵՐ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻՅ

	Բ. Կ.
1. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» (վէպ). . . . .	1 —
2. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (ՂՂԼարցի)՝ «Մանուկների մարտողութ. դործարանների հիւանդութիւնները» . . .	— 05
3. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկեների կեանքից . . . . .	1 —
4. ԼԷՅ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ). . . . .	— 50
5. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ»: (Կեանքից պատկեր). . . . .	— 40
6. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ».	— 60
7. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԷ», վէպ . . . . .	1 20
8. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. — «ԽՍԹ-ՍԱԲԱ» (հայ բոշան. կեանքից	— 15
9. ՄԱՐԻՍԵԱՆ, աիկին Մ. — «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը	— 50
10.       »                       »                       »                       »                       բ. մասը	— 75
11. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.)	— 15
12. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ. — «ՀԱՐԵՒԱՆՆԵՐ». . . . .	— 03
13.       »                       »                       «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ». . . . .	— 03
14.       »                       »                       «ԵԶԻԳ ԱՂԶԻԿԸ» . . . . .	— 05
15.       »                       »                       «ԾԱՆՐ ՔԱՐԸ» . . . . .	— 03
16.       »                       »                       «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ». . . . .	— 03
17.       »                       »                       «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ . . . . .	— 03
18. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ» . . . . .	— 15
19. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈՐՆԵՐԸ» . . . . .	— 10
20. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ». . . . .	— 10
21. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ» . . . . .	— 15

22. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . .	— 20
23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», Մանն ա. . . . .	— 50
24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» . . . . .	— 50
25. ՇԻՐՎԱՆԶԱԿԷ.—«ԱՐՄԷՆ ԳԻՄԱՔՍԵԱՆ» . . . . .	1 50
26. ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ.—«ԱՌԱՆՅ ԳԱԻԱՆԱՆՔԻ» . . . . .	
27. ԱՂԱՅԵԱՆՅ, ԳԱԶԱՐՈՍ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԻՈՐ ԳԷՊԷՆՐԸ»	

ВЫШЛА И ПРОДАЕТСЯ

# ИСТОРИЯ АРМЕНИИ

Моисея Хоренского

НОВЫЙ ПЕРЕВОДЪ

Н. О. Эмина

*(съ примѣчаніями и приложеніями)*

Цѣна 2 р. съ пересылкою 2 р. 25 коп.

МОЖНО ПОЛУЧАТЬ

въ Канцеляріи Лазаревского Института восточныхъ языковъ Москва..

Печатается и въ скоромъ времени  
ВЫЙДЕТЪ ВЪ СВѢТЪ  
**РУКОВОДСТВО**

*Торговой, керосиновозаводской и нефтепромышленной Бухгалтеріи  
по двойной италянскій системѣ.*

**Составилъ Н. В. АБРААМЯНЦЪ**

Необходимое пособіе для лицъ, занимающихся коммерческимъ дѣломъ во всѣхъ его отрасляхъ.

Изложеніе ясное, система веденія счетоводства упрощенная и удобопримѣнимая. Приложена масса формъ книгъ, разнообразныхъ бланковъ и документовъ по разнымъ отраслямъ промышленности съ детальными разъясненіями о способѣ и порядкѣ веденія записей.

Каждое лицо, специально не изучившее курсъ Бухгалтеріи, можетъ найти въ этомъ руководствѣ путеводителя по коммерческимъ операціямъ и наставника по веденію книгъ и счетовъ.

**Къ книгѣ приложены отдѣльныя статьи:**

I По нефтяному дѣлу:

а) Краткій очеркъ нефтяной промышленности на Кавказѣ—гор. инж. А. Вачьянца.

б) Краткое описаніе процесса керосиновозаводскаго производства—инж. тех. А. Назарянца.

II Формы разныхъ договоровъ, маклерскихъ записей, довѣренностей и договорныхъ писемъ.

III Таблица вычисленія процентовъ отъ 1 до 360 дней, отъ  $\frac{1}{4}$  до 12% включительно и на всѣ капиталы отъ 1 до 10,000 рублей. Назначеніе книги—освѣтить всѣ стороны коммерческаго дѣла и быть практическимъ помощникомъ торговаго человѣка.

**Цѣна:** по подпискѣ 2 р. 60 к., по отпечатаніи 3 руб. 50 коп.

Обращаться къ составителю;

г. Баку, Николаю Воснановичу Абрамянцу.



